

16426

16427

16428

891.99  
8-62

891.99 | Диффузор  
5-62 | приме  
| ж. кунгур

1. Տրամադրություն հայտ 1.
2. Վահագություն հայտ 2
3. Ը252 Հաշվիր երգիր, հայտ 1.

101

10,

■ 2003

Թիֆլսի Ընկերութիւն Հայերէն գրքերի հրատարակութեան

39856

7-60

ԱՎ

№ 150

# ՎԱՆԱՅ ՍԵԶ

ՀԱՐԱԳԱԾՈՅՑ

## ՎԱՍՊՈՒԲԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԵՐԳԵՐԻ, ՀԵՔԵԱԹՆԵՐԻ, ԱՌԱՋՆԵՐԻ, ՀԱՆԵԼՈՒԿ-  
ՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՆԵՄՔՆԵՐԻ


(Տեղական բարբառով)

1001  
39856

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԺՈՂՈՎԵՑ

ԳԵՂՈՐԳ Գ. ՇԵՐԵՆՑ



ԹԻՖԼԻՍ

Տպարան կ. Մարտիրոսյանցի. ||| Типография К. Мартиросиана.

Օբելյանովսկая ул., д. № 12.

1899

3645

oat m

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

200 JULY 1943

## ՅԱՍՏՎԱՅԻՆ ԳՐԱՄՄԱԳՐՈՒՅ

ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର  
ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର ମୁଦ୍ରାକାର

Дозволено цензурою. Тифлисъ, 27 Марта 1898 г.

## הוּא־בְּרִית־יְהוָה

卷之三

# Ն Ա Խ Ա Բ Ա Կ

(Քանի մի խօսք սոյն հաւաքածոյիս մասին)

Երբ 1885 թուականին «Վանայ Սագի», առաջին մասը հրատա-  
րակուեց Տփխսիսի հայերէն գրքերի հրատարակչական ընկերութեան շնոր-  
հիւ՝ ես մեծ միսիթարութիւն և քաջալերութիւն զգացի, յուսալով որ  
մօտիկ ապագայում՝ կաջողուի ինձ նորա երկրորդ մասն ես ի լոյս ըն-  
ծայել, դարձեալ նոյն բարեջան ընկերութեան շնորհիւ։ Սակայն ցա-  
ւօք սրտի յայտնում եմ, որ մի ամենասովորական պատահար յապահե-  
ցրեց, յետաձգեց իմ այդ դոցն աշխատութիւնը ի լոյս հանելու։ Նոյն  
թուականին ի Վան, հայրենիքս գնալով, ինչպէս շատերն իմ հայրե-  
նակիցներից՝ մենք ես ենթարկուեցինք և տառապեցանք ամենա-  
տիխուր պարագաների տակ։ և ահա 1896 յունիսի հանրացին կո-  
տորածն էլ վրայ հասնելով՝ հազիւ հազ մազապուրծ եղած մահից և  
կոտորածից՝ ընտանիքովս մէկտեղ դարձեալ Կովկասում, Նոր-Բազա-  
ղիտ քաղաքում գտանք ապաստանարան։

Բայց որքան եղաւ իմ ուրախութիւնս, երբ այդ հանրային կողոպտուած ապրանքներից ազատուած, սենեակիս յատակի վրայ ցրիւ ընկած գրքերիս և այց գրուածներիս մէջ տեսաց «Վանայ Սազի», երկրորդ մտսի համար պատրաստածս նիւթերը, մեծ մասը պատառուած. որպէս ապագայի մի նիւթաւոր պաշար՝ ես նրանց յատակի վրայից հաւաքելով վերցրի, ապագային պէտք լինելու նպատակաւ:

Ինչ որ պարտ ու պատշաճն էր գրելու սոյն հաւաքածոյի օդ-  
տակարութեան մասին՝ ես թողնում եմ բանսասէրներին։ Ներկայիւս  
միայն պարտք եմ համարում ցիշել մի քանի անհրաժեշտութիւնները՝  
որոնք վերաբերում են ժողովրդական լեզուի, առողջանութեան և  
հնչիւնների արտաքերման։

Գրքի դասաւորութիւնը ես արել եմ այնպէս՝ ինչպէս որ գա-  
սաւորուած է սորա առաջին մասը, Ընկերութեան Խնդբագրական  
Մասնաժողովի մասնաւոր կարգադրութեամբ. սկսելով նախ մանկա-  
կան խաղերից, ապա երգեր (սիրոց, պանդիստի և վիճակախաղերի),

հէքեաթներից աւելի ընտրովիները. ասկա առակներ, հանելուկներ, շուտ-ասելուկներ, օրհնութիւններ և անէջքներ. իսկ գրքի ամենավերջումն է բառարան՝ ժողովրդական բառերը ընթերցող բանասէրին աւելի՝ հասկանալի ընծայելու համար:

Ես բառարանում բազմաթիւ են սլարսկերէն և արաբերէն բառերը. մենք աւելորդ համարեցինք դոցա մանրամասն նշանակութիւնը՝ բայց աստրել, բաւականանալով միայն տեղին յարմար նշանակութիւնը՝ դնելով:

Տաճկահայոց գաւառաբարբառներում ոչ մի բարբառ այնքան նուրբ և ճկուն չէ՝ որքան վասպուրականցոց. Կան բառեր, որոց համար անհրաժեշտ էր նոր տառեր հնարել, և դու կլինէր մի դժուարին գործ. բայց որքան կարելի է՝ յարմարեցրած ենք դարձեալ ընդհանուր հայկական տառերով: Նոյն փափուկ հնչիւնն ունի նաև հատախի և Թոկաց հայաբարբառն, թէւ այս երկու գաւառաբարբառներումն էլ պակաս չեն պարսկաբարբառի աղաւաղումն և նորա անդրադարձումները:

Տառերի միմեանց փոխանակութեան և հնչիւնների մասին գաղափար տալու համար՝ ինչպէս առաջին մասում, նոյնպէս և այստեղ՝ նշանակում ենք փոխանակող տառերը, որպէս մի փոքր օրինակ գրքում տպուածներին:

Ահա նոցա օրինակներից մի պարզ աղիւսակ. տառի տեղ իւ. փոխանակ ասելու հաց, ասում են խաց, խաւ.

Ե » » է. » » » երկու, » էրկու, էտե.

Դ » » տ. » » դանակ, » տանակ, տիւ, (դու)՝

Ճ » » ճ. » » ջուր, » ճիւր, ճնճոց.

Բ » » պ. » » բան, » պան, պանճար:

Ճատ տեղ գ տառը փափկացել է, որը մենք արտայաձ տում ենք գ-ից յետոյ յ դնելով. օրինակ գյերք, գյին, գյրկանց, գինի, գինդ և այն, որոց նսխնականն է գյերք, գին, գյրկանց, գինի, գինդ:

Բազմաթիւ են և այն ա ձայնաւորները, որոնք հնչիւնով նման են արաբական (չ) հնչիւնին: Ես տեսակ ա-ն մենք նշանակել ենք մակակէտով, որոշելու համար բուն ա հնչիւնից. օրինակ պա՛նճա՛ր (բանջար), ժա՛մ (ժամ), զա՛րզա՛նդ (զարզանդ), զա՛տիկ (զատիկ):

Ինչ որ է իմ թույլ ուժերովս և այդքան նեղ պարագայից մէջ, կաշկանդուած ամեն աննպաստ միջոցներով՝ պատիւ կունենամ այս

անգամիս էլ իմ բնակավայրի նահատակ հայ քրիստոնէից, քրդի և թուրքի ճնշումների տակ տոգորուած-տոչորուած, ճնշուող ժողովրդի մտքի և հոգեոյ խորին զգացմանց արտայայտութիւնքը՝ ի հանդէս հանելու, մթից լոյս աշխարհ բերելու և այդու ճշմարիտ բանասիրաց և գիտնոց հետաքրքրութիւնը շարժելու:

Բայց մեր բազմաղիմի հոգատարութեամբ հանդերձ՝ չենք ժըխտում, որ ունեցել ենք թերութիւններ էլ, որոնց համար ներողութիւն ենք խնդրում բարեխիղճ քննադատողներից, բանասէրներից և նոցանից՝ որոնք կըարեհաճեն «Վանայ Սազ»-ի այս երկրորդ մասն էլ թերթատել:

Գեղշդ Գ. Հեղինեց



մ վրաց գոհականից ու մասաւան պատճենած լոյ թ պատճառ  
պատճենի բառում շատ պայունաշատը յառ պատճենած մոդուն  
աճանաժ բազմա տարածական բնակչութ մեջու յարու և ուրան  
բարձրանայ այսուհետ արք և արքական հայ ըլին այսման  
այս եղան ըլ ամենողդդաստ բանուի Յ  
այս գանձ նաքընած պատճենական վայրական ուն սամ  
առաջնի դասա մատարա և ուստի ինդա ի դա յաքան ու առա  
պատճեն այսա բանու ամ ամսայի ինդա ի դա առա  
պատճենա այսա բանու ամ ամսայի ի դա մաքան

## ՄԱՍ ՆՐԿՈՐԴ

# ՎԵՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՑ

1.

Նա-նա-նա\*), նանէր նանէր,  
Սիրուն լաճուս քունը տանէր:  
Լաճն ամիրայ, լաճն ամիրայ,  
Մէկ ձի մը տուր խէճնեմ վըրայ:  
Աղա եօլա խէրդ ես իկե,  
Բդրի լուսին մէրդ ես իկե:  
Կաւկուլայ քեռ քերըստանք,  
Աղա պարոն քեռ քեավորտանք,  
Կարմիր խընձոր քեռ մօրքըրներ,  
Սևաջրձակ քեռ խօրքըրներ,  
Սև անթըրոց քեռ խօրօխպէր,  
Սևաթաթախ քեռ քերկնկտեր:

Նա-նա-նա, նանէր նանէր,

Խօրօտ լաճուս քունը տանէր:

Նա-նա-նա, նանէր բալայ,

Զանենք խուն որ կըլաւայ:

\* ) Առհասարակ շատ տեղերում մանուկները խաղացնելիս սոյն բա-  
ռերուն են սկսում մանկական երգերը:

2.

Ծափիկ ծափիկ, վաղն ի զատիկ,  
ին մէկէլ օր աւագ կատիկ:  
Օն նինա, տոտիկ նինա.  
Մարմարական մարդու չըկայ.  
Սուսուն ծաղիկ սար չըկայ,  
իմ խօրոտիկն թակ չըկայ:  
Ամպ զամպ, զընկըռ-մընկըռ, փըստ  
Ամպ զամպ, ճըլ-ֆըթ-պըթ:

3.

Օմփինայ դրօմփինայ.  
Խաչ գեաւազան վուշինայ:  
Աղէն կասի, վերին քեաշի,  
Վերին քեաշի, տըկին մընայ:  
Օմփինայ դրօմփինայ,  
Խաչ գեաւազան վուշինայ:  
Ուսթէն կասի, տըկին քեաշի,  
Տըկին քեաշի, վիրին մընայ:  
Թըր.. ճուճուղիկ, կըտիկ կըտիկ:

4.

Ակատիզ, չուանը վիզ, կախվէր էրտիս  
Էրկէն էրկէն էրկընանէր,  
Բարակ բարակ բարակնանէր.  
Դրոան ճեղքէն մըտան անէր,  
Դէյ ճեռչ-աղէն \*) տանէր ուտէր:  
Ակատիզ չուանը վիզ, կախվէր էրտիս:  
Բէօլօլան էրտիսն ի վեր,

Բէօլօլան մեր տան վիրե:  
Տըղի խէրըն ճաղցէն իկե.  
Կոօր գընա, վաղն արե կե:

Կարապետ, աղբիւրի խետ,  
Բեր խետ, կըլորի գետ.  
Տիւ դեսը կերթաօ՝ մամէն տար խետ:  
Կանչես, կանաչես տըղայ,  
Քեռ եարիկ շուտ ճանաչես:  
Եարիկդ էրկէն բաժ էլնէր,  
Ծամերն խետ կըրնկան էլնէր:  
Սև ես, սերակեր ես,  
Քանձ զըմէն ծաղկունքը վեր ես.  
Սիկոտկ ես, ծըծի տակ ես:

6.

Վեր կըթըռնեմ, ծաղիկ եմ,  
Թեթվախոզի աղջիկ եմ,  
Սերկեվելին ծաղիկ եմ,  
Ազապ լաճու մատնիկ եմ,  
Թառ քեավուրոչ սանիկ եմ:  
Միոնեմ մեռնեմ մեռնով,  
Քեյտին էկաւ բեռներով.  
Բեռները պիւթիւն քեարբար էր,  
Իմ լաճ վիրէն սար-բար էր:  
Զանէ ջան, ջանըս քեյ կուրբան,  
Փօղնի մարդեր լաճուս կուրբան:  
Լաճն էր աղա, լաճն ամիրայ,  
Աղջիկներաց վերէն խաղայ:

\*) Ճոչ աղա կօչւում են ոչ միայն մեծ աղաներ, այլ և այն թոռունք,  
որոնք պապերի անունով են մկրտում:

7. մաս զեն մայօքէ  
Ծաբիչ ԸՆԿԱԾ ԱՂՋԻԿ  
ու առ մարդ առ զույլ

Նա-նա-նա, նանէր լաճիկ:  
Քըրող գէլը տանէր աղջիկ,  
Տէրտէրը գէլը տանէր աղջիկ,  
Ժամհարը գէլը հողէր աղջիկ:  
Աղջիկը հող, հողն ի վերէն,  
Մէկ տափակիկ սալն էլ վերէն.  
Կանաչ լընէֆ պարզէր վերէն,  
Ոչ մէկ մարդ կուլէր վերէն;  
Կարմիր բաղարչ բերեն վերէն,  
Տէրտէր, լուսրար կայնին վերէն,  
Բուրփառ զընդզընդէր վերէն,  
Կանոն մաշտոց կարթին վերէն:  
Աղէն խընդիւնդէր վերէն.  
Մամէն թընդթընդէր վերէն:

8.

Աղջիկը տանն էր, տան քընջան,  
Չեռքերն էր շուշայ, մէրջան.  
Աղջիկ ծաղիկ էր տան միջին,  
Հօրն ու մօր էր կըզմաթին:  
Աղջիկ մամուն բան կանէր.  
Տախտ կաւիլէր, թօղ կանէր,  
Քուր սըրսըկէր, մօղ կանէր,  
Աման լըկէր, չէօլ կանէր:  
Աղջիկ մամուն, դէմ դըրամուն,  
Թող ճոչանէր, մընէր մամուն:  
Խալ-խալա, խալ-խալա մէրջան,  
Չեռքերն ի շուշայ, մէրջան.

Զեռաց մատեր շողշողուն,  
Աչք ու ընքվերն են սիրուն: ամ  
9.

Թըռ թըռցընեմ, թըռի թըռի թըռցընեմ,  
Իմ լաճուն կաբալ հագցընեմ,  
Սև խաւու միս կերցընեմ,  
Կարմիր դինին իրմցընեմ,  
Նըխշուն օդէն քընցընեմ: ամ  
Ճօնիկ կախեմ, կախ անեմ, դիք  
Մախմառից շորեր կարեմ, արաչ  
Վոլասից բարձը կարեմ, ա խայ  
Թանթէլայ ճըթեր շարեմ, էն  
Իմ լաճուն կապոց անեմ: ողաչ  
Ճօնիկ արօշ մարօշ էր, այս  
Ճօնիկ կանաչ կարօս էր, այս  
Առուի ափեր բուսեր էր: ա ուս  
Տախտ աղջիկներ տիսեր ին, դաշ  
Վերէն մայիլ մացեր ին, այս  
Առին շեղփիկ վազեր ին, դո աչ  
Ճօնիկ թելեր կըտրեր ին,  
Ուրախ ուրախ տարեր ին,  
Մառնէ մառան տըրեր ին,  
Մառնի պատհան պախեր ին,  
Եօթն օր վերէն խարսնիս արեր ին:

10.

Խանէ խան խանզատայ  
Թօրիլնէն խան խանզատայ.  
Խաւու խորփած, խանզատայ,  
Խնամու կերած, խանզատայ:  
Չոր խաց չեմ կանայ ուտե,

Ատամներըս խախուտ են:  
Կակուղ խաց ատամս կառնի.  
Կակուղ բաղարջ փորիս դեղի:  
Դարիվեր չեմ կանայ էլնի,  
Գլոխ վեր խանգըս կըկրտի:

11.

Տանանա, տան-տանանա, այ  
Նա-նա, նա-նա, նա կուշի,  
Կերածս է հալվայ կուշի,  
Հագածս է ալ-կումաշի:  
Էլայ տանիս, իրիշկեցի,  
Թէ վով նախիր կըքըշի.  
Քարով զարկի գլուխ փըշի.  
Աղէն որ գայ զուլում քաշի:  
Էլի էլի կայնի, կէկէն կէկմարան,  
Քեռ կէկն ի խազար փարա,  
Տար տուր, քեր կնիկմարա:  
Կլնկանդ անուն էլնի Մարան,  
Էն որ մեռնի մէկէլ արա:

12.

02ի երգ

Մօրքուրներ, հայ մօրքուրներ,  
Էկէք էրթանք պանջըրէ,  
Պանջար քեաղենք, պաս իփենք,  
Ասպնէ սպաս անենք,  
Մեր լաճուն խամով խորակ անենք:  
Մօրքուրներ, հայ մօրքուրներ,  
Էկէք էրթանք սարէ սար,  
Սև սարի տակ կանգըռէ,  
Սև սարի քամին զբղըղէր:

Սև սարի տակ օձմ կէր, զգնասի  
Օձն էր պալաք ճըլպըլտուն.  
Օձի շըլվոցից փախս եկանք,  
Փախանք մըտանք Սալվուտուն:  
Սալվին նրստե սազ կանի,  
Ծամերն իտե ճօղ կանի,  
Բուրթ կըգըզի թաթ կանի,  
Ազապ լաճուն նազ կանի:  
Կազ մի անի, Սալվի ջան,  
Ջանդ լաճերացն ի կուրպան.  
Բարով խէրով մեծանաս,  
Իմ լաճօլին խարս դառնաս:

13.

Խանդանայ ես, խանդանայ,  
Վամուռ զըտակ մանդանայ.  
Վէր պատերաց շուռ կուգաս,  
Ինչ որ զըտնես կրու կրուտաս:  
Խանդանայ ես, խանդանայ,  
Խաթուններաց լախեղանայ.  
Քեռ խօրն ու մօր տիւր կուգաս,  
Քեռ սիրողին համ կրուտաս:  
Դուրդանայ, դանայ դանայ,  
Վամուն ասաս, թող զուռ բանայ,  
Որ չըբանայ թող զեռտանայ,  
Իմ մեղաց տակ նա կըմընայ:

14.

Մարէ, մարէ, մի տըփե.  
Առուի ափերն եմ ընկե,  
Քառսուն կաքաւ եմ բըռնե,  
Քառսունն էլ մէկտեղ կընդե,

Խամբըրով կուտ եմ տուե,  
Զըմէնի փորն էլ կըշտացե,  
Խամբըրով ջուր եմ տուե,  
Խմբերով թառ եմ հանե:

Մարէ, մարէ, մի տըփե,  
Քըրտի կնիկն անիծե.  
Քըրտի տընիկն աւիրէր,  
Որ կաքաւները չըտաներ:

15.

ՄԱՏՆԱԽՈՂ

Տուտուխիկ, տուտ մարուխիկ,  
Չուռնափըչիկ, տուտուկփըչիկ,  
Էնա կէրաւ, էնա խրմաւ, էնա թըռաւ:  
Ճըկոթիկ, ճըկոթի մէրիկ,  
Էրկէն տաճիկ, բարակ մաճիկ,  
Ճաշ լլկաթիկ, փըլաւ ուտիկ,  
Ռճիւ կտիկ, ճըվիկ ճըվիկ:

Ճկոթ կասի. էկէք հաց ուտենք.  
Էնա կասի. ուստ կայ որ ուտենք.  
Էնա կասի. Աստուած մեղ կուտայ.  
Էնա կասի. բալքիմ չխտայ.  
Քեռթը կասի. գողնանք ուտենք:

16.

ԽԱՂԱՅՈՂ ՄԱՆԿԻԿ

Մէկ էլի, մէկ հատ խաղա,  
Իմ խօրօտիկ մօրօտիկ լաճ.  
Մէկ էլի, մէկ պար արա,  
Աղջիկներաց դարտ արա:

Մէկ էլի, մէկ խաղ արա,  
Սւ հաւ քեյ մատաղ արա,  
Սւ հաւու միս կե, անուշ արա,  
Մորթը բոլորի, մուշտակ արա,  
Անուշ անուշ քուն արա;

Առկոռներ չարդախ արա,  
Մէջը նըստի խով արա.  
Ժամհար որ գայ դիւան արա,  
Մամուգ քունը հարամ արա:

Մէկ էլի, մէկ հատ կայսի,  
Քանց չինարի ծառ կանաչի,  
Մէկ էլի, մէկ հատ կայսի,  
Խեմ քեռ բաժին ինչ կըվէլի:  
Աղին ասեմ, քաղքէն բերի,  
Թարզուն ասի, որ գայ կըտրի,  
Ճողշըղան մատնով կարի,  
Էն սուրահի բաժովդ չափի:

Քանց բարունակ էլնէս ճըղով,  
Քանց բարդի ծառ էրկէն բաժով,  
Բաժդ ի կանաչ, կանաչ-մանաչ,  
Աղջիկներաց սըրտին ճանաչ:  
Մէկն է խըզի, մէկն է թըզի,  
Սուրբ կարապետ պահէր քեզի:  
Մէկ էլի, մէկ հատ խաղա,  
Սւ հաւ քեյ մատաղ արա:

17.

ԿՆՔԱԽՈՐ ԵՒ ՍԱՆԻԿ

Քեյ մեռնեմ, քեռ քեավուրոչ,  
Որ քեյ զըրկե բերեր ի տուն.  
Որ չըթողե կերեր ի շուն:  
Տէրտէր, լուսրար գովք են ասե,

Աւազանի մէջ մըկըրտե,  
Անունըդ կարապետ ասե:  
Կարապետ անուն բարի.  
Եօթն անուան տէր քեզ մուրատը:

Իմ կըճատիկ արուխ մարուխ,  
Քեռ կըճատ թիվքերը վեր վերու,  
Ոտերացըդ տուր զօրութիւն.  
Սարէ սար կայ դընալու,  
Սուսուն ծաղիկ կայ քաղելու,  
Փունչ կապելու, տուն բերելու,  
Թառ քեավուրոչ օղօրկելու,  
Կանաչ մեռն համբուրելու:  
Քեյ մեռնեմ, քեռ քեավուրոչ,  
Մումպարաք ձեր տիրոջ,  
Տէրն և տուե, մամէն բերե.  
Էն քեավուրոչ մունաթն աւելցե:

18.

ԳՈՎԱԿԸՆ ՄԾՆԿԻԿ

Հալալայ, խալեր վերէն,  
Ատլաս ջիւրէն գիւրեր վերէն.  
Քեյ զըրկեմ սրտիս վերէն,  
Առնեմ էրթամ վարդի բիւթէն:  
Վարդեր քեաղեմ, փունչ անեմ,  
Օրօրոցիդ շուրջ անեմ.  
Վարդենին թող հոտ անէր,  
Քեռ անուշ քընլիկ տանէր:  
Թեմերըս խով անեմ վերէդ,  
Որ ժրիցիր պարկ արևէն.  
Վարդի բըլբիկ որ ճըլվէր:  
Քեռ անուշ ձէնիկդ առնէր:

Աչքերացդ ասեմ լըստակ,  
Քիթ բերանըդ շահ գիւլիստան,  
Ասլան ձըկներ քեռ դէմ խաղան,  
Աշխարհ ալամ քեռ դէմ դողան:

Հալալէր, խալեր վերէդ,  
Արծթէ կապեր վերէդ,  
Սըրմալու սալլթէն վերէդ,  
Աշխըրքի աչքն էր վերէդ:  
Խուռոմսիմէն քեզ արմաղան,  
Աղունակ որ ձէն կածէր,  
Զուկն ի ծովուն քեյ գովք ասէր:  
Թըլվըլուն ճընճիկներ,  
Կըվկըվան սարի կաքաւ  
Քեռ խաղին էլնեն ընկեր.  
Քեռ լեզուին փակ ու բալնիս:

19.

Մէկ էլի, մէկ հատ կայնի,  
Խեմ քեռ բաժին ինչ կըվէլի.  
Բաժիդ մեռնեմ ալաշ-կալաշ,  
Բեղերդ էլնի կալամ-թըրաշ:  
Ատլաս կաբայ կըվէլի քեզ,  
Կարմիր ջըգմէք ոտիդ լայեղ,  
Կարմիր խընձոր գոտիդ դընես.  
Թալծալ շորեր սալլի-սաբաթ,  
Ընկեր գըտնես բաբաթ-բաբաթ:  
Կարմիր խընձոր կըծած ի,  
Էն էլ եարոչ տըւած ի,  
Եարիկդ էլնի խօրօտ-մօրօտ,  
Վըզիդ կապենք կարմիր նարօտ:  
Մէկ էլի, մէկ էլ խաղա,  
Բաժիդ մատաղ աղա-մաղա:

20.

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԿ  
ՅՈՒՆՆԵՐ ԵՐԿ  
ՅՈՐՈՐ, օՐՈՐ, ջանիկս, օՐՈՐ:  
ՔԲՆԵՐ ես քըրտներ ես, ասեմ օՐՈՐ,  
Քանձ քեաֆուր վարդ փըթլըթեր ես, օՐՈՐ, օՐՈՐ,  
Բեր պազնեմ կարմիր իրես, ասեմ օՐՈՐ,  
Խէրով մէրով ծըլես ծաղկես. օՐՈՐ, օՐՈՐ:  
Արտամետու խընձոր դու ես,  
Վարդ ու ռըհանի բացուեր ես,  
Ամեն ծաղկանց հոտ դու ունես,  
Աստուած պահի քեզ պարզերես:  
Ես քեյ մեռնեմ ամառնուկ,  
Ամռան օրեր ես էլե.  
Ես քել մեռնեմ իմ գառնուկ,  
Դէլ խատը խաշկ չէր էլե:  
Ես կանչեմ տաղով արե, օՐՈՐ, օՐՈՐ,  
Դու վերի թաղովն արե, օՐՈՐ, օՐՈՐ,  
Վերին թաղի Մանուշակ, օՐՈՐ, օՐՈՐ,  
Էլնէր իմ լաճուա մըշակ. օՐՈՐ, օՐՈՐ:  
Խաշկայ տըփան գալրնցան,  
Պըզտիկներաց աշընցան.  
Չայիր չիման կանըչներ,  
Էրժիր նստիր էն դիւան:  
Ֆափուն տըլին թըգենիք,  
Ֆափուն տըլին ծառաստանք.  
Քարվան-բաշին քեռ քեյուիք,  
Բէօլուկ-բաշին քեռու լաճ:  
Էն եօթն էրէց քեռ կընքող,  
Ես հաւատամ քեռ ստեղծող.  
Սուրբ Սարգսայ ձին զօրաւոր  
Խէծնիր էրժիր ուխտաւոր:

Սարէն ես գամ, ձորէն դու,  
Մէր ես առնեմ, աղջիկ դու:  
Աղջիկ աղջիկ, ջան աղջիկ,  
Իմ լաճուա մատաղ աղջիկ:  
Ես էլ կուգամ կէսրանց խէրով,  
Ես էլ կուգամ հաւ ձագերով,  
Ես էլ կուգամ մուշկ-ամբարով,  
Հազար ու մի ծաղիկներով:  
Ծաղիկ քաղեմ, եարոչ տամ,  
Ճարաթ մի օր էրթամ զամ.  
ՕՐՈՐ, օՐՈՐ, ջանիկս, օՐՈՐ,  
ՕՐՈՐ, օՐՈՐ, գառնիկս, օՐՈՐ:

21.

Աղջիկ աղջիկ, քարէ չըխչիկ,  
Մըկան պոչիկ, կատվու տօտիկ,  
Պըտիկ մըտիկ, շան ակընջիկ, առ քեռ խըրձիկ.  
Ալիւր մաղեմ, գամ քել թաղեմ:  
Տըղա տըղա, սիրուն տըղա,  
Առ քեռ ճաներ, զընա խաղա,  
Դու իմ զլիսուն պոծառ չըղայ.  
Ալիւր մաղեմ, գամ քել պահեմ:

22.

ՃՆՈՐՀԱԿՈՐ ՏՕՆ ՈՒ ՏԵՐԻ

Ճնորհաւոր տօն ու տարին,  
Նոր կաղանդն և իւր բարին.  
Պատ վէր խըման, խիմ վէր քարին.  
Վէմ քարն ի Պօղոս Պետրոս.  
Բանլիս տըլեց փըրկիչ Յիսուս:  
Տունը շէն, շէն շինական,  
Իւղն ու բըլիթ նըստան կէրան:

Բասիլիոս անուն բարի,  
Որ ազատեց խէն քրիստոնէն,  
Տարին էն տարին, օրն էն օրէն:  
Զեր տունը շէն հետ արևուն,  
Արևն էրկննէր ձեր տըղէքներուն,  
Չարը զատանէր, բարին մօտէնէր:  
Օղօմի աղին, ծառ տընկողին,  
Լէզկայ \*) ուէս բաղտօփն,  
Գրդիր խաչօխն, տան ճեղչին:  
Ուտենք, խըմենք անուշ գինին,  
Ասենք ողօմին, ողջութեն չախց աղգին:

23.

ԼՈՒԵՐԻ ԵՐԳ

Հայ լուեր, մատաթ լուեր,  
Կարակընգուղ կարմիր լուեր.  
Գիշեր կէլսեն ճըներն ի վեր,  
Յերեկ քաշվեն սըներն ի վեր:  
Հայ լուեր, մատաթ լուեր,  
Կարակընգուղ կարմիր լուեր:  
Լուերն էկան սւ ու դեղին,  
Էկան մըտան մէջ քո բեղին,  
Բեղերդ արին ալաշ-մալաշ,  
Քեզ խաղք արին մէջ էն դեղին:  
Հայ լուեր, մատաթ լուեր,  
Սըլվըլուկի մընջիկ լուեր:  
Լուերն էկան ուրուս մուրուս,  
Էկան թափան վեր խընամուս,

\*) Լէզկ կամ Լէսկ՝ է գիւղ հայաբնակ, առաստ որթատունկ այգիներով  
Վանայ հրախակողմ, որպէս մինս մօտիկ արուարձաններից: Այս անունը  
առնուած է գուցէ Արայի լիզող աստուածներից, որտեղ կան, ըստ աւան-  
դութեան՝ նոցա նշանատեղեր, ուր բարձր քարափի վրայ շատ հին ժամա-  
նակում շինուած է Ամենափրկիչ եկեղեցին:

Գիշրով էլան փախուցին դուրս,  
Էլ ըլթողին որ հասնէր լուս:  
Հայ լուեր, մատաթ լուեր,  
Կարակընգուղ մընջիկ լուեր:  
Լուերն էկան արա-թարայ,  
Զիթ կըզանեն առանց փարայ:  
Հիւշտ կըթըռնեն քօշից քօշայ,  
Դինջ չեն թողնե հարսն ու փեսայ:  
Հայ լուեր, մատաթ լուեր,  
Սըլվըլուկի կարմիր լուեր: Աճջ  
Լուերն էկան զաւագ-մաւագ,  
Կընմանին փաշի կաւագ.  
Հայ լուեր, մատաթ լուեր,  
Կարակընգուղ կարմիր լուեր:

24.

ՆՃԱՆԱԾ ԱՂՋԱԿԱՅ ԳԱՆԳԻՏ

Մըտնեմ ճըղօր, էրթամ զամ,  
Իմ ասլան կէսրէրը լամ:  
Ափսոս իմ բաղտն ու թալահ,  
Որ վատ մարդոց ձեռ ընկայ,  
Ափսոս որ էլ չեմ կանայ դիմանայ:  
Կէսրարիս թութիւն ի խալսե,  
Կէսրոյս ոտներն ի մրսե:

Զատկին կիտրմ ալիւր տուն չեմ տիսե:

Չեմ էրթայ, մէրիկ, չեմ էրթայ,

Աշխըրին խընդում չեմ էլնայ:

Աշխարհ վերէս խընդացուցիր,

Բարեկամները լացուցիր,

Զարկամի սիրտըն հովցուցիր,

Իմ անգին ումրըս մաշեցիր:

Չեմ էրթայ, մէրիկ, չեմ էրթայ,

Էն չոր կուտին չեմ առնալ:  
 Զիկ տուեցիր թող անկըլին,  
 Որ թևն մըտնեմ կայնըցուցեմ,  
 Կէս զիշերին դուրս ներս անեմ,  
 Բերեմ տուն պառկըցուցեմ:  
 Էլ չեմ էրթայ, մէրիկ, չեմ էրթայ.  
 Աղջիկ եմ իկե, աղջիկ կըմընամ,  
 Կոյս եմ իկե, կոյս կէրթամ:  
 Աստուածին որ գիտնայ,  
 Չեմ էրթայ, մէրիկ, չեմ էրթայ:

25.

ԵՐԿՆԱՅԻՆ ԽՆՁՈՒ

Էրկնուց դրուները բացուաւ,  
 Չեր տունը արեւով լեցուաւ.  
 Հազար բարին հազար բարութեն  
 Երկնային անմահ հօրէն, <sup>ՄԱՅԻԾ</sup>  
 Դըրախտի կենաց ծառէն,  
 Աղամ Եւայի տեսած պըտղէն,  
 Ֆառն անմահականէն:  
 Ֆաղիկն էր հոտով քան վարդնսէն,  
 Քեափուր վարդն իւր հոտով,  
 Բըլբուլն իւր անուշ երգով:  
 Բաղջի ուռերովն ընցայ ես,  
 Ֆառ հազար, ծաղկունք հազար տեսայ ես.  
 Ֆառերաց մէջ խնձորնին տարաւ իմ ուշքն  
 Հոտովն անմահական մալլայ ես:  
 Դէլի-ասլին, կլաթն <sup>\*)</sup> ասեմ կարմիր քան զըմէն,  
 Էրկնուց էր ասեմ այն կարմիր խընձոր.

\*) Դէլի-ասլի և կլաթ—խնձորի տեսակներ են, խնձորների ամենապատականը, որոնք ամենայն առաստութեամբ լինում են Արտամետ գիւղում այլն Վանայ այգեստաններում: Այս տեսակ խնձորները հապուրիչ են իրանց տեսքովն, համով ու հոտովն անուանի ամեն պտղոց մէջ:

Խընձորն խիստ անմահական էր,  
 Խընձորի ծառին հաւան կացայ ես;  
 Ծառըն խընձորի որ զըզզըդէր ու ասէր,  
 Սիրոյ նըշան ես եմ, սըրտի նըշան ես եմ,  
 Ո՛չ վարդ, ոչ շուշան, մէկը չի ձիկ նըման.  
 Աննըման եմ ես, ծառոց աննըման:

Չեր սեղան հայր Աբրահամու սեղան, այ  
 ին իւրնձորն ձեղ անմահական,  
 Հայր Աբրահամու օրհնութիւնով  
 Ապրին ձեր հարսն ու փեսան:

26.

ՆՈՐ ՓԵՍՏՆԵՐԻ ԳՈՎԱԾԱՆՔ<sup>\*)</sup>

1001  
13581

Աղպըներ, աղպըներ, կտրիճ մարալ աղպըներ,  
 Հա դուրս եկէք, աղա՞պ լաճեր, աղջիկներ,  
 Կանաչ կարմիր ալ-դարահի կումաշով,  
 Պար առէք, պար բըւնէք թագաւորի կըշտերով:

Թագաւոր, ինչ բերենք քեյ նըման,  
 Քեռ կանաչ արեն ի քեյ նըման:

Մեր վարդենիս որ կըբացուէր՝  
 Բացուէր քո արեւու նըման.  
 Սարի սուսուն որ կըբացուէր՝  
 Բացուէր քո արեւու նըման:

Թագաւոր ինչ բերեմ քո նըման,  
 Քո կանաչ արեւով նըման:

Աղբերանց արուն որ կըբացուէր՝  
 Բացուէր քո արեւով նըման.  
 Վարդ մանուշակ որ կըբացուէր՝

\*) Վասպուրականի գիւղական շրջանակում աւելի շքեղ կերպով են կատարում վիեսաների գովասանք: Հագցնում են զարդարում են նոր վիեսան: Նրան շրջապատում են երիտասարդներ և կոյսերը, վարդ ու վարդաջուր սփուելով չորս կողմ. պարերով և թմբուկ ածելով երգում են այս երգ՝ մինչ վիեսան ածիլում և հագնուում է:

Բացուէր արևուդ նըման: ոսկի մզոնդյան  
Թագւոր, ինչ բերեմ քեղ նըման, ունդյան  
Քո կանաչ արևուդ նըման: մշտաց  
Ճուշան ծաղիկ որ կըբացուէր՝ աւշդյան լոյնի  
Բացուէր քո արևուդ նըման. ո քոյակի չի  
Պալասան ծաղիկ որ կըբացուէր՝ մայցինի  
Բացուէր արևուդ նըման:

Դէմ աղօթրան որ կայներ ես, հայութ ոչ  
Կանաչ կարմիր գու հագեր ես, այդի պահ  
Բարով թագուէիդ վայելես,  
Աստուած քել պահի պարզերես:  
Զուխտ Վարագայ \*) դէմ կայներ ես,  
Ալ, կանաչ, կարմիր կապեր ես,  
Բարով թագուէիդ վայելես,  
Սուրբ խաչ պահի քեղ պարզերես:  
Սուրբ Նրշանալ դէմ կայներ ես,  
Ալ նարընջի բաղ կապեր ես.  
Թագըդ վէլես վայելես,  
Տէր քեղի պահի պարզերես:  
Անապատայ \*\*) դէմ կայներ ես,  
Քանց կարմիր խընձոր կարմըր ես.  
Սուրբ պըսակըդ վէլես վայելես,  
Աստուած պահի քեղ պարզերես:  
Աղթամարայ \*\*\* ) դէմ կայներ ես,

\*) Նոր փեսան դարձնում են գետ շրջակայ վանքեր երկրպագութիւն  
տալով: Զուխտ Վարագ՝ վերին և ստորին Վարագայ վանքերն են: Վերին  
Վարագայ վանքը խսպառ աւերակ է, իսկ ստորինը չայտնի էր իւր փառա-  
հեղութեամբ: Սոքա գտնուում են ճիշտ Վանայ արևելեան կողմ, համանուն  
լեռանց մէջ:

\*\*) Ամ և Կառուց անապատներ—կղզիներ Վանայ ծովին մէջ, արե-  
մտեան հրասի Վանաց:

\*\*\*) Աղթամարայ Ս. Խաչի վանք հարաւարեմտեան կողմ, որոնց ամենի  
հետո էլ չերմեռանդ սիրով կապուած է Վասպուրականի հայն, ամեն հինգ  
նաւակատեաց անելով զհաքերութիւն ի սէր այդ սրբավայէրին:

Քանձ լուս հրեշտակ զուարթերես:

Թագուէիդ վէլես վայելես,

Աստուած պահի քեղ պարզերես:

27.

Եկէք բարե, հալ, էկէք բարե \*),  
Մեր շնորհաւոր թագաւորին.

Թագաւորին շատ արե,

Իւր թագուէուն շատ բարե:

Թագւորի մէր, զուրս արե,

Քնդ ինչ և ինչ ենք բերե.

Քեղ գեղիվ կազ ենք բերե, ծառը

Լեզուն տաս գազ ենք բերե:

Թագւորի մէր, տիւս արե,

Քեղ նուշ ամ զար ենք բերե.

Վարդ ու ծաղիկ ենք բերե,

Մեխակ շուշան ենք բերե:

Թագւորի մէր, զուրս արե,

Տախտ աւելող ենք բերե.

Թօնիր վառող ենք բերե,

Կովեր կըթող ենք բերե,

Բէր զընացող ենք բերե,

Լըւացք արող ենք բերե:

Թագւորի մէր, զուրս արե,

Քո զլուխ զլմիոխ ենք բերե.

Ջերիկ շիրվոր ենք բերե.

Խեռ ու խեռնակ ենք բերե:

\*) Եկեղեցուց տուն դառնալու ժամանակ երգում են այս երգ, գլխա-  
ռոպագէս առ փեսայի մայրն, որի ժամանակ նա զուրս գալով հացատնից,  
գլխին ունենալով քաղցրեղինաց և խմբեղինաց մի մեծ ափսէ՝ պարելով  
ընդառաջ է գալիս փեսային և հարսին. նորան հետևում են փեսայի քոյ-  
քերն և մօտիկ ազգական կուսանք, առաջնորդում են նորապասկելոցն  
առագաստի սենեակ:

Թագւորի մէր, դուրս արե, հմաֆ  
Գեղ տեղ խկող ենք բերե, թագուրսն  
Կեր խում արող ենք բերե, ճաւառս  
Գեղ զարդարող ենք բերե:  
Թագւորի մէր, պար արե,  
Սարի կաքաւ ենք բերե,  
Սարի մարալ ենք բերե,  
Ճուխտակ ջէհրան ենք բերե:  
Եկէք բարե, հայ, էկէք բարե,  
Թագւոր թագուհուն շատ արե:  
Թառն էր թագաւոր,  
Աստծու գառն էր թագաւոր:

28.

Մեր թագաւոր զարդարեցին.  
Զարով զարբաւներ հագուցին,  
Հայոց Նրշան էր,  
Տէր պահպանէր,  
Սուրբ Կարապետ արեն օրհնէր,  
Տէր մարդասէր թող պահպանէր:

Մեր թագաւոր զարդարեցին,  
Հայոց օրէն օրէնք էր.  
Մեռելարոցն <sup>\*)</sup> արեն օրհնէր,  
Տէր պահպան էր:

Մեր թագաւորն էր խաչ,  
Խաչն ի ծոց խաչ ու մաչ,  
Տղէն <sup>\*\*)</sup> էր կարմիր, հայ կարմիր,

<sup>\*)</sup> Մեռելարոց՝ աւետարանի անուն է, մագաղաթի վրայ գրուած,  
Ժաղկէնկար լուսանցքներով: Գտնուում է Նւանց գիւղում, որ Վանայ ծովի  
առաջին նաւահանգիստն է:

<sup>\*\*) Ջղայ այն ականակուռ զարդն է եղել, որ հին ժամանակաւ նոր  
փեսաները պատկի ժամանակ կրում են եղել իրանց ճակատի վերևից՝ որպէս</sup>

Արևն էր կարմիր, հայ կարմիր:  
Պըսակն էր կարմիր, նարօտն էր կանաչ,  
Ճիւբէն էր կարմիր, արևն էր կանաչ,  
Արև վառ մընէր մեր թագաւորին,  
Աստուած պահպանէր մինչի օրն վերջին:  
Գոտիկն էր կարմիր, կարէն էր կարմիր,  
Սոլերն էր սրբմայ, արևն էր կարմիր.  
Կարմիր հայ կարմիր թագուհուն բարե,  
Թագուհուն արե, ամենին բարե:

Էրթանք բերենք կաքաւն սարէն,  
Որ գէյր առնէր գուռն ի ծառէն, աք  
Ծընունդ դնէր սուրբ սեղանին, սը  
Բերնով բարե, թագաւորին:

Էրթանք բերենք սաղմոս սարէն,  
Որ գէյր առնէր պլտուղ ծառէն,  
Սարի ծաղկունք որ կըծաղկին, հմաֆ  
Տան շատ բարե թագաւորին:  
Ճուր մա շուր, հայ շուր մա շուր,  
Ճուրըն խաղա, իստակը շուր:  
Խաչ պահպան թագաւորին,  
Խաչ օգնական թագուհիին:

Ամեն մարդ իւր տուն,  
Թագւոր թագուհուն քաղցր քուն:

29.

### ԸՊԱՃԱՌՈՅ; ՓԵՍԱՅ

Փեսայ փեսայ, փիս երես,  
Թախսէ քօլօգ, սւե երես,  
Քըթի առջևն ի փուղոց,  
Ոտքերն ի սւե սւե անթրոց:

մի մէծ քորոց: Այդպիսի թանկագին զարդերը կըում են առաջաց սուլթան-  
ներ և պարսից շահեր՝ իրանց նուիրական և հանդիսաւոր օրերում:

Եղունգներըն ի սրղոց այսի զժ մ. Այս  
Որ տեղ զարնի՝ կանի լոց։ միասց  
Կանաչ գոտիկ բարակ մէջքին, ձգով.  
Մէկ կըքէլի, մէկ կիրիշկի, այս մ. Այս  
Աչքով ընքով իշմար կանի, ծառուով  
Աչքի ճոթով մարդ կըդաղի, միխոօք  
Քամին ի զարկ կըդանի։ զժ մդիօք  
Նոր ծըլած բեղիդ մեռնեմ, զժեղայի  
Որ ոսկէ թել կընմանի։ մ. առաջարան  
Կանաչ խառէն քիսացու, անդիք  
Կարմիր կովեր մըսացու, առ անք պի  
Ես եմ քո հօր փեսացու, մի իս առցոյ  
Դու էլ իմ մօր հարսնացու։ խոնդմ  
Արի էրթանք մեր բաղչէն, անդիք  
Քեզ կըտամ ոսկի մաղչէն թամաղէն \*),  
Քանի ժուռ է մեր սէլն ու սէլքան,  
Զեմ կըշտանալ քո անուշ հոտէն։ ան

30.

Իրիկվան բէրի գհախ էր.  
Դադարկ բըրդոց թևէս կախ էր.  
Աչքս կուլէր, սիրտս ուրախ էր.  
Խաբար էկաւ, որ տալերացըս մահ էր։  
Ես քեզ մեռնիմ, Ալխաս աղա \*\*),  
Տասներկու ժամ թամպեխ արա,  
Որ ձիկ չըբօւան անպոչ թաւալ.

\*) Սաղէայ, թամադայւ-արծաթեայ այն ճթաւոր զարդերն էին, որով էին ժամանակաւ կանաչք թէ ճակատնին և թէ գագաթնին զարդարում էին. աւելի գեղեցիկները հւասուած էին լինում նորը արծաթեայ թելերով, ընդելուզուած մի մաս թանկագին ակներով։ Այժմ հազիւ թէ գտնւում է Գնունեաց (Թիմար) գաւառի հայ կանանց մէջ։

\*\*) Ալխաս աղա, մինչ այն տասներկու իշխաններից՝ որոնք որպէս խորհրդականք ազգ. առաջնորդարանի՝ կառավարել են ժողովուրդ։ Հաւանական է որ դա լինի Թէրէմէղեան գերդաստանի նախանդամներից մինր։

Սարաղունջիս \*) մէկ ճար արաւ մ. այս  
Սարաղունջիս շուշտակն մաւի էր, որի  
Որ առնեմ տակ գըլուխըս կըցաւէր։  
Սարաղունջ ծալի դրի սընդուկ մ. այս  
Մէջը լըցի չամիչ պընտուկ։  
Սարաղունջը որ կախի պատէն, ուժ  
Վերէն թալի ատլաս կապէն։ մ. այս

31.

Պըտլոտուրն ինկե մէջ ական, մ. այս  
Սալեան էլե խարըբական, մ. այս  
Որ խըմես, անուշ խըմես, առաջ պի այս  
Որ չըլցես ջրուէն տանես, առաջ պի այս  
Հոգիս վեր վեր կըհանես։ պի ուստի

32.

Աղքեսսըն Աղետիրի երգ գ. մայդիք

Աղքեսսան \*\*), քաշան քաշան, մ. այս  
Զըմեռ կէլնեմ երկական, մ. այս  
Գարուն կէլնեմ կուրիսական։ պի ուստի  
Խաբար տարէք իմ ջրբաշին, մ. այս  
Որ ջուր լըցի մէջ ալնըլսին,  
Կըթալ կըթալ ցըրվի խալզին։ սոյոր նոյո

\*) Սարաղունջը ընտեր կերպաւոց քառանկիւնի ձեռւած մի կտոր զարդ էր, շրջանակ գրուած ոսկեթել ծովեր, կանաչ ու կարմիր հաստ երիզներով և ժապաւէններով ու գոյնզգոյն դերձաններով ասեղնագործուած. կլիսից մինչեւ մէջք ճածկում էր կանանց ետեւ, և ինչպէս պատմում են՝ զարանքէկ և Ալխաս աղան եղել են արգելք դորա գործածութեան. իսկ այժմ տակաւին գտնւում է Գնունեաց գաւառի հայ կանանց մէջ։

\*\*) Աղքեսսան՝ աղբէւր է ականներով բերուած. բղխում է Վանաչ Աշգեստանեաց մէծ պողոտայի, Խաչ-փողոցի վերև. որոյ ընդ միշտ նորոգութեան համար լինում է շատ անգամ վէճ, կազ և կոփւ տաճկաց և հայոց մէջ. զա մի հարստանարութեան մէջոց է զօրաւորներին՝ կեղեքելու աղքատ այգեստէրները։

Սալեան արէք քյու-քյուական, \* )  
Փողվենք էրթանք նրստենք ական.  
Կըցով խմեն, հոգիս հանեն,  
Զէլնի փառչով լրցեն տանեն: Օբաղալ  
Կօտը հողեմ մեր ջըրբաշին,  
Գեռ ըլտըւե՛ կառնի փէշին, արադալ  
Լէշիկ դընեմ վէր մեծ նաշին, միզմ  
Որ չըկըտրէր էն ջուր բաժին:  
Քանքանի տունը էլնի վէրան,  
Ախնը կոտրի, մընալ գէրան,  
Տարին հինգ հազար դուրուշ կէրան,  
Ջուրը չըհասաւ դահնի բերան:  
Աղքեասան ցածր ի Հին-Նորէն \*\* ),  
Պուտ մի ջուր չըծընծընալ փորէն.  
Քանքան պակաս չէլնե խորէն,  
Տիրվանք կըտրան թըլխթըմորէն:  
Քանքան կասի.  
Ի՞նչի ամառ պիտի զամ,  
Մէջ հով լաղըմներաց ման զամ,  
Խորելը սըրբեմ օր տասն անդամ,  
Որ չըփըլաւ, աշուն էլմ զամ:  
Զէք ուղե՝ զլուխս շիտկեմ կերթամ նաբաթ \*\*\*),  
Օրըմ դուրս կուգամ հալբաթ.  
Զեր խաթըր չըմընալ, չանէք գանդատ.  
Կըկըտրեմ տիրվանքներաց սընդուկ սաբաթ:  
Զօ շան Թումաս, շան պօլօճիկ,

\* ) Քո-քուայ՝ արաբական ամիրաներից մնացած արձաթեայ հին դրամ է:

\*\*) Հին-Նոր՝ առատաքուլս աղբիւրներ են Այգեստանեաց հիւսիս արեւելքում, որոնց ջրով ոռոգուում են նորատունկ այգիները:

\*\*\*) Նաբաթ՝ նշանաւոր հայաբնակ գիւղ է, Վանից 5 ժամ հեռաւուրութեամբ:

Կըպրտկըպիես օր կէտ տիւճիկ. Այս նարքը  
Որ հազս ուզեմ՝ կէլնես կուճիկ. Բայց առաջ  
Փախնես մըտնես նեղ պուրուճիկ: Եթէ այս  
Անչանք զարկի դըռան լանգայ: Եթէ այս  
Սոլըս մաշաւ, փորսողս ընկայ: Եթէ այս  
Եմ ումուս եմ՝ ներսանց դուրս դայ. Եթէ այս  
Ներսանց կըբօռայ, փարայ չըկայ: Եթէ այս  
Բալքի շատ քիչ իմ հաղըս տայ, Եթէ այս  
Թիւ որ չիտայ՝ քանց շուն ոռնայ: Եթէ այս  
Անչանք զարկի դըռան ճըկիկ: Եթէ այս  
Նա կընկան խետ կանէր խընջիկ.  
Անչանք զարկի դըռան տըկից,  
Մըտիկ չարեց, բըռնեց խաչից:  
Գեղ անիծի սուրբ Մըկըրտիչ,  
Իմ հաղըս տուր, թէ շատ թէ քիչ:

33.

ԱՆՁԳԻՄ ԿԻՆ

Անըզգամըն շուռ կուգար չարազով լօթով.  
Թայիմ նոր կըհագնէր, չէր մընար հընով.  
Աչքեր գեղ կըդընէր, ընքվերն էր ճոթով.  
Ստեղծող, դու ազատես շառիցն անըզգամին:  
Անըզգամի բերանը սովոր էր, կասէր վատ,

Ինչքան խըրատես՝ չըբըռնէր խըրատ,

Անըզգամի հետ գլուխ դնողն ի անդգամ.

Ստեղծող, դու փըրկես անըզգամի չարից:

Անըզգամի տիրոջ երես չըկար գոյն,

Անըզգամն օրերով չի մըտներ իւր տուն.

Անըզգամը շուռ կուգայ ինչպէս անտէր շուն.

Ստեղծող, դու ազատես շառիցն անըզգամին:

Անըզգամ ժուռ կուգար, կանէր թամաշայ,

Ոչ մարդուց կամաչէր, ոչ Աստուծուց ախ կըքաշայ.

Անըզգամ կանի չարութիւն, ինքար ու հաշայ. Ստեղծող, դու փըրկես շառիցն անըզգամին:  
Անըզգամ եղող սըրտէն կըխիվէր,  
Ինչ որ զըրուցէր՝ նըման չար դեւէր, այս Անըզգամ խելքէ մըտքէ թեթև էր, սոյօն  
Ստեղծող, դու ազատես բուխտանքից անըզգամին:  
Անըզգամ չար ի, չըբըռներ խըրատ.

Ինչ որ խըրատես՝ կէլնէն ինոր վատ.  
Անզըռամի տաղն ասաց քար կտրող Մուրատ. \*)  
Ստեղծող, դու ազատես շառիցն անըզգամին:

34.

ՍԻՐՈՅ ԵՐԿԵՐ

Քա սարի աղջիկ, քա ջամալ աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո բաժիկ տեսնեմ:  
— Զօ հարամզատայ, ձօ մէկ բէզգատայ,  
Մէշէն չես մըտե, սալվի չես տիսե:  
Քա սարի աղջիկ, քա սիրուն աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո աչեր տեսնեմ:  
— Զօ հայու տըղայ, ձօ քըրդու տըղայ,  
Բազառ չես մըտե, կըթղայ չես տեսե:  
Քա սարի աղջիկ, քա ջամբազ աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո ընքվեր տեսնեմ:  
— Քա հայու տըղայ, քա կըտրիճ տըղայ,  
Տաճար չես մըտե, կամար չես տեսե:  
Քա սարի աղջիկ, քա չէկրան աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո ծամեր տեսնեմ:  
— Քա հարամզատայ, ձօ մէկ բէկզատայ,  
Ճուկէն չես մըտե, սատաֆ չես առե,  
Ալմաստ չես տեսե, թաղպեկ չես շարե:

Դրունէն դուրս արե, քո երես տեսնեմ:  
— Քա հայու տըղայ, քա քըրթու տըղայ,  
Երկինք չես էլե, լուսնակ չես տեսե:

Քա հայու աղջիկ, խօրօտիկ աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո ծըծվեր տեսնեմ:  
— Զօ հայու տըղայ, ձօ կըտրիճ տըղայ,  
Բօստան չես մըտե, շամամ չես տեսե:

Քա հայու աղջիկ, քա ջէկրան աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո ձեռներ տեսնեմ:  
— Քա հայու տըղայ, քա խօրօտ տըղայ,  
Բազառ չես մըտե, բամբակ չես առե:

Քա հայու աղջիկ, քա ջամբազ աղջիկ,  
Դրունէն դուրս արե, քո բաժնիկ տեսնեմ:  
— Քա հայու տըղայ, քա սիրուն տըղայ,  
Եղին չես մըտե, պատրուս չես տեսե:

Քա հայու աղջիկ, քա ջամբազ աղջիկ,  
Դրունէն դուրս արե, ատամներդ տեսնեմ:  
— Զօ հարամզատայ, ձօ մէկ բէկզատայ,  
Ճուկէն չես մըտե, սատաֆ չես առե,  
Ալմաստ չես տեսե, թաղպեկ չես շարե:

35.

Իմ խօրօտիկ նազլու գիլբար,

Բիլա քեզի հալն ինչ անեմ,

Թէ կըսիրես՝ օըրտով սիրի,

Աստըվորիս մալն ինչ անեմ:

Ոչ քո սիրել, ոչ իմ ատել,

Կումաշ կըտրեմ առանց չափել,

Են քեափուր վարդը առաւ թափել,

Դատարկ փըրշերն ես ինչ անեմ:

Աչքով ընքով սիրտս կըդաղես,

\*) Քար կտրող կամ քարահատ Մուրատ բնիկ Քաջբերունեաց գաւառ եղցն է եղել, որու աշուղական երգերն մեծ եռանդով երգում են տեղացիներ:

Կաքաւ քէլքովդ հոգիս հանես.  
Բաժըդ նրման սալվի չինար,  
Առանց քեզի օրն ինչ անեմ:  
Գարդը շատ է աշուղ Զատին,  
Ընկեր եմ ձեռնովն անդէտին.  
Ֆալակ շուտով զարկեց գետին,  
Մնացի եարիս խիստ կարօտին:  
Առանց եարի ես ինչ անեմ:

36.

Չընկըռ չընկըռ իմ տամբուրէն,  
Հարսներն էկան պաղ աղբիւրէն,  
Պազիկմ առնեմ շող երեսէն,  
Որ խորովէր սրտիս եարէն:  
Օրմ աղէկ ես, օրմ վատ ես,  
Կանաչ գըլուխ գեօլի բաղ ես,  
Սըրտիս դարտին մինակ դեղ ես,  
Կանչեմ եարիկ, դու որտեղ եւ:  
Խըրեն էկան գեօլի պըռուկ,  
Չուռնէն կոտրաւ, մընաց տուտուկ,  
Աչքը մընաց տօլմի պուտուկ,  
Զատ անուշ էր խնամոց էփած ձուկ:

37.

Ուխտատեղ գընացող նազանի դիլբար,  
Նազերով նազըդ քաշեմ մուշկ-ամբար.  
Սէլրան գեահդ կանաչ խոտերով փըռուն,  
Վարդ ու կանաֆիլ, սօլերդ ճըռվըռուն:  
Մէկ գաղ քեաթաբով, մէկ խորոված կաքաւով,  
Նոր ծընած գառներաց բիրեան պիտէր քեյզ:  
Խուռմայ բանաւշայ, նուշ, նօղուլ, նօխուտ,

Արաղիդ գինուդ քեաղցըր մազա պիտէր քեյզ:  
Ճուշաբանդ էօդէք, պատերն էլ նաքըշ,  
Դոստըդ մէջ ման գեալու քունըդ գէյր անուշ.  
Զար նըշանով փէնջարէք, ալվան պիտէր քեզ,  
Նազըդ քեաշեմ նազանի դիլբար, ով ի նըման քեյզ:

38.

ՔԱԶԲԵՐՈՒԽԵԱՅ ԵՐԳԵՐԻՑ

Առաւօտուն թօնիր բոց, գմնեցր մուրան  
Արի մըտնենք իրար ծոց, մասնաւ մօւսիրան վրա  
Պաքմը ես տամ, պաքմը դու, մասնաւ մօւսիրան ուս  
Ցըրվի մեր գարդի խոց:  
Ռուրիկ Մայրամ, րուրիկ Մայրամ, րուրիկ Մայրամ,  
Ռուրիկ բարիսէմ, րուրիկ Մայրամ, րուրիկ:

Առաւօտուն թօնիր վառ, մասնաւ մօւսիրան  
Սիվտակ լաշիկ խառ ու մառ,  
Կարմիր սօլերդ թառ ու մառ,  
Դու կընմանիս զօգանի դառ:

Ռուրիկ Մայրեամ, և ալն:

Առաւօտ մաղէր փոշին.  
Իմ դօշ տամ քո դօշին,  
Թւելս թւելովդ ման տալի,  
Ինչ որ հալվէն մէջ լօշին:

Ռուրիկ Մայրեամ և ալն:

Առաւօտուն թօնիր մուխ,  
Աչքեր բալաք, ընքվեր թուխ,  
Արի էրթանք Մուշ, բուլանուխ,  
Ցըրվի մեր սրտի քէնն ու ոխ:

Ռուրիկ Մայրեամ և ալն:

Առաւօտ բարի լուսուն  
Ես մալիլ եմ քո տեսուն,

Քո կալան հաղար լիսուն,  
Համրեմ լցցեմ վէր քուռասուն:  
    Ռուրիկ Մայրեամ և այլն:  
Առաւօտեան բարի լուս,  
Աստուած պահէր մեր երկուս.  
Ծիլ-ծիլ կանաչ կանըչնանք,  
Թող դուրս դայ թշնամու լուս:  
    Ռուրիկ Մայրեակ և այլն:  
Արի էրթանք եալի ձոր,  
Դուզախ դընենք, բռնենք լոր,  
Լորի խորվածն անուշ էր,  
Դու կընմանիս կարմիր ինձոր:  
    Ռուրիկ Մայրեամ և այլն:  
Առաւօտուն ճըրագ վառ,  
Աստուած սիրես, դու ձիկ առ,  
Քաղքէ քաղաք առ ձիկ տար,  
Մէկը չըգայ մեր հաւար:  
    Ռուրիկ Մայրեամ, բուրիկ Մայրեակ և այլն:

39.

Էմալ էնեմ, էմալ էնեմ, էմալ էնեմ.  
Սարեր ձիւն ա, շրւարեր եմ,  
Եար պըզտիկ ա, մալուկեր եմ,  
Հետըս չեղայ, առնեմ փախնեմ:  
    Էլաւ էվար, կերթամ աղբէւր,  
Մէրիկ գեահն ի գայ իմ հարս-կիւր,  
Սիրտս ա բըլե, կուգայ արուն.  
Մէրիկ, մէկ ճար քո խեղճ որդուն:  
    Միւտիւրի կին, շուտ վեր էլի,

Գընա մէկ փոկէ մաղ ճարէ,  
Որ իմ էրկան հող տի մաղեմ,

Էվար էլաւ տակ տի դընեմ:  
    Էմալ էնեմ, էմալ էնեմ և այլն:  
Միւտիւր աղա, արեգ սիրես,  
Էսօր էրթաս, հիւսներ բերես,  
Որ քո լաճուն օրրոց շինես,  
Մէջը դընես օրօրս ասես:  
    Էմալ էնեմ, էմալ էնեմ և այլն:  
Կէս գիշերին է հաւխսասոց,  
Մէրիկ, ուր է կըտրիճ իմ ծոց,  
Թըֆըլ մըֆըլ ի մատղաշ մանուկ,  
Զըկէնայ ցըրուի իմ սըրտի խոց:  
    Էմալ էնեմ, էմալ էնեմ,  
Եար պըզտիկ ա շըւարեր եմ:  
Իրկուն էլաւ, ճըրագ կըպոց,  
Պըզտիկ էրիկս դընեմ օրրոց.  
Կըտրիճ չունեմ որ տեղ իսկեմ,  
Էրկէն գիշեր քաղցրիկ խուեմ:  
    Էմալ էնեմ, էմալ էնեմ և այլն:  
Էրիկմ ունեմ, հաւու ճուտ ա,  
Քըշենք փակեախ, ժող խոտ ուտալ.  
Էրիկ մի ունեմ, եղին դեղին,  
Կընըմանի գարնան եղին:  
Զեռնէն բըռնեմ տամ գըրողին,  
Թողնեմ էրթամ հետ սիրողին:  
    Էմալ էնեմ, էմալ էնեմ, էմալ էնեմ,  
Սարեր ձիւն ա, շրւարեր եմ,  
Եար պըզտիկ ա, մալուկեր եմ:

40.

ՄԱՅՐԵԱՄ ԱՂՋԻԿ  
Երկու ծամաւոր աղջիկ  
Կուժը ձեռ աղբիւր գընացին.

Երկու թուխ-թանաք կըտղիճ  
Զինը խէծած ինոնց իտե գընացին:  
Աղջիկ, դուք ձեր Աստուած կըսիրէք,  
Տղբեւրից մէկ պաղիկ ջրիկ:  
— Զօ լաճեր, ձեր կանաչ արև,  
Աղբէրի ջըրերն են տաքցե:  
Աղջիկներ, դուք ձեր արև կըսիրէք,  
Տղէք ձեր բաղչից մէկ փունջ որհան:  
— Լաճեր, ձեր գեօղալ արևն ի խարար,  
Մեր բաղչի որհան ի չորցե:  
Աղջիկներ, դուք ձեր բախտն ու արև,  
Տղէք ձեր ծառից մէկ կարմիր խընձոր:  
— Լաճեր, ձեր կանաչ արևն ի վըկայ,  
Բաղչի ծառն ի չորցե, խընձոր թոռոմե:  
Անչափ ձեզ ասինք, գնացէք էկէք մեր տուն,  
Մեր հէրն ու մէր ձեզ պարտքընտէր արէք,  
Մեր հօրն ու մօր կամքն ու խահիշով  
Կըհանէք ձեր սըրտին մուրատ մուրազով:  
Ուռումայ ձեզ քամար բերենք,  
Ջալահիր ակունքըն վերէն.  
Ալ-կարմիր սուֆրէն փըռենք,  
Ուր չորս ճոթ կանանչն ի բաղի աւ  
Երկուադ էրկըսիս հաս ի կսմ հալալ,  
Աստուած թող անի մեր սէրն էլ հալալ:  
Երթանք սարն ի վեր քաղենք մանիշակ,  
Սիրուն ծաղկըները անենք մեր դօշակ:  
Մեր սէր ձեր սիրուն կէլնի բարէմբար,  
Մեզ աչքով կուտայ փօղնի կալանդէր.  
Բաղի բիւրիւներ կարօտ են վարդին,  
Մենք վարդ կըքաղենք հասնենք մուրազին:  
Մուրազատուր սուրբ կարապետ.  
Էկէք խաղանք իրար հետ:

41.

Քա սեաւոր ծուռ մասկարայ,  
Ճուռ վեր էլի, տախտն աելա,  
Որ Յվանէս երդուց որ գայ,  
Ճիլայ շապիկն ծալ ծալ արա:  
Ա՛խ, Յվանէս, մօր մէկ որդի,  
Գլըրողն ու մահ քեզ չըխորտի,  
Քիեզի լայեղ է քահանայ,  
Բուրգառըն ձեռքդ, խունկըն վերայ:  
Փամու շապիկ որ կարեցի,  
Փիլոնը հետ փաթըթեցի,  
Արբոց աւշե մամ վառեցի,  
Արդուս արեւն աղաչեցի:  
Մարէ մարէ, տօկերդ հագի որ ճըռվըռայ,  
Լաչիկը խկի որ ֆըռ-ֆըռայ,  
Էլի գընա դէմ շուկային,  
Տես սիրոյ բանը ինչ միւշքիւլ ա:  
Մարէ մարէ, մէրիկ սիրուն,  
Էլի զինի մաքին սուսուն,  
Աղքատներին կերակըրի,  
Ազա փաշէն որ ձիկ սիրի:  
Որ չըսիրի՝ տունտ կաւիրի,  
Կարիկ իմ ձեռնից կըխըլի,  
Սըրտիկըս կանի դարբէգար,  
Կընկընեմ ծովեր, սարէ սար:  
Քա Յվանէս, իմ մէկ որդի,  
Գլըրողն ու մահ փաշէն տանի.  
Սուսուն մաքին ինչի զինեմ,  
Խոր ինոր կերակըրեմ:

42.

ՍԻՐԱ;ԱՐ ԱՂՋԻԿ

Անտակ գաշտէն քարփանմ՝ էկաւ.  
Քարփանի մէջ ջորի մի կէր,  
Ջորու վերէն սընդուկ մի կէր,  
Սընդուկի մէջ կութի մի կէր,  
Էն կութու մէջ աղջիկ մի կէր,  
Տիպն ու պատկեր հըրեղէն էր:  
Աղջիկ աղջիկ, անունդ ինչ ի,  
— Գրողի տարած, դաւիդ ինչ ի.  
Աղջիկ աղջիկ, սէրդ ինձի տուր:  
— Գրողի տարած ես ուր, դու ուր:  
Որ հէրս իմացաւ՝ քեզ կըսպանի,  
Թըրով զարնի հոգիդ հանի.  
Արունդ հետ բօղ գինուն խըմի,  
Նամ ու նըմուշդ հիշ չերևի:  
Իմ անուն ի Սալզուն փաշայ,  
Հատերի խելքն միտքն ես տարալ,  
Հատերն ինձի քարով տրւին,  
Հատ չար դրոնից ընցայ դարձայ:  
Կանչեմ գիշեր, կանչեմ ցերեկ.  
Էսօր աղէկ եմ քանձ երէկ:  
Սըրտիս ուզած ջէկրան բերէք,  
Թալլաք բերէք, էլմ էլ տարէք:

43.

Աղջիկ աղջիկ, ես քեզ գերի,  
Կըրակդ ինկե սիրտս կըդաղի,  
Պալանայ բոց բերնէս կէլնի,  
Կուց մի ջուր տուր, չէլնի իրիցի:

— Տըղա տըղա, հայու տըղա,  
Առ քո շէնք շնորք, վեր կաց գընա,  
Մեր տուն ձեր տուն շատ հեռի ի.  
Քո սէրն մօտ ձիկ ինչ բան ունի:  
Մէրիկ մէրիկ, ան իմ մէրիկ, ես քեզ մեղայ,  
Կըթդէնը ձեռ կըշողշողայ,  
Աղունը վերէն կըֆրո-ֆրոայ,  
Գեօ ես խըմայ, գեօ ես մեռայ:

44.

ԸՆԾՊԱՏԻ ՄԵՐԴՈՒ ՍԵՐ

Մէկ պըզտիկ մարդըմ կէր,  
Անապատայ վանք կըմընէր,  
Օր կորեկէ հաց մի կուտէր,  
Աղքատներաց բաժին կհանէր:  
Մէրն իւր սիրով ինկեր էր,  
Նորա սըրտի պըրակին մէջ:  
Գիշեր ցերեկ սազմոս թողած՝  
Գեվերաց հետ կանէր վէճ:  
Մէկն ասաց. զանենք թուլցուցենք.  
Մէկն ասաց. ոչ, զանենք կուրցուցենք,  
Սալզուն փաշի \* ) սէրն խեկնք վերէն,  
Ինոր կըակովն իրիցենք:  
Կըտոր մի տեղ որ գընաց՝  
Սաղմոսարան զըլորեց:  
Կըտոր մի տեղ որ գընաց՝  
Աւետարան էլ թողեց:  
Կըտոր մի տեղ որ գընաց՝  
«Խար-մեղէն» էլ հետ մոռցաւ,

\* ) Սալզուն փաշէն այն երևակայեալ հիւրին է, որոյ սիրովն մնում  
են խելագար ցնորամիտ տարբածուները: Այդ տեսակ երեակայեալ մոլու-  
թեան աւելի ենթակայ են մուսուլմանները:

Կանոն սաղմոս, շարական,  
Խաչ, աւետրան էլ մոռցաւ.  
Սիրոյ կրակին հետ մոռցաւ  
Անապատայ սարքն ու կարգ.  
Տըւեց խաչը, առեց տամբուրէն,  
Էլ չըթողեց սիրոյ թարկ:

45.

Տըկլող քամկով գեադ կըրեցի,  
Բոբիկ ոտնով փուշ կըրեցի,  
Ես գըրեցի, ես կարդացի,  
Զիւմ իրիկուն աղօթք արի:  
Եարաբ, էլնէր, էն տին ինձի.  
Սըրտիս դարդելըն խորովի.  
Ես դարդ չունիմ ուրիշեց,  
Դարդիս ճարն ի ինորից:  
Օրն էր շաբաթ լոյս կիւրակին.  
Բաժկին պակսաւ պատարագին.  
Ինոր սիրուն քաղաք դնացի,  
Զիւմ էգէստար մէկ վազեցի:  
Էգէստարայ կար ու կանաչ.  
Աստուած պահի քեռ խօրոտ լաճ,  
Պտիկմ գինի տրւէք տանեմ.  
Փամ պատարագին հասցընեմ:

46.

ՀԱՐՍԱՆԻՔ ԵՒ ԳՈՎԱ

Պարկապօք փընեցին, տամբաբօք զարկեցին.  
Աճառ եղները լընեցին, կըսոն վէրէն դըրեցին.  
Տարան էկղեցին, էկլէկեցին,  
Պատախօսը կայնեցուցին,

Հա ասին, հա խընդացին, պառավ մ չխալ  
Հազար թերթէն քըրքըրեցին, այլ խարը  
Կարթացին ու պատմեցին: Ի մասն արք  
Խալիս զըմէն պար բըռնեցին, խաղացին,  
Ջըհէլներ գացին, հարսի թիվէն բըռնեցին,  
Խաչ աւէտնով դուրս հանին: Ամրայի  
Ջատըխցու տըգէն բըռնեց զիմ ձեռից.—  
Ինչիս որ իմ սիրտըս վըխվրկէր. Ի՞նչոր  
Ոտն ու ոտիս, ձեռն իմ ձեռիս կըսցըրեց.  
Բութուն իմ անձըս վըշամըզեց:

Ես կըլի հա կըլի, պառավ մամարք  
Արուն էրցունք կըթափի: Այս սկսած ոչի  
Իմ մէրը կասէր. հէր կըլաս, կան ման  
Հէր նազ կէնես կըմըղկըտաս: Գր սցցին  
Էսօր կէրթաս, վազ կըգաս, մարք ոչ  
Մէկ կէրթաս, էրկու կըգաս, աց մանը  
Պարտակ կէրթաս, լիք կըգաս, պաշցին  
Էսօր կէրթաս, զատկին կըգաս, և նման  
Պիպիկ պիճոն գըրկես կըգաս:

Ծառ-զարդարին, հարսն ի բարին,  
Փողքն վեր գըլխին, տանին հէրանց. Ա  
Թազա դարձին շուռ-մուռ տըւին, ցուաչ  
Թազա շորերն թազա հարսին, նախալ  
Վիզն ու վըզնոց դեղին ճըտնոց:

47.

ԵՂՈՒՆԻԿ ԽԱԹՈՒՆԻ ԵՐԳ

Եղունիկ \*) նըստե բակն ի լըւաց,  
Մարմար ծըծուեր դօշերն ի բաց,

\*) Եղունիկ նշանակում է Աղաւնեակ: Պասպուրականում թռչնոց  
անուններով կանչում են շատ մի կանանց անունները և դաշտ է գոր-

Սախէն կոտրաւ, ջըռէն մընաց,  
Ազապ լաճու շապիկ մընաց:  
Եղունիկ հանին շուկէն բազար,  
Եղունկէ գինը երկու հազար,  
Իմ եար կառնի աչիչ նազար,  
Կուզես հարիր, կուտամ հազար:

Էն Եղունկանց բարձր օրոսպաց  
Կութնի դօշակ, Բուրսայի բարձ.  
Եղունիկ պառկե իրեսն ի բաց,  
Ուր եար տեսաւ սիրտը դընաց:

Եղունիկ նըստե քարզահ կանի,  
Ուր եարն իկե դուռ կըտրփի:  
Աման մարէ, շուտով հասի,  
Խելքըս գընաց սիրտս կըմարի:  
Էն Եղունկանց բար ու բաղչէն,  
Արծաթ քամար սըրսուռ մաղչէն.  
Զըկըշտացաւ անուշ հոտէն,  
Առնեմ մըտնեմ նրիշշուն օդէն:

Վարագայ սար բացվե լալա.  
Եղունիկ բերե ջուխտըմ բալա.  
Մէկն ի ապան, մէկն ի կափլան,  
Քանց մէկըզմէկ են աննըման:  
Սալամ դաշին կուտան սալին,  
Եպմէն կուտան բոլոր ֆէմին,  
Եղունիկ կառնեն մէջ կաֆասին,  
Ուրախ կէլնեն հըմէն տարին:

48.

ԱՆԹԱՐԱՄԻ ԵՐԳ

Անթառամ նըստե կով կըկըթի,  
Ճաճւում աւելի հարուստ դասակարգի մէջ: Բուռն հայկական անունները  
շատ աւելի տարածուած են միջին դասակարգի մէջ:

Ուր եարն իկե դուռ կըտրփի:  
Եարիկ, վեր կաց փալխէն փախի,  
Աղա փաշէն մարդ կըկախի:

Թազայ ցորեն թափի տարկեահ,  
Իմ եար փախե մըտեր փակեախ,  
Զէնն ի հասե աղա փաշէն,  
Հերիք կախվես իտոր փէշէն:

Կուզան քանդեն քո նորաշէն,  
Քեզ դարբէդար կանեն շէնէն:  
Աար սիրողի սօնը փուճ ա,  
Գըլուխըրդ առ, մէկ եան գընա:

Արևն առե ալ նարընջի.

Հերիք անես ձիկ զարընջի.  
Էրկէն գիշեր, էրկէն խաբար,  
Աստուած սիրես, արե ձիկ առ:

Արևն առե վէր խաչերաց,  
Ես մեռնեմ քո թուխ աչքերաց.  
Աւ-սւե ունքերդ սիրտըս մաշեն,  
Կարմիր թըշերդ խելքըս տանեն:

Քօշկիդ մեռնեմ կանադներաց,  
Արե ձիկ առ մէջ քո տեղաց.  
Քո տեղերաց հոտն անուշ էր,  
Վարդ նունուֆար մէջ կըբուրէր:

Արևն առե Ամկու \*) փէշեր,  
Արի պաքնեմ ես քո թըշեր,  
Քանձ խընձորի կարմիր ի քո երեսդ,  
Տուր որ պաքնեմ քո թուխ ընքվերդ:

\*) Ամիկ՝ մեծ գիւղ և մեծ աւան է Գնունեաց գաւառում, Վանաչ հւեսակողմ, ծովահայեաց բազմաթիւ այգիներով: Հին Ամիկ, որ գտնւում է համանուն բերդի ստորոտում՝ այժմ աւերակ է. թէ հայ թէ թուրք բնակիչք այժմ այգեստանեաց մէջ են քաշուել: Ամկու բերդը երեք կողմից անառիկ գիրք ունի և մի կողմն է ծով:

Խաբար տարէք տէքըրկընկան,  
Թող ձեռն զարկի վէր իւր ծընկան.  
Աղջիկ ու լաճն զերար տեսան,  
Թող պըտըղտի կարմիր մէրջան:

49.

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ ԴԱՅ ԳՎԱՐ:

Մուշ ու բուլանուղ ինչ անուշ տեղ էր.  
Աղջիկ, քո խաբըկ իմ դարդին դեղ էր.  
Թըծվերդ էր ուռե, ես ասի նուռ էր,  
Արի ձեռլս պարզեմ դու ասիր ժուռ էր:  
Թէ ժուռ թէ հասուն,  
Մօտ ձիկ կաբուլ էր,  
Թէ թանկ թէ էժան,  
Մօտ ինձ մագբուլ էր:  
Սըրտովս եմ սիրե, մարդ չարե զոռով.  
Արե բարբշնք, մի մընա խըռով.  
Վեր մե են անկսե աշխար ալամով.  
Մե կուտան բըռնել ազա ամիրով:  
Դաղիկ եմ ցանե, չորս բոլորն ի վարդ,  
Վարդի խոտն անուշ կըցըրվի իմ դարդ.  
Փընջիկ մի քսողեմ, օղարկեմ եարիս,  
Կարօտըս չըմնար վէր աստըլուիս:

Սիրոյ կըրակին մարդ չի դիմանալ,  
Թէ ինչ որ սիրենք մեղ կէլնի հալալ.  
Էրունք ու թըռչունք ընկերով կապըին,  
Անընկեր չի ապրեր ոչ մի ադամորդին:  
Ծիրանն ի հասե, խազողն ալաջալ.  
Երկու եար ունեմ, մէկ հին մէկ թաժալ.  
Հընին շատ բարե, նորին շատ արե,  
Երկրսի կարօտն էլ սըրտիս վերե:

Արե, եար, արե, մի կենա խըռով,  
Սըրտովս եմ սիրե, մարդ չարե զոռով:  
Զօռով բան չէլնե սըրտի ուզածին.  
Զօրաւոր նետեր դըժմընի սըրտին:

50.

Երէկվայ լուսին, էս աւուր արե, մի ան ոդ  
Մեր դըռնէն ընցար, չըտըւիր բարե, մէմընի  
Մաշտենք խըռով իր չըտըւիր բարե,  
Թէ ձիկ թարկ արիր, ուրիշն ես կընդեմ  
Կանչեմ, եար, արե, մի աներ նազիկ;  
Դըռնից մի երիշկեր, մի աներ ձիկ-վիկ,  
Կանչեմ, տօսթ, արե, լըսիր իմ ձէնիկ,  
Բանն Աստուած զիտի սիրեր եմ քեզիկ:

Էսօր լըսեր եմ, քո գեռն փոխեր ես,  
Ինձի թողեր ես, քեզ եար ճարեր ես.  
Աստուած մուպարաք, բարով վայելես,  
Իմ մեղաց դիմաց մընաս սեներես,  
Կանչեմ, տօսթ, արե, սարեր լացուցեմ,  
Ճատ կարիպ կուրպաթ ճամբէն դարձուցեմ:  
Կանչեմ, եար, արե, մի մընա խըռով,  
Սըրտովս եմ սիրե, մարդ չարե զոռով:

51.

Դու կըքէցես հետ ծովու ափան,  
Ճօրօր-մօրօր բաժիդ կուրբան:  
Ին քեռ սիրուն խաւեր թափան,  
Հոգիս հասաւ գէմ կըլըթան:  
Նուռ կօղօրկես, նուռն ինչ անեմ,  
Սիրուդ կըրակոլ կըմաշվեմ.  
Ես քելա քեզ ումըն ինչ անեմ,  
Աստըվորիս մալն ինչ անեմ:

Զատու եմ եկե, եկեր եմ քեզ տես,  
իկայ կըտեսնեմ, անուշ քըներ ես,  
ձէն վարդ երեսիդ խանգեալ արեր ես,  
Արի թէ պաքնեմ վախցայ թէ զարթնես:

Երեսդ ի փթթե նըման վարդի քօլ,  
Թէ կուզես արծաթ՝ կուտամ ոսկի բօլ.

Քո սէրն իմ սիրոյս կապենք կապկըրպենք,  
Անցնենք սար ու ձոր, էրթանք Ըստամբօլ:

Կանչեմ, եար, արհ, եարիկս ձէն չխտայ,  
Ինկեր է քաղցըր քուն, անունս էլ չըկայ:  
Արթուն թէ քընած՝ ընկեր եմ քո փէշ,  
Կըմեռնեմ սիրովդ, կըտեսնես իմ լէշ:

Ճատ գայի էկայ, ընկայ քո վըզով,  
Սըրտիկս դէմ արի, մացի կարօտով.  
Հաստատ քո ջուղաբ չըտրւիր ինձի,  
Թէ հա կամ թէ չէ ջուղաբ մի չառի:

52.

Քո գըրկանոցն ոսկի սենեակ.  
Ա՛խ, մի թողներ գու ձիկ մինակ.  
Ով ձիկ ասի որբ և այրի,  
Էրթայ ընկնի աշմու գերի:

Առաւոտուն բարի լուսուն,  
Քո կօճակներ հարիր լիսուն:

Ես կարօտով եմ քո տիսուն,  
Իմ խօրօտիկ նազլու Սուսուն:

Արե էրթանք էն սարն ու բէր,  
Ոչ բէրն էլնէր, ոչ բէրի տէր.

Ես եմ մինակ քո սիրու տէր,  
Մինակ ես դու մըտնենք մեր հէր:

Արի էրթանք Վանայ դաշտիր.  
Աստուած քեզի ինձի տըւեր.

Թէ ինչ կալատ-պըլատ ունեմ բայ  
Ասա, ինձնից մի ամաչեր:  
Ակըուփու \*) դաշտ դար ու փոթ ի,  
Զեռացդ մատնիկ խաս ալմատո ի,  
Քեզի սիրելըն թանկ արժի,  
Քեզի թողնելն էլ ափսոս ի:

53.

Տընէն էլար, կախար տանիս,  
Քեզ տեսնելուս մաշաւ իմ միս.  
Բաժը նման ի զարնան կամիշ,  
Ասի կըտրեմ, չէլայ կիմիշ:

Տընէն էլար, հաց կըտանես,  
Ազաբ լաճուն աչքով կանես.  
Որ մօտենայ՝ աղբէր կասես,  
Որ զատանայ՝ սիրով մաշես:

Մեր տուն մօտիկ, ձեր տուն մօտիկ,  
Էրթանք քաղենք որթկան խոտիկ.  
Իմ եար քսինց քոն շատ խօրօտիկ,  
Եարօջս մեռնիմ, անուն Վարդիկ:  
Վարդիկ սիրուն ի վարդի նման,  
Բիւլբիւներ վերէն հէլքան էլան.

\*) Ակըուփի, կամ ըստ տաճկաց Աղ-քօփի (սպիտակ կամուք), կամ ծովահայեաց Ա. Աստուածածնի մատու՛ քաղաքամասն է Վանայ, այգեստանեաց հրւսիսակողմ. ուխտատեղի է հայոց, աւելի կանանց դասին, ուր դիմում են այրուածք ունեցողները: Բոլորովին տաճկաբնակ թաղ մի է: Պա մի ապաստանարան է զանազան կարգի ոճրագործ քուրդ, թուրք սրիկաների, գողագարան, աւազակների բոյն: 1896 յունիսին Վանում տեղի ունեցած հանրացին կոտրածի և խժդութեանց մէջ մեծ գեր ունեցան սոքա. կողոպտեցին, այրեցին մերձակայ բազմաթիւ հայ տներ և երկու եկեղեցիւ և իրանց մերձակայ ծանրաղի գիւղն, բնակիչքն սպանելով և այրելով: Ակըուփում են պահում շատ մի առեանգած, բանի մահմէդականացրած հայ աղջկունք և կանայք. վերջապէս դա տաճկաց Արշակւանն է:

Վարդ որ պղտկէր՝ ծաղիկ կըտար,  
Վարդիկիս հոտը մէջէն կուտար:  
Դարի տըլէն մուխ կուգէր.  
Աղջիկ լաճուն հիւր կուգէր.  
Սիրած սիրածին տիւր գէր.  
Եարոչ աչիչ ջուր կուգէր.  
Բարձ վերուցեմ հոտ կուգայ.  
Կարմիր խընձոր տիւր կուգայ.  
Խընձոր կիսից կըծած էր.  
Չորս բոլորն արծըթած էր:  
Խընձոր եարոչ տըւած էր,  
Եալոչ ծառից պղրծած էր.  
Ասի տապկեմ կէս անեմ,  
Չըկիմիշայ որ ուտեմ:

54.

ԿԱԹՆՈՎ ԱՂԲԻՒՐ

Կաթնով աղբիւր \*) անուշ տեղ ի,  
Չորս բոլորը մանդակ բող ի,  
Լաճերաց մօր ուկտատեղ ի,  
Աղջիկներաց ծաղկատեղ ի:  
Կաթնով աղբիւր ձորամէջ ի,  
Հոգոց վանից ճամբա միջի.  
Խընձենք ջըլիցն անմահական,  
Լողանանք մէջ Տիգրիս ական \*\*):

\*) Կաթնով աղբիւրը Անձեւացեաց (Խօշապ) գաւառում հոգւոց վանք տանող ձորամէջ ճանապարհի վրայ է, ուր հանգստանում են ուկտատօք, որոյ ջուրս արդարեւ սպիտակ և համեղ է՝ որպէս կաթ։ Կաթ չունեցող մարմերը ջերմեռանդութեամբ դիմում և անյագաբար խմում են սորա ջուրն։  
\*\*) Տիգրիս գետի արեկելան մի մեծ ճիւղը սկիզբն է առնում այս գաւառի պատմական Կանկուտու գիւղի լեռներից, և անցնելով հոգւոց վանից առջելից, Կասրիկայ գետին հետ կազմում է մի փոքր դէլտա, մտնում է

Վէր աղբըրին որ կայներ ես,  
Թուխ աչքըր թուխ դեղ դըրեր ես.  
Զիլիֆըր ճօղ-ճօղ ճօղեր ես,  
Լաճերաց սիրտն արուներ ես:  
Հոգոց վանք՝ ձորամէջ ի,  
Մեր տուն ձեր տուն թաղամէջ ի,  
Ձիկ խաղք մի անե մարդամիջի.  
Եար սիրելը խօ ամօթ չի:

55.

Զարկեցէք ոսկի ցըցեր,  
Թամբեցէք բէօղ բէօղ ձիանք.  
Փըսեցէք արփշըմէ ծածկոց,  
Իմ եարկւս խէծնի վըրան:

Կըթանք վէր Մըրալ թալան,  
Բերենք շատ հարսն ու փեսան,  
Հարսներ մեր գեղին տանտկին,  
Փէսէք մեր դաշտին նախրորդ:  
Ճատ քեռը ունեմ շատ աղբէր,  
Ճատ աննըման մեր կըտրիճներ.  
Իմ քեռերաց ատլաս-դարակի շապիկ,  
Աղբէրներացս ոսկէթել զօտիկ:

Խտա գիշեր ես գուրս էլայ,  
Էրկու բալաք բուրջ \*) տեսայ,  
Մէկ սօնա, նոր հարս ու փեսայ,

այն ընդարձակ ուրբապոյտ ձորն, որն տանում է մինչ ձատախ գաւառական քաղաքը, ապա թեքուելով դէպ հարաւ՝ Սղերդի վիճակում աւելի մեծ ծաւալ է ստանում։

\*) Բուրջ նշանակում է անառիկ ամրոց, այսինք փոխաբերաբար դըրուած է, ցոյց տալով որ հարսն ու փեսան անբռնաբարելի են։ Նմանապէս օրիորդաց համար ասում են՝ անմատչելի բերդ են նոքա. — մէկը չէ համարձակում նոցա բունաբարել։

Նոր արև նոր լուսին մեր գեղի վրայ:  
Հարս ու փեսին փունջ մանուշակ,  
Ատլաս լըհէֆ վերէն, տակ դօշակ.  
Թող խորսվէր սըրտիս կըրակ,  
Որ չըրեցէր ինոնց պըրակ:

56.

Խօրօտիկ Աղքիկ

Խօրօտ խօրօտ դարակի,  
Երկընավիզ սիւրակի,  
Խօրօտ աղջիկ մէկ հատ ի,  
Խօրօտի ծոց գեհեն ի:  
Խօրօտ չէլնէր ինչ կէլնէր.  
Խօրօտ սարեր ծրվարէր,  
Խօրօտ ձորեր թող շուռ գէր,  
Որ սւ շիվար ձիկ չանէր:  
Խօրօտ շահի վաստակ էր,  
Չամիբամ մօր բերած էր.  
Ոսկի խընձոր բերան էր,  
Ոսկի օղերն ականջն էր:  
Սըրմայ ծամից մազ մի քաշեմ,  
Ֆաղիկ քաղեմ դաստայ կապեմ,  
Սղար լաճու մօրն օղօրկեմ,  
Կոտրած սըրտից խաթրըն առնեմ:  
Բարձրը տանիս տանի վըրայ,  
Մէկ ձիմ' տըւէք հեծնեմ վըրայ,  
Երթամ առնեմ էն աղջիկ թուլս,  
Ինքը թուլս, ուր ծամը թուլս:  
Խօրօտիկ ծամի կապերն էր թուլս,  
Սւ սաթի նըման էր թուլս-մուլս.  
Խորդեցէք աւելեցէք շուտ,

Իմ խօրօտկին տեղ շինեցէք:  
Դանակն առէք, սիրտ ճըղեցէք,  
Բամբակով արունը ժողվեցէք.  
Ինքն էր սուրբ, ուր արունը սուրբ,  
Լոս տաճարին մէջ դըրեցէք:

57.

Կարմիր կանաչ գեռն-գեռն ծաղկունք,  
Դաշտերն ամեն էրունք, թըրոչունք,  
Աղբերանց արուն մէջ քարերուն,  
Երթէր լըցվէր բարակ առուն:  
Հայրան, ես բարձրիկ Մասիսն եմ,  
Ամեն կողմից կիրիշկեմ,  
Ես մօր-մօրիկ ձիւն հալեմ կաթեմ.  
Հալեմ կաթեմ վէր քո թևերուն,  
Հալեմ կաթեմ շամամ ծըծվերուն,  
Շամամ ծըծվերուդ մէջ առնեմ քուն.  
Ծալ տամ ծալ դընեմ թևիկս ի քեզ բարձ,  
Տիւ քէլի, ես տօտիկ կանեմ քո խովանց:

58.

Զիկ կեավիկ \*) պիտէր, զըղղըղէր վըր խոտերաց,  
Կանաչ ու կաղմիր փարտէք կապած:  
Զիկ դընարբուկ \*\*) պիտէր փունջ կապած,  
Իմ եարոջ իտւեն օղօրկած:  
Արի արի, իմ նաղլու եար,  
Ճողշողան մատներիդ էլնեմ ես հայրան,

\*) Կեավիկ լայնատերե բանչար է, որ օդինի (շբէշ) հետ տապակում են:

\*\*) Գնարբուկ խիստ անուշաբուր կապտագոյն ծաղիկ է, թզաւափ երկարութեան բարակ ցօղունով. շատ առատութեամբ բուսնում է Վարագայ եռան շըշակայքում, աւելի ճախճախոտ տեղերում:

Զըմէն մատիցդ հազար բիւր հունար,  
Անկալատ ես. տէր քեզ պահի ձիկ համար:  
Իմ սէր քո սէր թող զըղղըղէր,  
Զըղղըղէր, էրթէր խառվէր Զըղիրէն \*).  
Զըղիրէն Տիգրիս գետ թող տանէր,  
Տանէր ու թողնէր անտակ ծովեր:  
Անտակ ծովեր, անսահման դաշտեր  
Հէր տեղաւորէր մեր սուրբ սէր:  
Չիւմ օրն մահուն մընանք սահուն, էրէրուն,  
Չիւմ տէրն առնի իւր ամանաթըն հոգուն:  
Արի քեզ առնեմ վէր թևերուս,  
Չիւմ էս գիշեր հանենք լուս:  
Ախ, եարիկս ինկեր է տանիսն ի քուն,  
Երեսըն դէմ արեր դէմ աստղերուն:  
Եարիկ, հոտիկըդ մարդ կըսպանի.  
Կամ ձիկ տուր դաստուր, կամ ձիկ սիրի:  
Նա կը սիրի, նա կուտայ դաստուր.  
Չիւմ հալի թափի իմ անձն ու ոսկուռ:

59.

### ԲՈՐԻ ԳԱՐՈՒՆ

Ինչի կուլաս կուց-կուց էրուն.  
Թէ զեօ իրե բարի գարուն,  
Կըրացուի դուռ հարաւ քեամուն,  
Մեր ապրելիք վէր Աստղուն:  
Աստուած կանի մեզ երկու ճար,  
Նըշան կուտան երկու հազար.  
Ոչ հազարն պիտէր, ոչ երկու հազար,

\*). Զըղիրէ Միջագետաց մէջ քրտաբնակ քաղաք մի է, որոյ առջևից անցնում է Տիգրիս, Նաւակներով, գետի հոսանքով միայն, կգնան մինչ Պասրայ և Բաբելոն:

Սըրտով սիրածին մարդ էլ չի խաբար:  
Վայ, իմ բէրախտ մէրիկ,  
Որ ձիկ չի տըւիր սինամայ հաւքուն.  
Ձիկ տըւիր կոր-կոր բուերուն,  
Որ առնեն տանեն իրանց երամուն:  
Վայ, իմ բէրախտ մէրիկ,  
Որ ձիկ չըտըւիր իմ սիրած մարդուն.  
Առնէր վէր ուր թևերուն,  
Տանէր վէր ուր գարձրիկ սարերուն:  
Վայ, իմ բէրախտ մէրիկ,  
Ինչի ձիկ չըտըւիր սինամայ հաւքերուն.  
Չիկ տանէր վէր բարձրիկ սարերուն,  
Սարերուց վէր բարձրիկ ծառերուն,  
Բուն շինէր մէջ քարերուն,  
Չիւմ էլնէր մութն իրիկուն.  
Չիկ ձէնս ասէր, զըրկէր, զիրկն առնէր,  
Իմ սըրտիս դարգերն խաւըրէր:  
Որ գէլը, լուսն ի բարին ճըլվըլէր,  
Չիկ քաղցրիկ քընուց վեր անէր.  
Գըլուխ լըւէր գեղտի ջըրերով,  
Ծամերս իստրկէր ոսկի բաղերով,  
Վայ, իմ բէրախտ մէրիկ,  
Որ ձիկ տըւիր կոր բուերաց,  
Տարան թալին մէջ քարերաց,  
Բուն շինեցին մէջ գեազերաց:

60.

Էս վճվ ի, էս մըթան, էս գիշերին,  
Որ էկան նրստան վէր էրտոփին,  
Էրտիս բացին, ձիկ-վիկ արին,  
Իմ սիրոս ու միտը խըլեցին:

— Թէ վարդ ես, հոտըդ մէր է,  
Թէ շուշան ծաղիկ, բունըդ մէր է,  
Վարդ բիւլքիւլզին ի շէն ու շէնիկ,  
Ճուշան ծաղիկ՝ ուր հոտովըն անուշիկ;  
— Ոչ վարդ եմ, որ վեր գամ,  
Ոչ շուշան ծաղիկ, որ հոտ տամ.  
Զիկ ծիծեւնակ էլնել պիտէր,  
Զեր էրտիսն ի վեր որ բուն դընէր:  
Առաւտըման ժամ որ կըզարնէր  
Ճըւկը անի, քընուց վեր հանի.  
Զէնդ անուշ էր, քունդ անուշ,  
Սիրտը անմեղ, թըշշերդ նրման նուշ:  
Ինչ բան որ կէր՝ բանըթողս արեցի,  
Զուր դրիի, զըլֆերա լըւացի,  
Հաց, բարին բօղչէն կապեցի,  
Կանաչ ջըռէն դինով լեցուցի:  
Իմ կանաչ-կարմիրն կապեցի,  
Ծաղկունքներով գըլուխըս զարդարեցի,  
Մուշկ-ամբար եղով գըլուխս օծեցի,  
Վարդ առի, վարդից փունջ կապեցի:  
Դընացի հասայ չիւմ կէս դաշտին,  
Զարկամ դէմս էկաւ, չար խաբարն ի բերնին:  
Հարց ու փորձ արի, թէ հաբրիկմ առնեմ  
Սև խաբարն իտու, ու թուղթն էր ձեռին:  
Ասաց, բարեկամ, տիւ դեռը կերթաս,  
Դեռը ժուռ կուգաս սախուն, էրէրուն.  
Քս եարն ի մեռե, հերիք որ դընաս,  
Սև օրըն ի բերե վէր քո արեւուն:  
Ոտնիկըս կախ ընկաւ, կատամըս կոտրեցաւ,  
Սար ու ձոր աչիցըս մըթնեցաւ;  
Ջըռէնը կոտրաւ, դինին էլ թափաւ;

Գինու տեղ բիւր հազար ծաղկունքը բուսաւ:  
Ծաղիկ, պալասան ծաղիկ,  
Վէր սե օձերաց կաշուն բուսնէր ծաղիկ,  
Եարիկըս ի մեռե, էլ ինչ անեմ զարդ:  
Օր-տարիներով ես պիտի անեմ դարդ:  
Զարկամ, քեզ էլ ինչ ասեմ,  
Սիրտըս խըռով ի, վայ թէ անիծեմ:  
Զարկամ, դու չար խաբարեր էլար ինձի,  
Զարկամ, տընիկը քանդվէր, մընիր անորդի:  
Զարկամ, տընիկդ քանդվէր, մընիր մէջ խոպան  
դաշտին,  
Քո դըռնիկ բացվէր դէմ չար գըրողին,  
Քո էրտիսըն դէմ չարակամին, դէմ չար քամուն,  
Գըրողն էլ թող ելմուտ անէր օրն ի բուն:  
Զարկամ, քո հարս քո թախտից \*) տանէր,  
Քո փեսէն եօթնիկ աթոռէն, \*\*)  
Զարկամ, տընիկըրդ վավէլէր գըրող խորտէր,  
Տուն անդիորովն սուգի մէջ մընէր:  
61.  
Պըղիկդ էր էրկէն, բըռչամդ օլօրտուն,  
Երեսդ ի կարմիր քանձ կաքվու արուն,  
Շօրօր ու մօրօր դու կանես տօտիկ,  
Սիրտըս կըխաշես, չես ի գայ մօտիկ:  
Եար, դու ինձի շատ պէտք կըգալիր,  
Բանիս բանաւոր արբերնել կէլնիր,

\*) Հայաստանի ամենայն կողմ հին ժամանակում հարսի առաջաստի սենեակի մի անկիւնում մի մասնաւոր տեղ գահ էին բարձրացնում՝ նոր հարսին նստեցնելու համար, նորա մօտ էր նստում նաև հարսնաքոյր-պառաւ տատր: Սա կոչում էր թախտ: Հարսը թախտից տանել կամ թախտի վրայ մեռնել՝ ամենամեծ նզովք է:

\*\*) Եօթնիկ աթոռո. փեսայի և իւր ուղեկիցների համար դրում էր եօթն աթոռ, հարսի գահին կից, ուր բոլորում էին կոյսեր և երիտասարդք և երկար պարելով ու երգելով մասնակցում էին հարս ու փեսայի համար պատրաստւած բաղմախորտիկ սեղանին: Սա լինում էր կանանց բաժնում:

Աստուած աւիրէր կամազ մարդու տուն,  
Չիգէր չըտանէր ի՞ն քաղցրիկը քուն:  
Սիրեմ կըսովես, թարկեմ կըթոռմես,  
Չեմ թողնել, սիրել կուզեմ ես,  
Սիրեմ, որ սիրով թաղանաս շուտով,  
Թարկիկը չիտաս, մընաս դու ինձմով:  
Թէ քրնեմ՝ քընիկը չըտանես.  
Թէ բանեմ, ձեռնիկը չըբռնես:  
Եադն իկե եարիկը կըտանի.  
Եարն իմս ի, եադն ի սևերես:

62.

Սէրն ի սիրոյ է, Աղամայ կողմէն,  
Սէրըն քաղցը ու թանկ է քանձ բանն ամէն.  
Սէրըն հանի եօթըն տարուալ մեռելն ի հողէն,  
Սէրըն էդ որձ չունի, սիրոյ նըշան ի մալը Եւէն:  
Սէրն որ մէջ սըրտին էլնի  
Ինչ որ քամին՝ բարկ կըրակըն բորբոքի,  
Կըրակն անցողական ի, սէրն անկըրակ կըվառուի.  
Սիրոյ բորբոքըն ոչ քամուց ոչ ջըրից կըհանգի:  
Սէրիկ թաղէ թաղ էլնի,  
Սէրիկ քիչ ու շատ հեռու տեղ էլնի.  
Սէրը կըքաշի, կըտանի սիրողն մըխլատուղի պէս,  
Սէրն արծըթէ զընջիլ ի, կըբռնի վըդէս:  
Սիրի, անսէր մի մընա,  
Սէրըն սիրով սուրբ դրախտէն,  
Անմահական երկնալին դասէն.  
Սէր չունեցողն ի ապառաժ քարէն:

63.

Ուստի կուգաս շօրօրալէն,  
Աստուած պահի քո ջուխտ բալէն.  
Զաքաթմը տուր էդ քո մալէն,  
Զըտրտընջամ ես իմ հալէն:  
Հէյրանըդ կէլնեմ, եար եար:  
Ուստի կուգաս ուշիկ ուշիկ,  
Ոտքերդ խըթուի կակուղ փուշիկ.  
Կարմիր երես, պաքն անուշիկ.  
Տուր որ կըծեմ կակուղ թըշիկ:  
Հէյրանըդ կէլնեմ, եար եար,  
Զանիդ կուրբան, իմ եար:  
Ուստի կուգաս, Երէվանայ,  
Աստուած քեզի դուռմը բանայ.  
Պաշիկըմ տուր մարդ չիմանայ,  
Բօշ բան մի անիր քեզ մըհանայ:  
Հէյրանըդ կէլնեմ, եար եար,  
Զանիդ կուրբան, իմ եար:

64.

ԳԻՒՂԱՑԻ ԱՂՋԱԿԱՅ ԳԱՆԳԱՏԸ ՄՈՐԻՅ \*)

Քա սև սևաւոր մարէ, (կրկ.)  
Հօրին իմ տուն աւերեցիր,  
Կըտրիճն իմ ձեռքէն հանեցիր,  
Իմ կանաչ արևն էրեցիր:  
Քա սև սև սևաւոր աղջիկ, (կրկ.)  
Հօրին քո տուն աւերեցի,

\*) Այս երգը բոլորովին գեղջկական կեանքից է առնուած, ուր նկարագրուած են մի շատ պարագայք գիւղական հարստութեան և հոգուական պարզ կեանքի կեցութիւնից:

Հօրին կըտրիմ ձեռ իցդ հանեցի,  
Քո կանաչ արևն էրեցի:  
Քա սև սև սեաւոր աղջիկ,  
Արի քեզ տամ ռէսի լաճուն,  
Էրկէն բաժին, թուխ քեօլողին,  
Ուր ջալահուն, չուռ քեազախուն.  
Մուսլի գօմշուն, մարալ եղան,  
Ուր գութանին, ջուխտակ վիցկուն,  
Կովու նախրին, կըտիր ոչխարին,  
Ճէն տան տեղաց, մեծ ամրոցին,  
Կանաչ դաշտին, դրախտի էգուն:  
Քա սև սև սեաւոր մարէ,  
Ռէսի լաճուն կուրբան կէնեմ  
Իմ Սախօյի թուխ կուտրկին,  
Թանձըր թաղքէ դեաբանակին,  
Բալաք աբուն, ուր ջալահուն,  
Թուխ բեղերաց, սև ունքվերուն,  
Էրկէն բաժին, մարալ ջանին,  
Փինջան աչքին, բօյ բուսունին:

Ես չեմ ուզե մուսլի գոմէշ,  
Ես չեմ ուզե կըտիր ոչիար.  
Մալ ու մըլքերն, շէն տուն ու տեղն,  
Կուրբան կէնեմ իմ Սախօյին:  
Քա սև սև սեաւոր աղջիկ,  
Արի քեզ տամ Վանայ ինջին,  
Որ քեզ դընի նախշուն էօդին,  
Քեզ հաղցընի թուխ կօնդրուէն,  
Վերէդ քեաշի շամ դարահին,  
Քո տակ թալի դութնի գօշակ,  
Քամար կապի մէջքիդ բարակ,  
Ատլասից բարձ դնի երեսիդ,

Թօշիցդ կախի դեղին ոսկին,  
Ալմաստ մատնիկ քո մատներին,  
Կնես խաթուն նորա էօդին:  
Քա սև սև սեաւոր մարէ,  
Վանայ խօջէն կուրբան կէնեմ  
Իմ Սախօյի էրկէն բաժին,  
Գեօլի կազի բարակ վըզին,  
Ուր ջալահուն, թուխ կոռտըկին,  
Սև քեօլողին, չուռ քեազախուն,  
Թուխ մազերաց, թուխ աչքերաց,  
Էրկէն քըթին, բօշ բեղերաց,  
Պստկայ բերնին, խըռզոտ ձէնին,  
Ատմի շարին, ճէոչ ակընջին,  
Մազոտ գօշին, քաքուլներաց,  
Ճալ շըլվարին, կուաէ շապկին,  
Մէջաց ճարկին, նախշուն թայթին,  
Ոտաց չարխին, ողշկը բերուն,  
Նախրափէտին, գեաբանակին,  
Փայխի թառմին, ուր շորերաց:  
Սախօն էհէր, սարեր կանգեէր,  
Որ հէվարին հետ ուր նախրին.  
Հօ հօ անէր, հէ հէ ասէր,  
Դառնէր տուն գեէր,  
Գեղի մէջէն էրթէրը գեէր,  
Որ ինոր ճէնը ճիկ անուշ գեէր,  
Գիշեր ցերեկ սարեր կանգեէր:  
Առաւօտուն փառք ի բարձուն.  
Խաբար տարէք ծովու հաւքուն,  
Ջուտով հասնին կէս ճամբըխին,  
Բըւնեն բերեն իմ Սախօյին:  
Մարէ, մեռնեմ քո մէրոցին,  
Դառնամ պագնեմ զըրկանոցին,

Սարէ, ձիկ տուր իմ Սախօյին,  
Մի անե խաղք խալխի միջին:  
Սախօն սարեր ձորեր շուռ գեէր,  
Սախօն դաշտեր առտեր շրջէր,  
Նեճիր թևին սարից իջնէր,  
Գեղամէջին անուն անէր:  
Սախօն ուրախ մեր տուն իջնէր,  
Սախօն մեր տուն ընթրիս անէր,  
Զանս Սախօյին կուրբան էլնէր,  
Սախօն մէկ հատ իմ եարս էլնէր:  
Սախօն իմ աչք, իմ ջան ջիկար,  
Սախօն իմ բոյիս բարէբար,  
Սախօն անեմ կանձիկ մանձիկ,  
Որ մըշըրվէր, թափէր վէր ձիկ.

Սըրտիս դարդերն խորվէր ցըրվէր,  
Աչցս արցունք բալքին կըտրէր,  
Սախօն հէվարին տուն գեէր,  
Որ Ալմօյին անուշ քուն գեէր:

65.

ՊԱՐԻ ԵՐԳԵՐ

Դէլիլօ, դէլիլօ, սէլրանօ,  
Ջէմալ բաժիդ հէլրանօ.  
Դէլիլօ, դէլիլօ, ջանըման,  
Եար չեմ տեսեր քեզ նըման:  
Հով ծառի տակ վար կանեմ,  
Իմ բօյ քո բօյ բար կանեմ,  
Ջապիկդ դարահի կանեմ,  
Դալմէն քո սըրտով կարեմ:  
Դէլիլօ, դէլիլօ, սէլրանօ,  
Ջէմալ բաժիդ հէլրանօ.

Բաժիդ մեռնեմ սուրահի, <sup>ԱՅ</sup>  
Գէօլի կազի կընմանի: <sup>ԱՅ</sup>  
Կարմիր մէզարով աղջիկ,  
Ճիլա շապկաւոր աղջիկ,  
Խընդիրք ունեմ ասելու, <sup>ԱՅ</sup>  
Քո մօրն ատա քեզ տայ ձիկ: Դէլիլօ և այն,  
Կարմիր շալվարով տըղայ,  
Աւ սւ ունքիբրով տըղայ,  
Գեօ նոր անցաւ ըստեղէն,  
Պաքիկմ չառի ես մընէն: Դէլիլօ և այն:  
Արազ գետ մէջ ձիկ մէջ քեզ,  
Ճար ըրկայ որ գամ մօտ քեզ,  
Փառչամըդ թնդ որ բըսնեմ,  
Ճուտով գամ քեզ համանեմ: Դէլիլօ և այն:  
Արազ Արազ, ջան Արազ,  
Բինդէօլից բըղխած Արազ,  
Կուզեմ էրթամ եարոջո խուր,  
Արազ ինձի ճամբայ տուր, Դէլիլօ և այն:  
Ամկու բերդ, ճեռչ էրէրին, \*)  
Աըղըղղըղայ սիրուդ քամին.  
Քամին օրօր շօրօր գեէր,  
Հին գարդերս առնէր տանէր: Դէլիլօ և այն:  
Քաղքի ուսին փըլեր էր,  
Իմ եարիկ տակ քըներ էր.  
Քըներ էր քրտըներ էր,  
Քանց քաֆուր վարդ փըթթեր էր:

\*) Էրէրին՝ աննադուաճալի բազմանայ գիւղն է Գնունեաց (Թիմար) գաւառում, Վանայ ծովի արեւեան ափում. որոյ անուանի է գեղճն ու խազող; Էրէրին գիւղը իւր այդչափ ուրախալի լինելուն պատճառաւ զրօսաշըն թուրքաց տուած տարապայման ծախսերին ենթակաց է միշտ: 1896 չունիսի կոտորածին էլի այդ թուրքեր և ջէվրցի քրգերը կողավուցին և սպանեցին շատերին:

Դէլիլօ, դէլիլօ ջանըման,  
Եար չեմ տեսե քեզ նըման:  
Ծառի տակի պաղ աղբիւր,  
Ես զըղղըղամ, դու կուլ տուր,  
Պաղ աղբիւրին շատ մօտ եմ,  
Եարոչս ճամբին մօտիկ եմ: Դէլիլօ և այլն:  
Արջակու \*) դաշտ սըխսոր էր,  
Իմ եարոչ սիրտ սըղտոր էր.  
Արջակու դաշտ կանաչ էր,  
Եարոչս առջընեկ լամ էր: Դէլիլօ և այլն:  
Ծառի տակի հով քամին,  
Անուշ կէլնէր խընամին,  
Ծառի տակի ծանդըրմակ,  
Օխկէմ կուգէր քո դըմակ:  
Ծառի տակի պըտըտուր,  
Իմ եար քանձ քոն խըտվըտուր: Դէլիլօ, և այլն:  
Ծառի տակի ծանըր կոճ,  
Իմ եար քանձ քոն սըպըլպոչ.  
Դարի տակի մանուշակ,  
Քո եարն իմ եարոչ մըշակ: Դէլիլօ և այլն:  
Իմ եար թող խօրօտ էլնէր,  
Մէկ ոտ թող կաղիկ էլնէր.  
Խօրօտը խօրօտին պիտէր,  
Գէշերաց տէրն Աստուած էր: Դէլիլօ և այլն:

\*) Արջակ գիւղ. մեծ աւան, ուր նստում էր փոխ գաւառապետ (միւրիր). ամբողջ հայաքնակ, հարուստ կալուածատէրերով: Դա ունի նաև մեծ ագարակներ վանեցու ոմանց: Գիւղի արևմտեան կողմ տարածվում է համանուն Արջակու լիճ, իսկ հարաւային կողմ Ս. Աստուածին վանքը, որն իւր կալուածներով պատկանում է Վարագայ վանքին: 1896 յունիսի հանրային կոտրածին, Հէյդարանցի քրդերը նախ կողոպտելով այդ հարուստ գիւղն՝ թէ եկեղեցում թէ շրջակալքում սրախողին սպանեցին մօտ 250 անեղ հայեր, իսկ մնացեալք ամենավերջին աստիճանի կողոպտուած ապաւտանեցան Վանաչ փողոցներում:

66.

Հէ հէ հէ, հօ հօ հօ, հա հա հա:  
Ի՞նչ կըթափես կուց կուց էրուն.  
Էհա թափի բարակ առուն,  
Զէ գեռ էկաւ բարի գարուն.  
Լուս կըբացվի վէր աշխըրուն,  
Ես էլ կըհամ կըզամ ձեր տուն: Հէ հէ հէ ևն:  
Աղբերանց արուն մէջ քարերուն,  
Գեղին սուսուն վա՛ր սարերուն,  
Փունչ մանուշակ մէջ ձորերուն,  
Էհանք քաղենք հետ աղջքերուն: Հէ հէ հէ ևն:  
Գեղ կառնեմ վէր իմ թևքերուն,  
Թըռնեմ վէր բարձրիկ սարերուն,  
Տուն կըշինեմ մէջ քարերուն,  
Էրդիս բանամ դէմ հով քամոն: Հէ հէ հէ ևն:  
Կէհա աշոն, կուգայ գարուն,  
Գուռ կըբացվի կարիբներուն.  
Գեղ կառնեմ վէր իմ թևքերուն,  
Կըթըռնեմ վէր Մոկաց \*) սարերուն,  
Տուն կըզընեմ մէջ ճրդներուն,  
Էրդիս բանամ հարաւ քամուն: Հէ հէ հէ ևն:

67.

ՊԱՆԴԻՍԻ ԵՐԳԵՐ

Բըղտոր ջուր կուգէր սարերաց թևէն,  
Վընոտ հոտ կուգէր գետերաց մօտէն.  
Եարիկս ճամբեցի էրկէն ճամբերէն,  
Կարօտ մընացի իւր անուշ հոտէն:

\*) Այս երգը պատկանում է Մոկաց աշխարհի գաւառաբարբառին, որոյ տեղական լեզուն աւելի նուրբ է քան վանեցու:

Ա՛խ, ես չըխէրայ իմ Ասլու մօտէն,  
Ասլիկ ձիկ մոռցաւ գընաց մեր դեղէն.  
Ես էլ չըխէրայ կարիբիս մօտէն.  
Ափսոս որ խաբիկմ չեկաւ ինորմէն:  
Աւեր Ըստամբօլ, քամբախ Խւսքիւտար \*),  
Կարիբիս մօտէն չեկաւ մէկ խաբար.  
Ո՛չ մէկ կըտոր թուղթ, ոչ մէկ կոր պըլիկ \*\*)  
Չէկաւ ուր մօտից. մոռացեր էր ձիկ:  
Խէրիկս էր հովիւ, աղբէրս զառնարած,  
Կարիբ եմ ճամբե իտև սարերաց,  
Իտև սարերաց, իտև քարերաց.  
Կարիբիս մեռնեմ, ուր ճամբըներաց:  
Քամին վէր ծովուն էրէրաց,  
Էլնեմ իրիշկեմ քօշկիս ճաղերաց.  
Կարիբիս սուրաժն էնտեղ երկաց,  
Իմ ազիզ ումբիկս հետ ուր քիւլ արաց:

68.

Զուրն ի փըռթե վերին սարէն,  
Կուգայ թափի մարմար քարէն.  
Զեռք մէք իտա սըրտիս եարէն,  
Եարս ի դարձե ուր կըրակէն:  
Եարլս գնացեր կարիբութեն,  
Զիկ որ թողեց չար գերութեն.  
Առանց եարոջ իմ հալն բնչ ի.  
Աման, եարիկ, շուտ ետ դարձի:  
Էլի, կայնի, բաժդ իրիշկեմ,

\*) Խւսքիւտար, քաղաքաման Գ. Պոլսոյ Ասիական եղերքում, ուր գտնւում են կանեցոց բազմաթիւ պանդուխտներ:

\*\*) Կոր-պիկ. հին ժամանակում փայտից կլորած փոքրիկ կոճղեր էին, որոնք եկեղեցեաց մէջ գործածւում էին պնակին մէջ ձգելու, որոյ տասն շատ փոխարինում էր դուրուշի չորրորդ մասը, կամ 10 փարաչ:

Ալնախդ առնեմ, քեզ նըմըշեմ,  
Քեզ կարիբ աշխարհ կօղօրկեմ,  
Գեահ-գեահ կերէն թէ իրիշկեմ:  
Կարիբութեն, չար գերութեն,  
Անունը չէլնէր, ինքը չէլնէր:  
Թօնդ իմ եար մօտ ձիկ մընէր,  
Օր դամ գէր ձիկ տիսնէր:  
Երկու ամառ, իրեք ձընեռ  
Հերիք ձիկ անես կիսամեռ,  
Գիշեր ցերեկ քո կարօտով,  
Օր չեմ տեսնե ցամաք աչքով:  
Կարիբի տիրոջ հացն աղու ի,  
Կարիբներաց կեանք մահու ի,  
Իրենց օրերն դարտամահով,  
Մընան իրարուց կարօտով:  
Գալուն էկաւ, ամառ գընաց,  
Աչքըս մընաց ճամբըներաց.  
Աստուածամօր խընդիր ունեմ,  
Թուու մի բանալ կարիբներաց:  
Թօւղթ կըգըրեմ գիւրջի կալմով,  
Քեզ կօղօրկեմ կրւշի թեռով.  
Դու քեաֆուր վարդ, ես էլ բիւլեւլ,  
Գիշեր ցերեկ մնամ ահուզարով:  
Քեզ կօղօրկեմ դուղա սալամ,  
Թօնդ իմանայ աշխարհ սլամ,  
Թէ շատ մընաս թէ քիչ մընաս,  
Ա՛խ, կարիբ եար, սիրուդ կուլամ:

69.

Կարիբն է նըստե վէր օտար փուղցին,  
Ակ ու վախ կանի ուր խօր խէրանին.

Կարիքիս մեռնեմ, ուր նըխշուն բեղին,  
Դառնայ ձիկ առնի մէջ քաղցըը ծոցին:  
Տուն դարձիր, կարիք, մի թողներ ահով,  
Թէ քեզ չըտեսնեմ՝ կըմեռնեմ շուտով:  
Կանչեմ, ջան արե, սարեր լացուցեմ,  
Կանչեմ, գութ արե, քարեր լացուցեմ.  
Ճատ կարիք կուրբաթ ճամբէն դարձուցեմ,  
Իմ կարիք տեսնեմ, գերեզման մըտնեմ:  
Բաղչէմ եմ տընկե, թուրէն ուր մենէն,  
Աստուած ձիկ չիտուր, շիւքը եմ ուր մենէն.  
Թէ պըզտիկ էլայ, խէր մէր չըտեսայ,  
Իմ ամալ ջամալ ումրիկըս կէրայ:  
Արե, եար արե, մի աներ խըռով,  
Կըմեռնեմ շուտով, մընաս կարօտով.  
Արե, գութ արե, հասիր մուրաղիդ,  
Մէկ էլ չես տիսնե քո կարօտ եարիդ:  
Արե, եար, անցիր մեր բակի մօտով,  
Թող մեր բակ լեցուի քո անուշ հոտով.  
Էրկէն ճամբըներդ փըներով լիքն են,  
Արի թէ քաղեմ՝ ճատներս կարնոտեն:  
Կարիքի տիրոջ սըրտիկ կէլնի խոց,  
Արնէ արտսունքով կըլըցու ուր ծոց.  
Անչափ տի կանչեմ, սարեր լացուցեմ,  
Ճատ կարիք կուրբաթ ճամբէն դարձուցեմ:

## 70.

Հանէս, Հանէս, շուտ դարձիր ետ,  
Աւեր էլնէր կօտօլայ \*) գետ.  
Որ քեզ չըտանէր էն ուր հետ,

Չըլացուցէր քո ձէթ—պէտ:  
Հանէս, հանաքիդ մեռնեմ,  
Խանչալ, թանաքիդ մեռնեմ.  
Դեղ դըրած բեղիդ մեռնեմ,  
Խինաւուն ծամիդ մեռնեմ:  
Հանէս կախվեր ձիու գօշէն,  
Պուտ-պուտ արուն կաթի լէշէն.  
Թաղ շուտ սատկէր էն շուն չասէն,  
Որ Հանէսին չիանէր ճամբէն;  
Հանէս աղբէր, ջան աղբէր,  
Ճանըս քեզ կուրբան, աղբէր,  
Ճամբերս քեզ խարիդան էնէր,  
Տար, թող վէր եղանդ, աղբէր:

## 71.

## ՍՈՒՐԲ ԿԱՐԵՎՈՅԵՏԻ ԳՈՎՔ

Քեզ կըգովան, սըփ կարապետ.  
Մըշոյ դաշտի սուլթան դու ես.  
Որ Քըհստոսին քափոր էլար,  
Ամեն սըրբոց գլուխըն դու ես:  
Վեց ամսրւան մարդարացար,  
Աստուածորդուն առաջն ընցար.  
Ճամբախ բացիր անօրինաց,  
Ապաշխարանք մեղաւորաց:  
Ընապատի շատ ըղտաւորք  
Վէրէդ թափին շատ մեղաւորք.  
Ամենուն դու ջուղաբ տըփիր,  
Մաքսաւորաց բարեկամն իր:  
Յորդանան գետ ոլոր-մոլոր.  
Մէջ կըթափէր շատ մեղաւոր.  
Մեղաւորաց մեղքի փողան

\*) Կօտօլ կամ Կօթուռուայ գետ Վանայ նահանգի արևելեան սահմանից անցնում է դէպ Պարսկաստան, մտնում է Խոյ քաղաք: Կօթուռ պարսկա—թուրք արևելեան սահմանագլխի մի փոքր աւանն է:

Քրով մըլքրտիր գետի բերան:  
 Ասապատի տատրակ տիւ ես,  
 Արդնաւորաց գըլխաւորն ես.  
 Մեր աշխարքին բարեխօս ես,  
 Մուրազատուր սրփ Կարապետ:  
 Քո դուռ կուգայ վէզիր վիւզա՞ր,  
 Հխտաւորներ հազար-հազար.  
 Արնորհքըդ շատ մուշկ ու ամբար,  
 Արնորհատուր սրփ Կարապետ:  
 Քո չորս բոլոր գեղ ու քաղաք,  
 Ենքան կաժես որքան գովանք,  
 Թրախտի սարի բիւլքիւլ դու ես,  
 Մըշու քաղքին մեծ պարծանք ես:  
 Զորիներդ են կաթար-կաթար.  
 Կով ու կըթանդ հազար-հազար:  
 Աշուղներաց մուրազ կուտաս,  
 Մուրազատուր սրփ Կարապետ:

## ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ

Գ Ո Վ Բ

ՎԻՃԱԿԱ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1.

Զան վիճակ ջան, \* )  
 Զան գիւղում ջան.  
 Զանը քեզ կուրբան:

\*) Վիճակը ինքն ըստ ինքեան մի պանուճապատանք է, որոյ շորերն նետպէնետէ հագցնելիս՝ երգելով ասում են նշանակուած երգերն:

Կանաչ ու կըտրիճ մընին աղջիկներ,  
 Որ պինտ պահեցին վիճկըներ:  
 Մէջքալոտոր ազբըներ,  
 Զէկան գողցան վիճկըներ:  
 Զան ջան, վիճակ ջան.  
 Զանը քեզ կուրբան:

2.

Վիճկի անուն Անանայ,  
 Ազաբ լաճեր լըհանայ,  
 Ուրենց պիտէր մըհանայ,  
 Թող որ էլնեն սատանայ: Զան ջան, ևն:

3.

Վիճկի անուն Վարդիկ էր,  
 Վարդ մանուշակ հոտ կուտէր.  
 Ոտով ոչխար շիշակ էր.  
 Մեր վիճակին մատաղ էր: Զան ջան, ևն:

4.

Վիճկի անուն Ասլիկ էր,  
 Ոտքեր կապած ուլնիկ էր.  
 Ոտով ոչխար մուսլիկ էր.  
 Վիճկին մատղըու պիտէր: Զան ջան, ևն:

5.

Վիճկի անուն Խամասի,  
 Զօրերն իլին աբասի.  
 Համրեցի, մէկ պակասի,  
 Ազաբ լաճոց հաւաս ի: Զան ջան, ևն:

6.

Վիճակն ի գիւղա-դիւղա,  
Ազաբ լաճեր վիճկին քեօլայ.  
Դիշրով էկան զընացին,  
Պահկըպոյիկ խաղացին:  
Ճան, վիճակ, ջան,  
Ճանիկս էլնի քեղ կուրբան,  
Ազաբ լաճեր քեղ հէյրան:  
Վիճակ նրստե վէր պատին,  
Վարդեր ցրփնե վէր գըլմին:  
Առնենք վիճակ տանենք տուն,  
Ազաբ լաճեր վիճկին շուն:  
Ճան, ջան, վիճակ ջան,  
Ազաբ լաճեր քեղ կուրբան:  
Վիճակի բնիւթի Երգերից

7.

Վիճակ վիճակ, ջան վիճակ,  
Վարդեր ցանենք վիճկի տակ:  
Հարս, հան վիճան ի բարին,  
Համբարձում դիլաքըդ կատարի.  
Հասնես քո սըրտի մուրազին:  
Օվա՞ն աղի ձինը վլութեր ի,  
Ուկի չըմբիւլ դաշտ թողեր ի.  
Հըմէն սարից խոտ կիրեր ի,  
Պաղ աղբիւրի ջուր խըմեր ի:  
Հարս, հան վիճակն ի բարին,  
Համբարձում դիլաքըդ կատարի.  
Հասնես քո սըրտի մուրազին:

8.

Իրե իրե, մէկ պըզտիկ բազըրդան,  
Իրեք սաբաթ մալ կէր հետ,  
Մէջը վարդ, վարդաջուր, բոլորն ուղան,  
Աղջիկ, քո կըսմաթըն էնտեղից հան:  
Հարս, հան վիճակն ի բարին  
Համբարձում օր կիրակին,  
Հասնես քո կարմիր կանաչին:

9.

Արե արե էն բարձըր սարերաց սրփ կարդ,  
Էն բարձրիկ սուրբ Աստուածածին.  
Աղջիկ, դու հասար քո մուրազին,  
Էս աշուն կէրժաս պըսակին:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

10.

Դու կացիր դադար.  
Հանեմ ջուրու կաթար,  
Բառնամ վերէն ակըն գիւհար,  
Քեղ դընեմ վէրէն սարբար:  
Արիք, էն սարերաց բարձրիկ սըրբեր,  
Էն բարձրիկ Գինովաբեր Աստուածածին:  
Հարս, հան վիճակդ ի բարին,  
Հասնես քո սըրտի մուրազին:

11.

Ես ունեմ մի կարմիր խընձոր,  
Կարմիր խընձորն ի անմահական.

Քանի վեր կըթալեմ՝ վեր վեր կըխաղայ,  
ին էլ քո սիրոյ նըշան ա:  
Եա Մըշու վէզիր որփ Կարապետ,  
Լաճ ու աղջիկ կապի իրար հետ:

12.

Կարմիր մահուտ, կանաչ ատլաս,  
Քեզ բըռնելու ունեմ հաւաս.  
Քեզ համար շինեմ ոսկի կաֆաս,  
Մէջը դընեմ, դալիմ կէնաս:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

13.

Ցիկ հաւք մի ծիծեռնակ պիտէր.  
Ցերեկ գէյր, իմ օդէն ել-մուտ անէր,  
Դիշերն էլ գար իմ ծոց ծըւարէր,  
Սըրտիս դարդերն ցըրէր խորովէր:  
Արե, եա Մարութայ<sup>\*)</sup> բարձր Աստուածածին,  
Մեր վիճակն կատարի բարին.  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

14.

Գիր մի դըրեմ, նըխշուն կալամ,  
Անունդ կուտայ աշխարհ ալամ.  
Դու քափուր վարդ, ես էլ բիւլբիւլ,  
Դիշեր ցերեկ սիրուդ կուլամ,  
Հարս, հան վիճակդ ի բարին.  
Աստուած չարն դարձուցի քեզ բարին.  
Համբարձում դիլաքըդ կատարի.  
Հասնես քո սըրտի մուրագին:

<sup>\*)</sup> Մարութայ կամ Մարուքայ բարձր Աստուածածին մի հին աւերակ փառք է հայոց Զորում, յանուն Մարուքէի ճգնաւորին:

15.

Մէրն ի կիրե խիլ խըլոց,  
Տըղէն բերե ֆիլ ֆըլոց.  
Պօր անուն ի Արմաղան,  
Աշխարհ քեզ էրնէկ կուտան:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

16.

Դու կընմանես գէօլի կազի,  
Ոտքեր ունես նազի-նազի.  
Գո կարէն ծալուկ կուգէր,  
Գո ջուրէն ծամայ գեազի:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

17.

Ոսկի դըլուզ դարի տըկին,  
Մէջն ելին հազար բարին.  
Կըզըզըզայ սիրուդ քամին,  
Աղջիկ, դու մէկ հատ ես մէջ հազարին:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

18.

Բարձր կութնի, դօշակ կութնի,  
Լըհէֆն ի զարբաֆ կըտորից.  
Աղջիկ, հանա, մի վախենար,  
Վերէն պառկողն քո կըսմաթն ի:  
Հարս, հան վիճակն ի բարին, ևն:

19.

Մէրն ի կիրե քաշըր դամոն,  
Տըղէն բերե խիստ մոն: Հարս, հան, ևն:

20.

Մէրն ի կիրե կարմիր նուռ,  
Տըղէն բերե ծուռ ու մուռ: Հարս, հան, ևն:

21.

Մօր աչքերն ի խաժ ու մաժ,  
Տըղէն բերե խիստ անտաշ: Հարս, հան, ևն:

22.

Մէրն ի կիրե եղբոճայ,  
Տըղէն բերե կոր կըճայ: Հարս, հան, ևն:

23.

Մէրն ի կիրե մառնի մուկ,  
Տըղէն բերե խիստ փափուկ: Հարս, հան, ևն:

24.

Մէրն ի կիրե մատղաշ ուլ,  
Տըղէն բերե խուլ.  
Ուլի կաշին մազոս էր.  
Տըղի լէշիկ տըղպոտ էր: Հարս, հան, ևն:

25.

Եօթըն ճրագ վառեր ես,  
Եօթ որդու սեղան նըստես.  
Երուսաղէմ գնացեր ես,  
Արքալութիւն տիրեր ես: Հարս, հան, ևն:

26.

Մէրն ի կիրե մանանայ,  
Տըղէն բերե սատանայ.  
Մօր ատամներ թափեր էր,  
Տըղա պահել դժար էր: Հարս, հան, ևն:

27.

Բէօշ բաղըրգեան եկեր ի,

Մէր կալատեղն իջեր ի,

Ուկի ցըցեր զարկեր ի,

Քօզ-քօզ ձիանք կապեր ի.

Աշխար վէրէն թափեր ի,

Էն մալերաց թամաշ ի:

Մալերն զըմէն կումաշ են,

Նոր հարսերաց լայեղ են.

Թօփ մի ուստուֆան բերեր ի.

Չինար բաժիդ համար ի:

Զարս կինակն ի բարին.

Քիօշահան \* ) տայ քեզ ուր բարին,

Հասնես քո սըրտի մուրաղին:

28.

Ֆովլ քեզ զինի դառնայ,

Գեամին քեզ կըթղայ,

Գեամըչին քեզ դոլի բաշի.

Դու լից, դու անուշ արա,

Աստուած քեզ միշտ կուտայ: Հարս, հան, ևն:

29.

Արծաթ քեզ քամար լինի.

Ուկին բըլադուկ.

Ալմաստ ակնունք քեզ կօճակ,

Աստուած կէլնի քեզ քամակ: Հարս, հան:

\* ) „Քիօշահան“, աւետարանի անուն է. գտնւում է Վանալ հարաւային կողմ կենդանանց գիւղում: Քօշ նշ. խոյ, ովքարաց առաջնորդ: Կենդանին օր մի գետինը իւր կճակներով փորելիս՝ մի քարի տակից դուրս է եկել մագաղաթեայ աւետարան, և հովիւր գրկելով զայն՝ ուրախութեամբ բերում է գիւղ, որոյ եկեղեցում մասնաւոր տեղ է նշանակուած, և ամեն կիրակի ուլտաւորք պակաս չեն:

ԹԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԻՃԱԿԱԽԱԾԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄՄԲ.

1. Վիճակախաղը սկսում է իսկ և իսկ համբարձման գիշերուանից սկսեալ, որոյ անուամբ էլ կրիւռում են խնդրուածք: Այդ գիշերը վերջալուսից սկսելով, աղջիկներից անչափահասները եօթն աղբիւրից հաւաքում են ջուր մի խեցի ամանով և գիշերը դնում են ապահոված, այսինքն աստղերի ներգործութեան տակ:

2. Խաղն ու պար: Առաջին անդրանիկ հաւաքում կամ ժողովը լինում է համբարձման յաջորդ կիրակին. այդ ժողովում ընտրում է մասնաժողով՝ ձու, իւղ և ալիւր հաւաքելու տօնին համար:

3. Համբարձման յաջորդ կիրակին, լի ջորվ խեցի ամանը վերցներով աստղերի ներգործութիւնից՝ բերում են հանդիսավայր, ուր երկար ժամերով երգելով, պարելով, խեցի ամանի մէջ խրելով մի խաչածե փայտ՝ հազցնում են նրան զանազան տեսակ գունաւոր ժապավաններով շորեր, ինչպէս թիւրքի կամ քիւրդի պճնուած կին, խրուած հագուստների մէջ. ապա յանձնում են մէկի խիստ հսկողութեան:

4. Ազար լաճեր: Ամուրի երիտասարդներ, պատանիք միշտ և միշտ գոտէպինդ խուզարկում են՝ թուցնելու փախցնելու վիճակն. եթէ յաջողեցան, ի մեծ նախատինս աղջկերանց՝ առանց բաւականաչափ ձու, իւղ առնելու յետ չեն դարձնում. իսկ եթէ ոչ՝ արդէն յաղթութիւն աղջկանց կողմն է:

5. Բախտախաղի օր և բոլոր մասնակցող խմբի գումարում լինում է մասնաւորապէս հոգեգալստեան կիրակին, և մինչև այդ օր մեծ հսկողութիւն կայ, մի գուցէ դժբախտութիւն պատահի:

6. Խեցի ամանի մէջ, միմեանցից գաղտուկ, աղջկերք ձգում են մէկ մէկ նշան—ուլունք, մատանի և այլ առարկաներ, ոմանք իրանց, և ոմանք իրանց հօր, մօր, քրոջ, եղբօր բախտին, որոշ-որոշ նշաններով. ապա կանչում են մի փոքրիկ երեխաց, նրա ձեռքով հատ-հատ դուրս են հանել տալիս, իւրաքանչիւրի անուան և բախտին մի-մի տուն երդ երգելով:

Տես և Վանայ Սաղի, Ա. մասն, եր. 86—88:

ՄԸՆԹՅԱ ՏՈՒՄԾ ՔԱՐՈՉՆ

Ականջ տրւէք իմ խօսքելուն,  
Քարոզ կուտամ ես առջերուն:  
Տօ, տիւք անտաշ կոշտ շինական,  
Խէրիւք չէլաւ, մընալք անբան:  
Կտա էլաւ շէնք, էտա էլաւ շնողիք,  
Հերիք չի որ ձեր խոդին մաշի դժոխք:

Մէկ իրիշկէք ձեր քեօլօգներ,  
Մանեն սուրուխ սարի ծէրեր:  
Ապա էտա ձեր քեազախկներ,  
Զե արեր են մէկ-մէկ դեկեր:

Եդ լինչ բեղ ի, անշէնչք, անսազ,  
Ո՛րը թսթան, ո՛րը կարմիր գեազ,  
Ո՛րը ցից-ցից քանց խուզու մազ,  
Որտեղ կայ լիքն ի, որտեղը տազ:  
Գեյտին մըտնի ձեր էտա ըաժ,  
Թուք ու մըր մէջ մընաք անժաժ.

Մէկ իրիշկէք խոնց մազեր,  
Կընըմանեն խառնած կաժեր:  
Ոճիլը մէջ փակլիվան ի դա՛րձե,  
Սանդը ու սապոն երբ ա տիսե:  
Չիւմ իրիկուն արևի տակ կըճենճըռտայք,  
Կըգեայք մէջ խողին էլ փալ կըտայք,  
Տօ տիւք մանգեար էշ էք գառցե,  
Թէ Աստուած ձե մարդ ի ստեղծե:

Էլեր կուտեն ձեր անուշ կաթ,  
Ոչ մէկու խետ կէլնէք էլ վա՛տ.  
Ձեր կերածն ի լոկ գեօրօմաստ,  
Խուշմընի դէմ կըրվելու չէք անի գաստ:  
Է՛, ինչին էլնի բաղի էլ թան,  
Բաղի չորթան թէ ուտէյք պինտթան,

Ու պախս օրն էլ խոտ. անխամ վըռօշ,  
Ինոր խամար կաֆէյդ ի բօշ:  
Առտէն կըխանէք սըռսուռ ցորեն,  
Զեր կերածն ի շուղ տարեկնէն.  
Յորեն կուտի Վանալ խօջէն,  
Որ տիւք իսկի չէք խանե ձէն:  
Թէ որ թուրքմ' եան քիւրտմ' գեա ձեր տուն  
Դառնաք առջև թէօլընգիս շուն,  
Հէջ չէք ասե, որ մենյք չէլնենք՝  
Սւ օր կուգայ ինոնց գլխուն:  
Թէ որ մէկ տեղ խասնի կլուտան՝  
Կըշրփըռտէյք քեանձ գեղի շան.  
Զեր ոչխրըներ կուտեն աղէյք,  
Տիւք քեանձ պաղած իշու կիրիշկէյք:  
Թէ փըռթընի մէյմ ձեզ մօտ նստի  
Կուեախոտու քիւթը կըփոթի.  
Եշը կըթըրքիս, կով կըկույի,  
Ինոնց խոտս ձեզնից ինչի՞ պիտի պիւրի՝  
Զեր շապկըները թէ շուն ծամի՝  
Քեառսուն տարի սիրտ կըխառնի.  
Վանալ մունտառ գեամու ելքեան,  
Քանձ խազար կաթ ինորից աղէկ ի:  
Կասէյք, ըստեղ որ չարչըրվենյք՝  
Արքավոթնին արժան կէլնենք.  
Արքավոթեն քեզ ինչ, տավար,  
Աստուած չարե իշու խամար:  
Քյրիստոս առճե ձե կըքրֆեն,  
Կասէյք, աղամ, հա թող խաճեն.  
Ճունն ուր տիրոջ թարափ կէլնի,  
Քյրիստոս ինչի՞ ձեր ումուր չի:  
Ապա Քյրիստոս էլ ինչ անի,  
Որ ձե չիտայ սաղայէլի.

Զօ, զրախտ ձեր անտէր չալիր ի,  
Որ էշն էրթայ մէջ թաւալի:  
Թէ ձե կուտան ցաւ, թիւք ու մուր՝  
Դիւք հէր կէհայք էրէցու գուռ.  
Ինոր խօսքն ա աբուռ ջուբուռ,  
Դրհա բէթար կանի ձե ծուռ:  
Էկէյք, էկէյք էս Մըքօին,  
Որ խրզմաթ ի արե ֆուանկին,  
Թէ որ չի էլ փիլխոփայ՝  
ի՛, ինոր խոտը մենէն կուգեայ:  
Ես ձե կասեմ, մէյք էլնե ճիւր,  
Դառցէք կըտրուն ֆըռանկի թուր.  
Մէյք էլնե կազ, մէյք էլնե հաւ,  
Էլէյք վաշտ շուն, արէյք հաւ-հաւ:  
Զեր փարէյքն էլ մի տայք գինու,  
Տըւէք խոզի առնող գէվու,  
Իրար գըզօխ մէյք կըտրցե,  
Որ թըշնամին ըրզուի ձե:  
Ես Մըքօն եմ, զամօի լաճ,  
Գիյտէյք բօշ խօսք չեմ անե խաւդ.  
Դիտեմ, թէ էս թէ էն աշխարք  
Կուտի կըտրին ու խելք ճարտար:  
Թէ տիւք իմ խօսքն անէյք տընազ՝  
Զե կըտըփի քիւրտն ու կտուազ.  
Զե կըպըռնի վարամի խազ,  
Կըմնայք միշտ էտպէս լայնկ ու լաւազ:  
Հալա շատ բաներ պիտի ասի,  
Ամա իմ ջան գիյնի կուզի.  
Քիչ մի էլ քեավոր \*) աղէն թէզ ի,  
Վախենամ թէ գեա բեղերս վըզի:

\*) Որովհետեւ հարսանիքներում աւելի բարձրենտիր և նախագահող կնքաւորն է՝ ժողովրդական երգիչներ - աշուղները միշտ և միշտ նոցանից

ԱՐԱԳԱԽՈՍՈՒԹԻՒՆ \*

1. Ես ունիմ քեառսուն կարմիր պարկ,  
Քեառսուն կարմիր պարկին էլ  
Քեառսուն քեառսուն կարմիր պարկակապ.  
Դու տես իմ քեառսուն կարմիր պարկ,  
Հետն էլ քեառսուն կարմիր պարկակապ:  
Ո՞ւր է քեռ քեառսուն կարմիր պարկ,  
Որ ունենայ իսետն էլ, իմուս նըման,  
Քեառսուն քեառսուն կարմիր պարկակապ:

2. Երթամ ու գամ էրթամ ու գամ (կրկ.)  
Ճոչ ձորին ձան, ձան ջուր ծլծեմ:

3. Ճանճը նըստեր արծաթ կըտաշի,  
Տըռնւ տըռնւ, արծաթատաշ ճանճ,  
Տըռնւ տըռնւ, արծաթատաշ ճանճ:

4. Ճոչ ձորին մէջ ջորին խէծայ ձորն անցայ,  
Ճոչ ձորին մէջ ջորին ջուլը ծըռեց:

ակնածելով աւելի շողոքորթում են, իցէթէ մի սկ վտող կամ բաժակ մի դինի աւելի տան:

\*) Արագախօսութիւնները ասելում գլխաւոր շնորհն այն է, որ  
մէկ շնչով վերջացնուի ամեն մի որոշ տողը:

լուսնի առաջընթան ունի ցա մնայ պայտա Շահա-  
բան ունի պայտա մայ դուռը ուրաքանչափ նոյ ուն-

ՎԱՆԱՅ ՍԱԶ

ՄԱՍՆ Բ.

Ճ Կ Ք Ե Պ Թ Ն Ե Ր

1.

ՃԱՆ—ՓՈԼԱՏ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնի, կէլնի կէլնի \*) մէկ թագաւոր:  
Խսա թագաւորն ունի իրելք խատ խուրն խրեղէն աղջիկ:  
Աղջկներաց որն որ տիսնաս՝ չուտես չխմես ինոր իրեսն վեր  
իրիշկաս աղջիկ մի ասե, ջէլրան, սարի մարալ ասա:

Թագաւորը մէկ օր խետ ուր վէզիրներաց կէլնի տիւս,  
վազիր վիւզիրներով կխէճնեն խրեղէն ձիանք, կէրթան կան-  
գեալ. իրիկուն որ մութ կէլնի՝ կուգեան տուն: Ինոր լալէն  
կուգեան մօտ, վկուս կուտայ ու կասի. Թագաւոր ապրած կէ-  
նայ, կասեն որ մէկ խատ ֆան-փոլատ կալ մեր երկից գէն.  
ինչ կանդար զուպայ թագաւոր էլնի՝ կսպանի, ինոր մալ ու  
միւլք, քեօշկ ու սարէն զըմէն կառնի, զապթ կանի, տնով  
սեղով կինջի:

Թագաւոր էսա կարա-խաբար որ կլսի՝ ախն ուր կպըռ-  
նի, մալուլ-մուռթ կինի կամ-կասաֆաթի մէջ, քիլթ ու մը-  
ուռթ կկախի, կնստի ուր էօդէն:

Ինոր ճոչ աղջիկ իզին կառնի, կուգայ մօտ. կասի. Թա-  
գաւոր ապրած կէնայ, էսօր ինչ էլե քել, ինչի՞ ըսըսկընայ  
մալուլ մուռթ ես, քեռ կամ-կասաֆաթն ինչից պիտի էլնի:

\*) Հեքեաթների նախաբանը այսպէս է սկսում: Կրկնում են երկար,  
մինչև շունչը հատնում է:

կասի. Այ աղջիկ, կասեն որ մէյ խատ Զան-փօլատ ի փէյտաք էլե, ինչ կանդար գուպայ թագաւոր էլնի<sup>ւ</sup> կսպանի, ինոր մալմիւլք, տունը տեղը զըմէն զապլթ կանի:

—Թո՛ւ, կասի աղջիկ, էն ինչ կանեմ. ես էլ գիտի որ թէ ձիկ ուզող էր իկե, ինոր խամար իր ինկե հոգսի մէջ: Էն կերթալ. կուգայ թագաւորի միջնեկ աղջիկ, էն էլ ըսկուն կը-խառցոցի խօր. ինոր էլ ըսկուն կասի:

—Թո՛ւ, ես գիտի թէ իմ տատին ուզող էր իկե. ինչ կա-նեմ Զան-փօլատ. խորեմ ուր գլոխ: Կասի, էն էլ ճոչ քըռչ պէս կանի ու կերթայ: Կըմնայ էն մէկէլ որ. կուգեայ թագա-ւորու պղտիկ աղջիկ:

Պղտիկ աղջիկն ի, որ կլսի ու կտիսնայ ուր խօր տըլլ-տմութեն, էլ չխամբերե. իզին կառնի կմտնի թագաւորու մօտ, կասի. Թագաւոր ապրած կէնալ. քեյ ինչ էլե, ինչի ըսը-կընայ մալուլ-մուռթ կամ-կասաֆաթի մէջ ես: Թագաւոր կա-սի. Գնա՞ դէն. քեզնից ճոչերից ինչ խասկցայ, մնաց որ տիւ, ինոնց պղտիկն ես, ինչ պիտի խասկնամ:

Աղջիկը շատ կինի խետ, խօր ոտն ու ձեռ կինի կխամ-բուրի, շատ երկար բարակ խարց փորձ կանի. որ չարայ չէլնե-վերջ ընքիւռ ընքիւռ կուլայ, կաղավըլի խօրն: Թագաւորու դիմարը կուգեայ, էն էլ կասի ինոր:

—Կասեն որ մէկ Զան-փօլատ ի տիւս իկե, կսպանի զը-մէն կտրիմ թագաւորներ, տնով տեղրվ կջնջի, ինոնց մալ-միւլք կիսլի, զապլթ կանի, մարդ, աղամորդի ճար-չարաք չկանայ անի հետ ինոր. ուր ջանն ի էրկթէ, խոգիյն պղպտի:

Պղտիկ աղջիկն ի որ կլսի՝ սիրտ կուտայ խօրն, կասի. խէրիկ խէրիկ, իմ թագաւոր խէրիկ, տիւ կասաֆաթ մի անե. Աստուած ողորմած ի, ես կերթամ, կսպանեմ ինոր, ճոչ պըր-տուճն ականչ կմողնեմ, աշխարհ կա՞զա՞տեմ:

—Ի՞նչին որ կա՞զա՞տես. տիւ վով, էն վով, տիւ դեռը, էն դեռը. կուգես որ շնոր մեռնես, կասի թագաւոր:

—Ես ինոր կսպանեմ. տիւ տեղդ ծանդր կաց:

Աղջիկն ի, առաւօտանց շոտ թալալ կուտայ կանչել. «Թագաւորու հրամանն ի, ինչ կանդար որ խօրոտ աղջիկ կայ էսա քեաղայք՝ բիւթիւն էլ թող գեան, ժողովին թագաւու-րու խաս-բաղջէն. չէկողի մախը մախ ի»:

Առաւօտուն ինչ կանդար որ խօրոտ, զա՞րուն զա՞րդա՞րուն գիւլնազ աղջիկ կէր՝ զըմէնն էլ ժողվան էկան խաս-բաղջէն: Կզանեն, կխաղան, գեօնդ կըւնեն, կժունեն, կժուվուն, չիւմ թագաւորու պղզտիկ աղջիկն էլ կզա՞րուի կզա՞րդա՞րուի, խետ ուր խալաեղներաց կուգեայ կմտնի ինոնց մէջ: Ինոնց մէջէն իջոկի կջօկջկի եռսուն խատ հմէնից խօրոտներ. ինն էլ ինոնցից խուրն խրեղէննէր կջոկի. մէկն էլ ինքն ի, կէլնի ինոնց խետ, թամամ կէլնեն քեառսուն խատ: Մէկէլ մնա-ցած աղջկներաց իջին կուտայ որ էրթան:

Ամբ կանի, բերել կուտայ քեառսուն ձեռք լաճու խալաւ, սաթրա-փանթօլ. քեառսուն խատ շմշիր թուր, քեառսուն խատ պղպտէ կալխան, քեառսուն կամայ, քեառսուն ջուխտ նալչալու ջզմայ, հմէն բանից քեառսունական ձեռք. որ թամամ էլաւ՝ խագիւց հմէն աղջկանցն էլ: Էն մէկէլ առաւօ-տուն հազրվան, կանչլիցին Աստուած, գնացին. Ջատ գնացին թէ քիչ էն էլ Աստուածն ի խաբար:

Թագաւորը ինոնց իտև՝ կէլնի ուր կըլլդ-կիեաֆաթ կը-փոխի, կէրթայ կխասնի աղջկան. կուղի որ ինոնց խետ էր-թայ, տիսնայ թէ ինչին պիտի սպանեն Զան-փօլատին, ա'զա՞տի ուր աղջիկն: Ամմա աղջիկը որ կտեսնայ՝ չիմնայ թէ ուր խէրն ի. համան քօմ կանի ուր աղջիկ ա'սքըներ, կքշի վէր խօր. կանի որ սպանի՝ խէրը համան ճանչփորութեն կու-տայ. կատի դադար կաց, ես քեռ թագաւոր խէրն եմ. հիմայ կիսաւտամ որ Զան-փօլատի ջանը տիւ կառնես: Կօրհնի ուր աղջկան և ընկերներաց, կաց բարով կանեն մէկ մէկու ու կը-ջօկվեն: Թագաւորը կդառնայ ուր տուն, աչքը ճամբախ կաչկի:

Աղջիկն ուր ա՞նքյըներով կինեն ճամբախ, կէրթա՞ն կէրթա՞ն, չիւմ կխասնեն Զան-փօլատի եէսիրներաց գելդ: Եէսիրները ինոնց կխառցուցեն կասեն. Թիւք դեմք կէրթալք:

— Կէրթանյք որ ձեր աղէն Զան-փօլատն սպանենք:

— Թու, տիւք չէք կանայ վէր ինոր. ինոր ջան պօղպատի, վիզն էրկթէ. մարդ, աղամորդի ինոր ոժ-ողջանք չունի. թէ խելացի էք՝ մեղք էք, ետ դառցէք ձեր ու տեղ:

Աղջիկ կասի. Կուզի էրկթից էլնի, կուզի պողպատից, ինչից որ էլնի. ախըր իկեր եմ, որ էրթամ մէկ խատ ինոր խետ զանեմ զարնուեմ. եան ի կսպանուեմ, եան ի կսպանեմ, աշխարհ կազամ:

Մէկէլ օր թագաւորու աղջիկը ուր եռսուն ինս ընկերներն կթողնի էտա տեղ, ինքն մէն-մէնակ կխէծնի ձին, կառնի ուր թուր-թվանք, կէրթայ, կասի ընկերներաց զմէնին.

— Քեանի որ նեղ չեմ ինկեյ՝ Աստծով ձե չեմ կանչե. ամա որ նեղ ինկեայ, մազս կուտամ կրակ թէ չէ՝ էն սահաթին ա՛լա՛լ-աջալայ շոտով խասէլք:

Զինը ըսկուն սարսափով կրշի, որ ինոր ոտներաց տկից պլըլըթր-պլըլըթր կէծակի պէս կրակ կուտայ: Կէրթայ կխանի վէր Զան-փօլատի դռան, կկայնի շիմքեան վրայ, թուրը կչտի, իրեւք դա՞ն իրեսը դէմ աղօթրան կխաչակնքի, գեացողին մէկ զանելով գէտին կփռքբյուցի, կսպանի: Արուն դրաելսը առուի պէս կէրթայ. ինոր սուր թրից ա՛զա՛տուղները թափէ-թափ խանքակտուր կխասնեն Զան-փօլատին կարա-իսաբար կտանեն: Զան-փօլատ որ կլսի էսասկնայ կըտրճութեն՝ առձին տրին մատը կիծի. կասի, ինչ անեմ, ինչ չանեմ. շատ կմտմտայ:

— Ախըր էսա ինչ մարդ ի, որ ջասարաթ արե, իկե իմ վէրէն. եան շատ կտրիճ ջանավար ի, եան շատ քեօթի-պլըլնգագ ի: Վեր կէլնե ուր տեղից, կերթայ, դյուխ դռնից որ տիւս կխանի չխանե՝ աղջիկը եա Աստուած կասի, թուրը

մէկխատ որ կիջուցի Զան-փօլատի վզակոթին վզի կէսխետէն միսը կըկտրի, էրկաթը կմնայ:

Աղջիկը կտիսնայ որ Զան-փօլատն ինգաւ, փըռուաւ գեյտին՝ կաւատայ որ զեօ սատկեր ի. ուրախ-ուրախ կէրթայ կըկանչի ինոր եէսիրներաց, մուժիա կուտայ. կասի. Զեր աչքը լուս էլնի. ձեր տէրն սպանի, ջանգակն էլ փոփ գեյտին: Եէսիրները զըմէն էլ եէսիրութնից կա'զա'տի, կճամխի իրենց երկիրներ, կուգեայ կառնի ուր եռսուն ինն աղջիկ ասքյըներն, առօյք-փառօյք կդառնայ ուր խօր տուն:

Խաբար կէրթայ թագաւորուն. էլ ասել, ինդա՛լ, զանել, խաղալ. անհէսապ ուրախութենով կուգեան աղջկան տես: Թագաւորն ուր ձիուց ցածր կէջնի, կխասնի աղջկայ երեսն էլ, ճակատն էլ կպռնի պլէ-պլէ կպաքի. կասի. Աղջիկ, իրեսդը սիվտակ. տիւ մեր աղատիչն էլար. ծլես ու ծաղկես:

Զան-փօլատի խելքն իրեւք օր, գիշեր ցերէկ վէրէն չի գեայ. ինեռըած կմնայ ուր արընի մէջ. կտորմը որ կայեղանայ՝ խելքը կժողովի, խէջիւմ կպիրի, ուր վիզ ժըրըցուցել կուտայ: Կէլնի եօթ բեռ ոսկի, արծաթ, ակնունք, ջավահիր կբառնայ ուր ձիանց, կինի ճամբախ. կասի. Կէրթամ, ուր օր էլնի եօթն աշխարհ կան-գեամ, ինչս որ էլնի՝ իմ դիւշմանը պիտի գտնեմ: Իրեւք ամիս երկրէ երկիր, աշխրէ աշխարհ, ոսկի, արծաթ ցրուելով, խուշելով, իսոր ինոր խառցուցելով կփռայ կփռփռայ, սարլի-սուլուխ առնելով՝ կէրթայ կիջնի թագաւորու տուն:

Թագաւորը չիմնայ, թէ էն ուր աղջկայ դիւշման Զան-փօլատն ի: Ճատ ա՛զա՛թ, իքրամ, պատիւ կուտայ ինոր, շատ էլ կմեծարի. էն ըսկուն դիտի, որ մէյ զանգիյն բազըրգեան ի: Իրիկուն որ կէլնի թագաւորու ճոչ պատիւ իշխանները կըժողին, ամեն մէկը ուր գլխուն գեացածը կսա կանի, սարոց ձորից ամեն մէկուն ինչ որ ուստ իկե՛ ջօրկով կպատմեն: Ամենի բերան բաց, աչքներ կտնկեյն թագաւորու բերան, կաչկեն որ կաչկեն, թէ թագաւորն էլ մի կօտ անի:

Թագաւորն ի, ուր խրերաց խաթրի խամար բերան կը-  
քանայ, մի շատ էշխով, ուրախ սրտով կպատմի:

— Իշխաններ, վազիր-վիզիրներ, տիւք իմացաւք որ իմ  
պղտիկ աղջիկ էսա քեանի օրեր ինչ ճոչ կտրճութեն արաց.  
Ժողվեց ուր աղջիկ ասքըներ, կնաց Զան-փոլատի վէրէն, մէջ  
դարբով զարկեց Զան-փոլատն սպանեց, ձիկ էլ ապատեց, ձեզիկ  
էլ խետ. իմ աչքն էլ լուս, ձերն էլ:

Զան-փոլատ որ կլսի թագաւորու խաբըններն՝ մազերն  
կդիզանան, զահլաքիւշտ կէլնի. ամա ուր կժողվի, բան չի  
ասե: Վա՛զիրները զըմէն աչքալուսանք կուտան կպոծնեն,  
սըրէն կուգեայ Զան-փոլատին, որ մօտ կուգեայ ու կառի.

— Թագաւոր ապրած կէնայ, էն քեռ ասած ու պատմած  
Զան-փոլատն գեօ եռ եմ. աղորթ ի, քեռ աղջիկը մէնակ ին  
մոէ վիզն ի կտրե. էրկթէ վիզս ուր տեղն ի. ամա ես էլ  
շատ ու շատ զարմացեր եմ ինոր կտրճութնի վերէն, թէ  
էտա ինչ ջասարաթ էր, որ էն իմ սընօրն անցաւ, էկաւ  
խասաւ չիւմ իմ դուռ: Ես ինոր խաթրին, ընոր սիրուն աշխրէ  
աշխարհ, երկրէ երկիր եմ ինկե, անջախ-անջախ կնդեր եմ իմ  
զուրին: Մկայ ինչ կասես, թագաւոր ապրած կէնայ, քեյնից  
ինդիրք ունեմ, որ քեռ աղջիկը տաս ձիկ:

Էսա խաբը վէրայ, թագաւորն ու վազիրները երանց  
մատը կծեն, դէլ չեն խաւատայ, արմանք զարմանք կէլնեն:  
Թագաւոր որ կտիսնայ Զան-փոլատի մարտութեն, ինոր տուած  
կտրիճ-կտրիճ ջուզաբներ՝ կասի, թէ Աղորթ որ դիւ էն կըտ-  
րիճն ես, իմ աղջկան բարաթ դօչաղութեն ունես. քեզ կուր-  
բան էլնի իմ աղջիկ:

Եօթն օր եօթն գիշեր դըֆով ու գուռնով խարսնիս կա-  
նեն, շատ անթիւ հէծէլով, ասքըններով Զան-փոլատին ճա-  
նապարհ կդնեն, կառնեն աղջիկ կէրթան իրենց երկիր: Ճատ  
կէրթան թէ քիչ, էն Աստուած դիտի, Զան-փոլատ ամր կա-  
նի, ասքըններն ետ կդաւցուցի: Ճամբախ կծուի. էն ճամբ-  
խով կէրթայ, որ աղջիկ ա՛լ-բէ-ա՛լ կիմնայ. ուր մտքում կա-

մի. Զէլնի թէ էսա անիրաւ ձիկ տանի զա՞ւ անի: Աղորթ որ  
Զան-փոլատի միտքը չար էր, կուզէր մէջ խալվաթ տեղ աղջ-  
կան մեռցնէր:

Աղջկան կտանի դէն, կբիրի դէն, ծուռ-մուռ ճամբըն-  
ներով տրօրս կուտայ, վերջը կբերի ուր եէսիրներաց գեղ,  
կտանի աղջկայ ծամերը կկախի ա՛ռքից. ճէլան-ճէլան ջան-  
դակը կէրթայ կուգեալ, մարդ մատաթ չկայ որ աղատի:

Զան-փոլատն էտա ժամանակ ինչև կէլնի, կէրթայ տիւս,  
ամր կանի ուր մարդերաց, որ չոր-խուիկ ցախեր բերեն վառեն,  
սաղ-սաղ իրիցեն աղջկայ ջանդակը:

Կաս-կութրաթ, էտա ժամանակ կխասնի էն տեղ կուզայ  
Զաչալ-բազրգեան, որ Զան-փոլատի շատ ճոչ դիւշան ի. կը-  
տիսնայ աղջկայ հալ վիճակ.—Ճօ եաման, ձօ մատաթ, հաւար  
կանի, գանակ կբերեն շոտ-շոտ չուան կկտրեն, ինչ հալ-հալ-  
բաթով աղջիկը էն կախելայ տեղից կազատեն: Զաչալ-բազրգեան  
որ կազատի աղջիկը կդնի մէջ ուր բեռներաց որ առնի տանի.  
Զան-փոլատ համան կխասնի վէրէն:

Ա՛յ, բազրգեան, բազրգեան, էտա ինչ քեռ բանն ի. դիւ  
քեռ Աստուած կիրես, մի՞ տանե իմ որս. տուր, տուր. քեռ  
լեզուն ինչ կանդար ոսկի արծաթ ուզի՝ կուտամ քեյզ: Զաչալ-  
բազրգեանը իայինութեն չանե, էրդում, պատուտում կանի,  
կասի, որ աղջիկ մօտ ձիկ չի:

Զան-փոլատ, մկայ ինքն ուր կկտրտի, փարալամիշ  
կանի. դէն կիրիշկի, դէս, զա՞տ չիկանայ կնդնե. կկորի կէր-  
թայ: Զաչալ-բազրգեան էլ, աղջիկ որ ազատեց, ուր մէկ օր  
խազար էլնի, տարաւ ուր քեաղայք, ուր տուն, խետ ուր  
աղջկներաց ընկեր արաց. շատ էլ կսիրէր ինոր: Էտա քեաղ-  
քի աղջկները շատ հունարւոր են, քրգիւուն ալնիներ կը  
շինեն, կգործեն, կտանեն կթալեն վէր դարգիի դռան շըր-  
տին. ընցնող դարձող, աղտիք լաճեր որուն որ խաւնին կառ-  
նին ալնախն էլ, գործող աղջիկն էլ:

Թագաւորու աղջիկն էլ մէ! խատ շատ լաւ քրդիսուն ալնախ գործեց, տուեց բազրգեանին որ տարաւ թալեց վէր էն շրտին, տիսնողները զըմէն մա'թ մնացին: Աւոր մէկ էտա երկրի թագաւորու լաճը զիւս կէլնի Փրռալու. կուգեայ կր խասնի դէրգիսի գուան. կտիսնայ որ շրտի վէրէն թալեր են մէ! խատ ըսկուն նխուն ալնախ, որ չուտես չխմես, ինոր բանած ծաղիկները թամաշայ անես: Ալնիսի գիւնը թէ մէկ ոսկի կուգեն՝ էն կուտայ էրկու, կառնի ալնախ կտանի տուն, որ մօր նշանց կուտայ: Էն մէկէլ օրն թագաւորու տնից մարդեր կուգեան, աղջիկը բազրգեանի տնից առօյք փառօյք կտանեն թսգաւորու լաճուն: Ըսկուն կխաւատայ որ աղատեց Զան-փօլատի ձեռից:

Տիւ մի ասե, որ անիրաւ Զան-փօլատը էն օրվնէ մուրիմուրի ընկերի աղջիայ իտև, խառց փորձ կանի. կիմնայ որ թագաւորու լաճուն կնիկի դարձե. կաստ կանի, շատ արծաթ ոսկի կխառջի, կուգեայ որ էլմ էլ ուր չար կամք կատարի, սպանի աղջկան:

Աղջիկը ուր դիւշմնի չարութեն զիտի. էրկու որ որ կընցնի՝ խնդիր կանի թագաւորու լաճուց, կասի որ, Տիւ ձիկ առիր, շատ աղէկ. ամա ես երես-անկեալ կաղաչեմ, որ իմ էօդի գուները զըմէն էրկթէ, մանդեանալի անես, ըսկուն որ թէ անվարժ մարդ ներս ուգենայ մտնի՝ զգովն ընկնի, կտրի, էրկու կտոր անի, թա՛լի դէն: Թագաւորու լաճը իսոր խարին ականջ չանե, ըսկուն զիտի որ խանաք կանի խետ ուր:

Կընցնի մի քեանի ամիս: Զան-փօլատը կուգեայ թագաւորու սարի աթրաֆ. կատատորի որ ներս մտնի. արա չկնդնե: Օրմ էլ կէլնի մուսլի գօմէշ, կուգեայ վէր իտոնց զռան կը կայնի: Աստծու խրամանքով աղջիկը կիմնայ կասի. Աստծու սիրուն, էտա գոմէշ չէլնի որ ներս առնէք. էտա իմ խին դիւշմանն ի: Մարդ ականջ չանե. մէնակ թագաւորու տղէն կիմնայ. ներս չեն առնե, էտօր ըտրակընայ կընցուցեն:

Են մէկ օր Զան-փօլատ կէլնի խրեղէն ձիմ, կուգեայ վէր սալի գուան, շատերը զարմացք կմնան ինոր խօրոտկութնի վէրէն, ներս կառնեն, չեն իմնայ ինոր ինչ էլնելը:

Զան-փօլատ քեյ տիսնամ. գիշերը տիւս կուգեայ ուր կապած տեղից, մեռլի հող կցանի վեր սարի զըմէն դռներաց. ինոնյք կթմպրտեն կմնան տեղն ու տեղ. ինքը կէրթալ մօչէ էրկէն պղինձը կթալի վէր օճխին, ճիւր կեռացուցի որ գեայ աղջիկ վերցնի տանի թալի մէջ, սաղ-սաղ խաշի:

Սուս-փօւս կմտնի աղջկայ էօտից ներս: Աղջիկը կտիսնայ ուր խին դիւշման. կղարզանդի, տեղն ու տեղ կպապանձուի: Զան-փօլատ շատ քեաղցրութնով կասի ինոր. Աղջիկ, էլի, էլի, մի վախենայ, ես քեյ բան չեմ ասե. էլի էրթանյք, քեո դզօխ լուանամ, գիտեմ որ շատ կեղուուեր ես:

Աղջիկն էլ, Աստծուած ուր խետն էր, մօտ օրերը մէյ խատ խուրն խրեղէն լաճ տղայ էր բերեր. տղէն կուլայ, մէրը կուզի ծիծ տալ. կասի, Աման Զան-փօլատ, մի քիչ դարի, չիւմ իմ տղին կշտացնեմ, ապա էրթանյք, թող քեո խօսքն էլնի: Ինչ միւքիւն կանի, ինչ կանդար որ կուլա կաղավրղի՝ ինոր իրիկը ամենկեն չզարթնե. մտե մեռելի քիւն. զըմէնն էլ ինոր պէս: Աղջիկ կտիսնա որ ճար չէլնե, կասի. Դէ աղէկ, որ ըսկունի տիւ ինկիյ առաջ, ես ինեմ քեո իտև, էրթանյք ուր որ կուզես:

Զան-փօլատ կինի առաջ, աղջիկն ինոր իտև, էրթան. որ կխասնեն մօտ մանգեանալի գուռը՝ աղջիկն էլ համան տիւ ես խաբար, մանգեանէն կօլորի որ չէ՝ Զան-փօլատի մսէ վիզն էլ, էրկթէ վիզն էլ մէկէն կկտրուի կթոնի դէն: Զան-փօլատի ախագիյն ջանգակ կիմողնի դրան շիմքան մէջ, կուգեայ թագաւորու լաճուն շատ կդնթի, կդնթի, ձէն կուտայ, կխանի վեր, կասի. Մէկ էլի, մէկ վեր կաց, տնաւիրի մարդ, տես, իմ դիւշման ինչ խանեց իմ գլուխն: Իրիկը խելքամաղ վեր կէլնի, քնազրղեղ կտիսնայ որ ի՞չ, էօդէն մէջ արընին լեռդ կուտայ: Կտեսնայ Զան-փօլատի էրկթէ

վիզն, ինոր ջանդակն, որ թաւալուե մէջ շիմքան, կըզա՛խա-  
խորի, լեզուն կպապանձուի, էլ չգիտե ինչ անի. ետ ետ կը  
քաշուի էօդի մի քիւնց:

— Էլ մի վախենայ, կասի աղջիկ, էլ ձիկ դիւշման չմնաց:  
Մկայ ես քեյ կասեմ, որ ես Զի՞ս-մաշինայ թագաւորու աղջիկն  
եմ. էլի դիւ քեաշի քեռ բէօդ-բէօդ ձրանք, սիվտակ ջորիք,  
բարձի մեր բար-բարխանէն, էրթանք իմ խօր-խէրանին մեր  
երկիր:

Թագաւորու լաճն ի ականջ կանի ուր կնկան, կէլնի  
ուր խօր ու մօր օրհնութեն կառնի, կհազրուեն, կէրթան  
աղջկայ էրանց երկիր, Զինու թագաւորու մօտ: Նոր թա-  
գատան աղջիկը ճանչորութեն կուտայ հօրն, կպատմի զըմէն  
ուր գլխով գեացած զըմէն փորձանքներն: Նորից եօթն օր եօթ  
գիշեր խարսնիս կանեն, կիսնդան, կուրախնան մէկզմէկու  
վրայ. նոր օյին, նոր բարին կուզեայ ինոնց վերէն:

Աստծուց իրեյք խնձօր էճաւ. մէկը ասողին, մէկը լսողին,  
մէկն էլ ականջ արօղին \*):

## 2.

### ՆԹԱՆ ԽԱՏԵՆ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնի, կէլնի կէլնի մէյ թագաւոր:  
Խսա թագաւորն ի, խօրէ մօրէ ունի մէյ խատ սիրուն լաճ.  
Ըսկուն խօրօտ աննման տղայ դայմայ տեղ գտնուի լաճերաց  
մէջ: Թագաւորը խաբար կանի չնդու թագաւորուն, որ ինոր  
աղջիկը բերի ուր լաճուն, էն աղջիկն էլ խօրն ու մօր մէյ  
խատ էր: Խարսնաւորները կհազրուեն, շատ մարդով, թար-  
թախմով կէրթան չնդստան խարսխուր, կբերեն էն աղջիկ:

\*) Սովորաբար ամեն հեքիեաթի վերջումն կրկնում է յիշեալ նախա-  
դասութիւնը, որին խիստ բաւականութեամբ լսում են ունկնդիրք, և դրա-  
նով վերջ է դրում հեքիաթին:

Որ կխասնեն վէր կէս ճամբիսին՝ վէսէնը ուր ձիու վեր-  
ուից կիրեշկի տակ, գեյտնի վէրայ կտիսնայ մէկ խատ կար-  
մրօշիկ կլոր բան մը. էն թա՛խմին կանի, թէ ջավահիր ակ  
էլնի. ձիուց տակ կէջնի, ձեռ որ կառնի՝ կիմնայ որ նուան  
խատ ի կնդածն. էլ մարդու բան չափ, համան կթալի  
բերան, կէլնի ձին կիսէծնի: Խարսն որ կտիսնայ ինատ  
կանի, կասի. էլ չեմ ուզե էսա վէսէն, ինչ նավսատ ի. ձիկ  
դարձուցէք իմ խէրանց տուն: Հայ-հաւար հայ-մատաթ, ինչ  
որ կասեն՝ էլ ճար իլաճ չէլնե. — կէրթամ որ կէրթամ,  
չեմ առնե որ չեմ առնե էսա վէսէն: Ախր վերջ՝ խարս կը-  
դառցուցեն ուր խէրանց տուն:

Թագաւորու լաճն էլ ինատ կմտնի, կտրտմի. գլոխ  
կախ կէրթայ: Ուր խետի մարդերն էլ շատ թըշվըշ կանեն,  
կէրթան թագաւորուն իմաց կանեն՝ ինչ որ ճամփի վէրէն  
տեսան: Փէսէն էլ չլ գառնայ խօր տուն, կինի դէս դէն,  
կֆռայ, կֆռայ, կէրթայ էն աղջկայ խօր տուն կիսդը-  
նի, կըլըդ կփռխի կմտնի ինոնց տուն, կէլնի մշակ:

Մարդ չիմնայ էսա բան, չիւմ աղջիկն էլ չճանչնայ որ  
էտա մշակը ուր իրիկն ի: Թագաւորու աղջիկը ինետ մշակուն  
խօսքըներ մէկ կանեն, իրարու կսիրեն, իրար կառնեն, կը-  
մէյտեղվեն: Մշակն ի, օրմ կմտնի աղջկայ խելք, գեշով  
կփռխնեն, կէրթան: Կէրթան կէրթան, ուաստ կուգեսն  
մէկ բանձրիկ սարիմ, կմտնեն հէրիմ մէջ: Լաճ կասի. Տիւ  
ըստեղ կաց, ես էրթամ մէյ լաւ տեղ գտնեմ, ապա գեամ  
քեյ էլ առնեմ, տանեմ էնտեղ ապրենք:

Աղջիկը մէն-մէնակ կմնայ էտա հէրի մէջ, կուլայ  
կուլայ, չիւմ արտսունք կէլնի ուր կթրճի: Դէն կիրեշկի,  
դէս կիրեշկի, — մարդ, ադամորդի գեացող էրթացող չըկայ. կը-  
մնայ մէջ ուր հալ վիճակին: Ճատ կտրտմի, շատ կբախ-  
տակոծի վէր ուր հալին: Պաեար մա'սե, որ թագաւորու  
լաճ գնացե, ուր կըլըդ փոխե, մշակու խալիներ հանե, խա-  
լաճ գնացե, ուր կըլըդ փոխե, մշակու խալիներ կապե վերէն, խէծե ուր  
գեյ ուր լաւ-լաւ շորեր, սիլախներ կապե վերէն, խէծե ուր

ձին, իկեր ի որ աղջիկն առնի տանի: Կմտնի հէր, կիւառցուցի. Ա՛! աղջիկ, ինչի ես մէն մէնակ մնացե էսա տեղ. արե քել տանեմ մեր տուն, անտէր անտիրական մի մընայ:

— Ձէ, աղա, չէ. ես կմնամ էսա տեղ, իմ մարդ գնացե, որ մե խամար լաւ տեղ ճարի, գեայ ձիկ տանի էնտեղ, տընաւորվենք:

— Որ ըսկուն ի՝ կասի թագաւորու լաճ, ես կէրթամ. որ քեռ իրիկ կուգեայ՝ ասա թող գեա մեր տուն էլնի մշակ. ես քել էլ, ինոր էլ մէկ տեղ կպախեմ չլւմ օրն մախուն:

Թագաւորու լաճ կդառնայ ուր տուն, մշակու խալբներ էլմ կիսայնի, կուգեայ հէր, մօտ ուր կնիկ, կտիսնայ լա՛լու մէջ: Անիկն ի կասի. Զօ մարդ, էսա երկրի թագաւորու լաճն էկաւ. էսա տեղ, կասէր. Խետ քեռ մարդուն էկէյք մեր տուն, ես էրկսիդ էլ կպախեմ կշախեմ չլւմ օրն մախուն:

Կասի. Որ էտասկընայ ի՝ դէ էլի էրթայնք, քանի շոտ ի:

Իրիկ կնիկ, էրկուս մէյտեղ կինեն ճանապարհ, կէրթան քեաղայք: Մշակ-թագաւորու լաճ կնկան կտանի կդնի ուր կագերաց բոն, տուն: Հմէն իրիկուն մէյ խատ լաւ կազ կմորթեն կուտեն: Կնիկը շատ կվախենայ. կասի. Վայ թէ թագաւորն իմնայ, մե ըստեղէն էլ կիսանի, խեղճ կէնենք, էլ մարդ մե տիրութեն չանե:

Իրիկը ակաջ չանե, զըմէն օր ուր արած կանի:

Մէկ օր որ թագաւորու տուն հաց կթխեն՝ թագաւորու լաճը մօրը կասի. Մարէ, մշակու կնիկ բերէք որ գյուտնակ անի մե, էն շատ լաւ գյուտնակ կանի, մէյ տեսէյք ինոր մարիֆաթն: Ինքն էլմ կփոխուի, կուգեայ կնկան կասի. Որ կէրթաս գյուտնակ կանես՝ քիչ մի խաց գեողցի բեր խետդ, կազի մըսի խետ կուտենք, թող մարդ չիմանայ: Կնիկն էլ, խաց խմորից որ կպացնեն՝ ինչի կէլնի, քեանիմ խատ լաւ լոշեր կդնի վէր փորին, կկապի, որ տիւս էլնի, գեայ:

Մէկ էլ էն կտիսնակ, որ թագաւորու լաճ, մշակու

կըլըղ փոխե, ամր արե որ զուռնէն նազարէն կզանեն, պիտի որ խացթուխը և գյուտնակ արողը մէյտեղ խաղան:

Գյուտնակ արողն ի, որ կիսաղայ՝ փորի վիրվուց խացեր կմշրտուեն կթափեն տակ: Տիսնող մարդերը մատներ կը կծեն, կասեն. Վայ, վայ, էսա ինչ կանդար անօթի են, որ խացերն էլ գեողցիր են, կապեր են փորերաց վէրէն: Թագաւուլու լաճը համան շոտ թէ շոտ էլմ ուր շորեր կփոխի, կմտնի մշակու կըլըղ, կուգեայ մօտ կնիկ, կասի. Ի՞նչ արիր, ինչ չարիր, ուր է քեռ բերած հացը, բեր ուտենք կազի մսի ինտ:

— Քա ինչ սև խաց. թագաւորու լաճ ձիկ արաց ծաղրծանակ ալամայ-դէսթան. տիւ էլ բան որ էր ուսուցիր ձիկ:

— Բան չկայ, վաղն էլ խմորի գունդեր զիր ջօբդ, մէջն ալուր ցանի որ չկպչի. բեր վէր սաջին կեփենք կուտենք: Կնիկն էլ էն մէկէ օր կէրթայ, իրկան ասածին պէս խմորի գունդեր կդնի ջօբ. կանի որ տիւս էլնի էն սհալթին էլմ էլ թագաւորու լաճ ամր կանի, զուռնէն նազարէն կզանեն, որ հացթուխ ու գյուտնակ արողը մէյտեղ խաղան:

Ալիւր փատ-փատ ինոր ջօբից կուտայ տիւս. կկարմրի կկարմրի, գեռն կուտայ գեռն կառնի, շատ էլ կամչնայ աղջիկը. կքաշուի, կվծկուի մէյ կորմ, էլ չգիտե ինչ անի ամուլթութնէ: Իրիկոն որ կէլնի՝ թագաւորու լաճ կիսայնի մշակու շորերն, գուգեայ մօտ կնիկ: — Կասի ինոր. Բեր գիւնդերը իփենք:

— Վայ, ես խող մտնեմ, մօխիր մտնեմ. էսա ինչ օլին ու խաղքութեն ի որ կիսանես իմ զլիին. ձիկ ամցուցիր:

— Բան չկայ, քեյ դարտ մի անե. բեր կազմ էլ մորթենք ուտենք, տիսնանք չլւմ Աստուած ինչ կուտայ մեզ:

Մէկէլ օր թագաւորու լաճը ուր մօր կասի. Մարէ, ես պիտի պակուեմ. կուգեմ որ քեռ ամրակն էլնի պասկա: Կէլնի կըլըղի մաղմ նուռ, մաղմ մարգիտ, մաղմ ոսկի, մաղմ էլ ակունք չափահիր, մաղմ էլ կրամոխիր. կդնի վէր մշակ-

Ներաց գլխուն, կասի, տա՞րէյք կան ածէք, իսոր հէքլեաթն վով ասի՝ ես էն կառնեմ ձիկ կնիկ:

Մշակները դեօր որ կան կածուցեն՝ մարդ չմինայ ինոնց նշանակութեն. ետ կդառցուցեն, կբիրեն տուն, կասեն. Թագաւոր ապրած կէնայ, մարդ իսոր էութեն չմցաւ:

Ամր կանի, որ կանչեն մշակու կնկան էլ:

Մէրը կասի. Տղա, խօ մշակու կնիկ չես առնե: Լաճ կասի. Մարէ, շիշտեմ, բալքի թէ մշակու կնիկ զիտի, առնեմ թէ չառնեմ՝ Աստուած գիտի, ինոր էլ կանչէյք:

Խրզմաքեարները կէրթան, կաղի տնից մշակու կնկան զոռով խաթրով կառնեն կբերեն ներս. մաղով նուռ, ոսկին, ակնունք. ջավահիր, կրամոխիրը կդնեն առնեն, կասեն. Ասա իսոր խէքեաթ, թէ չէ, մըկայ ի դօրմ ի վիզդ կէրթայ:

Մշակու կնկան սիրտը արուն կդառնայ. աչքերը արտ-սունքով կլցուի. միտ կինի ուր արածը առաջին դրուն, որ հանեց իրկան գլխին նուան խատի խամար:

— Այ կնիկ, ինչի կուլաս, ասա, մի բան էլ տիւ ասա:

— Ես ինչ ասեմ, ասելն ասելուց անցե. —

« Ես թանգ-մանդ ի քեանձ էսա մարդորիտ,

« Ես կըպլապլղի քանձ էսա ջավահիր ակնունք.

« Զրկ ինչ կըխասնէր, ոչ արև, ոչ լուսին, ոչ աստղունք:

« Ա՛խ, խատէն, նուան խատէն.

« Զիկ արաց սախուն էրէրուն.

« Ջըրկուայ էն փառք ու պատուից,

« Խառնվայ խետ կրամոխիրներուն:

Թագաւորու լաճու մէրը որ կլսի՝ մունջ կանի, չխաս-կնայ: Լաճ կասի մօր: Մարէ, տեսար, լսեցիր էսա կնկան զրոյց. կառնեմ որ կառնեմ. էսա ի իմ ուզածը որ էսա ի:

Մշակու կնիկն էլ կծկվե, էլե պրտումմ բամբակ. կպե պատ, կասի. Քա եա, էտա ինչ խաբար ի, ախըր ձիկ էլ տէր տիրական կայ, ես էլ մարդու տէր եմ, անտէր չեմ:

Թագաւորու լաճը էլ չի համբերե, առջև կէլնի ու կասի. Իմ սիրական, ես եմ քո տէր ու տիրական. էլ մի վախենայ, մարդ բան ասող չկայ քեզ:

Ես էն եմ, թագաւորու լաճ, որ մէկ նռան խատի իսա-մար ինատ արիր, ճամիսից ետ դարձար քեռ խօր տուն. էսա քեանի տարի ի, որ ես քեռ խտե կֆռամ, որ քեռ խօրվուր-տութեն իմանամ. ըստուց դէն զու իմն ես, իմ: Էն սհաթին թագաւորու լաճ ամր կանի, որ աղջկան տանեն բաղնիս, եօթն գեռն-գեռն սապոնով լուան ինոր ջան-ման, թաղայ խա-լաւները խագիւցեն ու բերեն տուն: Ասածն ու էլած մէկ կը-լինի, շոտ կլատարուի:

Նոր խարսնիս, նոր ուրախութեն կանեն կպսակուեն: Ինոնիք կիսասնեն իրենց սրտի մուրազին. Աստուած մեզի էլ խասուցի մեր սրտի մուրազին:

3.

ՄԸՐԳԱՐԻՑ ՃԱԲ

Կէլնի կէլնի մէկ թագաւոր. ունի մէկ տղայ, որ աճնենեին չուզե պատկուել, աշխարհ մտնել:

Ճատ մարգեր, բարեկամներ կուգեան ինոր մօտ, իդուեն, կիսնղեն որ պատկուի, էն ոչ մարդու չլսի: Մէկ օդ ու խաւ մը կըունի, ուր ձեռնով կտանի վեր ձան կմորթի, կասի ուր չորս կրղմի մարգերաց. Քեանց էսա խաւու արիւն կարմիր, քեանձ էսա ձիւն սիվտակ, ծամերն էլ քեանձ իմ խանչալի կոթն ու քեաթալի պէս աղջիկ որ կնդայ՝ կառնեմ, թէ չէ ոչ կպսակուեմ և ոչ էլ աշխարհ կմտնեմ:

Թագաւորու մօտիկ մարգերաց մէկն ինոր միտքն խաս-կնալով կասի. Ճատ ապրես. էտա քեռ ուզած աղջիկ մէտ տեղ էլ չկայ, բալքի թէ մեր քեազքի պախէզպընի տուն էլնի. ինոր աղջիկ մէնակ թէ քեռ ուզածի պէս կէլնի խօրօտ, կար-

միր ու սիվտակ ծամերն էլ թուփս-մուլս՝ ինչպէս ու քեարբար: Լաճն ի կլսի թէ չէ՝ համան կվազի, կէրթայ գեխ պախէզպան, բարև կուտայ, բարև կառնի, կըարեկամնայ ինոր խետ, կնստի որ խաբար տայ:

Պախէզպանը ա'լ-թէ-ա'լ կխասկնայ ինոր միտքը, շոտ կխասնի, պախէզից ուր ուղած լաւ ձմերուկներից իրեք հատ շատ ճոչն կբերի, կդնի տղի առնե, կասի որ չէլնի թէ անմիւր տեղ կտրի ձմերուկները: Թագաւորութ լաճու սիրտը թըպըլթուն չի տայ. հալա ջրի վէրէն չհասած՝ ճամփի մէջ տեղ մի խատն կկտրի թէ չէ՝ կտիսնայ որ մէյ խատ խուրն խրեղէն աղջիկ տիւս կթունի, «ճիւր, ճիւր, աման մէյ պուտ ճիւր» կասի, հալա խաբար մէջ բերնին ջուրը չառած՝ կմեռնի: Քիչ մը տեղ էլ որ կէրթայ՝ մէյ խատն էլ կկտրի. էլմ ըսկուն մէկ գեղեցիկ սիրուն շողշողուն աղջիկ տիւս կթունի. էն էլ մէկէլի պէս «ճիւր, ճիւր» կկանչի, խաբար բերնին մէջ տեղն ի տեղ՝ կցամքի կմեռնի: Լաճը շատ կտրտմի: Կմնայ մէկ խատ. կպախի, կէրթայ, չիւմ կխասնի մէյ պաղ աղբը ըստ կուգեայ. կնստի ինոր վէրէն: Էն մէկ ձմերուկն էլ ըստեղ որ կկտրի՝ համան ձմերուկի մէջից դիւս կթունի աղջիկ մը. աղջիկ մի ասե, խուրն խրեղէն. լուսնկից, արեգակից պայծառ մի խրիշտակ, «ճիւր, ճիւր» կասի, ուր կթալի աղբը ական մէջ. կլուացուի, կսէրափուի տիւս կէլնի աղբը միջից:

Էնտեղ, աղբը ական վրայ, տնկուկ կէր մէկ թագատունկ չինարի ծառ. աղջկան կխանի կնստցուցի վէր էն ծառի ծէրին, կասի. Տիւ նստի էստեղ, ես էրթամ մեր տնից քեյ խալաւ, խագիւտ բերեմ, քեյ տանեմ մեր տուն, տիւ իմը կէլնես, ես էլ քեոն:

Թագաւորութ լաճ աղջկան կթողնի էնտեղ, կէրթայ որ ինոր խամար խալաւ բիրի, հագուցի ու տանի: Աղջիկ մէնակ մերկ կմնայ էնտեղ, ծառի ծէրի վէրէն:

Մէկ էլ տիսնաս որ էն գեխէն մէյ խատ Արաբու պուկօշ փառչերը ձեռն կուգեայ որ աղբը ջուր տանի: Կնստի որ

փառչերը լեցուցի, կտիսնայ ջրի մէջ շառաւիդք, շողշողուն մի պատկերք աղբը ակը բուներ ի: Արաբու պուկօշն ըսկուն կիմնայ, որ ուր շառաւիդքն ի զարկե ջրի մէջ, կզանի փառչեր կկոտրի ուր հէրսիցն: Ինքն ուր կխպարտանայ, կասի. Որ ես էսասկնայ խօրօտ եմ, էլ ինչո՞ւ պիտի ջրկիր էլնեմ. ես թագաւորութ տղին լայեղ եմ: Աչքը որ դէս ու դէս կշրջի՝ վեր կիրիշկի ծառի ծէրին:

Աղջիկն էլ ծառի վիրվից որ կտիսնայ պուկօշի արածն ու էլածը՝ կծծղայ ինոր վէրէն, կասի. Օ, պուկօշ, պուկօշ, էտա դիւ չես, ես եմ, իմ շառաւիդքն ի որ կերւկի ջրի մէջ. խելքդ քիւ ժողվի, գնա բանիդ:

Արաբու պուկօշ որ կիրիշկայ վիրեւ՝ կտիսնայ ծառի ծէրին մէյ խուրն խրեղէն աղջկմ ի որ նստե, չիւ-չըլփախ, մերկ Արամայ մօրէն, նստե դան կվրինչայ:

Արաբու պուկօշը սուտ լաց կդնի վէրէն, կաղաչի կը պաղատի, կխնդրի որ ուրն էլ առնի խետ կշտին:

Աղջիկ կասի.

«Զինար, չինար, ծառ չինար,

«Բօլդդ էրկնուց բարէմբար,

«Զինարի ծառ ցածրացի,

«Արաբու պուկօշն առ բարձրացի»:

Աստծու իրամանքուլ չինարի ծառը կցածրանայ, արածու պուկօշն ի վէրէն կէլնի, ծառը կբարձրանայ: Պուկօշը կասի. Քա աղջիկ, դիւ քեռ Աստուած կսիրես, ինչի՞ ես էլե, վէր էսա ծառին մերկ նստե:

Էն էլ զըմէն ուր դպիսու գեացած և թագաւորութ արածը մէյ մէկ կպատմի ինոր:

Արաբու պուկօշը որ կլսի թէ չէ՝ համան կզանի, խեղճ աղջկան ծառից կիսկի տակ մէջ աղբը ին:

Աղջիկն ի, Աստծու իրամանքուլ կդառնայ մի փունջ մանուշակ, կկայնի ջրի երեսին, ինոր անուշ ինուն ի որ աղբը չորս բոլոր կըունի, խոտ առնողն մալիլ կմնայ:

Թագաւորու լաճը կուգեայ կտիսնայ որ ինչ.—զեօ հանջ  
Արաբու պուկօշըմ, ուեադիտար աղջիկըմ նստե վեր ծառին.  
ինքն ուր կմտմտայ. Զօ էսա ինչ, ուր է էն խօրօտիկ աղ-  
ջիկ: Կխարցուցի. Էսա ինչ բաս ի, ինչի ես էտասկընայ սիվցե.  
պուկներդ էլ էրկնցեր են, ատամներդ դիւս են ինկե:

—Քեո իտևն անչանք լացի, արտսունքս արուն կըտրաւ,  
Անչամ անչամ ճամբախտ իրիշկացի որ աչքերս շըլվաւ.  
Սրև իգարկ, երեսըս սիվցաւ,  
Տաւարները էկան վէր աղբըին, ջուր չին խրմե,  
Անչամ թու թու արեցի, պըռուկներս թանձրացան,  
Ատամներս դիւս էկան, էլայ էսասկընայ:  
Լայ-լաձ՝ ծառից կէջուցի տակ, արփըշէ խալըվներ կը  
խագիւցի պուկօշին, փունջ մանուշակն էլ ջրից կխանի կը  
զանի գլոխ, կառնի կտանի ուր տուն:

Սրաբու պուկօշի մտքից չէլե փունջ մանուշակ, կասի.  
—Էտա ծաղիկ ինչ կանես. թալ գեյտին որ ես գամ քեռ  
խետ: Անչամ անչամ կասի, չիւմ ծաղիկը թալել կուտայ գետին:  
Ծաղիկ որ կիւռուի գեյտնով՝ կդառնայ մէյ կանաչ բօստան,  
թագա-նուբար իիեարը մէջ:

Թագաւորու լաճը կանի որ բօստանից խիեար մի քեաղին  
պուկօշը կգանի ձեռից կիսկի դեյտին: Խիեարը կդառնաչ  
սիրուն սիրուն եղունիկըմ, կթունի կթուվուայ, կուգեայ  
ինոնց առջև տօտիկ տօտիկ կանի, կճլվայ: Լաճը համան  
կխասնի, եղունիկ կրոնի, կդնի ուր ծոյ: Պուկօշը էլ ինչ  
միւքիւն որ կանի՝ ծոյից դիւս չխանե. կէրթան տուն: Եղուն-  
կէ խամար մէյ խատ ոսկէ կաֆաս շինել կուտայ, կդնի մէջ,  
կկախի ուր սարի քեօշկից:

Տարիմ՝ կմնան թէ չէ պուկօշը կմնայ տղով: Մտափոխ կէլ-  
նի, կասի. Զիկ եղունկէ միս դիւր կուգեայ. մորթի որ ես ուտեմ,  
թէ չէ տղէն կընցուցեմ, կմեռնեմ: Զօռով խաթրով եղունիկ մոր-  
թել կուտայ: Եղունկէ արիւնը կցրվի բակի մէջ, կդառնայ մէյ  
թուրայ չինարի ծառ, ինոնց բակին խով կանի:

Արաբու պուկօշ տղէն կըերի, կգոռի որ չինարի ծառ  
կտրեն, ուր տղին օրօրոց շինեն: Ճար չկայ. չինարի ծառն  
էլ կուտայ կտրել, չիւմ ինոր տաշեղներն էլ վառել կուտայ.  
ինչը կէլնի մէյ կտոր տաշեղ կթունի, կմտնի ինոնց հաց-  
թըլիի խին լաթերաց մէջ:

Պառաւ հացթուկը էտա կտոր տաշեղը կտանի ուրենց  
տուն. կթալի թօնէր կվառի, ինոր մոխրից տիւս կուգեայ  
մէկ խատ պզտիկ մախաթ: Մոխրը որ կխառնեն՝ մախաթը  
կերեայ, կվերցուցեն կթալեն տան պատխան, էլ չեն իմնայ  
թէ ինչ ի: Հացթուկը կերթայ հաց թխելու, պատխրնի մա-  
խաթը կէլնի խուրն խրեղէն աղջիկ մը. կէջնի տակ, հըմէն  
օր թօնիր կվառի, կթիւի, կիփի, տախտ կաւիլի, թա՛միզ  
թա՛միզ կլվայ կթափի, էլմ կէլնի մախաթ, կթունի պատ-  
խրնի մէյ պուճախ կնոտի: Խացթուկը կուգեայ տուն, կգար-  
մանակ.—վառուկ, թխուկ, աւիլուկ սէր-սուփ որ կտիսնայ  
կշուարի, կասի. Խսա վնվ ի, որ զըմէն օր էսասկընայ թա՛ր-  
թամուզ կպախի իմ տուն: Կէրթայ խառց-փորձ կանի տըր-  
կցներաց մօտէն. ինոնչը որ կլսեն՝ արմանք-զարմանք  
կէլնէն, շատերն էլ կնախանձեն: Մէկ օր էլ խաց-թուկը  
տուն կմնայ, գեախտիկ պաղ կդնի, կտիսնայ, որ ուշիկ-  
մուշիկ պատխրնից բանը զնկաց, տակ իջաւ: Ի՞նչ... խուրն  
խրեղէն, զունեայ գիւղալի խօրօտիկ աղջիկըմ: Կվա՛ռի, կթիւի,  
տախտ կաւիլի կպրծնի, կանի որ էլմ թունի պատուխան՝ պա-  
ռաւը կխասնի վերէն, իտվանց ինոր ծամերն կըռնի, դաստա-  
լամիշ կանի, կասի. Աղջիկ, դիւ վնդ ես, վիր աղջիկն ես.  
ասա՛, էրուն ես, թուչուն ես, ինչ բան ունես մէջ իմ տան-  
տեղաց:

Աղջիկն ի, կտիսնայ որ ա՛զա՛տում չկայ՝ կասի. Մարէ,  
մարէ, ձիկ բան մի անե, թող ես քել աղջիկ, դու ձիկ մէր:

Լաւ, հացթուկ պառաւը շատ կուրախանայ իդոր վէրէն:  
Կուգեայ աշուն:

Էն երկրի ատաթն էր, որ թագաւորու լաճը իր ձիանքը

Կցըվէր վէր երկրացոց օլամ, տանին մէյ-մէկ խատ պախին։ Աղջիկը կիպնի մօր եախէն. կինդրի, որ էն ձիերից մէյ խատ էլ իրան պախ տան։ Թագաւորու սէխսներ կծծղան վէր պառ-փուն. չարայ չէլնե, ախըր մէյ խատ գյուտ-մռու ձի էլ պառ-փուն փայ կխանեն։

Պառաւը ձինը որ կբերի տուն՝ աղջիկ զըմէն առաւխտուն իրիկուն որ ձեռները կուանայ, կթախթքի՛ փունջ մանուշակ կբունի էն ջրից. ձինը կուտի, որ վէր առուր լաւ կլաւնայ. ձիու թիմարն, շախն ու սկահն զըմէն ուր ձեռնով կանի. ըստ կուն որ մէկ երկու շաբժուայ մէջ ձինը կէլնի Արաբստանայ ամենից լաւ մի ձի. էլ մարդ չճանչնայ առջի գյուտ ձին։ Ձիու թարբէն աղջիկը ուր ձեռնով կանի։

Գեարուն որ կուգեայ՝ ամր կէլնի որ բիւթիւն ձիանք ժողվեն։

Ճատերաց պախած ձիանքը խատեր ի, շատերացն էլ ինկեր միսն ու ուսկու։ Աղջիկը ուր պախած ձիուն սորվեցուցեր ի որ կով որ կուգեայ տանելու՝ փալխից դիւս չէլնի, իլլահ քիւ ուր տէլ (թագաւորի տղէն)։

Ըղորթ որ խզմաքեարները կուգեան ձինը դիւս խանելու։ Նա միւքիւն. անասունը կիրխնջայ, կիռնջայ, ոտները կշփի գեյտին, կփռփռայ, փալխից դիւս չիգեայ։ Կկանչեն պառվու աղջկան, ինչ որ իլաճ կանեն՝ ձինը ուր կկտրտի, տեղից չի ժարժեր։

Չի մի ասե, մէյ խուրն խրեղէն պատկեր ասա. վիզն ու սաղրինը իկե, իրար ի հասե. ըսկուն ի կլաւցե, էլե բարէմ-բար։ Խաբար կտանեն թագաւորու լաճուն. ինքի կուգեայ, ուր աչքով որ կտիսնայ՝ զարմանցք կմնայ. չխաւատայ որ էն չափալ ու գյուտ ձինը էսասկնայ խրեղէն ի դառձե։

Կկանչեն աղջկան, որ գեայ։

Աղջիկը կուգեայ, մէյ խատ որ ձեռնով կզանի վէր մէջ-քին՝ ձինը հիւշտ կթունի տեղից, կկախնի վէր չորս ոտերաց, կիրխնջայ, գեյտին կտոռի կտրոֆի։ Աղջիկը ուր ձեռներ կը

լուայ ինոր առջեւ. փունջ մանուշակ կբուսնի. ձինը խտխառ-լով մի քիչ կարածայ։ Էլմ էլ ձեռը որ կզանի վէր սաղրուն ձինը ականջները կորի. — կասի. Թէրէմաշ, թէ օֆա տէ՞րդ ես իկե. վեր էլլ կախնի։ Զինը համան տեղից վեր-վեր կթուփայ, կիրխնջայ վեզը կօլրկտի։

Թագաւորու լաճուն աղջկայ էսա խաբրները մառախ կէնի, որ աղջիկն ասաց անասունին, թէ օֆա տէրդ ես իկե։ Ախըր ձին կկապեն արծթէ չըմբռւներով ու կտանեն։ Կմնայ որ արաբու պոկօշը երկու ոտը կդնի մէջ մին սօլին, կասի. Իմ տղի ուրուրոցի ծածկոցն մարգրտէ շար պիտի լինի։ Ուր որ կիյնեն ինոր ուզածը մարդ չկայ որ շարի. էլմ էլ կէրթան կիյնեն պառաւ հացթուփին, ուր աղջկան ոտ ձեռը որ շարի։

Պառվու աղջիկը կերեն կիյնեն շուշաբանդ էօդէն. թա-գաւորու լաճը գեախտիկ մտեր ի մարէնինի մուսանդարի մէջ, որ էն տեղից ականջ անի, տիսնայ, թէ աղջիկը ինչ պիտի անի ու ասի։

Աղջիկը մարգրիտ կլցի առջեւ, արփշմէ թելերը կօլօրի, շողշողուն մատներով որ կշարի՝ խետն էլ անուշ-անուշ խաղեր կասի. ուր գլխով գեացածները զըմէն խաղով կասի։

«Մարգրիտ, գէ շար, գէ շար, գէ շար,

«Տիւ ես զամ ու չալբու պաշար,

«Թագաւորու տըղի քիւն տար,

«Թագաւորու լաճուն պիտէր պաշար,

«Ես պախէզանի մէկ խատ աղջիկ ի,

«Չըմերուկի մէջից տիւս իկեր ի.

«Թագաւորու լաճու կմաթն ի,

«Իմ քեորերաց պղտիկն ի:

«Արաբու պոկօշն աղբիւր էկաւ,

«Իմ շառաւիղք աղբիւրի մէջ տէսաւ,

«Զիկ խաբեց, ծառից տակ բերեց,

«Զիկ մէջ աղբին գըլորեց։

«Ես էլայ փունջ մանուշակ վէր ջըրին։

«Թագաւորու լաճ ձիկ զրեց ուր մէջքին,  
«Արաբու պոկօշն ընցուց իմ տեղըն,  
«Աստուած աւիրէր ուր տուն ու տեղըն:  
«Մարգըյիտ, դէ շար, դէ շար, չալբու պաշար,  
«Աստուած, տիւ ձիկ արա մէյ ճար:

Աղջիկը թէ մէկ ուր ձեռներով կշարէր մարգըյիտները  
տասնմէկ էլ իրանց իրանց կշարվին. ըսկուն որ ուր գյլխով  
գեացածն զրմէն էլ խաղով ու տաղով կասի կվերջացուցի:

Էն քեահ որ արաբու պոկօշի անուն կուտայ թագաւորու  
լաճու մազերը կտիզանան, արտսունքն ուր կխեղդի: Էլ  
չկանայ խամբերե. համան մուսանդարից ուր կթալի տակ, կը  
մտնի աղջկայ մօտ, կգյրէի ինոր, կասի. Վայ աղջիկ, ես քեյ  
մեղայ: Մկայ իմցայ, որ ես շատ ու շատ խարուել եմ. արաբու  
պոկօշը ձիկ խելքից մտքից խաներ ի: Մեղայ, մեղայ Աստծու:  
Տիւ էլ էստուց դէն իմ կեանքն ու խողին ես. էլ քեանի որ  
տիւ ես կենով կենդանի ենք՝ մէկզմէկու տէրն ենք:

Թագաւորու լաճը էլ արա-մարայ չիտայ. ամր կանի ուր  
մարգերաց, էն սխաթին արաբու պոկօշն էլ, ուր սև տղէն էլ  
թագաւորու սարից կխանեն տիւս, կկապեն կատաղած ձիանք-  
ներաց պոչերից, կքշեն սարեր ու չօլեր:

Զիերը սարէ-սար քեարէ-քեար կղանեն կիշրեն, իրիկուն  
մէյ ճօղ ծամ կբերեն տուն, նշանց կուտան:

Աստուած նոր կուտայ պախէզբնի աղջկան:

Քեառուն օր, գիշեր ու ցորեկ, աշխրաժողով կանեն, խարս-  
նիս կանեն, իրանց սրտի մուրազին կխասնեն:

Էրկնուց իրեւք սակի խնձոր իջաւ. մէյն ասողաց, մէյն  
լսողաց, մէյն էլ ականջ արողաց:

4.

### ՍԵՐԱՓԵԼՅ ԽԱՆՈՒՄ

Կէլնի չէլնե, կէլնի կէլնի մէյ թագաւոր: Էսա թագա-  
ւորու կնկան իսկի տղայ չէլնե, ոչ լաճ, ոչ աղջիկ: Թա-  
գաւուրու կնիկը ախ ու վախ կանի, զաթէն չի պտղե,  
օրօրոցի երես նստած չէլե, ուր կեանքի մէջ ծնունդ չի նստե:

Զըմէն օր թագուհին կնստէր փէնջարէն, կիրիշկէր դեխ  
էրկինք-գէյտինք, էրունք, թուշունք, որ իրենց ծագելը թիվ-  
քըներաց վէրէն առեր կթուոցեն, կուտ կուտան, կճկլան  
կվլվան բոնի մէջ:

Ինքը շատ մալուլ-մոռուժ կէլնի, կկանչի էրկնուց խաւ-  
քելրաց.

—Ախ, էրունք, թուշունք, էրնեկ ձե, որ կպտղէք, որ  
ծնունդ կնստէք: Թող ձիկ էլ էլնէր մէյ որթի, թա՛լայ քիյ  
օձու ձագ էլներ:

Աստուած կյսի թագաւորու կնկան ձէն. ինն ամիս որ  
կթմմի կբերի մէյ խատ կանաչ ճպտուն օձու ձայգ: Իդոր  
վէրէն շատ կուրախնան, շատ ինդում կանեն, կգնեն իրենց  
էօփի պատխան: Օձու ձագիւն օրն մէկ խաւու-ձու թալին  
կանեն: Խավու ձունը որ կիսմի, էլ չմնայ օր մէյ պդտիկ  
գեառ, եա մէկ ուլ կուտան, էն էլ կուտի չկշտանայ. կբերեն  
գեառ, եա մէկ աղջիկ թալին կանեն: Էն էլ որ կիսմի, կմնայ մէկ  
աղքյոտի աղջիկ. էն էլ խորթ մէրը ուր աղջիկ չիտայ. ուր  
փոխնկի աղջիկ կուտայ որ տանեն, թա՛լայ օր իրենց երեսից  
զատանայ:

Խորթ մօր խորթ աղջիկը կուլայ կմոմուայ, կասի. Աս-  
տուած որ կսիրէյք՝ ձիկ մէյ խատ տարէյք վէր իմ խալալ մօր  
գերեզմնին, կուշտ մի լաճ, ապա էրթամ օձուն կեր էլնեմ,  
թող էն օձը ձիկ ուտի: Աղջկայ խնդիրը կկատարուի. կտանեն  
վէր մօր գերեզմնին. էնստեղ կուշտը, ուր խաւասով կուլայ,  
վէր մօր գերեզմնին.

ընչամ կինի, վեր գերեզմնին կպոտվի, կուլալ չիւմ քիւնը կը տանի: Վէրը կուգեալ էրազ. կասի.

—Աղջիկ, ինչի կուլաս. վեր կաց, լս՞ր ինչ որ քեյ կասեմ: Որ քեյ կտանեն թագաւորու տուն՝ ասա որ քեյ խամար բերեն ողնկան շապիյկ. շապիյկ կքաշես երեսիտ վէրէն, ըսկուն կնստես օձու դիմաց դէմ ու դէմ, կիրիշկես ինոր աչքերաց մէջ: Օձը կիրիշկի դես քեյ, շատ էլ շուռ-մուռ կուտայ ուր պոչ, ուր երեսն, ուր ջանդակն. գծվայ կֆշայ-կֆշաշ. ամմա չէլնի որ վախենաս, իրեսդ մէյ կողմի շոճես. կմունի, կտփվի քեռ երեսն վեր. էլմ էլ չվախենաս. ինչ որ կանի՝ քեռ տեղից չդնդաս: Իրեյք դա՞ն քեռ երեսն վեր տփվելուց ետ՝ ասկա Աստծու խամանքով ինոր լէզու կէլնի, խետ քեյ քեազցր վ անուշ խարար կուտայ, կասի.—Աղջիկ աղջիկ, ջան մարալ աղջիկ, խան քեռ ողնեղէն շապիյկ, որ քեռ երեսը լաւ տիսնամ: Տիւն էլ ասա: Օձիկ-մօձիկ, ճլպլտուն օձիկ, խան քեռ օձեղէն շապիյկդ, որ ես էլ խանեմ իմ ողնեղէն շապիյկ: Չիւմ էն չը խանի ուր շապիյկն՝ տիւ էլ մի խանե:

Աղջիկը մօր գերեզմնի վերևից վեր կխանեն, կտանեն դաշ թագաւուրու մօտ: Առջի բէրան թագաւուրուց խնդիր կանի, կասի.—Թագաւոր ապրած կէնայ, ամր արա, որ բերեն ձիկ խամար մէյ խատ ողնկան շապիյկ. խայնեմ, էրթամ քեռ խըրամանն կատարեմ, քեռ օձը նոր թող ձիկ ուտիի: Թագաւորը ամր կանի, ողնկան շապիյկ կբերեն: Աղջիկը կառնի վեր ուր իրիսներաց. կտանին կլսմեն օձի էօդէն, դռները պինտ-պինտ կփակեն ինոնց էրկսի վէրէն:

Օձն ի, որ կտիսնայ աղջկալ երեսի քողը՝ ուր պոչն ու ջանդակ շուռ-մուռ կուտայ, կֆշայ, կֆշաշ, դըրը, իրեյք դան կիթունի, կտփվի աղջկան երեսն վեր, չկանայ ուտե. դեսը որ մուութ կէրկնցուցի փուշի փշերը կիթվեն ուր աչքերաց: Կնաշարանայ, կխնդրվի աղջկան, լեզուն կխանի չիւմ կէս գեազ, կասի.

—Աղջիկ աղջիկ, սիրուն աղջիկ, ջան մարալ աղջիկ, որ քեռ Աստուած կսիրես՝ խան էտա քեռ ողնեղէն շապիյկ:

—Գա՞շ տիւ խան քեռ օձեղէն շապիյկ, որ ես էլ խանեմ իմ ողնեղէն շապիյկ:

Օձը որ կխանի ուր կապուտ ու սիվտակ շապիյկն՝ ինչ... կդառնայ մէյ խատ արալ-մարալ պատ կտրիճ տղէմ: Կնտիք էօդի օրթալաղ. չուտես չխմես, հա հա ինոր իրեսն իրիշկես, ինոր բաժ ու բուսունին մտիկ անես, ինոր կթղայ աչքերաց տապլակ իրիսներին: Աղջիկն էլ ուր ողնեղէն շապիյկ կխանի, կէլնի խուրն խրեղէն:

Լաճը որ կտիսնայ ինոր խօրոտկութեն՝ մայիլ կէլնի, կը թալթլվի, էլ չկանայ խավ չէ, մի բան չուղաբ տայ աղջկան: Ճատ կմնան թէ քիչ էրկուսն էլ էտա էօդին մէջ. օրը թագաւոր կասի. իսա ինչ բա՞ս ի. էլ ո՞չ օձու կռկռոց կայ, ոչ էլ աղջկայ ձէն-ձիւնը չկայ. չէլնի մէկ վորեայ իկեր ի խոնց էրկսի վէրէն էլ: Ամր կանի ուր մարգերաց, կէրթան որ աշկին:

Լաճ վ աղջիկ սուս-փուս նստած իրարու տեսքին մայիլ են: Մարգերը որ կէրթան, էօդի դուռ կբանան՝ կտիսնան ինչ... զարմանկը կմնան, էրկու բարաթ նորախաս պատ կտրիճներ, աղջիկ ու լաճ, նստեր են, մէկզմէկու իրեսն կիրիշկան: Կշուարեն, իրանց չլտրմիշ կանեն, էլ ուրախութնէ չեն գիյտե ինչ ասեն: Կվազեն շոտ մօտ թագաւորն ու թագուհին:

—Մուժդա, մուժդայ, թագաւոր ապրած կէնայ, մուժդայ: կուզենք, պիտի տաս, պիտի տաս. Աստուած ձե ջամուկ \*) տըղայ ի տուեր, պօռալով կանչերով կցվեն թագաւուրու մօտ:

Թագաւուրն ու իր կնիկ որ կլսեն՝ կզարմանան. էլ ուրախութնէ չեն գիյտե ինչ անեն. կվազեն կուգեան ինոնց մօտ: Խէրը տղէն կգրկի, մէրն էլ աղջիկն, պուչ-պուչ կպաքեն, կը պաքեն—չեն կշուարայ. ես ասեմ մէկ, տիւ ասա խազարը մէկ պայք կառնեն իրենց տղէյներաց երեսից:

Զէնը կինի աշխարհ. հըմէն կողմից կվազեն կուգեան

\*) Ջամուկ նշ, երկուորեակ: Վասպուրականում տղայ անուշը տրվում է առհասարակ երեխացոց. Նոքա միայն որոշվում են լաճ-տղայ, աղջիկ-տղայ ասելով:

թագաւորուն ու թագուհուն աչքալուսի: Իշխաններ, վազիրներ չորս կողմից կլցվեն էնտեղ: Էլ ոսկի, ակունք, ջավահիր ի որ կթափեն լաճ ու աղջկայ գյլիխ վէրէն. աղջայտն ու զէնկին մէկ հաշիւ էր էն օր. զըմէնին էլ ուրախութնից փայ կէր:

Խաբար կէրթայ, կիսանի աղջկայ խորթ մօր ականջն էլ: Խորթ մէրը էլ չգիտի ի՞նչ անի, կմտմտսւ ուրիշ չարութեն: Քուղաբ կանի թագաւորուն կասի, որ Թէ հարսնիս կանէյք՝ մեր աղջիկը օղօրկէյք մեր տուն. թող խարսնավորները գեան, մեր տնից բերեն խարսը:

Ախըր խորթ մէրը ուր չար մտքով աղջիկը թագաւորու տնից տանել կուտայ մօտ ինք. օրըմ կառնի խետ ուր խալալ աղջկան, կտանի ծով որ լողկցուցի. ինոր միտքը չար էր:

Ուր խալալ աղջկան կլանըցուցի ծովի ափին, խորթին նշանց կուտայ ըսկուն մէյ փոս տեղ, որ թէ ինի էլ չկանայ կայնե: Աղջիկ կինի ծովու էն փոս տեղ, չկանայ տիւս գեալ:

Խորթ մէրը ըսկուն թախմին կանի, որ խորթ աղջիկ գեօ խեղտվաւ, պոծաւ: Ինոր շողշողուն խալաւ, խագիստ կխակցուցի իր աղջկան, կպիրի տուն, ծամերը կսանդրի, կզարդրի, որ էն մէկէլ օր թագաւորու տղի խարսնիսն ի:

Ֆովն ինկայծ աղջիկը Սստծու խրամանքով վեր կթռնի էն փոս տեղից: Ֆովուն գնդողը ինոր կտանի կտանի, կխանի մէյ ցամալք տեղ: Թէն կիրիշկայ, դէս կիրիշկայ, անտակ ծովուց, անխլիս դաշտից ի զատ շէն-շէնլիք, մարդ, անասուն չերևայ, գեահ-գեահ էրկնուց խաւքերը կուգեան կթառեն, էլմ շոտ-շոտ կթռնեն կէրթան:

Թագաւորու լաճը խարսնիս կանի, ուր նշանլուն կտանի. կաւատայ որ էն ուր տիսած ու խաւսած աղջիկն ի. չգիտե որ խորթ մօր աղջիկն են դրե ինոր տեղ բերե: Էն կանդար բան չկանայ շոտով ֆակմե, իմնայ:

Ֆովուց դուրս եկուծ աղջիկն էլ ընչանք կմնայ էն տեղ՝ կուլայ, կաղավղի, որ աչիչ արտսիւք կիջնի գյլուլ-գյլուլ կը թափի ուր չորս բոլոր մարդրտի խատերի պէս:

Խոռնյք թող ըսկուն մնան իրենց տեղ:

Ուրիշ մէյ թագաւորու կինիկ էլ ահդ արեր ի խետ Սստծուն, ասե, որ թէ ինոր լաճ տղէմ էլնի՛ էլնի մէյ խաւք, եօթն տարի էրկնուց երես ֆռայ, աշխարհ, ա'լա՛մ կան գեայ, առանոր պսակի խէտ ուր ուզած աղջկան: Խտա թագաւորու տղի վեց տարին կթմմի որ էլեր էր խաւք. կֆռայ կֆռֆռայ կուգեայ վէր էտա ծովու կղգուն խանք կառնի, կնստի. կտիսնայ որ ի՞նչ... մէյ խուրն խրեղէն աղջիկ, շուարած ինկեր ի դէս դէն, չգիտե ուր էրթայ, մերկ ու տկրող, անօթի ու ծարաւ: Խտա խաւքն ի, կինի դէս դէն, կթռնի կէրթայ տանըսներաց վերէն, որ տեղ լուացք են արե: Հըմէն տանըսից, հըմէն բակից մէյ-մէյ կտոր շոր կբերի, կխագիւցի աղջկան, աչքերից թափած արտսունքն էլ որ էլեր էր մարդրիտ կժողվի կցի մէջ բանիմ, կդնի վէր ուր թեփքելքաց, կառնի կտանի ուրենց տուն:

Պօր կասի, Պարէ, առ էսա ամանաթը խօրօտ պախի, չիւմ որ իմ վաղդէն թըմմի. մէյ տարուց ետ գեամ, կպսակվեմ, Սստուած էսա աղջիկ ձիկ կսմաթ էր արե: Խաւքը կէրթայ ֆռալու, ուր մէյ տարին հալայ մնացեր ի պակաս, ամմասիրտը տեխ աղջիկ կփթփթայ: Տիսնանք էսա ավի տէրն վմկ կէլնի, Սստուածն ի խաբար:

Գեանք գեխ մէկէլ թագաւորու լաճ, տիսնանք ի՞նչ էլաւ: Խորթ մօր աղջիկը գեօ զարփե զարդարփե, կվէլի կվայելի էն զըմէն վայելչութեն որ խօրից մօրից չէր տիսե: Թագաւորու լաճն էլ հէչ էն տեղուանք չի, թէ ուր նշանած աղջիկը փոխել են, գէշը դրեր են խօրօտի տեղ:

Խտա մէկէլ թագաւորու կինիկ էլ, առե ծովուց էլած աղջիկը նստե, էրկէն բարակ խաւց փորձ կանի:

— Աղջիկ, մէկ առա տիսնանք, տիւ վո՞վ ես, ո՞ր տեղից ես, անունդ ի՞նչ ի, ի՞նչի էլաւ որ ըստեղ էկար:

— Իմ անունը Ստափեայ խանում ի. Էնա երկրի թագաւորու լաճը օձ էր էլե. ձիկ տարան ինոր մօտ որ ձիկ ու տէր. էն չկարաց վէր ձիկ, տփվաւ իմ երեսն վեր, իմ երկու

ատամ տեղիցն ինկեաւ, ինոր տեղ դրին էրկու սատափ ատամ։ Ապա թագաւորու տղէն ձիկ խաւնաւ, պիտի անէր ուր կնիկ. իմ խորթ մէրը ձիկ գլորեց ծով, ուր աղջիկը տուեց իմ փոխան։ Աստուած ձիկ աղատեց ծովուց, տիւս էլայ, ձեր խաւք-տղէն առեց վեր ուր թիվքերաց, ձիկ բերեց չիւմ ըստեղ։ Թէ ինչ որ ուր գլխովն իկեր էր աղջիկը զըմէնը պատմեց ինոր։

Աղջկան կդնեն մէյ նխշուն էօդէն. ամա ի՞նչ օդուտ. ոչ ծաղր, ոչ ժպիտ ասես, չիգայ ինոր երես. մալուլ, մոռութ օր կանցուցի։ Մարդախաւքն էլ օր տամ կուգեալ, ինոր աչք կուտայ, կերթայ գաշտեր ֆռալու։ Օրմ՝ էլ կխառցուցի, կասի. Աստաֆեայ խանում, ի՞նչչ ես, հալիկդ խօշ ի, ի՞նչ քէֆի ես։

— Հալս էլ խող, օրս էլ խող, առանց քեյզի իմ օրը օր չի։

Մարդախաւքու վաղդէն կթշմըմի, կուգեալ տուն, շատ ուրախութնով իրենց խարսնիս կանեն, կալսակվեն։

Ճատ կմնայ, քիչ կմնայ։ Աստուած ինոնց մէյ խօրոտիկ լաճ-տղէմ՝ կուտայ, կպախեն կպախապանեն, կդնեն վերին գիւանխանէն ոսկի օրօրոցի մէջ, մարդքտէ ծածկոց կքաշեն վէրէն։

Օրմ՝ էտա թագաւորու լաճը մօր կասի. Մարէ, ես պիտի օձ թագաւորու լաճուն դա՛ւա՛թ անեմ, բերեմ մեր տուն. քեռ խարսը ինոր վէրէն շատ բաներ գիյտի։ Ճատ մեծ թատպիր կտիսնան, օձ թագաւորու լաճը ուր սիրած մարդերով կկանչեն դա՛ւա՛թ։ Ճատ մեծ ուրախութեն կանեն։

Ֆովու աղջիկ, որ բերան կբանայ կծծղայ, ինոր սատափէ ատամները թագաւորու լաճը կտիսնայ, շուֆալամիշ կէլնի, միտ կուգեայ, որ էտա ուր տիսած ու սիրած ողնու շապիւոր աղջիկն ի։ Մատը կկծի. ինքն ուր գիւշիւմիշ կէլնի, կքաշի մէկ եան, էլ ձէն-ձուն, ասել խօսել չանե, ոչ ուտել, ոչ խմել. ալնախ կդնի երեսին, ընքիւռ ընքիւռ կուլայ։

— Ի՞նչ էլաւ քերդ, ի՞նչի կուլաս, խառցուց թագաւորու լաճ. չէլնի մէյ վա՛տ խա՛բա՛ր լսար մեր տուն։ Օձ թագաւորու լաճը ջուղար չիտայ, գլոխ կախեր ի առաջ, էլ ամօթու չի կանայ վեր վերուցե, իրիշկե։

— Ի՞նչ մեղքս պախեն, կասի, էտա քեռ կնիկ, իմ խին նշանածն ի, ինոր սատփէ ատամները ինոր նշան են։

— Ելմ քեռն ի՝ քեռն. բարով վայելեն, մարդ քեռ մալին չկանայ տիրութեն անի, կասի էտա մէկէլ թագաւորու լաճը։ Ես էլ էնա ծովու կղզուց բերեր եմ։ Ապա իրենց գլխով գեացածն զըմէն էլ մէկ մէկու կպատմեն։

— Իմացիր որ էնա լաճ-տղէն էլ քեռնն ի, բարով վայելես. մենք հալա-տէլ քեռը վ աղբէր ենք, մարդ մեր էյութեն չխոցե։ Տար որ տար, խալալ սրտով եմ տուե քեց։

Մէկ շաբաթ՝ էլ վերջ՝ շատ պատուավ, շատ ասքըրով, բազմութենով, ձիաւորներով օձ թագաւորու տղէն ուր նշան-լուի խետ ճամխու կդնեն, որ կերթան իրենց տուն։ Օձ թագաւորու տղէնը կառնի ուր նշանած, որ տուն կմտնի թէ չէ՝ էլ խորթ մօր աղջկան օր աստվոր չմնայ։ Ամր կանի ջալատներաց—ձեռ ուր կկապեն, ճեռ պլրտուճը ականջ կթողնեն։

Աստուած նոր օր նոր կեանք կուտայ ինոնց։ Ախրը վերջ Աստաֆեայ խանումը և ուր օձ էրիկը կիսանեն իրանց սրտի մուրազին։ Աստուած մեղի էլ խասուցի մեր սրտի ուզածին։

## 5.

### ՕՉՈՒ ԹԱԳԱԾԻՈՐ

Ճատ խին ժամանակաւ կէլնի կէլնի մէյ պառաւ կնիկ, որ վէր աստուղիս ունի մէյ խատ լաճ-տղայ։ Էտա պառաւն ի, կնիկ հալովն շատ բա՛ն գիյտի։ Ուր տղէն չժողնե պարապ, կուտայ սանաթի, ինչ ի՝ որ տղէնը իր մեռնելուց վերջ պատառ մի հաց ուտի, ուր խուզիւն օղօրմի տայ, չէլնի որ խեղճ էլնի։

Տղէնը կէրթայ սանահաթի. ինոր շաբաթ տասն վարայ հաֆթալը կուտան, իտոր վէրէն էլ ուրախ ի։ Մէյ շաբաթ օր որ կառնի տասն վարէն, ուրախ-ուրախ տուն կուգեայ։

ճամիսի վէրէն կտիսնայ, որ լաճերը թափեր են վէր շանրմ, կը գանեն հա կզանեն խեղճ անսառնին. Են տաս փարէն կուտայ ինոնց, շունը կազատի, կբերի տուն, կկապի դռան իտև: Են մէկէլ շաբաթ օրն էլ կառնի տաս փարէն, կուգեայ կտիսնայ, որ թափեր են վէր կատվում, կչարչարեն. տաս փարէն կուտայ ինոնց, կատուն կազատի, կբերի տուն, կթողնի մառան: Կմնայ էն մէկէլ շաբաթ օր. կտիսնայ որ էսա դրիս, ընկեր են մէկ ճլպտուն օձու իտվից, քեարով, փէտով կլա՛րա՛տեն օձուն. կխասնի ինոնց վէրէն, թէ խաթրով թէ զոռով, տաս փարէն կուտայ, օձն էլ կազատի, կբերի ուրենց տուն, ինոր սա՞րմիէն կէնի շունը, կատուն և ու օձը, իրեյք շաբթուայ վաստակ:

Մէրնի, որ կտիսնայ լաճու արարմունքը՝ շատ կնեղանայ. — Քա տնավիրի լաճ, ասենչք թէ շունը տուն կապահատնի, կատուն էլ մուկ կըունի. ախըր օձը ինչ բանի եարար ի:

— Մարէ, մարէ, մի նեղանայ, զըմէնն էլ մե լազրմ կուգեան. չիւմ խատած օձն էլ պէտք կուգեայ մարդու, կասի: Լաճը օձը կտանի կդնի տան վերին պատխան. շունը զաթի կապեր ի դռան իտև, կատանն էլ մառան:

Մէկ օր օձը շատ շատ կլուկուայ: Աստծու խրամանքյով ինոր լէզու կէնի, կասի. Կտրիճ, լսիր ձիկ, իմ խէրն ու մէրը թագաւոր են օձերաց. Ես ինոնց շատ սրտի սիրական աղջիկն եմ, ինոնց վէրէն կորսվեր եմ, ձիկ կիտուեն: Զըմէն առաւտուն կտիսնաս, որ մէկ պօլատ, կանաչ-կապոտ խաստ օձը, օձերաց ջա՛մով կնստի վէր ժեռ քեարերաց, կկուայ կկըուկուայ, շատ վայնասուն ձէն կխանի. չորս բոլոր կըունեն օձերը, ինոյնք էլ ինոնց հետ կփշչան. իմցիր որ իմ խէր մէրն են, ձիկ խամար տիւսն են ընկե որ կնդնեն: Տիւ եավաշըմ կմօտիկնաս ինոնց, կասես. ՈՃ թագաւոր, Ես իմցայ ձեր ցաւն ինչ ի. ձեր աղջիկն իմ մօտն ի, իմ տան պատխան: Են ժամանակ օձեր շատ կուրախնան, ինչ որ ուզես կուտան: Որ կասի օձու թագաւորն. ուզի, քեռ ուզածն ինչ տիւ ասա. Ոչինչ, քեռ մատի մատնիկ տաս, ձիկ խէրիք ի: Են կասի. Վայ քեռ սով-

րցուցողի վիզը փոթնի: Տիւ բան մի ասե: Են կուտայ մատնիկ: Առ, արե ձիկ տար. էն մէյ մատնիկ մինակ քեց բաւական ի՝ քեանի որ կէնով կենդանի ես:

Լաճն էլ օձու ասածին պէս կանի. կէրթայ կտիսնայ որ օձերը իրենց թագաւորու խետ լցվեր են ժեռ քեարի վրայ: Խմաց կուտայ օձու թագաւորուն. կառնի մատնիկ, կուգեայ տուն, կառնի օձու աղջիկը, կտանի օձերաց թասլիմ կանի:

ՕՃու մատնիկը լաճու խամար կէլնի դաֆինայ ասեմ թէ խաղինայ: Մատնիկ որ խանի տիւս՝ քեանձ արեգական փէլս կուտայ. մութ տեղ կփացի էնալէս ինչպէս խա՛զարաւոր ճըրադներ վառես:

Մէկ օր մատնիկը կպաքից, կդնի վէր գլխուն. հիւշտ ջուխտը արապ, ուե-սպահի, կթունեն, ուր առճեւ կկայնեն, ա՛լ-փանջայ ինոր ամրին կաչիկն, կասեն. Ճինէնչք թէ աւիրենչք: Կատի. Հա՛լայ ո՛չ շինէնչք և ոչ աւիրէնչք. գնացէք ձեր տեղը հանդիսատ արէնք, չիւմ իմ վախտ գեայ, ես ձե կկանչեմ: Մրապները գլուխ կուտան, կէրթան ուրենց տեղ:

Կմնայ մէյ քանի օր. լաճը կասի մօր. Մարէ, գնա թագաւորու աղջիկը ուզի ձիկ կնիկ. Ես կուգեմ ինոր խետ նշանգետուրու աղջիկը ուզի ձիկ կնիկ. Ես կուգեմ ինոր կասեմ: Մէրը որ կլիի՝ արմանչք-զարմանչք կէլնի, կասի. Տղայ, վեմ: Մէրը որ կլիի՝ արմանչք-զարմանչք կէլնի, կասի. Տղայ, վեմ:

— Ձէ, մարէ, տիւ մի վախենայ, ինչ որ կասեմ՝ էն արա: — Դէ բեր ձիկ մէյ ձեռք լաւ իմ ուզած խալաւ, որ խալնեմ էրթամ: Են սհաթին լաճը որ մատնիկ կպաքից, կդնի վէր գլխուն: Չորս աղջիկն իմ մօտն ի, իմ տան պատխան: Են ժամանակ մէրը ճըրադներ բերեն: Են սհաթին թէ մօր խամար լաւ-լաւ իւալ-ուզածներ բերեն: Են սհաթին մօր խամար լաւ-լաւ իւալ-ուզածներ, թէ ալբէմ էլ ոսկի կբերեն, կխագիւցեն մօր. մէրը ճըրադներ, թէ ալբէմ էլ ոսկի կբերեն, կխագիւցեն մօր. ոչինչ, քեռ մատի մատնիկ տաս, ձիկ խէրիք ի: Երթայ խարսնախօսութեն անի:

Մէրը որ կէրթալ թագաւորու տուն աջէն ձախէն ոսկի ի որ կցըվի. հրմէնք զարմանյք կմնան: Կմտնի սարէն, գօղրի կէնի փերին քեօշկ, թագաւորու մօտ, կասի. Թագաւոր ապրած կէնայ, էկեր եմ քեռ մօտ խնդիրք անելու. քեռ աղջիկը պիտի տառ իմ տղին, ես ու տիւ խնամի պիտի դառնայնք:

Թագաւորն էլ կշուարի, կասի. Զօ պառաւ, էտա ինչ կասես. կանան իմ հաղէն գեալ. քեռ տուն ու տեղ ըսկուն բարձր պիտի լինի, քեանձ իմ քեօշկ սարէն աւելի. քեռ բար ու բաղչէն ըսկուն պիտի շէն էլնի, քեանձ էրկնուց դրախտ, որ իմ աղջիկը մէջ կան գեալ. հավուզներ պիտի, որ մէջը լողայ:

Պառաւ հաստատ ջուղաբ կառնի թագաւուրուց, կուգեայ մօտ լաճ, կպատմի, ինչ որ թագաւորը ուզեր ի ինորից:

Լաճն ի, պառվու ասածները որ կլսի՝ մատնիկ կպաքից, կդնի վէր գլխուն: Աբապները հազրը-նազըր են, կկայնեն դէմ: Ամր կանի կասի. Զեզնից կուզեմ, որ չիւմ առաւտուն ըսկուն քեօշկ ու սարէմ կախնցուցէք, դրախտի պէս բօստաններ, հաւուզները մէջ, որ ըժողնի արև առնի վէր թագաւորու սարին, բարձր, էրկնուց հետ բարէմբար էլնի:

Արապները գլուխ կուտան ու կէրթան:

Արապները մէյ գիշերուայ մէջ ըսկուն սարէմ կկայնցուցեն, որ առաւտուն թագաւոր իրիշկած ժամանակ, կտիսնայ հէրան կէլնի, դէ կաց աչկի, որ արեւու շող տիսնաս. ըսկուն քեօշկ-սարայ ոչ մարդ ի տիսի, ոչ տեղմ էլ կայ, չորս-խինյգ կադ իրարու վրայ, խետ էրկնուց երեսին բարձր:

Թագաւորը ուր մատը կլծի, կասի. Պառաւը տարաւ իմ աղջիկը որ տարաւ, էսասկընայ հէքմաթի բան մարդ ոչ տիսե ոչ լսե:

Մէկէլ օրը պառաւ կխայնի մի ուրիշ ձեռք արփշմէ շորեր, բիւթիւն զարբաֆ կումաշից, վէրէն-գլուխ վէլս կուտար. կուգեայ մօտ թագաւոր, կասի. Թագաւոր ապրած կէնայ, ինչ կուզես էլ. մկայ կուտաս քեռ աղջիկը:

— Կուզեմ որ ձեր դռնէն չիւմ իմ սարի դուռ էրկէն փողան էլնի:

Փողան էլնի: Երկու կէչալի ծառնոց, վարդ, վարդենիս բոլորն էլնի: Ին խաւքելրաց ամենից լաւն վէր ծառերաց, վէր վարդերաց նստի: Ձեր դռան առջև պաղ աղբը ակներ էլնին զուզալ ջրով: Աղբը մէյ պոչից արծաթ թափի, մէյ պոչից ոսկի: Իմ սարից չիւմ ձեր դռուր խալի խալիչայ փոռուի, որ իմ աղջիկ ինոնց վէրէն քէյլի, գեայ ձեր տուն:

Պառաւը էսա կանդար բաները որ կլսի թագաւուրուց, շատ ծանը կերկայ ուրան. փօր-փօշման, մալուլ-մոռութ, գըլ-գօխն առճեվ կախած մտմտալով կուգեայ լաճու մօտ, զըմէն կը-պատմի. չխաւատայ որ կէլնի:

— Մարէ, տիւ կասափաթ մի անի, կասի լաճը. Աստուածօգորմած ի, թագաւուրու ասածից դհա առաւելն անել կռտամ:

Մէկէլ որ մատնիկ կխանի, կպաքից, կդնի վէր գլխուն արապները հիւշտ հազըր-նազըր կկայնեն առճեւ. — Ռեզի, կտրիճ, ուզածդ ինչ ի:

— Կուզեմ որ մեր դռնէն չիւմ սարի դուռ էրկէն փողան էլնի: Երկու կէչալի ծառնոց, վարդ վարդենիս էլնի: Խաւքելր վէր էն ծառերաց, վէր էն վարդերաց թառեն, ճվլան: Իմ դռան առճեվ աղբէկը. աղբը մէյ պոչից ոսկի, մէյն արծաթ թափի: Իմ դռնից չիւմ թագաւուրու դուռ խալի խալիչայ, ոսկի արծաթ փոռուի:

Լաճու խաբարը հալայ բերան էր՝ ուզածին պէս կկատարուի, ըսկուն որ տեսնողի բերանը բաց կմնայ, չգիտե ինչ խելք խասուցի:

Առաւտուն թագաւորը որ վէր կէլնի, կիրիշկի գեխ քեօշկըն ու սարէն, գեխ լաճու բաղն ու բաղչէն, խաւքելրաց անուշ ձէնը որ աշխարհ բռներ ի. կշուարի կմնայ, ոչ ինքն ի տիսե էսասկընայ շէնյք-շէնլիյկ, ոչ ուր խէրը և ոչ էլ ուր եօթ պապ: Կասի. Ըստրուս ըստրուս պառաւը մեր աղջիկը տարաւ որ տարաւ. խալալ էլնի իր տղին:

Սօն-սօն թագաւորը ինքն ուր կամքյով ջուղաբ կանի, խարսնիսի պատրաստութին տիսնան. էլ անպատմելի ի, անա-

սելի էն թաղբիրն, էն զա՞ր ու զա՞րդարանք, որ կէնի թէ լաճու տուն, թէ աղջկայ տուն: Թագաւորը շատ ասքըով, շատ ձիւորներով, շատ խալաեղներով աղջեկը կօդորկի պառվու լաճուն, լաճը կպակվի:

Թագաւորը չմոռնայ, ուր արապ սէլիսն կդնի խետ աղջկան:

Աընցընի մի քեանի ամիս: Արաք սէլիսի խօսքը խետ աղջկան մէկ կէնի. կասի. Տիւ ինչը կնիկ ես, որ չիւմ մկայ չես իմցե քեո իրկան ֆէն ու ֆալաքեաժ, որ մէյ գիշերուաչ մէջ էսասկընայ մեծ-մեծ բաներ, դարդաբէք կայնըցուց, առանց մարդ-աղամորդու: Թագաւուրու աղջեկը ուր սէլիսի խաբըն ականջ կանի, շատ կմտնի իրկան խեք, խաբար կպորապի, օրը մէյ մհանայ կանի, չիւմ եալաշ-եավաշ իրկան մօտէն խաբար կքաշի, կիմնայ ինոր եղելութեն: Իրիկ շատ միամիտ կէնի. կասի, որ զըմէն մարիքաժ էսա իմ մատնկին ի, ինչ որ անեմ խորով կանեմ: Մատնիկն էլ նշանց կուտայ: Կնիկը կատատորի կատատորի, չիւմ մէյ գիշեր ուաստ կըերի, իրկան մատնից մատնիկ կիսանի, կուտայ ուր սէլիս արաբուն:

Արապ սէլիս մատնիկն առնելուն ալէս՝ կպաքիյ կդնի վէր գլիխին թէ չէ՝ հիւշտ ջուխ ու արաք տիւս կուգեան կկայնեն: Սէլիսն ամր կանի, կասի. Զեղնից կուզեմ, որ էսա քեօշկ ու սարէն ուր թար-թալսրմով վէրուցէք տանէյք Զինու քեաղայք. պառաւն ուր տղէն էլըմ մնան ուրենց խին հալին, իլենց պըդ-լոզ տնովն ու տեղով:

Ասելուն պէս՝ քեօշկ ու սարէն կվերցուի Զինու քեաղայքի օրթէն: Առաւոտուն պառաւն ու լաճը իրենց կտիսնան էլմ իրենց խին տների մէջ: Ջատ կուլան, շատ կմոմուան, ճարը չէլնե. արապ սէլիսն ուր արածն արեց: Ջուն ու կատուն որ կըլսեն ինոնց վայատուն լացն ու աղաղակ՝ կիսասնեն ինոնց հաւարին, սիրտ կուտան, կասափաժ մի անէք, կաօնն:

Իրենյք էրկուսը, շունն ու կատուն, խելք խելքիյ կուտան, կիսեն ճամբախ. կէրթան ծովու պուուկ, շունը կատուն կշըլ-կի, ծովը կանցնեն, կէլնեն դիւս մէկէլ պուուկ: Կտիսնան որ

պէտ-պէտ մկներ արձակ-համարձակ մէջ փողաններաց դաշտերաց կփուֆուան. ինոնց որ կտիսնան՝ կփախնեն: Կատուն կասի. Մկներ, մի փախնէյք, ես ձե բան չեմ անե, որ խօսքս կատարէյք: Կանաք սև արապ սէլիսի լեզուի տկից մեր աղի մատնիկը բերէյք:

Մկները խօսք կուտան ինոնց, կժողովին մէյտեղ, պօչները կժաթխեն մէջ քեացխին, կտանեն կժաթխեն մէջ ալրըին. որ կիմնեն սէլիս արապու քիյժ՝ սև արապ ըսկուն կըփոշտայ, որ մատնիկը լեզուի տկից տիւս կըթունի: Ճուն ու կատուն վէրէն կիսասնեն: Ճունը մատնիկ կդնի ուր լեզուի տակ, կատուին էլ կդնի վէր ուր քամկին, վազէվազ կիսեն ճամբախ, կիսասնեն ծովու պուուկ: Կատունը շան շատ կաղաչի, որ մատնիկ տաչ մօտ ինքը, չէլնի խսկի ծովու մէջ, ամմա շուն ականջ չանե: Կմտնեն ծով:

Ֆովու կէս տեղ մէյ խատ ճոչ ձուկ ուաստ կուգեայ. շունը կանի որ ինոր բոնի, բերնից մատնիկ կինի, ձուկը համան կիսասնի, կուլ կուտայ: Հէմպախ-հէմպախ, էլ նամ միւքիւն. գնաց մատնիկ որ գնաց: Ի՞նչ անեն ինչ չանեն. կէրթան ծովուց տիւս կէլնին, կտիսնան որ պառաւն ու լաճ նստեր են ինոնց ճամբախ կազկեն:

Ճունը էսա յանցանք կժաթի վէր կատունը վէր շան: Ի՞նչ անեն ինչ չանեն. լաճը թօռ կժաթի ծով. Աստծու խրամանքով ձուկը կինի մէջ. կիսանի ինոր փորը կճղի, մատնիկը տիւս կուգեայ. այ քեյ խրաշք, որ Աստուած կաջողի ինոնց: Ուրախ-ուրախ կառնեն կուգեան տուն, մարդու չեն ասե: Մութը որ կինի, զըմէն մարդ կմտնի ուր տուն, կմտնի Աղամայ քիւն՝ \*) լաճը առաջվայ պէս կպաքիյ մատնիկ, կդնի վէր գլիխուն: Ջուխտ արապ ա'լ-փանջայ կկայնեն ինոր առջե, գլուխ կուտան լաճուն, հազըր-նազըր ինոր ամրին կիրիշկեն:

Հայ բէրախտներ, տիւք էսա կանդար ժամանակ ուր իք դնացե:

\*.) Աղամայ քուն ասելով ժողովուրդը հասկանում է այն թմրութիւնը, որ Աստուած ձգել է Աղամի գրայ, Եւալին նորա կողքից ստեղծելու ժամանակը

— Ասա՞, քեո ամր դեռը էլնի՞ մենք էնտեղ ենք, ասին  
արապները:

— Զեղնից կուզեմ, էլմ էլ առաջուայ պէս իմ տուն իմ տեղ,  
էն քեօշկն ու սարէն իրենց թար-թախրմովն, թագաւորու-  
աղջիկ մէջը նստած, սէլիս արապն էլ նորա մօտ կայնած:

Ասելն ու կատարուելը մէջ կէլնի. էլմ էն քեօշկն ու սա-  
րէն, էլմ էն բարն ու բաղչէն, էլմ էն թարն ու թախրմ,  
խալին ու խալիչէն, ուկին ու արծաթ, աղբրներ, վարդն ու  
վարդենիս զըմէնը տեղն ու տեղ: Խաբար կանի աղջկայ խօր,  
էն թագաւորուն կլանչի ուր տուն. նշանց կուտայ որ էն հը-  
մէն չարութեն մէլիս արաբուցն էր, որ աղջկան խելքն ու  
միտք գողցեր էր, խաբեր էր, որ առնէր ուրեն խամար կնիկ  
անէր. ամմա Աստուած տուեց որ ըտրսկնայ ինոր չար խորհուրդ  
չկատարուեց, չխասաւ չար մուրազին:

Մէկ էլ տիսնաս, որ թագաւորու ամրով սէլիս արապը  
կիմայ-կիմայ կանեն, չալատները կիսանեն վէրէն, քեո ուզածի  
պէս ճոչ պրտուճն ականջ կթողնեն, կթալեն շներաց:

Օձու թագաւորը կկնդնի ուր կորուսած օձու ձագը. իսոնք  
էլ, պառաւն ու տղէն, թէ աղքատ ին, կզանկըննան: Նոր օր  
նոր տարի, նոր օյին, նոր-բարին կուզեայ ինոնց վէրէն, նորից  
թագաղան եօթն օր գիշեր ցերեկ խարսնիս կանեն, կիսանեն  
երենց սրտի մուրազին:

Տիւք էլ խասնէք ձեր մուրազին \*):

## 6.

### ՍԱԼՀՈՒՄ ՓԱՇԵՆ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնե, կէլնի կէլնի մէջ մէր, մէջ  
տղայ: Տղէնը շատ կարթացւոր կէլնի, ըսկուն որ մէջ տա՞ն ու  
սհաթ կարդալուց պարապ չի մնայ, գիշեր ու ցերեկ գիրքը

\*) Այս գերջի խօսքը խիստ բաւականութիւն է տալիս երիտասարդ-  
ունկնդիրներին:

Ճեռքին, կուզի որ էրկնուց աստղերի, էրկնքի, գեյտնի էլու-  
թեն զըմէն իմնայ: Օրմ էլ ուր գյրքերը կզանի հիւնժ, կժող-  
վի ուր հըմէն գյրեանց բաներ, կիյնի ճամբախ, որ էրթայ  
մոնի վանքմ՝, ուր խամար ճգնի: Կէրթայ կիսանի վէր կէտ  
ճամիսին, քիւնը կտանի, գյրքերը կդնի գլխու տակ, կանի  
բարձ, կանի որ մի քիչ քինի խանգստանայ:

Ճատ կքինի թէ քիչ՝ Աստուած գիտի, ինչև որ քեանձ  
մե աղէկները կուզեան, կլեցվեն վէր ինոր գլխուն, կկժան  
կկժվրժան:

Մէյն կասի. Զանենք էսա լաճուն թիւլցուցենք, էլ թող  
չապրի:

Մէյն կասի. Զանենք կուրցուցենք, որ էլ բան չտիսնայ:

Մէյն կասի. Աչ թիւլցուցենք, ոչ կուրցուցենք, իսկի բան  
մէջ չանենք:

Մէյն էլ կասի. Էկէյք Սալչուն փաշի \*) սէրն խկենք  
վէրէն. Հա թող ինքն իրեն տանջվի, չարչարվի քեանի որ սաղ ի:

Սալչում փաշէն էն հէրթ-մալաքն է, ով որ ինոր սի-  
րովն, ինոր կրակովն ինկեաւ կցնորուի, կդանդախորի, կծոի,  
կինի սարեր: Լաճը վեր կէլնի, կարթնայ, ինչև որ մի նմուշ  
գողդողալ կըունի իր մարմին, ինք էլ չիմնայ, թէ ինչ էլե ուր  
անձին, գիժվածի պէս ի: Անձէր անխլիս դաշտի մէջ քեանիմ  
փաթ կէրթայ կուզեայ, ճար չէլնե, կիմնայ որ չարոց ի առե \*\*),  
չարք ուր զարկեր են. Համան կանայ թէ չկանայ կժողվէ<sup>1</sup>  
գյրքերն, կլցնի ուր տօպրակ, կինի ճամբախ, անջախ-անջախ  
կիսանի ուրենց տուն, կկանչի մօրն.

«Մէրիկ մէրիկ, իմ մէրացու,

«Սուսուն մաքին էլի զինի,

«Աղքատներաց կերակըրի,

«Սալչում փաշէն որ ձիկ սիրի:

\*) Սալչում փաշէն, ինչպէս ցիշել ենք՝ երեակաչեալ մի ինչոր տար-  
փածու կամ հէրթի է, որու մացածին կրակովն փառում են մահմետական  
փաւաշուներ:

\*\*) Չարոց առնել, նշ, դիւանարել:

Մէրը որ կլսի ուր տղի ձէնը՝ շոտ տնից տիւս կվազի,  
դուռը կբանայ. կտիսնայ որ լինչ տղէնը էն տղէն չի մնացե,  
գիղարն, կերպն ու կերպարաննք փոխուե, էլեր լինչոր մի նը-  
մուշ գետացած:

«Քա տիրացու իմ մէյ որդի,

«Գյլողը ու մախ թող քեյ տանի.

«Թէ տիւ կէրթիր վանյք ու անապատ.

«Էրթիր մտնիր գեյտնի խոր տակ:

«Սուսուն մաքին ինչի զինեմ,

«Աղքըտներաց լինչի բաշխեմ,

«Սալչուն փաշէն, վով ի, վով չի,

«Էնիկ իմ տուն ինչ բան ունի:

Լաճը կտիսնայ մօր բարկութեն, որ չարայ չէլնե՛ էլրմ կասի.

«Աման մարէ, մէյ ճար արա,

«Լաշիկդ ճոռի, շուկէն գընա,

«Աչքիրդ գեղ գիր, որ սիրուննայ,

«Քեռ մէյ որդուն մէյ ճար արա,

«Տէս սիրու բան ինչ գըժար ա:

«Խազի շորերդ, յաւ գարդարուի,

«Գընա բազառ, շուկէն կայնի,

«Տէս սիրու բան ինչ գըժար ի:

Մէրն ի, կէլնի լաջիկ կճուի կճութի, աչքելը կփեղի կը  
գեղրունքի, կէրթայ կինի շուկէյք, էսա տեղ էնա տեղ կկայնի,  
խոր խաբրին ինոր խաբրին ականչ կանի, շատ լաւ-վատ խոս-  
քեր կլսի: Զահէլ-ջուհուները իտև կինեն. մէկը կկճմտի, մէկը  
խակառ կինի, մէկը փէշ կքաշի, մէկ հայ կանի մէկ հիւլ,  
ախըր վերջ ուր սիրտն էլ կաղտօրուի... կղառնայ կուգեայ տուն,  
կիմնայ որ սիրու բանը շատ դժար ի, որ ուր լաճն էլ ինկեյ  
սիրու կրակ. լաճուն կգյրկի վէր սրտին ու կասի.

«Ա՛խ իմ տրդայ, իմ մէյ որդի,

«Սուսուն մայքին կէլնեմ զինեմ,

«Աղքըտներաց վայ կըխանեմ,

«Սալչուն փաշէն թող քեյ սիրի:

Ին առաւտուն, իիետ բարի լրւսուն, մաքին կզինեն, աղ-  
քըտներաց զըմէն կկերակրեն, ըսկուն կիսաւատան որ Սալչում  
փաշի սէրն պիտի ինկնի տղի վէրէն, ինոր սիրով կապուի,  
պսակուի ինոր խետ: Մէկէլ օր լաճն ի բօռալով, խէվալով կինի  
տիւս, կէրթայ էն քեաղքի փա՛շի քեօշկի տակ կկայնի. մաեար  
քի էն փաշի աղջկայ անուն էլ Սալչուն փաշայ ի էլե. քեօշկի  
տկլց կկանչի փաշի աղջկան.

«Սալչում փաշայ, ես քեյ ծառայ,

«Ես քեռ սիրուն կըրակ վառուայ,

«Մանե մի էլնի, ես քեռ բախտն եմ ընկե,

«Քեռ սիրոյ սէրն խետ ձիկ արա:

Սալչում փաշէն որ կլսի ինոր ձէնը՝ գիտի որ գիտվեր ի.  
Էն էլ ուր քեօշկի կուբից պատախան կուտայ ու կասի.

«Ֆօ ծուռ տրդայ, խայտ տրդայ,

«Տիւ վով ես վով, կորիր գընա.

«Ես մուսուլման, տիւ էրմանի,

«Քեռ սէր մօտ ձիկ ինչ բան ունի:

«Գընա, կայնի իմ խորը դուռ,

«Առ քեռ խանչալն ու կտրուն թուր,

«Իմ լէրը որ գեայ, մէյ խատ տուր,

«Ասա, քեռ մէկ աղջիկը ձիկ տուր:

Սալչում-փաշի սիրտն էլ խիզճ կինի, ինոր սիրտն էլ կէլ-  
նի, էն էլ ինոր կսիրի, ըսկուն որ իրարու սիրով կվառուին,  
գիշեր ու ցերեկ խիեալ խիեալին, քիւն չկայ, չարայ չկայ,  
աղջիկը ցնդեր ի: Սալչում փաշի մէրը կիմնայ ուր աղջկայ  
էլութեն, կուզի որ կուրիսցուցի, չիտայ մէկ աղքատի տղի, ամա-  
ձեռ չարայ չմնացե: Օրմ աղջկայ գլուխ որ կլուայ գեադտիկ  
աղու-զէհիր կտրորի մէջ ջրին, կխմցուցի աղջկան, որ շոտով  
թէսլիմ էլնի: Աղջիկ որ աղուն կառնի՝ խելքից կէրթայ կը  
մեռնի, ըսկուն որ ինոր կտանեն կթաղեն գեադտիկ, մարդ էլ  
չիմանալ:

Ինչի որ էլնի՝ լաճ կիմնայ աղջկայ գլուխովն ընցած, կէր-

թայ գերեզմանից գեազտիկ կիսանի, կշալի, կտանի հեռու տեղ, կդնի ճգնաւորի հէրի մէջ, հըմէն օր էլ կէրթայ շուկից նուան գիշնի կբերի, կլմցուցի, ինքն էլ կլմի զըմէն խմցնելու գեահին: Մէջ կլմի, մէջ կիրիշկայ դեխ Սալչում փաշի երեսն վեր, կասի. Սալչուն փաշայ, քեյ ողջութեն, սաղ էլնես, ուրախ էլնես: Օրմ էլ որ կէրթայ գինի բերելու ինքը կուշանայ- ճգնաւորը կուգեայ ուր հէրի դուը կբանայ, կտիսնայ որ ինչ... խուրն խրէղէն աղջիկը կայներ ի հէրի մէջ, հաց-բարին առաջ, ճգնաւորը կնստի աղջկայ կուշտ. կուշտ-կուշտ կուտի էն հա- ցից: Ուշիկմ աղջկայ փէշը կքաշի, կասի. Նատիս, հերիք ի կայնես: Խսա խօսքը կասի չասեա աղջիկ մէկ ուր բօյովն լէնք վ էրկէյնք փար կինի, կփռվի տախտի մէջ: Ճգնաւորը կսարսափի, լեղին կլտրի. Վայ, մեղայ, մեղայ, մեղայ քեզ Աս- տուած. քեառսուն տարվայ իմ արած ճգնութենս գնաց, կորաւ:

Աղօթք կանի կասի. Ով Տէր Աստուած, տիւ խոր խոզից . տուր: Աստծու իրամանքով աղջիկը էլլը կլարի, կէլնի կկայնի ուր տեղ. ճգնաւորն էլ չդադրե էն տեղ. կծիկ կդնի, կկծիկ մէյ կողմ:

Մէկէլ օր լաճը քեաղքից կդառնայ հէր, կտիսնայ որ Սալչում փաշէն մոմի պէս կայներ ի, ուր ճամբխին կիրիշկի, որ կտիսնայ խելքը կէրթայ, ուրախութնից էլ չգիտե ինչ անի, կէլնի մէկ աշխրով: Գիշնին կլցի մէյ կլմի, մէյ կասի. Սալչում փաշայ, քեո կենաց: Սալչում փաշէն, որ չլւմ էն օր բերան փակ էր պախե նոր էր զարթե մահուան քինից. Աստծու իրամանքով բերանը կբացվի, կասի. Անուշ, անուշ, իմ սրտի սիրենական, անուշ էլնի խմածդ: Համան էսա կանդար կիսոսի, ձէնը որ կէլնի թէ չէ էրկուսն էլ, տղէն էլ, աղջիկն էր, տեղն ու տեղ կթմրեն, կինեն դան, իրարու սիրուն վառուած կմեռնեն:

Լոս-կամար կկապուի ինոնց վէրէն. հէրը լուսոյ մէջ կը փլփսթրայ:

Մէյ քեանի օրից յետոյ, ճգնաւորը ինքն ուր կմտմտայ ու կասի. Խսա երազ էր, ինչ էր որ ես տեսայ. էրթամ մէյմ իմ

կացարանս տիսնամ, թէ ինչ եղաւ, ինչ չեղաւ էն աղջիկ: Կուգեայ կտիսնայ որ կտրիճմ էլ խետ աղջկան կշտին ինկեր իւ- կզախախորի, էլլը կուզի ետ էրթալ, փախնել էն տեղից. ամմա Աստծու խրամանքով Գեաբրիէլ խրիշտակ դէմ կուգեայ ինոր, կասի.

— Ճգնաւոր, մի վախենայ, մի, ինոնց մախը սուրբ մախ էլաւ. ըսկուն պիտի էլնէր, ըսկուն էր գյրված ինոնց ճակատ. ինոնք ըսկուն սուրբ սիրով պիտի մնին չիւմ մեռնեն: Վեր առ թաղիր:

Ճգնաւորը կկատարի խրիշտակի խրամանը, էրկուօն էլ կթաղի մէջ մէկ տապանի, ճոչ տապանաքարմ էլ կթալի ինոնց վէրէն: Լուս-կամար կկապի հէրի մէջ. շատ գորքով ու զօրութենով կէլնի ինոնց տապան. Խնդիրք արտղը ուր մու- րազը կառնի:

### ԿՏԻՒՃ ԵՒ ԴԻՎ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնե, կէլնի մէյ ճեռչ թագաւոր: Էտոա թագաւորուն կէր իրելք խատ լաճ տղայ: Ուր զըմէն զօվլաթի հետ, թագաւորուն կէր մէկ էլ խաս-բաղչայ, զրախ- տից աւելի փառաւոր, անմահական ծաղիկ ու ծաղկունք ինոր մէջ, անմահական աղբրներ էնտեղ, էլ որն ասեմ, ոչ մէյ բան պակաս, ոչ մէկ պայտութեն էն բաղչին:

Էտոա խաս-բաղչի ծառերաց մէջ կէր մէյ խատ էլ անմա- հական խնձորի ծառ, ամեն մէկ խնձոր քեանձ մարգում զլոխ: Ինոր խոտը քեանձ վարդ-ուրհանի չորս կողմ բռներ էր: Խըն- ձորները որ գիշեր ծառից կաթուկ կանէր՝ խաղար տարուան պառաւ կադ գէվը կուզեէր կուտէր ու կտրորէր, անգեահ, ան- պառաւ կադ գէվը կուզեէր կուտէր ու կտրորէր, անգեահ, ան- պառաւ կադ գէվը կուզեէր կուտէր ու կտրորէր, անգեահ, ան- պառաւ կադ գէվը կուզեէր կուտէր ու կտրորէր, անգեահ, ան- պառաւ կադ գէվը կուզեէր կուտէր ու կտրորէր, անգեահ, ան-

Հնձոր տիսնար ուտէր: Խդոր համար էլ գիշեր ցերեկ շատ դարդ ու մառախ կանէր:

Օրըմ կկանչի ուր իրեյք լաճերն, կասի. Զեղնից վով որ կաղ դէվն սպանի, էն ծառից մէյ խատ խնձոր բերի ուտեմ, իմ հաւասս առնեմ՝ էն իմ տեղ կնատի թագաւորի թախթ, ինոր կանեմ իմ վալի-ահո, թագաւորութեն ինոր ի:

Առաջ ինոր ճոչ տղէն ի, կսիլախորուի, կէրթայ բազէի մէյ պատի տակ պահ կդնի: Մի քիչ որ կմնայ քիւն կտանի, կինի խոր քիւն, տեղն ի տեղ կմնայ. դէվը կուգեայ, ուր արածն կանի, որն կուտի, որն կտրորի կժողնի, կէրթայ: Էն մէկէլ օր օրթանջայ լաճ կէրթայ խօրն իմաց կուտայ, կասի. Թագաւոր ապրած կէնայ, դարդ մի անե, թէ իմ ճոչը չկարաց՝ ես կէրթամ կսպաննեմ դէվը:

— Հա, քեո ճոչը գնաց ինչ արաց, մնաց թէ տիւ ինչ պէտի անես:

Օրթանջայ լաճն ի, կառնի ուր թուր թվանք, կէրթայ: Ճոչի պէս ինոր քիւնն էլ կտանի, կմնայ տեղն ու տեղ. դէվը կուգեայ, ուր սրտի ուզածովն խնձորներն թէ կուտի թէ կը տրորի, կէրթայ: Սրէն մնաց պղտիկ լաճուն, կհազրվի կէրթայ մօտ խէրն:

— Թագաւոր ապրած կէնայ, ամր արա, էսա դրիւս էլ ես էրթամ. կամ ես կմեռնեմ, կամ դէվին կմեռցնեմ, ախըր խընձորը կանամ բիրե քե խամար, Աստուած օղօրմած ի:

Խէրը ձեռ կտանի, մորուք կմաժմըրի, գլուխ կժարժի, չգիտե ինչ ասի. տէսաւ որ ինորից ճոչերը ինչ արին:

— Գնա, Աստուած քեյ խետ, գնա տիւ էլ քեո մարդութեն խառջի. ամմա խելքս տեղ չանե քելինից էլ:

Պղտիկ լաճն ի կսիլախորուի, կառնի ուր զըմէն թուր թվանք, կէրթայ խաս-բազէն, կտափի ծառիմ՝ տակ, ափան մէջ կիտրի, պտղունցը աղ կխըր մէջ, որ մոմոայ քիւնը չտանի. քեանի որ մոմոայ էն էնկանդար էլ արթուն կմնայ, աւելի աւելի մուղեաթ կէլնի ուր գործին, հէչ չիքնե:

Կէս գիշերը կընցնի ընցնե՝ մէկ էլ կտիսնայ որ խըշ-խըշալէն, ՓըշՓըշալէն պառաւ դէվ կիշնի խաս-բազէն. կանի որ խնձորները զըմէն ժովողի, ուտի կամ տրորի՝ լաճը համան էն սհաթին վէրէն կխասնի, կքաշի ուր նետ-անեղ, մէյ խատ որ կզանի դէվուն դէվին ուր խացին կխասնի: Լաճը կը խասնի, բօկից կրունի, մէյ զըրը էլ ուր թուրը կիջուցի վզին, կանի էրկու կտոր, կսպաննի: Կքաշի թուրն ու խանչալ, պըր-տուճ-պրտուճ կանի ինոր. էլ անվախ, աներկիւդ կժողվի խըն-ձորները, կբերի թագաւորուն: Թագաւորը որ կտիսնայ ուր պղտիկ լաճու մարիֆաթը՝ կէլնի մէկ աշխրով, ինոր ուրախութնին էլ չափ ու սահման չկայ. կուտի խնձորներից մի քեանի խատ, ուր փաքայքն կառնի. կօրհնի պղտիկ տղին, վաադ կանի, կասի. Որ ես կմեռնեմ՝ իմ տեղը նստող իմ պղտիկ տղէն եւ խալալ սրտով ինոր եմ տուե:

Ճեռէ աղբէրները որ կլսեն պղտիկի կտրճութենը, խօր օրհնութիւնը ու վաադ՝ շատ խիստ կնեղմտեն, կբարկանան, ոխքէյն կպախեն ուրենց մէջ, իրիսանց բան չեն ասե: Ճատ կը մնայ քիչ կմնայ իրեյք աղբէրն էլ օրըմ մէյտեղ կէրթան դաշտ ափ անելու, մէյ խատ պէտ ժեռ քեարիմ ուստ կուգեան: Վոժը վոժի կուտան, թէր թէրի, քեարը կշոշեն դէն, տակ կտիսնան որ ինչ մէկ անտակ մեծ խորըմ: Խրկու ախպէր պղտիկց գեադ-տիկ կիմսիսան իրարու խետ. աղէկ էլ մհանայ կէլնի ինոնց. կասեն. Եկէյք կախվենիք էսա խորի մէջ, տիսնանիք ինչ կայ ըստեղ, ինչ չկայ: Դաշին ճոչ աղբէր կիջուցեն. դէլ կէսը խասած չիասած՝ կրօռայ, կկանչի. Հաւար, Հաւար, մատաթ, իրիցայ մրրկայ, ձիկ տիւս խանէյք: Ինոր կքաշեն տիւս. կկախեն օրթանձէն: Էն էլ ճոչի պէս հաւար, մատաթ կդնի, ինոր էլ կքաշեն տիւս: Զաթի ինոնց ըսկուն մհանայ պիտէր որ տիւս էլնեն, պղտիկ աղբէրն կախեն մէջ խորիս, կուրիսցուցեն:

Սրէն էկաւ պղտիկին. Էնը ինոնցից աջալայ էր, կուգէր որ ըստեղ էլ մի ինչ-որ կտրճութեն անէր. ինոր կկախեն: Էն քեանի որ կբօռար կկանչէր, Հաւար մատաթ կանէր, կասէր

տոիւս քաշէք՝ ինոնչք ամենևին ականջ չեն կախե, կվախեն որ կվախեն չլու տակ, էլմ' էն ժեռ քեար կթալեն վէր խորի քէրնին, բէրանը կկալեն, կթողնեն կէրթան իրենց գործին:

Սկսր վերջ ուրենց ոխն-քէն խանեցին պդտկից:

Պդտիկ աղբէրն էր, խորի տակից, մութ-մութ կափրլիքի պատերն, ձեռը կառնի դրանմ՝ որ չէ դուռ կբացուի, լոյս արեգակ գեռ էն տեղ. կտիսնայ ախագիցն ճոչ դէվրմ քեանձ ուր առջի սպանածից էլ աւելի զարզանդուն, ըսկուն ի լէնքպէ՛, շնթռվե, որ բռներ ի տախտի օրթէն. մէյ խատ էլ խուրն խրեղէն մարալ աղջիկ էնտեղ. դէվր գլուխ դրեր էր աղջկան ծնկեան վէրէն կմռփար. ինոր խռալու ձէնը բռներ էր էն խորի զրմէն մաղարէք, մազդ բանը չէր լսե:

Էն աղջկայ աչքը որ կինի գեխ էսա տղի երեսն՝ արմանչք զարմանչք կմնայ. կվախենայ, կսարսափի, կախսոսայ ինոր կը-տրիճ արևուն, որ էսասկընայ նակաֆըլ իկե ըսկուն խաւար տեղ:

— Զօ կտրիճ, ձօ խողածին, կասի աղջիկ, էսա ինչ չտեսած բան ի, որ օձն ուր պորտով, խաւքն ուր թիվով չէր կանե էսա տեղ գեալ, տիւ ինչխ էկար: Տիւ քեռ Աստուած, շոտ արա, շոտ էլի զատուիր ըստեղից, որ ճամբխով իկեր ես՝ էլի էն ճամբխով գնա. թէ մկայ որ դէվր էլաւ՝ քեռ ճոչ պրտուճը ականջդ կթողնի. մի ասե թէ էլ արև արևալոս պիտի տիւնամ, էսա մաղարից անվնաս ազատուեմ:

Լաճը կասի. էյ, աղջիկ, ինչ կասես, ինչ վախ, զարմանչք. քեռ սէրն ի բերե ձիկ էսա տեղ. մի վախենայ, համան շոտ քեռ դէվուն խան վեր, խեռ ինոր կուռենչք, զարնուելչք իրար:

— Էսա դէվուն կիւթնի խոփ պիտի, որ կրակցուցեն, թալեն ինոր ոտներաց վրայ որ զարթնի, թէ չէ զուռով չարթնայ: Լաճն ի կինի մաղարի մէջ դէս ու դէն, կկնդնի մի խոփ, կրակ կվառի, կտաքցուցի խոփ, կբերի կթալի վէր դէվուն ոտաց:

Դէվր մէյ խատ ծմրկտանաց, ժաժ էկաւ, վեր էլաւ,

Խստաւ, աչքերը ճըմոթեց, բացեց, առաջը տեսաւ հողածին. առաջ մէյ խատ մուաց, կոտրտուաւ, շուռ-մուռ էկաւ, էլմ' իրէշ-կաց դեխ լաճու երեսն վեր. հալա չէր խաւատայ ուր աչքերաց:

— ԱՌ, խողածին, տիւ էսա տեղ. լաւ պլոտիւմ ես իկե ձիկ: Կտրիճն էլ կասի. խա, խա, վեր էլի, վեր կաց, ես իկեր եմ որ ես ու տիւ իրարու խետ կոռւնչք, եա ես, եա տիւ:

— Առաջ տիւ զարկ կտրիճ, կասի դէվր:

Կտրիճ անթարթ կկայնի. դէվ թօփուզմ՝ որ կզանի՛ լաճը հիւշտ, ըսկուն ինչ մժիկըմ կթունի ինոր առջւից, բանըմ չէնե: Տղէն էլ մէյ խատ որ կքաշի ուր թուրն կկանչի, եա Մարութայ \*) բարձր Աստուածածին, թուրը կզանի թէ չէ աչք խփոց, բանալու չափ էլ չէ, դէվուն կանի էրկու կտոր, մէ ջքից կկտրի կանի կիմայ-կիմայ, կթալի մէկ եան:

Սղջկայ սիրտն էլեր էր արուն, էրէրուն. էն կվախէնար որ դէվր լաճուն զա՞յ անի, պատուտի ուտի՝ ինչխ որ շատերաց: Խօ վառք Աստուածու, տղէնը ազատուաւ, դէվր սատկաւ: Մկայ տիւ տես աղջկայ ուրախութեն, որ շատ տարիներով ին-կեր էր դէվունանկ, ազատում չկար, տիւս գեալ չէր էլնե: Տղէն ու աղջիկը, աղէկմ' իրարու կտիսնան, կխաւնեն:

— Ախ կտրիճ, մենակ ես չեմ էսա տեղ. ձիկ պէս շատերն էլ կան, հալա մի գնա էն մէկէլ դռները բաց, տես վովեր կտիսնաս. էրկուսն էլ ձիկ պէս էսա չար դէվր էսա եօթն տարիի որ բերեր ի բանդ արեր ի էսա քարատկի մէջ, փակեր ի զնդանի մէջ: Լաճը կէրթայ մէկէլ դռներն էլ որ կբանայ աղորթ որ էրկու խատ էլ ուր պէս անման, խուրն խրեղէն աղջկներ կտիսնայ էն տեղ. ախու չեն կանայ տեղներից լըպը-տայ, տիւս ել-մուտ անե:

Կէրթայ մէկ ուրիշ դուռ էլ որ կբանայ կտիսնայ էն տեղ էլ պառաւըմ. բարե կուտայ, բարե կառնի, էն աղջկներ թալիմ կանի պառփուն, կասի. Մարէ, ես քեյ որդի, տիւ ձիկ

\*) Մարուքէ ճկնաւորի անունով հեքեաթի հերոսները միշտ յուսադրուել են և նրա անունով էլ յարձակուու են իրանց ախոյեանների վրայ:

մէր. էսա աղջկներ թող կէնան քեռ մօտ, մի քիչ ժամանակ մէջ տեղ կացէք, չիւմ ես դառնամ գեամ:

Պառաւն ինոր ճար-ճամբախ նշանց կուտայ, կասի. Կը-տրիճ, կէրթաս էսա խորի մէջ, իրեցք խատ էծ ուաստ կուգեայ. դաշին ոտդ թալ վէր սւ էծուն, ինորից ոտդ թալ վեր կարմիր էծուն, ապա վէր սիվտակ էծուն, ինոնչք քեց կթալեն տիւս, կինես լոռ-աշխարհ, կազատուես: Լաճը կէրթայ կինդնի էծերը, կմոռնայ, առաջ ոտը կթալի վէր սիվտակ էծուն, էն էլ կթալի վէր կարմրին, կարմիրն էլ վեր սիվուն, լաճուն կը թալեն սւ-մութ աշխարհ, ճամբախը կմոլորի:

Տես որ Աստուած խետ տղին եար ի. կաս-կոտրամ էտա սւ աշխրի մէջ ինոր ուաստ կուգեայ մէջ խարիր տարեկան ընցուկ պառաւ. կնիկըմ: Տղին որ կտիսնայ կուրախնայ, կասի. Բարով խէրով, կտրիճ, արե էլնենչք ես քեց մէր, տիւ ձիլ տղայ, անենչք ապրենչք, չիւմ օրն մախուն մնանչք մէջ տեղ:

Օրըմ տղէն կխառցուցի. Մարէ, կասի, էսա ձեր աշխարհ ինչի էսամկընայ մութ, դումանը բռներ ի, ինչի ճիւր չկայ, արե արևալոս չկայ. չը որ տիւք էլ Աստծու ստեղծած էք:

— Այս որդի, կասի պառաւ, ինչ ասեմ, մեր մեղքիցն ի, էսա քեանի տարի էլաւ որ մէջ եօթն դպիսէն չար դեք նստեր ի մեր աղբը դէմ, չժողնե որ ճիւր գեայ. առծիւմ էլ կայ, որ բռներ ի արևու դէմ, չժողնե որ լուս էլնի մեզ վրայ:

Էտա կտրիճն ի որ սիրտը շատ կցաւի՝ կասի պառւուն. Մարէ, գնա ձեր երկրի թագաւորուն առա, որ ձիլ իզին տայ, ես էրթամ էն էրկսին էլ սպանեմ, ձեր երկիրն ազատեմ մթնից և ջրի պակսութենից:

Պառաւը կերթայ թագաւորուն իմաց կանի, ամր կառնի ինորից, կուգեայ լաճուն կիմացուցի, որ հազրվի էրթաչ ինոնց վէրէն:

Առաջ կէրթայ դեխ դէվ, կտիսնայ որ փոփեր ի վէր աղբը ական. մարդ և անասուն մէկը ինոր ախից սարսափից չկանաչ մօտ գնայ ջրին: Մէջ գանելուց ինոր կթնչկըցուցի, կսպանի:

Կտիսնան որ գետի նման աղբիւրը կփռթնի կուգեայ մէջ երկրին. ամեն մարդն էլ շատ կուրախնաւն և իրարու աւետիս կուտան, որ դէվն սպաննելուց իւտոյ, մէկէլ օր կտրիճ տղէն վեր կառնի ուր նետ-անեղն, կէրթայ դիխ առծիւն, նշան կդնի. մէջ զանելուց էլ առծիւն էրկնուց երեսից տակ կբերի. արևն էլ ուր շառաւիղքն ու շողերը կբանայ վէր արարած աշխրհին. ամէնքը կտիսնան ու շատ կուրախնան. սւ-մութ աշխարհ կլուսաւորուի:

Էն երկրի թագաւորը որ կտիսնայ էսա լաճու դօչաղութին կմտնի սիրտ, կկանչի ուր երեսն, կասի. Կտրիճ, ուզի, տիսնամ թէ քեռ ուզածն ինչ ի: Տղէնը բանըմ չուզե, կասի. Թագաւոր ապրած կէնայ, մէնակ քեռ սաղութեն կուզենչք:

Թագաւորը կուզի որ ուր մէկ խատ աղջիկն ինոր տայ, պասկի. շատ էլ կմեծարի, որ անի ուրան փէսայ, ամմա լաճը չուզե, կասի. Թագաւոր ապրած կէնայ, քեռնը քեց թող մնայ, ես հալայ շատ-շատ մուրագներ ունեմ, խօսք չեմ տայ:

Կէլնի որ մէջ քիչ ժամանակից վերջ էսա թագաւորը խետ մէկ ուրիշ թագաւորի կուի կբանայ: Լաճն էլ կսիլախւորուի, խետ ասքըրին կէրթայ կուի:

Երկու թարաֆիցն էլ շատ զու կուուի են պատրասուե: Ճամաթէն, հարայ-հրոցն աշխարհ բռներ ի, սպանողը սպանողի, զանող զանողի, տանող տարողի ի, մարդ ուր գյխի տէրը չի. Աստուած հիմտաթ էլնի մեր էսա կտրիճ տղին:

Կուուի էն տայ ժամանակ, կտիսնայ որ ուր էրկու աղբէրներն էլ մէջ կուուին. բերանը կմնայ բաց. էլ չգիտէ ինչ անի, ինչս անի, որ ուր աղբէրները սպանուելուց ազատի: Ախըր սիրտն էլ չխամբիրե. համան կթողնի ուր կովու կողմ, կվազի դեխ ախբէրներ, կուզի աղատի կուուի սատումից, ամա ինոնչք իսոր չեն ճանչնայ:

Ինքն ուր մէջ կիրիշկայ ինոնց, կծծղայ, կծծղայ, սիրտը կպատուի, չկանաչ ուրան բռնե. զզներով կփռթաթու ի

իսոր ինոր կպաքից, վերջ որ էլ չկանայ՝ ուր սրտին ու ջիկրին խաբար կանի.

— Ծո տնաւերներ, չէ՞ որ ես ձեր եղբայրն եմ, կասի, ձեր պզտիկ եղբայր, համայ տիւք ձիկ չէք ճանչնայ: Տի՞ք ձիկ փոս փորիցիք, խորի մէջ թալիք. ամմա Աստուած ձիկ ազատեց: Եսա եղելութեն որ կլսեն էրկու կողմի մարդերն էլ կը-ուիւ կդալերցուցեն, կռուարարները կբարուշեն, մայնա կէլնի:

Զէնը կէրթայ թագաւուրուն, կասեն. Քեռ պզտիկ տղէն իկե: Են որ կլսի՛ էլ չգիտե ինչ անի. շոտ-շոտ ուր թախտից կէջնի, կուգեայ դեխ պզտիկ լաճ, զզնով կիյնի, ուր կարօտն կառնի: Պզտիկ լաճը ուր զզլսու գեացած զըմէնը կպատմի խօրն: Իրիչք աղբէրն էլ մէյտեղ կէրթան, էն խորի բերան կբանան, կմտնեն դէվու մաղարէն, կժողվեն սնդուկներով լի ուկի, արծաթ, ակունք, ջավահէր, կբառնան ջորիներաց, կառնեն էն տեղաց իրեչք խօրօտ աղջկներն էլ, կուգեան իրենց տուն:

Աղջիկներաց զըմէնի պզտիկն պզտիկ աղբէրն կառնի, ինորից ճոչն օրթանջայ աղբէրն, ամենից մեծ աղջիկն էլ մեծ աղբօր համար: Կպակուեն, իրեչքն էլ կիսասեն իրանց սրտի մուրազին:

Թագաւոր կկանչի ուր զըմէն վազիրները, ինոնց առջև կպաքից պզտիկ տղի ճակատը. ուր ձեռնով կհանի թագն, կը դնի ինոր զլխին, կնստեցուցի թախթի վերայ, կանի ուր տեղ թագաւոր, ինչին որ խոստացեր էր:

Աստծուց իրեջք ոսկի խնձոր իջաւ, մէկն ասողաց, մէկն լսողաց, մէկն էլ հեռու ականջ արողաց:

8.

### ՊՍՊՂՈՒՆ ՓԵՏՈՒՐ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնե, կէլնի կէլնի մէյ շատ բարի թագաւոր: Ափսոս որ էտա թագաւորը կէր աշխարհիս ունի մէնակ մէյ խատ լաճ-տղայ, էն էլ ոչ տանի, ոչ տեղաց, ինքն

ուր զզլսու տէր: Որ քիչ-շատ կմեծնայ՝ խօրից մօրից գեաղտիկ կցի մէկ այբայ ոսկի ու արծաթ, ուր եար-եաթաղ կժողվի, կկապի ձիու թարքի, թարկ-դիւնեայ կանի, էն աշխրից կէրթայ դիերիցի-կուրբաթ: Ճատ կէրթայ թէ քիչ Աստուած գիտի, ճամբիսի վէրէն կտիսնայ, որ ինկած է մէյ խատ պսպղուն խազարան ունկի խաւքիւ փետուր. ձիուց կէջնի որ փետուրը վերուցի. Աստծու խրամանքյով ձիուն լեզու կէլնի, խաբար կուտայ կասի. Կտրիճ, լիր ձիկ, ձեռ մի տար էտա փետուրին, իսկի էլ մի վէրուցե. Էտա փետուրը մէյ բէ-ուղուր զատի, քեռ զզլսուն բայլէմ կըերի: Լաճը ականջ չանե, կվէրուցի փետուր, կզանի ուր զզլսուն, ձինը կքշի, առաջ կէրթայ ուր ճամբախն: Կէրթայ կէրթայ, կխասնի մէյ քեաղայք. ներս կմտնի: Փօղրի էն երկրի թագաւուրու սարի տկից ընցած ժամանակ՝ թագաւորը ուր քեօշկից կիրիշկայ, որ կտիսնայ խոր զզլսին խրած փետուրը՝ ամր կանի, շոտով էտա տղին կկանչի ուր մօտն, ինոր բան ունի ասելու:

Լաճը կէլնի թագաւուրու երես. թագաւորը կխառցուցի.

— Կտրիճ, տիւ վմկ ես, վմկ չես, ուստ կուգեաս, դեմը կէրթաս, որ աշխրիցն ես, ինչի ես իկե: Զըմէն թարաֆի խառց ու փորձ կանի:

— Վով եմ, վով չեմ՝ ես էլ չեմ գիտե. ուստ կուգեամ, դեօր կէրթամ՝ էն էլ չեմ իմնայ. ես էլ իմ զզլսու մէկն եմ, որտեղ ուտեմ՝ էնտեղ էլ կմնամ, կքնեմ, կզարթնեմ, ըսրսկնայ օր կընցուցեմ:

— Որ ըսկուն ի՝ կասի թագաւորը, մունջ արե. տիւ էլի ձիկ լաճ, ես էլ քեյ խէր, ապրենչք մէյտեղ, շինեյք աւիրենչք մէյտեղ, մեռնեյք էլմ մէյտեղ. էսա զըմէն մալ ու դօվլաթն էլ թող էլնի քեյ:

Լաճը խաւան կմնայ թագաւուրու խօսքին, կէլնի ինոր տղայ: Են ոսկէ փետուրն էլ կկանեն էօդի պատ, որ գիշեր ցերեկ, քեանձ արեգական, քեանձ ակունք ջավահէր փէլս կուտար կփլփատար:

Թագաւորու վազիրները որ կտիսնան խոնց էրկսի, խօրն ու տղի, սէրն ու մուհապաթը՝ շատ կնախանձեն, կուզեն լաճուն կուրիսցուցեն, եա սպանեն գեաղտիկ, եան էլ մի տեղով զա՞լ անեն: Օրմ էլ կասեն թագաւորուն.

— Թագաւոր ապրած կէնայ, շնախաւոր էլսի քեռ նոր լաճ տղէն, շնախաւոր քեռ նխշուն փետուր. էսա փետուր որ ըսըսկընալ փէլս կուտայ քեանձ արեգական, ապա խոր խաւքին ինչ կանդար էլ խօրոտ կէնսի: Էն խաւքն անջախ քեռ էօդին, քեօշկ ու սարին լայեղ ի:

Վէզիրները մէկը մէկից աւելի կլորդրեն թագաւորին, որ անպատճառ մէկն օզօրկեն էն խաւքիւ իտվից. դէոր որ ի բունեն, բերեն: Վով էրթայ խաւքիւ իտվից, վով չէրթայ բիրը վիճակը կիյնի լաճու վէրէն: Ինոնց չար միտքն էլ էն էր որ լաճուն օզօրկեն, էրթէր էլ չիգէլր: Թագաւորը ամր կանի որ էրթայ, գլոխ տայ, ինչ կանի անին խաւք բերի:

Էտա լաճն ի, լաւ—չէ չի ասե. կէրթայ կմտնի փակեախ մօտ ուր ձին, կինի ձիու վզովն, շատ կմտմտայ, կուլայ կաղավաղի, ըսկուն որ արտօխինք կթափի վէր ձիու ոտներաց: Զիուն լեզու կէլսի, կդառնայ դեխ լաճն ու կասի. Կտրիճ, էլմ ինչ էլս քեյ, ինչի կուլաս, ինչի կմէզես կմտմտաս. չէ որ էն օր ճարիսի վէրէն քեյզ ասի, մի ձեռ տայ էտա փետուրին, քեռ գլխին բալայ-պատուխաս կէլսի. տիւ ձիկ ականջ չարիր, մկայ էլ ինչ կտանջվես, ինչ որ անես՝ ֆայտա չկայ: Կէրթաս մօտ թագաւոր, կխնդրվես որ քեյ տան, հազըրեն քեաւսուն բեռ կորեկ, քեաւսուն էլ կաթըր, մէյ բեռ էլ խատ-խատ խտկուկ գեարի քեռ ձիու խամար. իսոնքը որ հազըրեցին՝ բանդ էլ կաջողվի. մէկէլ օր կկանչենք մեր Աստուած, կիյնենք ճամբախ, Աստծու զօրութենով կէրթանք էն խաւքը կբերենք:

Լաճը կէլսի թագաւորու իրես, կուզի ուզածները, ինչ որ ձինը ասեց: Թագաւորը էն սհամաժին ամր կանի ուր մարդերաց, որ շոտով հազըր անեն լաճու ուզածները: Մէկէլ օր լաճն ու ձինը կկանչեն ուրենց Աստուած, բեռները կիսկեն առջևներ,

կինեն ճամբախ, ուղիղ գեխ խաւքիերաց երկիր, գեխ Արապստանայ չօլերն: Կընցնեն շատ ձորեր ու գաշտեր, սարեր ու անբընակ, անշէն երկիրներ, անջուր վէրանայ չօլ-չօլստանք. էլ մարդու երես չեն տիսնայ: Կէրթան կէրթան մէկ անխլիս գաշտիմ մէջ կիցնեն: Լաճը թագաւորու գեափ տալուց էնկանդար չի վախենայ, որչափ որ ուր պատվուց, կուզի որ մեծ անունը վաստկի էն երկրի մէջ:

Զիուց տակ կիցնի, բեռները կտեղաւորի, ձինը կկապի էն տեղ, կորեկ կցըվի մէջ էտա ծով-դաշտին: Մէկէն տիսնաս, որ խազար ու բիւր անթիւ խաւքեյր, հըմէն կոզմից, էրկնուց երես բունած կուգեան կլեցվեն էտա գաշտին մէջ. ինոնց էրամը սե ամպի պէս բուներ ի գաշտի երես, խազար ու մէկ տեսակ անուշ-անուշ կվկվոցի ճկվոցի ձէնը բուներ ի անսախմանք դաշտ: Կվկվալով ճրվճալով ցինած կորեկները կքաղեն: Լաճու ուզած էն փէլսկտաւոր խաւքն էլ իտոնց մէջ կէլսի. ուշիկու շիկ տափ-տափ անելով, պախկվելով կիսասնի վէր խաւքին, կըունի: Խաւքն էլ խաւք մի ասե, խաւքեյրաց թագաւորն ասս. փետուրները փլփստուն, քեանձ արեգական շառաւիզյք, թևերը էրկնաձիգ, քեանձ սինամայ խաւքիւ, կատարն փայուն, քեանձ ակն ջավահիր: Ախըր շատ զօռ ու դժուարութնով կը բերեն կխանեն թագաւորու երես: Աշխարհ ալամ կվազեն սարէն, տիսնալու էն խաւք:

Վազիրները կտիսնան, որ լաճը սալամաթ իտ ի գառցեր՝ ուրիշ չարութեն կմտմտան, կասեն. Էսա խաւքիւն գեօրայ խոր ծառ չինարի պիտէր. ոսկի կաֆաս պիտէր, խաւքն ինոր մէջ նստէր, ճըլվէր, թագաւորուն անուշ քիւն բիրէր: Էլլի մի շատ ծանդը ծանդը բաներ առաջ կբիրեն, էլլի լաճուն կուզեն օզօրկել շատ հեռու տեղեր, որ կորսուի:

Լաճն ի, էլմ ուր ճար կթալի մօտ ձին: Զիուն կասի. Կտրիճ, մի վախէնայ. գնա մօտ թագաւոր, ուզի մէյ խատ ոսկուց շինած պալթայ և մէկ բեռ էլ խտկուկ գեարի: Էնպէս էլ կանի: Առաւոտուն խետ բարի լուսուն կիցեարի:

Նեն ճամբախ: Զինը կասի, որ կխասնենք մօտ սալվի-չինարի ծառ՝ պալթէն զարկ ծառին, շոտ էլմ խէծի, քշի ձիկ, էլ մի՛ երեշկի իտևդ. — ծառը իրան-իրան կինի մեր իտվից, կուգեայ: Կիսասնեն չինարի ծառի մօտ որ չէ՝ պալթէնը ծառին զանել, ձինը հէծնել ու քշել մէկ կէլնի: Սալվի-չինարի ծառ կինի ինոնց իտվից, էրկէն-էրկէն կուգեայ չիւմ ինոնց երկիր, չիւմ թագաւորու խաս-բաղչի օրթայ տեղ կտնկվի:

Վազիրները տէսան որ ճար չէլնե, չեն կանալ վէր էն տղին, չեն կանալ կուրիսցուցել. գեոր էլ որ օղօրկեն՝ կէրթայ անվնաս կդառնայ. կասեն թագաւորուն, որ էրթայ պառաւ դէվու ճոչ լաճ, ուսթայ նազար բերի, որ ինոր խամար ուզած քեօշկն ու սարէն շինի:

Էլմ լաճը ուր ճար կժալի մօտ ձին, կուլալ կաղափղի:

Զինը կասի. Կտրիճ, էլմ մի՛ վախենալ, զնա թագաւուրուցն ուղի մէյ ջուխտ ձիու ոսկի նալ. էն կզանես իմ տաների տակ. Աստծով չիւմ վաղն էսա-գեահ ուսթէն էստեղ հազըր կանենք: Էն մէկէլ օրնի, լաճն ու ձինը հետ աղօթրնին, ոտքեր շաղաթթաղ կինեն ճամբախ: Զինը կասի. Կտրիճ, ես քեյ գեոր որ կտանեմ կտանեմ, ձէն չշանես, մունջ կաց, իսկի մարդու էլ բերան չբանաս:

Կէրթան կիսասնեն խորըմ վէրէն, կտիսնան ճոչ քեարըմ վէր ինոր բէրնին թալած: Զինը կասի. Կտրիճ, կրանաս իսոր բերան, կմտնես ներս, կիսասնեն էրկթէ գուանըմ, դռան կզանես, տիւս կուգեալ պառաւ մը. էն ուսթի մէրն ի, կասես. Կանչի ուսթին, ըսկուն կասես որ ճոչ դէվը չիմնայ. որ իմցաւ՝ քեու ճոչ պրտունդ ականջդ կեռդնի: Պառաւը ուսթին ձէն կուտայ, կուգեայ տիւս, դեալտիկ կվերցնես ուսթէնը ու կուգեաս:

Ինչի՞ որ ձինը պատուիրեց՝ լաճը ըսկուն էլ կանի:

Ինոր բախտից ուսթէնը վէր էրկթէ գուան կախներ էր, դէլն էլ քինուկ: Ճոտով կառնի ուսթէն, խորից տիւս կէլնի, կժալի ուր ձիու թա'րքէ, կքշի գեխ թագաւորու երկիր:

Թի քիչ վերջ դէվ կզարթնի, կինի ինոնց իտև, որ հա-

հայի զըմէն էլ սպանի: Լաճը ուր մէջքին խրած խնձորներից մէկը որ կժալի՝ խնձորը կդառնալ մի ախագիյն կարմիր ծով: Պառաւ դէվը կմտնի ծովի մէջ, քիչ էր մնացե, որ բոնէր ձիու պոչ. լաճը խնձորմ էլ կժալի. կդառնալ խիտ-մէշայ, որ մարդ, անասուն չկանալ ընցնե մէջից: Դէվը կֆռալ կֆռֆռալ՝ եղ-րանց կուգեալ ինոնց կիսասնի. կանի որ ձիու պոչը բոնի՝ լաճը խնձորմ էլ կժալի. կէլնի մէկ ախագիյն դա'ր, դա'րի օրթիցն կտիսնալ որ ծուխ, մուխ պա'լա'ն-պա'լա'ն տիւս կուգեայ: Դա'րը կպատովի, դէվն էլ կէրթայ կինի մէջ, կկուրիսի, էլ տիւս գալու ճար չէլնե. կսատկի, կմնայ էն տեղ: Տղէն, ուսթէն ու ձինը սաղ սալամաթ կրնցնեն էսա փորձանքից էլ, չիւմ երիկումն ուրախ սրտով կմտնեն թագաւորու սարէն:

Ուսթայ նազար մի շատ անուանի ուսթայ էր: Թագաւորու տուն խասներուն պէս՝ ամր կանի որ չէ՝ Աստծու կամքյով մէջ մէյ սհաթի էն ախագիյն քեօշկն ու սարէն կշինուի: Էլմ էլ չար վէզիրները խորով էլ չեն գեռիսանալ:

Կտիսնան որ լաճը զըմէն ինոնց ասած դժար բաները կատարեց, կասեն թագաւորուն. Թագաւոր ապրած կէնայ, էսա զըմէն բան իրա կարգովն ու զարդարաքյով էլաւ, կատարվեց, ամմա մէկ բան պակաս ի, որ էն էլ էլաւ՝ էլ քերգի խասնող մարդ չկայ: Թղօրկես Արապստանու խալիֆի աղջիկ բերես, անես քեյ կնիկ, որ էսա փառքին խետ վէլես վայելես աշխարհ:

Աստուած տիւ փրկես փորձանաց, էսա զըմէնից դժարն էր:

Լաճը էլմ էլ կմտնի փակեախ, մալուլ-մոռութ կկայնի ձիու երեսն վեր, էլմ կիւլայ կաղավըլի, մէջ ուր արտոիւնքին կտղկվի: Զինը կիմնայ ինոր սրտի նեղութեն, կասի. Կտրիճ, էլմ մի՛ վախենայ. կէրթաու թագաւորուց կուգես քեառսուն սրաբայ չորսական լծկան ձիով, մէկ արաբայ էլ սկուց շինած ակնունք ջապահիրով զարդարուած, հըմէն ձին հազար-ոսկանոց էլնի, քեառսուն ձեռք էլ արփշմէ, զարբաֆէ խալաւ, որ Արապստանայ խալիֆի աղջիկ բերելն գու չէլնի մեզիկ խամար:

իսա թայլիֆը թագաւորուն շատ դժար էրեաց. կկանչի մէկիները ախըր պարտք խարջ կանեն, լաճուուզաձը կկատարեն: Լաճը և ուր ձինը մէկէլ օր կինեն ճամբախ:

Ճատ կէրթան թէ քիչ՝ Աստուած գիտի, ռաստ կուգեան մի ինչ-որ մարդում. կտիսնան որ ախագիյն ջաղցիմ՝ քեար առե մէջ մատին, ըսկուն ինչ ֆոփկ կիուացուցի, չի էլ նեղանայ ինորից: Զարմանյք կմնան, կասեն. Ի՞նչ, աղբէր, էտա ի՞նչ մարիֆաթ ի.

— Մարիֆաթն էն ի, որ թագաւորու լաճ գնացե խորի միջուց, պառաւ գէվուց ուսթէն բերե, մէկ թայիկի մէջ քեշկ ու սարայի կայնըցուցե. ըսկուն մարիֆաթ կէլնի, էսա իմ ոչինչ: Կասի. Էն գեօ ես եմ. արե էլնենք աղբէր: Կէլնեն ու կէրթան:

Քիչմ' էլ առաջ կէրթան. կտիսնան որ մարդմ' էլ, բերան դրե աղբը դէմ, գեացած ջուրը կխմի կխմի, չկշտանայ. կասեն. Էս էլ աղէկ մարիֆաթ ի:

— Մարիֆաթն էն ի, որ թագաւորու լաճը ի՞նչին ի գնացե, սինամախաւաք բերե, սալվի-չինարի ծառն էլ խետն իկե:

Կասի. Էն գեօ ես եմ. տիւ էլ արե, էլնենյք աղբէր. Էն էլ կէլնի: Մի քիչ էլ կէրթան. կտիսնան որ մարդմ' էլ ըսկուն կքէցի կքէցի, որ մէկ աղիւմ կթա՛լի՝ Վարագայ սարը ուր տա՛րերով կսոջի. ինոր ոչ ձի կխասնի ոչ խաւք. Կկանչեն կկանչեն, անջախ անջախ կդադրեցուցեն. կասեն. Աղբէր, արե, տիւ էլ էլի մի խետ աղբէր: Էն էլ կէլնի, կէլնեն չորս ընկեր:

Քիչմ' էլ կէրթան. կտիսնան որ մարդը գեօ ականչ դրե գեյտնի վէրէն, քեաղայք ինչ որ ասեն, խաբար տան՝ էն էնտեղ կլսի: Կասեն. Էսա զըմէնիցն էլ լաւ մարիֆաթ ունի: Ինորն էլ կառնին խետ ուրենց, կէլնեն իինդ աղբէր կամ ընկեր:

Ճատ կէրթան թէ քիչ, չիւմ կխասնեն Արապստանու թագաւորու քեաղայքն: Իրեյք օրուայ ճամբխից զատ, հեռուն ուրենց արաբէքիք կթողնեն, գեյլիմ' մօտ, ուրենյք կմօտկընան քեաղեին, դէրգեահի դռան մօտ:

Սդիւմ թալողն ի, մէկ անգամ որ աղիւմ կթալի՝ կխասնի կկանի վէր թագաւորու էօդի դռան: Բարե-Ծստծու բարին կանի ու կասի. Թագաւոր աղբած կէնայք, եռ աղջիկ պիտի տաս միր թագաւորուն: Արապստանայ թագաւորն ի, կշուարի էսաուկնայ նայկաֆըլ թայլիֆի վէրէն. չգիտե որ ինչ ասի, ինչ պատասխան տայ:

— Ձիկ իրեյք օր ժամանակ տուր, կասի:

— Որ ըսկուն ի՝ մեր մարդերաց ուտեստ պիտի, տասնխինդ խաղար ոչխար, ինոր գեօրայ խաց ու պրինձ, որ ուտեն կըշտանան, աչկեն չիւմ քեռ երեյք օրն թըմըմի, թէ չէ մնալու ճարը չկայ, կուգեան, կլեցվեն քեաղայք, ինոնց չէյք կանայ խաբար խասկըցուցե:

Առջի օր մէյ գան խաց, ջուր, ամէն ինչ կուտան. կտիսնան որ չեն կանայ ինոնց կշտացուցե. վէզիրները մէջքներ կումփաս կանեն, որ գիշըով ասքըներ օղօրկեն, զըմէնին էլ սպանեն, բալքի թէ ըսկուն ազատվեն ինոնցից:

Ականջ արողը կիմնայ ինոնց խորհուրդը, կասի ընկերներաց. ինոնյք էլ կուգեան կիողվեն, մէյ քեանիմ' խատ փէտէ մարդ կշինեն, խալաւ կխագիւցեն, կկայնըցուցեն դաշտի մէջ: Թագաւորու ասքըները կուգեան, կզանեն կզանեն թրով թուփայքով, չիւմ կնեղանան, կաջըգեն, կթողնեն կէրթան. ըսկուն կխաւատան, որ թէ զըմէնին էլ սպանեցին:

Առաւօտուն ջաղացի քեար Փուացուցողը կէլնի, ճոճ-ճոչ պալ-պալ քեարեր կթալի մէկ եան, փոս տեղերը կցուցի, որ էլմ ուրենց չատրներ կզանեն, կնստեն: Ադիւմ թալողն կօղօրկեն մօտ թագաւոր պատասխան բերելու: Թագաւորը կտիսնայ ինոր, սիրտը կվրկվրկայ. կվախենայ:

— Թագաւոր աղբած կէնայ. Էսա ձեր երկիրը ի՞նչ կանդար ճանճ-մժիկ կայ. չթողին որ մենյք դատարենյք:

Թագաւորը մատը կլծի, ինքն ուր կմտմտայ, կասի. Մեր ասքըներաց արածը ոչինչ էլե. Էն օր էլ ինոնց խամար հաց կուտայ: Էն մէկէլ օր կտիսնայ, որ չարայ չէլնէ ինետ իտոնց,

գեաղտիկ ամբ կանի որ բարութով լաղըմեն: Ականջ արողը որ կսի՝ շոտ իմաց կուտայ ընկերներաց. շոտով իրենց չատրները թար թախում կզատացուցեն ուրիշ տեղ. էլմ կբերեն փէտէ յարդերը կկայնցուցեն ուրենց տեղ: Բարութը որ կվոթկայ, կկպնի՝ իտոնց ամենեին վնասմ՝ էլ չէլնե:

Թագաւորը կտիսնայ, որ էլ ճար չէլնե խետ լտոնց, կկաղնայ, կկանչի ուր սարէն, շատ ազաթ-ի քրամ կանի: Մէջ կողմից էլ գեաղտիկ ուր մարդերաց ամբ կանի, որ բաղնիսը էնչամ-էնչամ վառեն, չիւմ ինոր պատի մէջի էրկթներն էլ խալեն, որ էսա մարդերը բաղնիսը մտած ժամանակ, զըմէն էլ խուրթ-խաշ էլնեն, մրկեն, իրիցեն, մէյն էլ չմնայ սադ: Ականջ արողը կսի ինոր չար միտքը. կասի ընկերներաց: Աղբիւր կուլ տուղը, կէրթայ բերան լիք ջուր կանի: Որ կմտնեն բաղնիս ջուրն ըսկուն կփշացուցի, որ տիւ կասես սարի գյոխն նստած, սա՞րին-քեամի ի որ կուգեայ իրիսիդ:

Կլօղկնան, կուգեան մօտ թագաւոր գեանգեատ, կասեն. Էսա ինչ երկիր ի, որ վառելիս չկայ, բաղնիսի մէջ շատ ցուրտ էր: Թագաւորու ճարը կկտրի. էլ փորձանք չմնաց, որ չարեց ինոնց վնասելու, ուզեց ալպա բարեկամութեն հաստատել:

— «Ես կուգեմ քեաւսուն արաբայ չորսական ձիով.

Մէկ ոսկի արաբայ, ոսկուց ու ջավահերից շինած.

Քեաւսուն ձեռք խալաւ զարբաֆ կումաշից,

Որ իմ աղջիկը ուր քեաւսուն խալայեղներով տամ ձե»:

Համան շոտ-բէ-շոտ կխասնեն, էն զատու գեյդից կբերեն իլենց խետ բերած էն զըմէն ապրայնք, թէ ձիերը, թէ ոսկի, արաբէն. իրենք էլ իրենց ընկերներով կզարվեն կզարդարվեն կէրթան թագաւորու դուռ խարսնառէք:

Էն քեաղքիս մարդերը որ կտիսնան ինոնց պատրաստութեն, խոնց գա՞ր ու զարդարայնք՝ կզարմանան, պուկները կիծեն, բերանին բաց կմնայ, կասեն. խալալ էլնի մարդոց արածն: Թագաւորու տղէն կէլնի մօտ էտայ թագաւոր խօշ-բէշ կէլնի. նոր-նոր ճանչվորութեն կուտայ, կպատմի ուր ահվալն: Թա-

գաւորը կասի. — Այ մարդեր, որ տիւք էտասկընայ շատ մարի- թաթի տէր էք, ապա ձեր թագաւորը ինչքան. իմ մէջ խատ աղջիկը թող խալալ էլնի ինոր, տարէյք, բարով վայելի:

Էն մէկէլ օր, տղէն ու աղջիկը մէյտեղ կդնեն ոսկի արա- բի մէջ, քեաւսուն ձեռք զարբաֆ-կումաշ շորերը կխագիւցեն էն քեաւսուն խալայեղներաց, էլմ ուրենց թարթախըմով, ձիով, ձիաւրներով կինեն ճամբախ ու կէրթան:

Ախըր Աստուած խետ տղին եար էր, անփոյծ անվնաս- էն զըմէն նենդութենից եկաւ խաղաւ. Արապստանու թագա- ւորի աղջիկն էլ ըսկուն առքով-փառքով բերեց:

Աղջիկը որ տարան թագաւորու էօդէն՝ նա՝ միւրիւն, չսիրե ինոր որ չսիրե, չի ուզե իրիկ անել թագաւորին որ չի- ուզե: Վաղիրները իշխանները հըմէնք մնացին սև շիվար, չեն- գիտե որ ինչ անեն, ինչպէս համոզեն աղջկան. անդառնախի ի- մնացե վէր ուր կամքին. խաղար մէկ աղաչանք, պաղատանք- փարայ չանե:

Տիւ մի ասել, որ աղջկայ աչք, միտքն ու սիրտը զեխ էտա- տղէնի, էն օրվնից որ ինոր տիսեր էր իր խօր երկիր, Արապստան:

Թագաւորը կտիսնայ որ ճար չէլնե. ինքն էլ կիմնայ աղ- ջկայ միտք, որ զուով բան չէլնե. կկանչի էն զըմէն վաղիր- ները, աղջիկը թասլիմ կանի տղին, ինչպէս ուր խալալ մալ:

— Քնացէյք, որդիք, իրարու սէրն վայելէք, իմ մախից վերջն էլ տիւք կնստէք իմ թախթն, կվէլէյք իմ տէրութեն: Թագաւորը էսա օրհնութնով տղէն ու աղջիկ կմօտեցնի իրար. եօթն օր, գիշեր ու ցերեկ խարսնիս կանեն, մեծ դամով ու խնդումով, կխասնեն իրենց մուրազին:

Լաճը նոր կմտմտայ, որ էն պսպղուն փետուրը ուր գյլիխն բալա-պատուխաս էլաւ, ամմա Աստուածը խէտ ուր եար էր, մթնից լոս խանեց, ազատեց փորձանքից:

Աստծուց-էրկնուց իրեյք խատ ոսկի ինձոր իջաւ. մէկը ասողին, մէկը լսողին, մէկն էլ ականջ արողին:

**Ա Ռ Ա Շ Ն Ե Ր \***

- Ագռաւն արին բազայ, չորթան արին մազայ,
- Խաւքերն մացին շուար շափարզայ:
- Ալինը խեղճ ի մէջ մալին:
- Ախն էլե, մախը վերցուե:
- Ականջս քել ակնջլայ, շուշտակս քել տուն մտնելայ:
- Աղջիկ աղչէմ, լաճը դուշաթէմ. երկու կնիկ մէլ պլիկ:
- Աղջիկը ոսկի ուրուրոցով չդառնայ ուր խօր տուն:
- Աղչէմ տուինք հանինք հէօղ. փարէմ կուտանյք ձէն չկտրե:
- Աղէնը աղնոց, խաթիւնը աղբնոց:
- Աղէկը մեղրիկ չի, աղէկը մեղրամանիկն ի:
- Աղէկութեն աշխարս չի վարուե:
- Աղէկութեն արողի գլուխը ծակ ի:
- Աղէկութեն արա, թա՛լ թող ջուր տանի.
- Չուկը չխմանայ՝ ձկան ստեղծողը կիմանայ:
- Ամառուայ գեռտիկ, ձմեռուայ գեատիկն ի:
- Ամառուայ փուշը, ձմեռուայ նուշը:
- Անձրւ օրը խաւերաց ջուր տուող շատ կինի:
- Անմէր մանկիկ, անկիսուը խարսնիկ:
- Ամէն ամպելուն խօ ձիւնը չի զայ:
- Անապատայ վոկէ պուտուկ,
- Խուփը գլորվե, կնդէ պուտուկ:
- Անչամ անչամ մացինք չմեռանյք,
- Չում գեռերաց գեօնադաբները էկան իտևներս:
- Աշունը շուն ի, գեարուն նխշուն ի.
- Ամառն ամիրայ, ձմեռը բէչարայ,

\* ) Հայկական առածների աւելի ընդարձակն տես „Վանայ Սագի“ Ա. մասում: Այս անգամիս առածներից մի մասը ես ժողովել եմ ձատախ և Մոկս գաւառներում. այդ տեղի հայերը այս բանում խիստ սրամիտ են:

- Ճինի տուն, մէջը ոսկի թախթ, նստի վերայ:
- Աչքերը կոր ի, դիղդիր կուզի.
- Ճակատը տար, մաղչայ կուզի:
- Աչքերը կոր ի, քիչթն ակվակեալ.
- Ինչ որ ասեն՝ վերէն կուզեալ:
- Աչք ունքը պիտի վկայ. քիչթ մուռթ մկան էլ կայ.
- Ճընճղուկ վկայ վկայ, ձիկ իրիկ պիտի մկայ.
- Քիւմ էլ կէնայ՝ մաղդայ չկայ:
- Աստուած որ վէր մարդուս ձախի՝ ինչ կայ տար ձախի:
- Աստուած տայ լա՛քիւն, էն էլ որ տայ ձագուն.
- Չիտայ ձագուն, որ չխտայ լաքիւն:
- Աստուած տայ խօր, որ տայ տղին.
- Չիտայ տղին, որ չխտայ խօր:
- Աստուած չտանի ախն մտայ, ամօթն իրիսանց:
- Աստուած ստեղծե, խունը կխանի:
- Աստուած խալախն կուտայ, խարամին կտանի:
- Ատմի կեղտը փոր չկշտացուցե:
- Արջը խաղով էլաւ, տանձը մտքէն ընցաւ:
- Արարուց, չայկավանուց, վազն արե դիւց.
- Գնա բեր քաղքի միջուց, խամ առնես դիւց:
- Արունը արնով չեն լուայ, արունը ջրով կլուան:
- Աւագ պախսէն չիւմ Ծղեակ \*), քիւլէմ բամբակ գարկի ակր էրթամ ու գեամ գէլ զեօ ակ, գէլ զեօ ակ:
- Բան անելու անկեալ ու լէշ են,
- Խաց ուտելու ուզտ ու գօմէշ են:
- Բան դրին փախան, խաց դրին խասան:
- Բա՛լքին ցաներ են, իսկի չքուսե:
- Բախտը գէշին, դարդ խօրօտին:
- Բանը մա՞ն էն սկ քիւրէն, էրթին խաղին մէրն ու տղէն:
- Բանը վով անի. — ես դու.

\* ) Եղեակ նշ. Եղիական պահք:

Հաց ու կեր վ՞զ ուտի. — էլմ ես դու: իսակ գիշեց  
 — Բանն արա, խպառտացիր: իսրայէլ ու յայտ զբժշկ  
 — Բարեկացող մարդը շոտ կպառվնայ: իսրայէլ ու յայտ  
 — Բարեկամը շատ քարակ կքեամի. չամ կքեամի,  
 չամ կքեամի, համ կմանի:  
 — Բեղն իկե, մուրուսն ի լալու, համ լալու, համ ափսոսալու:  
 — Բլբիւլը ուր դարդը կուլայ. կուկը դառ-դառ կանի:  
 — Բողկ քեանի որ սէլրակ էլնի՝ գլոխ ճոչ կիսկի:  
 — Բուրթը կտրե, ինկե գեառներ:  
 — Բրուտը կժի կանթ դէոր ուզի՝ դա կդնի:  
 — Բօշէն բօշա ի, փաշայ չդառնայ:  
 — Բօշի եղ որ շատ էլնի՝ կէսն էլ իտև կքսի:  
 — Գեառը գեարնան, ձինը ձմռան:  
 — Գեարնան գեառն ի գովական, աշնան հաւը:  
 — Գեղիցն էլնի, տեղից չէլնի:  
 — Գեղի լէշը գեղի շան կիսանի, խալալի:  
 — Գեղի ճոչը որ կամենայ կադ կոր կիսարնանայ:  
 — Գեյդը զյզի, գեավառը մանի, ձէնը էլնի ջուշան խա-  
 թունին:  
 — Գեղի զյոխ որ կիսանես՝ էրէխիցն առ խաբար:  
 — Գեէշու բախտն ի շուկէն. քեանձ մուշկ շուռ կուգեէր,  
 խօրօտի բախտն ի շուկէն. քեանձ փոշի ոտքի տակ էր:  
 — Գյէլը կուզի ամպ օր, գեողը մութ գիշեր:  
 — Գլոխս ալըրոտ տէսար, ասիր՝ ջազացպան ի:  
 — Գյէժ մարդու խացը խէլացու փորն ի:  
 — Գեողը մէկի մեղքը տարաւ, կուրիսողը խարըրին:  
 — Գյէլուց տամազլը չէլնե:  
 — Գյէլու խետ կուտեն, խետ տիրոջ վավէլէր կանեն:  
 — Գյէշը որ փօղան քէյլի՝ աշխարհ կիսնդայ:  
 խօրօտը որ փօղան քէյլի՝ գետին կդնդայ:  
 — Գինի խմողը մէյ դան կսարխօշնայ,

Խմացնողը խազար դան:  
 — Գիտնաւորին գերի, ոչ անգէտին սիրելի:  
 — Գնա բռնի քեյ խնամի, որ պոչը քեռ պոչին նմանի:  
 — Գնաց շուն մուն վա՛տ տարին, մնաց ագիյն փոխընտոտ:  
 — Գրօղ, քեյ չպիտի կաւ կրող:  
 — Գօվացին Լայուսան, էլաւ նստեց պատուխան:  
 — Դանակն ուր կոթը չտաշե:  
 — Դանակը կովու կուշտ կտանեն, չէ թէ կովը դանկլն:  
 — Դամբիւրին տուին, ժամուն զրկին:  
 — Դուռը փակ, էրտիսն կալ. տղի խոգին էմալ էլաւ:  
 — Դուռդ փակ պախի, դրկցիդ գող մի բռնե:  
 — Դուռը տփողի դուռը կտիեն:  
 — Դուշմնիս դռնովն ընցայ ջիկրիս խաթրի խամար:  
 — Դուշմնի խաբրին ականջ չեն կախե:  
 — Դուշմնի արունն ի խալալ, մալն ի խարամ:  
 — Դուշման դռշմնին, ոչ բարեկամին:  
 — Դողրի ասողի գտակը ծակ ի:  
 — Դողրի խօսողին մի ձի որ խօսի փախնի:  
 — Եաղի մուշթարին խացի վախտ կուգեայ:  
 — Եարանը եարանի տունը կաւիրի:  
 — Եավաշ էշը ջուխտ կիսէծնեն:  
 — Եղը բօլութնէ կճաղլի:  
 — Ես քենը գիյտեմ, տիւ իմը, տէրտէրն էրկսին:  
 — Ես քուն եմ, իմ մեղքն արթուն:  
 — Ես ունեմ մէկ կտոր մէզար, ջանից էլեր եմ բէզար:  
 — Ես ունեմ մէկ կտոր թախիս, ձիկ կիսանեն տանսէ տանիս:  
 — Ես փաշա, տիւ բօշայ. բարեկամացանք՝ բարէմբարացանք:  
 — Ես ունեմ եղ ու մեղր, ամմա շան տկի մէջ ի:  
 — Երկինք ամպ, բակը բռնե դուման:  
 Մէկ մարդ ունինք, էն էլ վէր մե էլե բէ գիւման:

— Երկնուց պարտք գետնին չմնայ, գետնինը էրկնուց:  
 — Երուսաղէմն էլ շուն չկայ:  
 — Երուսաղէմ գնացինք, կոր վարդապետի ձեռք պաքինք:  
 — Երազին մէջ սովածը հաց կտիսնայ, ծարաւը ջուր:  
 — Երկաթը տաք-տաք կծեծեն:  
 — Երկար խօսելով փիլաւը չեփե, բրինձ ու եղ պիտի:  
 — Երեխէն մհանայ, մէրը կշտանայ:  
 — Երկու մերկ բաղնիսի մէջ կվէլի:  
 — Երկու ձեռն արժի մէկ գլուխ:  
 — Երկու տիւքեան՝ մէկ բարև:  
 — Երկու քիւրտ՝ մէկ քեարվան, էրկու կնիկ՝ մէկ դիւան:  
 — Եօթն էծու տէր եօթ սիւրու ոչխարի հիւքմ ունի:  
 — Եօթ լաճու տէրը փօղան ի մնացե անտէր:  
 — Եօթ լաճու սեղան նստեն էլ արժէ:  
 — Եօրդանիդ գեօրայ ոտդ պարզի:  
 — Եօթ դարվիշ մէկ կարպետի տակ սթար են.  
 Եօթն ժագաւոր վէր եօթն աշխրի չեն սթրվե:  
 — Զա՞րկինչք լանգեէմ, ինկեանք կաղէմ:  
 — Զա՞րկին լաքիւն, դիպաւ ձագիւն:  
 — Զանահաթի տիրոջ կինը չիւմ կէսօրին անօթի կմնայ:  
 — Զանգակի ձայնը զատանց անուշ կուգեայ:  
 — Զա՞զա՞կ շունը ուր խամար կիսաջի:  
 — Զատ կաց՝ քաղցը կայ. որ մօտացար՝ կդառնանաս:  
 — Զատանց խիրուն, մօտանց սիրուն.  
 Զատանց սիրուն, մօտանց խիրուն:  
 — Զարարի կէսից ետ զառնալն էլ խէր ի:  
 — Զըմէն օր էծու խտկն ի բաց, մէկ օր էլ թող մաքուն էլնի:  
 — Զուռնի ձէնը զատամանց անուշ կուգեայ:  
 — Զուռնաչու կնկան հարցուցին. Գեօնդ գիտես.  
 Ասեց. Ես ո՞րտեղ եմ պառվցի:  
 — Զոռով շուն խանին հէօլ:  
 — Զոռով թազին չէրթայ աւ:

— կլն ձիկ խօջայ կասի, ամմա իմ հալն ձիկ բալլի ի:  
 — կլի աչք մարդուս լուս չի տայ:  
 — կլի բերան՝ ջըվալի բերան:  
 — կծը սատանայ կէլնի, սատանի մազ ունի:  
 — իծն ուր ոտից կկախեն, ուլն ուր ոտից:  
 — իծու մազի մէջ սատանէն ի բոն դրե:  
 — իկան տէսան—խեղճ ֆուկարայ.  
 Զարկին զլուխն արին եարալ,  
 Ասին, ինչ ասին քեօշկ սարայ,  
 Գնա քեռ զլխուն ճար արա:  
 — ին ինչ չի ուզե քրոջ՝ կկամենալ տալոջ:  
 — իշն ինկաւ գեարու խոր, ասայ.  
 Խսա տեղ լաւ ի քեանձ իմ ախոռ:  
 — ին վաղ էր, որ էշը կաղ էր:  
 — էշը որ տեղ որ կապես, արածես՝  
 Եա առոց ի, եա փառոց ի:  
 — իշն ուր թրքից հազ ունի:  
 — իտ քեզ խրատ, էլ չցանես կտաւատ:  
 — էրթանք էն չէն, ուսնենք էն փէշէն:  
 — էրկու մարդուն մէկ բարե, էրկու խնամուն նոր արե:  
 — էրկու աչքը մէկ գրողի բան կանի:  
 — էրկու քան տաս տարեկան, խազար զոռով,  
 Թուղթ-թանաքով տարան իրկան:  
 — էրկէն թելիկ, կարճ ասրդիկ, հէր աղքըտիկ:  
 — էրկէն հովիւ, կարճ գեաբանակ,  
 Գեօ հասեր ենք զառն ժամանակ:  
 — Թազայ դֆայ, նոր էլեր ի խալիֆայ:  
 — Թազայ խացը թազայ խացի փոխան:  
 — Կով ունես՝ քեյ տա՛լ կօզօրկեմ,  
 Թէ չունես՝ ոչ տիւ գոհ, ոչ ես էլ գանգատ:  
 — Թանկ ծախողը, էժան փնտողը գլոխ բաց կմնայ:

— Թանէ պաս չի, զըմէն մարդու բանը չի:  
 — Թանի լոկը էրկնուց կապոտ:  
 — Թաց աղունը վէր աւեր ջաղցին:  
 — Թաց մային օֆալ չկալ:  
 — Թէ փռթաւ մէյ դան, իշուցն տակ ինկաւ՝  
   Եօթն տարի բոլոր պախսն կէրաւ:  
 — Թէ կուզես արա բարին. կունենաս բարուց բարին.

Արա բարին, թող չարին:  
 — Թէ բարակ ի՝ ամմա բարունակ ի:  
 — Թէ կուզ ի՝ ամմա կուզգ ի:  
 — Թող գեղղը տանի ուր եէթիմներաց,  
   Մեր թէտպիր կանի էրկնուց Աստուած:  
 — Թոնդ շոտով գեէր հողն վէրէս,  
   Որ կոր-բունը չծրտէր վէրէս:  
 — Թրի կտրածը կսաղանայ, լեղուին չտաղանայ:

— Իմաստունի հետ քար կրի, ոչ լիմարին կեր խմի:  
 — Իմաստուն լիմաստից պիտէլ:  
 — Իմ լիշացող վէր ճաշին, իմ ճօշացող վէր նաշին:  
 — Ինատ արողը սարն վեր, սև անթրոց տակն վեր:  
 — Ինչ որ ցանես՝ էն կքաղես:  
 — Ինչ որ ասես՝ էն կլսես:  
 — Ինչ տաս հոգուղ՝ էն կէրթայ արևոտ:  
 — Ինչ որ դառն դատես՝ էն քաղցը կուտես:  
 — Ինչքան որ ուղտն ինկնի՝ կաշինը իշում՝ բեռի:  
 — Ինչ չարակամին՝ էն թող լինի բարեկամին:  
 — Ինչ խլիկ՝ ինչ խլվլիկ, ինչ խոնդադ՝ ինչ ուր ծաղիկ,  
   ինչ սատանէն՝ ինչ ուր կնիկ:  
 — Ինչ տեղ հաց՝ էնտեղ կաց.  
   ինչ տեղ գինի՝ էնտեղ քընի:  
 — Ինչ տեղ ճաշ՝ բօշէն խորբաշ:  
 — Ինչ բարկ կանի, բարեկամ չանե:

— Իշին ասին, քեռ մարիփամթ. պոչը վերուց թրքեց:  
 — Իր ոտուն էկած խուրը կազր չունի:  
 — Իրիկ կնիկ կոռուցան. տխմար գիտցաւ բաժուցան:  
 — Իտին կնիկը կարկտան, իտին իրիկ մտախան:  
 — Իտին բանիկ հողեհանիկ:  
 — Իրիշկեն գեղի լէնքը, ոէսի շէնք,  
   Գեղի լէնք լաւ ի, քեանց ոէսի շէնք:

— Լակոտի միս ի, որ ըսկուն կանեն հետ.  
 Ապա կաքաւու էլնի, ինչըլս կանեն:  
 — Լաձն առաւոտ, մէրն անաւոտ:  
 — Լա՛ լացողն, ինդայ խնդացող:  
 — Լաւ շունը տան պահապանն ի:  
 — Լաւ շունը գեղացու արբնելն ի:  
 — Լաւ եղը լրծա՞ն տակ բալու կանի:  
 — Լաւ լրդուորը վերջ ջրի փույն ի:  
 — Լաւին լաւը, վատին վատը:  
 — Լէշը որտեղ էլնի՝ խաւքելը դան կլթառեն:  
 — Լէնին ճար կայ, նեղին ճար չկայ:  
 — Լիք թուանքից մէկն ի վախցող, դադարկից էրկուսն:  
 — Լոս կուսաւորչին դիպաւ անհաւատին:  
 — Լաւ ճետն ի ձուին, լաւ մանուկն օրօրցին:  
 — Լաւ գառը վէր քօղին ուր նշանց կուտայ:  
 — Լաւ մանած էլնէր՝ ուր խօր պատից կախած կէլնէր:  
 — Լաւին վատին լո-լո, ձիկ էլ լո-լո:  
 — Խաղար տարուայ զլոկ՝ էշն էկաւ փալան վէրէն:  
 — Խաջաթն օրըմ լուաց, փոխը դէորըմ:  
 — Խարս վէր ձիուն վիր կսմաթ:  
 — Խաչիկ, խաց կուտես.— չի՞ր չեմ ուտե, ճոչ տղայ եմ:  
   խաչիկ, էլ բան կանես.— Ի՞նչին անեմ, կոտոր տղայ եմ:  
 — Խաւը թռաւ մսուր, խարս քաշեց կիսուր:

— Խարսի ոտով փէսին աղէկութեն կանեն:  
 — Խարսնքեոր խէծուցին էշ, մկներ լցին փէշ,  
 Օղօրկեցին խնամուն փէշքէշ:  
 — Խարսմ' ենք բերե—իրեւք չարէւք,  
 Զեռ չի խասնե մառնի դարէւք.  
 Ափսոս վէրէն խոջած փարէք:  
 — Խորթը կխանի մարդու մորթը:  
 — Խորթ մօր թխած բաղարջ շօր կէլնի:  
 — Խունկ վեր կրակին տէրը կճանչնայ:  
 — Խուր մը էկաւ շատ խնդացինք,  
 Պարկը բացինք՝ ետ մնացինք:  
 — Խստի ցաւն խոստայ. թոյլ դրի՝ մոռնայ:  
 — Խօջին տիսնան՝ շնորհաւոր կանեն,  
 Աղքըտին տիսնան՝ զարմանան:  
 — Խօջին տէսան, աղքատ մոռցան:  
 — Խօջի խիւանդը աղքըտի ժիրն ի:  
 — Խօշ խաբարը խէլացուն մէկ, ծռուն քեառսունըէկ:  
 — Խօսքը մեծին, ջուրը պղտկին:  
 — Խօրօտին խունկ պիտէր խնկելու.  
 Գէշին՝ փիթրի ծուխ ծխելու:  
 — Խօրօտն խրեղէն ծովու միջին:  
 — Ծակ ուլնիկ գետին չմնայ:  
 — Ծակ մարդրիտն ի ձկան փորիկ:  
 — Ծառը որ ինկնի՝ ճողերը կկայնեն:  
 — Ծուռը ծռաւ, պոչը թռաւ:  
 — Ծուռը ծանրդացաւ, գեղ զատացաւ:  
 — Ծովը կէրթայ, ծարաւ կդառնայ:  
 — Ծուռ խաց խէլացու փորն ի:  
 — Ծուռ զատած խէլացու կերած:  
 — Ծուռ տունը բառնան ըղտուն:

— Ծըվստան \*) քեանձ Ոստան. Ոստանը բարձր ի քեանձ  
 Ծըվստան:  
 — Ծրտուտ լակաշ, երես պակաս:  
 — Կաղարն արին գեղին զաբութ.  
 Վէրէն քաշին կարմիր կաբուդ:  
 — Կամ անելուց կոժ ի բուսե,  
 Դարդ անելուց շկոր:  
 — Կամնից կալից ինչ տեսանք, խզուզը քեւ բարի:  
 — Կաբահաթ սամոյը քիւցրք էլնի, մարդ վէրէն չառնե:  
 — Կատուի մոռթը մօին որ չխասաւ,  
 Ասեց, փու, էսօր պախս ի:  
 — Կատուին ասին. Խէրդ ի լաւ թէ մէրդ.  
 Ասեց. նա՛ օ, նա՛ օ:  
 — Կատուի խուռալն ի մկան խոգեհանգիստ:  
 — Կատուին ասին. Քեռ աղիքը դեղ ի.  
 Աղփեց, խողն խտուր վերէն:  
 — Կարսայ խարս, լաչիկն թալեր ի թարս.  
 Զատոնց նորախարս, մօտանց սիվոկա-վարս:  
 — Կնկան սուգն ի սեղան, մէկէլ կուգեաւ փողան:  
 — Կնիկը կիսրար, ոչ մալ կիսրար:  
 — Կնիկը թանլ ի ուր գիխաւորով,  
 Տղէնը՝ ուր խէր ու մէրով:  
 — Կոր, տիւ դան կաց. սաղն էլաւ թէ չէ՝ տիւ մերն ես:  
 — Կուզը զըմէն օր սովլաւ թուզ:  
 — Կուժը ջըլ ճամբիխն կկոտրի:  
 — Կուշտն ինչ գիտի անօթու հալն:  
 — Կուշտը սովին-սովածին մանդք կբրդի:

\*) Ծըվստան գիւղ, արուարձան Վանաց հարաւակողմ, մրգաբեր այգեստաններով առատ: 1896 յունիսի հանրացին կոտորածին բնիկ տեղացի քեստաններով առատ: Կայսերին և կայսերուն կայսերին, հայերին, արին հաստան, մայրաքաղաք Արծրունեանց, աւելի առատ և բնդարձակ է ալգիներով, բայց բնակիչք բոլոր քանատիկ քրդեր են:

— Կուշը կուշ էլնի, թող գինը խազարըմէկ էլնի:  
 — Կոգեայ սարի խովին, չի գայ քարի տկին:  
 — Կրիբէն շինեց մրիբէն, բէդէլրաթ քաշեց խողն վէրէն:  
 — Կռկան տիսած սերմը չըուսնէ:  
 — Կռկան ձէնն ի ծմէն, ձնձղկան հոգուս վերէն:  
 — Կռկան ձէնը որ Աստուած լսէր՝ մայու մայու  
 Վարդավառին ձիւն կղնէր: Ենց քայծւն նոյն  
 Հալալ մալին մարդ չդիպնէ:  
 — Հալալ ոչխարին գէլլ չտանէ:  
 — Հալալին Աստուած կուտայ, հարամին սատանէն:  
 — Հաղն հաղին տուր, աւելինը աղքատին:  
 — Հա՛ղին հա՛ղ, նհաղին դա՛ղ:  
 — Հայու յետին խելքն ի գովական:  
 — Հանաք կէլնի զանանք,  
 — Հանաք էլնի կաղանք:  
 — Հա՛տ ունի բայլայ կոտի:  
 — Հըմէն խաւուն խորոված. կոր անծրդան էլ քըջըջած:  
 — Հըմէն կնիկ որ կնիկ էլնի ցախաւել խաթուն կէլնի:  
 — Հըմէն բանին բանգէտ ի, տախտն աւելուն անգէտ ի:  
 — Հըմէն գեահ գեյտ կուգեայ կոն կբերի.  
 Մամէն կայնի լաճ կբերի:  
 — Հիւանդ ի, ամմա տաշտաքանդ ի:

— Զեռն զձեռ կլուայ, էրկու ձեռն երես:  
 — Զեռնով կուտան, ոտուլ չեն կանայ ժողվե:  
 — Զեռնով դատելն լաւ քեանձ խամբրով:  
 — Զեռացն դատքն Երուսաղէմ:  
 — Զի մը ծախողը ձուիմ՝ տէր չէլնե:  
 — Զիւնը տիւ բքի, խնամի տեղդ կըքի:  
 — Զիւնը հա ձմատեղ կնստի:  
 — Զուի գողը ձիու գող կդառնայ:

— Զուագեղի խաթրին թավի կոթը կլիզեն:  
 — Զուկը գլխից կխոտի:  
 — Զիուց իջաւ, նստեց էշ:  
 — Զու ածան հաւը կրկչան կէլնի:  
 — Զուկն ի ծովուն, թաֆայ պանիր խետ հովրվուն:  
 — Ճարտար մուկը ջուխտ ոտով կինի ակնատ:  
 — Ճանճը բանըմ չի, ամանը կաղտոտի:  
 — Ճանճի նստած տեղ աղուեստ կէլնի:  
 — Ճեռչ խարսին խարսնքոր, պղտիկ խարսին էլ խարսնքոր:  
 — Ճեռչ եզան բօ արին:  
 — Ճնձղկան անէծքը հետ մարդու չէլնե:  
 — Ճուլուլիկ, ես քեյ հաւան, տիւ ձիկ չհաւան:  
 — Ճուճուն ածեց, պուպուն տարաւ:  
 — Ճրագն ուր տակ լոս չիտայ:  
 — Ճրագով փնտուածը արևով գտան:  
 — Մալ կայ, կէլնի հոգին կիսկի կա՛դա՛լ.  
 Մալ կայ որ կէլնի հոգուն ֆայտայ:  
 — Մալ ծախողը մէկ տարի կզանկըննայ:  
 Մալ առնողը մէկ տարի կաղքըտանայ:  
 — Մանգաղը սարակի ձեռնէն չեն խլե:  
 — Մահը մօտ, ինսան անաւոտ:  
 — Մա ձուագող, մա ձիագող:  
 — Մարդ մուրուտով էլնի, գաթէն խորիսով:  
 — Մարդն անալիւր խաղք էր, զուով կալըրոտեն:  
 — Մարդը մարդու որ գիւր չիգայ գլուխն իշու կերևայ:  
 — Մարդուն մէկը գնաց, թագաւորու սարէն տէսաւ,  
 իկաւ ուր ալաշուղ վառեց:  
 — Մեղաւորաց տանջի արդարն:  
 — Մեղաւոր մէր չբերե, դրկցոց մօտէն ի ուսե:  
 — Մեծ մեծ տներ, մէջը կապեր են անօթի շներ:

— Մէկը կայ՝ խա'զար կաժի. խա'զար կայ՝ մէկ չարժի:  
 — Մէկը պտի, էրկու կթի:  
 — Մէկ աչքը հերիք ի. ջուխտ աչքը շօլաթի համար ի:  
 — Մէկը խազարի խաց կկտրի:  
 — Մէկը խազարի անունն ի աւիրե:  
 — Մեղքը լարվ, պարտքը տալով:  
 — Մեռաւ վախով, ապրաւ ախով:  
 — Մէկ մուկը եօթն կարաս ի մուռտըլե:  
 — Մէջ Վարագ, մէջ Արարք՝ մենք մնացինք անկարագ:  
 — Մէրը մաժ ի տուե, Աստուած բաժ ի տուե:  
 — Մի ծաղկով գարունք չէլնե:  
 — Մինչ թուրն էկաւ լեզուն գլուխ կտրեց:  
 — Միսն անուսկու ըլինե:  
 — Մկան աչքն ի դեխ կատուն, կատուխն դեխ միս:  
 — Մկան խամար կատուն էլ գազան ի:  
 — Մկան մէզը վէր ծովուն կէրեալ:  
 — Մոն գրկեց մարդս մալի տէր կանի:  
 — Մոն մարդուն չիւմ խրիշտակներն էլ քարով կզանեն:  
 — Մոն մալ պահողը գողին ընկեր ի:  
 — Մունպարաք կուտիկն իշուն:  
 — Մութը մթնաւ, ախը պնդաւ:  
 — Մտի տուն՝ իրիշկի դեխ ոուն.  
 Թէ եռ կայ սուն՝ ծուռ կուտայ տուն:  
 — Մօրէ խօրօտ-մօրօտ էր, էլաւ խրեղէն:  
 — Մօղովիկ ծանրացուցին, փորն իլին թանխուս արին:  
  
 — Նա՛ տիւ ինոր ասա կաղ, նա՛ էն քեյ կոր:  
 — Նա՛ տիւ ինոր ասա ալօ, նա՛ էն քեյ ասի բլօ:  
 — Նա՛ գառնուտ խոտ կէրանք, նա՛ կավուտ խոտ:  
 — Նա՛ ինոր մեղը պիտէր, նա՛ ինոր դըզ:  
 — Նման նմանին, սատանէն ուր խնամին:  
 — Կուկինը տաս գաղ չխանե:

— Կստեմ գոգդ, վետեմ մուրուքդ:  
 — Կստեր էք պաղ տնակին, կիրիշկէք բուքն ու քամին:  
 — Կստի ցածր որ վերանաս, մի նստե բարձր որ ցածրանաս:  
 — Կստկանը խալի կդործի:  
  
 — Ճան ոտը Մշու դաշտ:  
 — Ճան անունը Ճահ-դիւլ դրին:  
 — Ճան տիկ եղ ու մեղը են լցե:  
 — Ճամից իջայ խամ, խամը չծածկեց ծամ:  
 — Ճատ վէր շատին, իշու գլուխ տան աղքատին:  
 — Ճատադարտ՝ շատազրոց:  
 — Ճատ խէլացին ծուռն սղբէր ի:  
 — Ճատ որ անօթանան՝ տաշտին վնաս ի:  
 — Ճատ որ կեղտոտեն՝ սապոնին վնաս ի:  
 — Ճատադարտ՝ քչկապաշար:  
 — Ճէն տան խարս շորվի կարօտ:  
 — Ճէրամն ինկե շան բերան:  
 — Ճինակնուն տար, քաղքցուն բեր:  
 — Ճինակնուն բարև տուին, էլ չպրծան ձեռից:  
 — Ճինականը շէնի վէրէն, խոտ հարթ՝ տանսի վէրէն:  
 — Ճինական սոլ. շինական չարուխ:  
 — Ճինական շակալ բերան, մուրուս բռնեն թէ բերան.  
 Ուր տեղն ի վէր թօնրի ական:  
 — Ճպլխանը մեր պատուխան:  
 — Ճունը շան միս չծամե:  
 — Ճունը շուն ի. բալայք որն ի, նխշուն որն ի:  
 — Ճունը որ քոնթայ՝ քօփայկ Բաղտատու կուգեալ:  
 — Ճունը վէր տիրոջ դռան կտրիճ կէլնի:  
 — Ճունը կասպընոց մուտ-ել անելով կասապ չէլնի:  
 — Ճունը շինակնու պահապան ընկերն ի:  
 — Ճունը ծով լակելով ծովը մուռտալ չէլնի:  
  
 — Ոչ քար վէր քարին, ոչ աղամորդին վէր ուր կրարին:

— Ասկին պղտիկ ի, ապա անդին դնոց ի:  
 — Որ տոխ չես կիրե, ինչը կըկծվըծաս:  
 — Ուկէ դուռը փէտէ դռան միշտ հաւջալ ի:  
 — Որտեղ միս մսլաղ՝ կատուն դա՞ն սըսլախ:  
 — Որտեղ նստես՝ էնտեղ դայիմ կաց:  
 — Ուզողի մէկ իրեսն ի սև, չտուողին էրկուսն:  
 — Ուսթայիփախուկ—լախ ձմերուկ,  
  Աղիկներաց պարի տուտուկ:  
 — Ուզտ բարակցաւ, մտաւ ազգան ծակ,  
  ծակը փլաւ, մնաց տակ:  
 — Ուց ուլը խուրուղուի համար:  
 — Ուռաւ կլացաւ, մեռաւ քաղցրացաւ:  
 — Ուռի ուռի ճպոտ, էսա օրը քեռ օրն ի:  
 — Ուտին բարդին ամեն մէկը խետ ուր մաղտին:  
 — Ուտող չգիտի, պրոտողը գիտի:  
 — Ուժ արողը քէֆ չանե:  
  
 — Զալ օձը տիսնողը չալ կատուից կվախնայ:  
 — Զաչալն որ դեղ արօղ էնի՝ դաշն ուր դլխուն կանի:  
 — Զաչալն էլաւ զաբութ, վէրէն քաշեց կաբութ:  
 — Զարոց ճարտար, բարոց տիսմար:  
 — Զարին բարինը չար կերենայ:  
 — Զիւմ տանանայ, չիւմ տինինի՝ օրը կմթնի:  
 — Զիւմ դանակ խասնի՝ եզը կխատնի:  
 — Զիւմ աղը բերեն՝ մատաղ կհանգի:  
 — Զիմն էլե, չարը փրկե:  
 — Զտեսը տես ի տիսե, աչքերը լոս ի տեսե:  
 — Զորս կարն ի կարին, բողբատն ի խծպելու.  
  Գնա տիւս էլի, արե հազի:  
 — Զիւմ չքանդի՝ չշինվե:  
 — Զվերուցին տասն մատով, չկորսուե տասն տարով:  
 — Պասն իփողին դիւր կուգեայ,

Աղջիկ լաճուն խուր կուգեայ:  
 — Պաղած օձը դաշն ուր տաքցըողին կկծի:  
 — Պապիկն ի կիրե, թոռան ատամն ի առե:  
 — Պառաւմ՝ էկաւ քէթրօշ դնդօշ, խարամ պոկօշ,  
  կուզ-պարզ պէրանսվեր:  
 — Պարան պարան պնտկի շարան,  
  գողցան տարան տանիս կէրան:  
 — Պարոնի զլխին խող չեն ցանե:  
 — Պարոն պարոն, էշն էլ պարոն:  
 — Պզտիկ տղի մէկ ոտն խաղն ի, մէկը զերեզման:  
 — Պզտիկ տղի ձեռաց մէջ օձը խատեր ի:  
 — Պզտիկ ի, բայց ճզտիկ ի:  
 — Պիտէր պիտվէր պիտվանակէր, փշրկին ոսկէ գղէլ:  
 — Պիտի չըգար սեն ի վերէս.  
  Որ էկաւ սեն վերէս,  
  Թող խաւքեր ծրտեն վերէս:  
 — Պուտը խետ պտին պտածէն կուտայ:  
 — Պրտուձըմ պինտ թան. չեմ իտա կովլմ կլթան:  
  
 — Ճան ասա՞ ջան լսի. չու ասես՝ չու կլսես:  
 — Ճանը քաղցը ի քանձ ջանըման:  
 — Ճան ի, իո պատինջան չի:  
 — Ճահնամ էն բէրը, էն բէրի տէրն,  
  իրթան խաղան մէրն ու տղէն.  
  Խունդադ որ կծաղկի,  
  Բաբօնը մամուն խօ կծածկի:  
 — Ճահնամ ջիներաց ջինն ի բերե:  
 — Ճինը ջին ի, ճոչ որն ի, պզտիկ որն ի:  
 — Ճինը բերող ջինդարն ի:  
 — Ճիգար կայ հրէ, ջիգար կայ ջրէ,  
  Ճիգար կայ խիստ պարկիկ կրակէ:  
 — Ճիկը մումուռ չուսող չի ջինաւորե:

— Ճուրը ջրին ընկեր, գան դարի վեր:  
 — Ճրի ձէն զատամանց շատ անուշ կուգայ:  
 — Ճուր ուր ճամբախ կշինի:  
 — Ճուրն ուր գնացած ճարը գիտի:  
  
 — Սանդ տփողին դընդ ասող:  
 — Սանդ ջուր լեցողի երեսն վեր:  
 — Սարեկ չուտե—սև ի.  
     Կուիկ չուտե—կտուցն աղփոտ ի:  
 — Ահաթ կուրուն, սաղը կուրու ինչ կսաղի:  
 — Սապոն սիվու, խրատը խւռուն ինչ օգուտ:  
 — Միվտակ շունը բամբակ ծախողին զարար ի:  
 — Սուտ ասողի երեսն ի սև, հոգին ի դև:  
 — Սօլը ոտ, մխմէլն ի կոտոշ:  
 — Սօլ կարողի սօլը խին կէլնի:  
 — Սօլկարին լակաշ պիտէր, չարչուն ծամոն:  
 — Սօն վավէլէր էլ խէր չունի:  
 — Սև ի, սերակեր ի, քեանձ զըմէն ծաղկունք վեր ի:  
  
 — Վարձք Վարագ սիխտէր, խաչօրհնէք Արարք:  
 — Վերն իրիշկեմ ունքս ի, ցածր իրիշկեմ բեղերս ի:  
 — Վերն իրիշկեմ Աստուածն ի, ցածր՝ ամիրէն:  
 — Վեր թքեմ երեսս ի, ցածր թքեմ մուրուս ի:  
 — Վերին թաղի անթրոց, ցածրի թաղի թնթոց:  
 — Վերին թաղին, ցածրի թաղին,  
     Աչքեր խանին տէր բաբալին:  
 — Վեր ուսին լոս ի կաթե:  
     Վով ի տեսե.—Գլուիր:  
 — Վով քեյ աբով Աստուածն աբով:  
 — Վով խացըմ չխտայ շան մաքիմ կուտայ գէլլուն:  
 — Վով էկաւ կուզիկ-մուզիկ, որ ես էլայ խապլապուզիկ:  
  
 — Տախտէս էրթամ, բախտէս դեմը էրթամ:

— Տայմայ զեռ ի, շէն տան տէր ի:  
 — Տակէն խանդակ, վերէն մանդակ:  
 — Տանձը ձիկ, խնձորը ձիկ, սերկեվիլ սիրտս կուզի:  
 — Տարեկան խաց էլնի, թող մեր առտէն էլնի.  
     Ցորեն խաց չէլնի, էլոց գռնիցն էլնի:  
 — Տաշած քարը գետին չմնալ:  
 — Տէլ չէր էլե թօրվան դըմփոյ, էլաւ տաշտի քյոթոց:  
 — Տէողին տէր ես, տաքցոցին տէր չժօս:  
 — Տէլ չէր իկե, ուրուրոց ձռնէնը կախ:  
 — Տէր Սահակու ջաղացն եմ ես,  
     Թեփ խետ ալրին կուտամ ես.  
     Բանիդ կուզայ՝ էս եմ. բանիդ չի գայ:  
     Աղունը հետ տիրոջ կէս եմ:  
 — Տիրովը տէրն ի կերե, անտէրը գէլլ:  
 — Տիրոջ ձեռ տուե, տէրտրոջ ոչ:  
 — Տէր կուտայ, դալալ չխտայ:  
 — Տուն թող կնիկ էլնի, թող գեշշ էլնի:  
 — Տուն թող տավար էլնի, թող էշ էլնի:  
 — Տունը տեղ բարձին մկան, ապաւէն վէր մէկ ձկան:  
 — Տունը աւիրողին տուն չմնալ:  
 — Տունիդ մէջ տաս փարանոց քօլզմ' ունես,  
     Տանդ ահվալից խաբար չունես:  
 — Տնտես, խաւասար տես, խաչի լոս տես:  
 — Տնքոց կայ ծերոց, տնքոց կայ տղոց.  
     Թող գայ ծերոց, ոչ թէ տղոց:  
 — Տփոցը դրախտէն ի իկե:  
 — Տփոցը իշին ու գօմշին են ասե:  
  
 — Տաւը խանին ի, չէ թէ սար քարին:  
 — Տռան կովը նախրի անուն կաւիրի:  
 — Տռան կովը նախրին առաջնորդ:  
 — Փարէն մարդու խելք կբերի,

Խալաւ մարդու քէլք կըերի:  
 —Փախս տուողը փորձանքի տէրն ի:  
 —Փիր չունեցող հաց չունի:  
 —Փիս մարդը զատկին էլ փիս կէլնի:  
 —Փշուկ կերայ, թռաւ կմունքս, ես գիտցայ պաս էր.  
 Խիեաք ձիկ պաքեց, ես գիտցայ մարդ էր:  
 —Փորձանքից պլծանք, փոսն ինկանք:  
 —Փորձած սատանէն լաւ ի, քանձ անփորձ խրիշտակ:  
 —Փորըմ խաց տուին, խորըմ խաց:  
 —Փորը խոր ի, քանի լցեն կտանի:  
 —Քեյոին խետ եռին:  
 —Քեամին իզարկ վարդապետի կնգուխ տարաւ.  
 Ասաց. Ի՞նչ աղէկ որ քեղնից էլաւ:  
 —Քաղքցի կանչի կարօտ, խազար ժօրով էլաւ արօտ:  
 —Քեռնժիկ էր խաթուն, կլաւն էր կատուն:  
 —Քիչ էր ջաղաց՝ քիչմ' էլ էկան ջրտունը վեր:  
 —Քնած ու մեռած մէկ ի:  
 —Քութոթ լակաշ, իրեսն էր պակաս:  
 —Քօսոտ էծը աղբը ի ակնից ջուր կխմի:  
 —Քօնն ինչ կուզի, —էրկու աչքին մէկ լուս:  
 —Օձու կծածը կսաղանայ, լեզուի կծածը ոչ:  
 —Օձուն դեղ տուող կանաչ մատոտն է:  
 —Օձուն վէր ջրին խարամ չեն անե:  
 —Օձն ուր շապիկն կփոխի, բնութիւն ոչ:  
 —Օձը հըմէն տեղ ծուռ-մուռ կէրթալ,  
 Ուր բոն դողբի կմտնի:  
 —Օձը դաղցից կփախնի, դաղցը կբուսնի մօտ բոն:  
 —Օրոմի վարդապետին, որ ջուր խոտ սալկաւագին:  
 —Օրը կէրթայ, օրուայ շառը չէրթայ:  
 —Օրը կէսօր ի, տանտկին շատ խօսող ի:

## ՀԱՆԵԼՈՒԿԱՆԵՐ

Անկենդան կենդանատուն,

Իկե մե խուր առաւօտուն.

Որ ուզեցի սիրով էն խուր

Տան չափով մնաց կանգուն:

(Արեգակը եւ իւր ծառագայթները):

Մի բանրմ կայ, եօթ սար կէլնի, ծէրը կերեայ.

Աշխարհ վէրէն ուրախ կէնայ: (Նոյն):

Աշխարհն ով ի, բոլորը ծով ի.

Էն բնչ ի, որ ինքը եղ ի, բերածը կով ի:  
(Աղամ, Եւայ):

Պօլատ կդէլը կպեր ի պատ:

(Գլուխ եւ ականջներ):

Մի գունդրմ կայ, եօթ ծակէն ի: (Գլուխ):

Կուզ կարապետ կիջնի խոր գետ.

Կերթայ կուզայ, ջուր կըի բերդ:

(Թղայ, կերակուր, բերան):

Մի բանրմ կայ, փորէն կուտի, քամկէն կուտայ  
տիւս: (Քրաղաց եւ երկանք):

Սնդկէ սնդմնդկէ, եղէն վիշտ է,

Հասայ շուկէն դաստայ բուկ է:

(Փայտէ շերեփ եւ գղալներ):

Հստ ումանց սանդր):

Հողէ տուն, մաէ դուռ, փէտէ էրդսկալ:

(Գերեզման, մարմին, դագաղ):

Աւը սկուաւ, արապ ճկուաւ: (Թոնիր, խաչեր-  
կաթ, ծուիս):

Աստուած տիւ փրկես փորձանաց:  
 Վէր արծուն թուրըմ կապած.  
 Թուրը թուաւ, թամբը մնաց:  
     (Հոգի եւ մարմին):  
 Տախտակ տալ տակ.  
 Զուրը շաղիկ ծալ-ծակ.  
 Էրկնակտուց լայլակ: (Նաւ):  
 Սև սրլայ, սիվտակ սրլայ,  
 Խաթուն ինե (մէջ) կոլլայ: (Աչքեր):  
 Էլին էլին, էլ վէր էլին,  
 Թագաւոր վէր սէլին.  
 Զըրինդով զարկին, բըրինդար արին,  
 Արունը թաղէ թաղ ցըռւեցին,  
     Ոսկորը մէջ տան խորեցին:  
     (Խնոցի, թան, կարագ):  
 Սև շունը վէր տարին պառկեր ի: (Ստունը):  
 Մէկ մատնէն, խազար եղնդէն: (Գագ—իշաւոր  
     վառելիք):  
 Անհոգի էշը անհող տանսի վէրէն:  
     (Նաւի առազատը):  
 Օին օիին իտե խլօիին: (Մարդու ստունը):  
 Խաթիւն նստե խաթունակ.  
 Մամերն բոլորն ի Ֆըրվտանակ ✪):  
 Քանձ ամեն ինչ պատիւ ունի,  
 Կաթը կուտայ ամենից թանկ: (Խաղողի որթ):  
 Աջմու խատ-խատ, շապիկ կաթ-կաթ: (Փշատ):  
 Ջրէ տուն, փէտէ բալնիք.  
 Որսն ընցաւ, որսորդը խեղդուաւ: (Աւազան,  
     մկրտութիւն, երեխան, քահանան):

Ֆըրվտան արդէն չիշուած գիւղն է, որոյ դիրքը և պտղաբերութիւն  
 անուանի են բոլոր գիւղօրէից մէջ. դա մի երկրորդ Արտամէտ է դարձել իւր  
 ամենառաջ և այլ պտուղներովն:

Երկու տուն, մէկ սիւն: (Քիթ):  
 Ական ական չէ պատուական.  
 Թարգու կարած չէ մկրտած: (Յձի շապիկ,  
     կամ մեռելի պատանք):  
 Կէրթայ կէրթայ—ոտ չկայ.  
 Կնստի կնստի—տեղ չկայ: (Արեւ եւ ստունը):  
 Չորս ոտ վէր հողին, էրկուը վէր կողին:  
     (Ձի եւ հեծնողը):  
 Վերին տախտակ տըխկ-տըխկ,  
 Ցածրի տախտակ վըխկ-վըխկ,  
 Մէջն ի տուտուղ տուտուտուղ,  
 Տիկն ի բերան վըզ-վըզ: (Դարբնի փուքս,  
     կամ ջրաղաց):  
 Մե տունըմ կայ, տուն ի,  
 Տան մէջը ծով ի.  
 Ծովի մէջ օձըմ կայ,  
 Օձու բերան կարմիր ակունք ի: (Կանթեղ):  
 Խօզօղբէր Գաւիթ, ծնե չճնե, քաղաք չմտե:  
     (Կանանց ծծի կաթն):  
 Կէրթայ կէրթայ—ճամբախ չկայ.  
 Ճամբախ կէրթայ—թօղ չկայ: (Արեգակ):  
 Մե տունըմ կայ, տուն ի,  
 Տան մէջ խսիր ի:  
 Խսրի տկից նալէն գնաց: (Արեգակ եւ  
     լուսին):  
 Ին ինչ ի որ ցերեկ կքնի, գեշերը կգարթնի:  
     (Աստղ):  
 Տանսից թալեն չի ջարդուի.  
 Ջրի մէջ թալեն կլղկվի: (Թուղթ):  
 Մանը մանը քերական աշխարքի վրան,  
 Լստուց չիւմ Վանայ, Վանայ չիւմ չնդստան:  
     (Աստղեր):

Երկու աղբէրը կվազեն, հինգը դէմը կկալնեն:  
(Քիթ, խլինք, մատոներ):

Երկու ձեռանէ, վեց մատանէ: (Կշիռ եւ իւր  
ծողերն):

Զինը ծնի, քուռիկ կըերի.

Որ քուռիկը ծնի՝ քուռիկ կըերի: (Կորիզ):

Փուտ փէտ փորեցին, ասլան մէջ խորեցին:  
(Սրի պատեան):

Նմանը նման ի կնգուխի,

Ասեղը միջին ձէր սանջղի,

Զէնը քաղցր ի, արքայութեն կտանի.

Հոգի չունի, բա՞ ինչ ի: (Զանգակ):

Բարակ բարակ անթրոց, մէջն իլին ծուխ ու  
բոց: (Հրացան):

Հուրն հրեղէն ճոչ գունդ ի.

Ամեն աշխարհ ուր տակն ի.

Բազի էլ կանի ինադ, չերեխ.

Եղէն կրակ ու բոց ի. բա՞ էսա ինչ ի:  
(Արենգակ):

Մե մարդը կայ էրկթէ,

Ռտներն վեր թանիքէ,

Կերածն ի փէտ,

Հոգի չկայ, կվոթկայ, հող կդառնայ:

(Վառարան):  
Թէ որ ասեն. արե՛ չի գայ.  
Թէ որ ասեն. մի գայ կուգայ:  
(Քերանի շրթունքներ):

Որ արձկեն կկալնի, որ կապեն կէրթայ:  
(Տրեխներ):

Բարակ բարակ կամշնոց,  
Մէջն իլին արձրմնոց: (Մատիտ):

աժամա մինայու ուրեմ առանձնեան մին ան ուրեմ:

— անձնու ուզ վնօրս չը մրացաւած չէ անշահ չն  
ուզ աղման պատասխան պատասխան պատասխան:

## ԱՆԷԾՔՆԵՐ

Տուն ու տեղդ պըշշակ էլնի. խեղուած, վարած թալած-  
արընթաթախամեռ, Աստծու իրիսից ընկած գև: — Թազաւ մե-  
ռել, թազաւ եարաւոր, փճուած, գեռտաշած: — Տիրամօր եարա-  
ւոր \*), Տիրամօր ընկնաւոր, Տիրամօր նիշուն եարէն առնես,  
Տիրամօր դուռն էրթաս եարոտ վիարոտ: — Ականից եարաւոր \*\*),  
Ականից խըժխըժայ եարէն առնես: — Ապաւամեռ, ժուռ-մուռ-  
մեռ, սրտամեռ, խէրամեռ, մէրամեռ, աղբէրամեռ. ջինս-ջի-  
բիլեաթդ փճին, չերեխն: —

Խւաւոր, սև խաղած, սև կապած, կապոտ խագած, սևա-  
թաթախ սև անթրոց. սև լաշաւոր, սև կաբաւոր. սև սիրտ,  
սևաջիգար. սևաղիգար. սև գև, սևաշոր սատանայ: — Յաւ,  
չոռ, վարած, կոլ, կոռաղար, զըհար զիկում քել: — Խօրս խոց:  
Խօրս իտին պըտում բէրանդ էլնի: Խօրս դարդ ու խոցն ու-

\*) Տիրամայր կամ Ասպարածին (Աստուածածին) գիւղ, մեծ ուխտա-  
տեղի է Գնուռնեաց (Թիմար) գաւառակում. ըստ պատմութեան հին ժամա-  
նակից յիշուած Միրաք, Զիրաք, Ջիրաք կուոց բնակավարը, և արդէն թուր-  
քերը գիւղն Միրաք են կոչում: Ընթիւ են սորա ուխտաւորք, մասնաւո-  
րապէս Վերափոխման տօնին Պարսկաստանի հայերից եկուորների: Տիրամօր  
եարէն (վերքը) որպէս թէ ունի իւր յատուկ նշաններ. գա մի տեսակ ջրա-  
եարէն (վերքը) որպէս թէ ունի իւր յատուկ նշաններ. գա մի տեսակ ջրա-  
եարէն է, որին ենթականները ամիսներով առաջ գալիս և ըն-  
ւոր բրոտութիւն է, որին ենթականները ամիսներով առաջ գալիս և ըն-  
կուռ են Տիրամօր դուռը, ժառայում են գիւղացիների տներում որպէս խոս-  
կնուռ են Տիրամօր դուռը, ժառայում են գիւղացիների տներում որպէս խոս-  
կնուռ է եղել:

\*\*) Ականց՝ Քաջքերունեաց (Արճէշ) գաւառի կենտրոնատեղին է, շէն  
աւան, ուր կայ եկեղեցի յանուն Ս. Գէորգաց, ունի բազմաթիւ ուխտաւորք  
ոչ միայն իւր գաւառից, այլ ամբողջ նահանգից: Դրունից ստացուած  
վէրքն էլ կոչում է Ականից Ս. Գէորգաց նշան կամ եարէն. թէ որպէս  
վէրքն էլ իրանք վէրք ստացողները գիտեն: Ականց բազմանայ աւան էր,  
կորոշուի՛ էլ իրանք վէրք ստացողները գիտեն: Ականց բազմանայ աւան էր,  
որտեղ կային վանեցի, բաղէցի երկրորդ կարգի վաճառականներից և արհես-  
որտեղ կային վանեցի, բացէցի երկրորդ կարգի վաճառականներից և արհես-  
որտեղ կային վանեցի, բացէցի երկրորդ կարգի վաճառականներից և արհես-  
որտեղ կային վանեցի, բացէցի երկրորդ կարգի վաճառականներից և արհես-

տես. իտին բաժնին չարժանանաս, անմաս անբաժին սատկես. ոչ ժամու, ոչ պատարագի, ոչ ազօթի իրես տեսնաս:—

Անտակ ծովեր, անդադար, արուն-դյուեխ գետերն ինես խեղտուես. լէշդ շան, գէլլու, գեաղանաց փայ ըլնի:—Գլրող քի տանի: Գլրողը տղէներդ կոտորի: Գլրողի դաւթարն ինես: Գլրողը տունդ, աւահիդ քար ու քանդ անի:—Դէ խող, դէ մոխիր փճուած, փուճ, փճացած, փուճ փայէն էլած. նամ ու նմուշդ կորած, չերևած:—

Դէ առա մեռի, քան զքի մարդ, քան զքի աղամորդի: Մարդերաց աւելցուք, ոտաց կեղտ, լակաշ կոծող շուն:—Ժուռ մնաս, իսկի չխասնես, իսկի չքարես, բար չի տաս:—Կոր բուեր, կոր անձեղներ նստեն վէրէդ, փայ տան քեյ:—Աստանի զուռիաթ, սատանի սերմ, սատանի արբնեկ. դէվու-խէվու խէր խրիշտակ, դէվու որէթ, դէերը քեյ տանեն:—

Էրկէն էշ, կոր մուկ, կոր կուիկ, սև սարեկ, կոտ-կօտ լալայդ, ըղտան թարանջայ, խող, խողացած ֆըռտատայ (Տըրդատ) օրին խասած: Էլ ոչ ժրես, էլ ոչ լաւանաս, չվեր կէնառ տեղիցդ: Դեղին ժիպակ, դեղնա-դիդար դև, դժոխոց որդի, դժըխոցի դրնապան, դժըխոցի էրտուկալ, դժոխքի մոխրախան:—Ջներ քեյ պատուեն, փարչալամիշ անեն. շներ ունան վէրէդ, վէր լէշիդ, վէր նաշ ու չանդկիդ: Նաշդ չէրթայ ոչ տապան, ոչ գերեզման. խողը քեյ տեղ չխտայ, չսթրի:—Իշու խրիշտակ, իշու ճրագկալ, իշու լոս ու լուսնակ, իշու դլուխ, էրկէնականջ աւանակ, գօմշու կուռոփի:—Անծոտապուճուճակ, քեյ վնկ խասրաթ. սև կաշայ, սև մամաշայ, մտըրըու փաշայ, փօղնի բօշայ, փօղնի լակաշ կոծող, փօղնի դալալ. թէօլընդի լաւագ շուն:

Տէրսկան \*) որդու ինկնաւոր, անիծուած: Տէրսկան որդու անէծք թափի վէրէդ, զընջլաւոր կապած փոփոռտ: Հոդ-լոց փանից \*\*) մոխրախան անշնորք կաղ դէ:—Պատանքդ

\*) Տէր Յուսկան որդուոյ փանք, վանայ Բերկի գաւառամասում, որոյ ուխտաւորք բազում են: Գուրտերը գորանից բաւական ակնածում էին:

\*\*) Հոդ-լոց փանք, Անձեւացեաց (Խօշապ) գաւառի հոչակաւոր փանքն

կարեմ, պատանքդ շուլուկեմ շրէշտուն կտաւով. չիմ առաւօտ լոս չխասնես, բարեւ բարելոս չսի ակնջովդ:—Զխէրես, չբարես, չըդրես, չպտկես ու չծաղկես. թէ ծաղկես թէ կանաչես էլ իշվանք կոծեն ծիլ ու ծաղիկդ. չմուրատուես, չմուրազուես. չկապիս կանաչ կարմիրդ:—Զմեռնես շոտ. տեղդ մէջ տախունին խսկած մնայ, կեղտ ու աւելոցքի մէջ, աղփ ու աղփի խոտ քթիցդ պակաս չէլնի. ասեղը եօթ թիվովդ շալկես, ուժ ու զօրութնից ինես:—

Ականից էն մռածուռ եարէն թափի վէրէդ. բալա քուղես, ասղան տեղ չմնայ վէր լէշիդ սաղ, խըդխըդես, մնաս արօւն գյուեխ, փիս-փիսիլինդ ջանիցդ անպակաս էլնի:—Անիծուես, չըչըկուես, ուռուցք առնես, ուռուցուրին: Անէծք քեռ տան տեղաց, անէծք տանդ անդիրաց, ձէթին-պէտին: Անէծք քո ամէն թար-թախըմին. ինես՝ մարդ քել չխասնի, վեր չվերցուցի. ընկրվընեա ընցնող դարձնող չէլնի վէրէդ:—Ախ անես, կարօտ մնաս մի կտոր խացի, մի պուտ ջրի. կերի խոտ առնես, կերի նմուշ չտիսնաս. տեղն ու տեղ ցամքես:—

Կարիբութեն գեոր որ էրթաս՝ էրթալդ էլնի, գալդ ոչ. ճամխակմառս մոլորուես, սարեր ու ձորեր, դաշտեր ու չօլեր ինկնես, էրուն սախախուն, մարլու երես չտիսնաս. գէլլերաց, գեազաններաց փայ ու կեր էլնես, դեռիկարաց, արնախում քրդերաց բաժին, սրին ու կրակին դէմ ինլինես:—Հուրն լաւփենից մաշես, իրիցես, մըրկես, մոխիր դառնաս:—Պատանքդ շուլուկեն աւ-սւ մազերով, ինոր էլ արժանի չէլնես:

Աչքերդ սիվտկի, սև ջուր բռնի, պապեղդ խաւարի, խաւար մնակ, մալիֆ մնաս. ձեռներդ բռնող, ման-կան տուող էլ չէլնի:—Կոր-մալուռ ինես փօղնէ փօղան, դռնէ դուռ խաց մուրաս, ըսկուն ըսկուն ճաթոսուես, որ ծոցդ խաց դնելու տեղ չէլնի:—Հըմէն բանից, բարեկմից, վէլից ու վայէլից զուրկ ու է, որոյ առասպեկան կառ գեր կամ գանից մոխրականը եղել է մինն այն է, որոյ առասպեկան կառ գեր կամ գանից մոխրականը եղել է մինն այն է, որոնցից ոմանց, բարթուղմէոս առաքեալը կործաներկ նոցա քադինները՝ ազատ է թողել մնալ փանքի ծառայութեան մէջ: Փողովդի ասելով՝ կաղ գեր անգնաս է, շատ անգամ երեացել է ուխտաւորաց:

մահրում մնաս, մահրում իրիշկես. ծամերդ սիվտակ իստկեն, քօքդ չորանայ. որդու երես չխես, չտիմնաս, ուրուրոցի իտե չնստես:—

Քեամբախ էլնի տրւն ու տեղդ, պրիշակ էլնի քեռ օթե վանդ, վէր-վէրանայ դառնայ քեռ խօր-խէրանին. աչքդ ինե մնայ, քեարը քեարի, խողը խողի, գէլրան գէլրանի վրայ չը դատրի. խիմը վէր խման շուռ գեայ, բէտ փետուր չմնայ, փլի, կործանուի, աւերի, կրակն ինի մէջ, խող ու մոխիր դուցուցի:— էլոց դուռ, էլոց պատի տըկներ մնաս, ընկնես թընչկը-ուես, խլնես:— Գրողը գեայ, տանդ ձէթ-պէտ խորտի, վայնասուն իսկի մէջ տան տեղացդ. գունդ պուպու մնաս. գեոտանաս. գունդ գունդ որդերը ջանիդ մէջ պճպճան, որդնոտես, նոր մեռնես:

Անխոդի ջալադներ, ջանդարներ պրտեն կտրտեն քեչ քեռ քիւլ ու քիւլֆըթով. վավէլէր վայնասունները մտնեն տուն ու տեղդ:— Կարիբիդ երես չտիսնաս, եօթն աշխրով դէն սև թուղթն ու սև խաբարն առնես, մռմռաս, վուլ վուլ աներով մնաս:— Թումբէ թումբ, փոսից փոս թունես, մէջ գեու դեռ-խանիդ չդատարես, գեունադարի \* ) պէս վիզդ վէր շիման զա-նեն:— Ճոչ պրտունդ ականջդ մնայ, լէշիդ վէրէն շատերը մըռ-մըռան:— Չանկներ, թօմրուղներ մաշես, մաշուես անտէր անտի-րական:— Իմ խօր, իմ պապիէ քիւնը քինես, իմ խօր մրափ մը-րափես, էլ չզարթնես. քեար քեարատակ էլնի շէնդ շէնլիկդ. սև կաւով մօլեն քեռ մնացած պրիշակներ. վէր-վէրան դիվաց բնակարան դառնայ:—

Կայենի կուտոշ ըուսնի վէր գլխուդ. էրէրուն, տատանուն մնաս վէր աշխրհիս:— Սաղայէլի դաս դասուես, սաղայէլի գոդ նստես, հողիդ կապ մնայ էրկնուց երեսից:— Տակդ խանդակ՝

\* ) Գեօռ նշ. գերեզման. գունագար նշ. ըստ մուսուլմանների նախա-պաշարմունքին գերեզմանից արտաքսուած տատանեալ ու երերեալն, որ մի տեղ չկարողանալով գտնել՝ վերջապէս յետ երկար թափաւելու իւր տունը կմտնէ. տան ընտանիքը եթէ երազեկ եղան՝ կըունես, գլուխը շիման (շեմ-քին) վրայ կտրելով՝ աշնակէս մերջ կուտան այդ թափառական արտաք-սուածին:

վէրէդ անբնակ, աննշան, կամփնոց անեն ըոնը բնակարանդ. կանափ ըուսնի տեղ, հողուն հաւասար էլնի: Ել բան չեմ ասե. թէ ինչ որ ասի՞ մէկ խաղար գառնայ, խաղարն էրկու խաղար: Քեռ տան, քեռ տեղաց, քեռ տան անդիորաց, ճժերաց պժերաց բաժին էլնի իմ անէծք ու աղա-ղակ, հալա եօթն պորտից դէն անցնի:

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆԵՐ

Օրհնուես, ծլես, ծաղկես, փթթես քեանձ վարդ ու վարդե-նիս, քեանձ շուշանն ու բալասան հոտովդ վիառաւորես:— Քեանձ հմէն բար-բարունակ հասնես, ծէրես, ծիրանի պէս խասնես, ծերանաս անդարդ, անհոդս ապրես ու մնաս:—

Ձէնդ ու անունդ անուշ գայ. գեոր որ էրթաս, գեոր որ էլնես, քիւն թէ արթուն՝ բանը ու գործդ բարին էլնի:— Վէլես վայելես Աստծու բարութեն, վէլես վայելես ինչ որ քեռ խալակ քրտնքի, քեռ քեաղցը աշխատանքի դատին ու վաստակն ի, ինչ որ անխարամ ու խալակ վաստակածդ ի:

Ասպած (Աստուած) քեյ պախի. Աստծու աչքն ու ձեռ վէրէդ էլնի. Աստված ուր բարութնից, ուր ինամքից, ուր ողոր-մութնից քեյ մասն ու բաժին հանի. չզրկուես, ետ չմնաս կե-նաց հացից, անմախական բաժակից, խրիշտակաց, սերովիէ քերոբէ դասից:—

Քեյ մեռնեմ, քեյ կուրբան, քեյ մաղաղ էլնեմ. քեռ հո-գուն հալքան կէնամ. արեւոդ, կանաչ ու կարմիր արեւուդ մեռ-նեմ:— Խէր տիսնաս, բարի տիսնաս, բարութնից անպակաս մը-նաս:— Իմ աչք, իմ լուս, իմ կեսնք ու արեւ, իմ քաղցը ու ա-նուշ սիրելի:— Խէր ու մէրով ապրես, խէր Աբրահամու, խահա-կայ և Յակոբայ, տասներկու նահապետաց, անթիւ սրբոց, մար-գարէից, տասներկու առաքելոց օրհնութեն առնես: Խէր Աբրա-համու օրին խասնես, էրկնակեանք էլնես. տունդ

ու բնակութենդ շատերաց ծանօթից և անծանօթից իջեվանք էլնի. սեղանից հացդ ու բարութենդ պալաս չէլնի:—

Ձեռդ որ չոր տեղ թալես՝ կանաչ, վարդ ու ողջան բունի. կանաչարե էլնես, ծառ չինարի պէս խով ու զով անես անցնող դարձող ճամբխորդներաց վէրէն:—Թէ մէյ ցանես՝ խազար ու մէկ քեաղես, խազարն վերուցես. կալիցդ, կժիցդ, անդիցդ, հանդաստանիցդ, բաղիցդ, բաղչիցդ խէրես, խէրխես, շատերաց էլ փայ ու բաժին տաս: Քիսիդ, ջօբիդ ու գրպանիդ բարաքեաթ էլնի, փա՛րէն անսլակաս, տռատ էլնի. տաս անկտնանկին, օգնես կոր աղքատին:—Միշտ թաղայ, միշտ նոր, միշտ սէրսուփի, զարբաֆ ու կումաշ հագնես. խալաւդ ծալ-ծալ մնան սնդըկներացդ մէջ. խինը մաշ անես, թաղին արկաբաշշ շատ մերկն ու բոբիկն խայցուցես, մերկ ու լերկ չժողնես:—

Ինչի՞ որ կամենաս էլոց՝ էն դայ քեռ որդոց, քեռ թռուանց. մէկը տաս, խազար ու մէկն առնես, քեանի որ կենով կենդանի ես:—Եօթն որդոց սեղան նստես, տնով, անդիրով, ճոչ ու պղտկով, ժամով պատարագով, խաչ-աւէտրանով խաչօրհնէդ<sup>\*)</sup> կատարես:—Սեղանդ խէր Աբրահամու սեղանի պէս լիքն էլնի բարութենով, կեր ու խումով, պասուց ու զատկոց խոր խորակով:—Ան ու վախ չանես. ցամաք աչքով, ուրախ սրտով օր աստոր անես. դամդ բարի դամ էլնի, սհաթդ րարի սհաթ:—

Սիմոն ծէր էլնես, փառքիդ փափագիդ խասնես. թռուներդ մէկ աջ մէկ ձախ զրկես, խամբուրես. տիսնաս լնոնց կանաչ ու կարմիրն, ինոնց բարն ու բօստան:—Խալալ խացի, խալալ դատք ու դատումի, խալալ ծծկերի տիրանաս, սրտիդ ուզածին, մուրատիդ մուրաղիդ խասնես:—Ամեն չարից, չար աչքից, չար նազարից, ամեն կաղից, բալից անփորձ, անսասան մնաս,

<sup>\*)</sup> Խաչօրհնէք կուլում է այն սովորութիւնը, որ բարեպաշտ մարդիկ ի կենդանութեան, մեծ պատրաստութեամբ, պատարագով օծել են տալիս իրանց գերեզմանախաչքարն, որ սովորական է աւելի գիւղական դասակարգ մէջ: Այս առիթով առատ սեղան են տալիս աղքատաց:

պարզերես տիս գեաս, լսես:—Ճուն-մուն մարգերաց շառից, բուխտնից, չար լեզուից, չար կամեցութնից աղատ մնաս. չարը չբացուի վէրէդ:—Վերջին օրդ, վերջի դատաստանդ քաղցր էլնի, հոգիդ լուսոյ փայ, դրախտի բաժին, կենաց փառք ու պսակին արժանի էլնի. քեռ բաժին դժողք թող փլչի, չքանայ:—

Հոգիդ արքայութեն, մարմինդ խանդիյստ խանդստարան գնայ. լու-կամար փայլի գերեզմանիդ, լիշտակդ բարի էլնի:—Աւագ պախս, Աւագ զատիկ, խինդ նաւակատիք ընցուցես ամեն տարով, խէրով ու խէլրաթով, կենդանոնց օրհնութենով: Պահապան հրեշտակները Գաբրիէլ, Մուքայէլ, Ուրիէլ, Ռափայէլ գիշեր ու ցերեկ հովանի պահապան մնան քեզ. անմարմնոց, սերովբէջ քերովբէջ դասն դասուես:—Գաբրիէլեան փողին, խաչի լուսուն, էրանական ձախին, անմախական փառք պատուին ու պսակին արժանանաս:—

Կուլ-բուխտնից, կաֆլ-կաղից, անօրինաց բալա-պատուհասից, չար չարոցից փրկուես աղատուես, խայած մնաս:—Ինչ որ պայս-պակսութեն ունես՝ թող Աստուած հողայ. Աստուած ուր խալալից տայ քեյ. մայէդ, քիսիդ բարաքաթ չպակսի, թէ մէկ լի՛ էլնի խազար ու մէկ, խալալ մաեայ, խալալ վաստակդ էլնի. դատկդ Ա. Երուսաղէմ:—Փակ ու փակուած զռները վէրէդ բաց էլնեն: Զարերը խափանուին, կապուին, դիւս չիգան զնդանից:—Անտուկ ծովեր, գետն ու առուներ խախանդ էլնեն. ալէկոծ ծովն, պղտոր գետերն ու ջրերը առջևեդ չափր չիման դառնան. ընցնես դառնաս անվնաս:—

Տիրամօր օրհնութեն, Տէր-Յուսկան (Տէր-Յուսկան) որդույ մէյ պատարագ քեյ դաթ ու մատաթ կրայնեն:—Մշու սուլթան սըրի կարապետայ, Վարագայ խաչի օրհնութեն, շնորքն ու բարաքաթն վէր քեռ տան, վէր քեռ տեղաց, վէր առքիւ փէտերացն էլնի:

Թէ մէկը ես ասեմ՝ խազար ու մէկն թող կատարի Աստուած. շնորք և ողորմութիւն թափի վէր քեռ տան անդի-որաց. ամէն ու ամէն:

բայուց զայդրուան մ ան-մ ոհ— տեսար, տուքը ապօտ նկածքարք  
դրաց առան սուրբ սբի Աստվածածնի որոց քրիստու որոց ամեսածառ  
միջի պարագ թափառաւոր վզզմի քրիս մնացի— արծի մի գույքաց  
շնչարու ու զ ուսի ու առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ  
**Բ Ա Ռ Ա Ր Ա Ն**  
— բայուց աջակ ու քրիս այսուց ուզ այսէ վայսեցու  
նախառարան ու առաջ այսուց ուզ այսէ վայսեցու  
այսէ այսուց այսուց ուզ այսէ վայսեցու այսէ այսուց այսէ վայսեցու  
այսէ այսուց այսուց ուզ այսէ վայսեցու այսէ այսուց այսէ վայսեցու  
**Փ Ո Ղ Ո Վ Ր Դ Ւ Կ Ե Ն Բ Ե Ւ Ե Ր Ի**  
— այսուց այսէ վայսեցու այսէ վայսեցու այսէ վայսեցու  
այսէ այսուց այսէ վայսեցու այսէ վայսեցու այսէ վայսեցու  
այսէ այսուց այսէ վայսեցու այսէ վայսեցու այսէ վայսեցու  
այսէ այսուց այսէ վայսեցու այսէ վայսեցու այսէ վայսեցու  
Ա'բա'. բրդից հաստ զործուած, լիերարկու: զմեթանուց այսէ այսուց  
Աբով. յուսով, համար: այսուց այսուց այսէ վայսեցու այսէ վայսեցու  
Աբուու-ջուբուու. խառն ի խուռն, կալորի վերոյ: այսէ այսուց այսէ վայսեցու  
Ագիւմ. քայլ ոտից: այսուց այսուց այսէ այսուց այսէ վայսեցու  
Ա'եղ, -ա'նղանալ. արթուն, զգուշաւոր.— սթափուել, արթնալ:  
Ազար. ամուրի, չամուսնացած մարդ:  
Աղաթ-իքրամ. պատուել, մեծարել մի ինչով:  
Ազամ. մեծ, վեհ, վեհաշուք: այսուց այսէ այսուց այսէ վայսեցու-ուրար  
Ազիզ-մազիզ. պատուական, ընտիր: այսուց այսէ այսուց այսէ վայսեցու  
Ազիր-վազիր. մեծաւորք, աւագանի, նախարար: այսուց այսէ այսուց  
Աթրաֆ. եղրեր, բոլորտիք: այսուց այսէ այսուց այսէ վայսեցու  
Ալ. կարմրաւուն: այսուց այսէ այսուց այսէ վայսեցու այսուց  
Ա'լա'. գեռ ևս, տակաւին: զմենու ու ծանք պահու պահու  
Ալաթ. գործիք: այսուց այսէ այսէ այսէ պահու պահու պահու  
Ալալ-աջալալ. շուտով, շուտափոյթ: այսուց այսէ այսէ վայսեցու  
Ա'լա'մա'լ դէսթան. աշխարհին ծաղրելի: այսուց պահու պահու  
Ալաշուդ. եղէդնեայ տնակի, հիւղակ: այսուց այսէ պահու պահու  
Ելաջահաս. տհաս, կիսահաս: այսուց պահու պահու  
Ալբէալ. իսկոյն, ձեռաց: այսուց այսէ այսէ այսէ այսէ պահու  
Ալ-կալաշ. ուղղահայեաց, ձիդ հասակ:  
Ալմօ, Ալմիկ. Ալմաստ, (անուն կնոջ): այսուց այսէ այսէ այսէ պահու  
Ալնախ. թաշկինակ:  
Ալլատիզ. երևակայական կենդանի:

Ակիւկեայ. թոնրի տակից բացուած օղահանի շրջանակ: այսուց  
Ակխել,—ազեահ. արթնանալ, զարթնուլ,—արթուն:  
Ահդ. խոստում: ան ո նյաց ամսայ, զամսամելու ապահովութիւն:  
Աղայ-եօլայ. աղայի պէս, աղայավայել: այսուց այսէ պահու  
Աղբրանց արուն. ծաղիկ ինչ, կարմրաւուն թերթիկներով: այսուց  
Աղորթ, դորթ. իրաւ, ճշմարիտ:  
Աղու,—աղոււոտ. թոյն,—թունաւոր:  
Աղուն, բնաղուն. աղալու ցորեն, ջրաղաց տարուած: անսուց  
Աղունակ. աղաւնեակի:  
Անառ եղ. գեռ լուծ չտեսած եղ, երեք տարեկան: այսուց  
Ամալ-ջամալ. հասակի գեղեցկութիւն և երկարութիւն:  
Ամանաթ. աւանդ: այսուց այսէ այսուց այսէ պահու  
Ամիկ. գիւղ Վանայ Թիմար գաւառում:  
Ամիր, միր. մեծ, իշխան, տէր: այսուց այսուց այսուց  
Ամր. հրաման:  
Ամրոց, ամբրոց. գիւղական վառելիքի մթերք, աթարակուտ:  
Այզայ, հայբայ. ճանապարհի պայուսակ:  
Այվան. դստիկոն, պատշգամ:  
Անաւոտ. անհաւատ:  
Անդիոր, անտիոր. 1. ընտանիք. 2. անդեայք, խաշինք:  
Անժրոց. կրակ խառնելու ձող:  
Անխլիս. անհատնում:  
Անկալատ. թերութիւն ջունեցող:  
Անկեախ-անպահ. անժամանակ, ժամանակից դուրս:  
Անէսաբ. անհաշիւ:  
Անչանք. այնչափ, այնքան:  
Անջախ. հազիւ թէ:  
Անտակ. անյատակ:  
Անցանք. յանցանք. 2. անցնելը, մեղանչելը:  
Ազկել. ակնդէտ սպասել:  
Առցկել. արձակել:  
Ասլիկ. անուն կնոջ:

**Աստոր.** աստ եղածներ, ստեղծուածք: լիւս վրանի պատմայթ  
**Աստաթ.** սովորոյթ: առ հյուր յամանելու համար յաճի Յ  
**Արա-թարայ.** խրոխտանօք, խրոխտ շարժուածքով: առաջ քայլ  
**Արապու-պոկոշ.** արաբուկի, շրթունքը ուեւ, հաստ, անշնորհք: Յ  
**Արքնիկ.** արբանեակ, օգնական: զայտ միջուծ մազա լինուցը Յ  
**Արմաղան.** պարզեւ, ընծայ: ամպանէ առջ պայր պայր Յ  
**Արմանք.** զարմանք, պատմանք: առաջ առու առու առու Յ  
**Արտամէտ.** ծովահայեաց մեծ գիւղ Աշնայ հարաւում: առաջ Յ  
**Աւ, — աւչի.** որս, — որսորդ: ամսայն փառուց Յ  
**Աւագ-կատիկ,** մեծ-պահք, կամ զատկի երեկոյ: ուիր քայլ առաջ Յ  
**Աւալ.** առաջ: ապահով ամայի տիրութը պատահ քանազ քանազ Յ  
**Աւալ-թաւալ.** հողի, փոշու մէջ թաւալրւած: բանաւ հանան Յ  
**Աւահի.** շէն, շինութիւն: առաջապ զայտի տամաթ քայլ պայն Յ  
**Ավիլուկ.** բանչարեղէն, հաստ տերևով, պասուց կերակուր: պայն Յ  
 ուայնուցը պայն

**Բ.** այս մաթարուք բայրն ըստի Յ  
 թարապար վայրուր մաթուր օւայի Յ

**Բա'.** ապա, բայց: մաթուր մաթուր օւայի Յ  
**Բաբաթ.** հաւասար, համընկեր: տու ունաւ առաջ Յ  
**Բաբօ.** հայրիկ, հայր, մեծ հայր: վայսաւ զայդը Յ  
**Բաղիա.** աման, որով մատուակները գինի են լեցնում: յու մի Յ  
**Բազի.** երեմն: նամանն այսին Յ  
**Բազրգեան.** վաճառական, երկրէ երկիր արտահանող: ապայի Յ  
**Բա՛ժ,** բա՛ժիկ, բօյ, երկարութիւն հասակի: ապահու-մասնը Յ  
**Բալա.** փորձանք, արկածք: ութունն արունեց Յ  
**Բալայք.** խայտաբղէտ, խայտամուկ: զայտ Յ  
**Բա՛լի.** յայտնի: միջ այսու պահան Յ  
**Բալնիս.** բանալք: բանայն Յ  
**Բա՛լքի.** իցէ թէ: այս զայտը առ զայտը Յ  
**Բաղ,** բաղչայ. պարտէղ բանչարեղինաց: մասն ու իրեն քիթ Յ  
**Բալլայ.** բակլայ: յաճակու յաճու Յ  
**Բա՛ս.** պատմութիւն, զրոյց: զամն մասն միջու

**Բա՛ր.** առաջին երախայրիք, պտուղ: Յ  
**Բարիշ,** —բարիշել. հաշտ, —հաշտուել: Յ  
**Բարի,** բարիշմ: տարեկան գառ: կայ փանուագուք Յ  
**Բղըի լուսին.** բոլորակ լուսին տասնհինգօրեայ: ման բանք ուստի Յ  
**Բէզիւման,** անգիւման. անտեղեակ: վաճառեած հայր հանք Յ  
**Բէթա՛ր,** տհա բէթար. աւելի և աւելի վատ: իշխանք մանք Յ  
**Բէլիւկ-բաշի.** խմբապետ: զամասը զամ բայց զամ փանք Յ  
**Բէուղուր.** չարաբաստիկ, անվայելուչ: այնա համա եւը եւը Յ  
**Բէր.** մակաղատեղ խաշանց: բարս չէր չէր Յ  
**Բէօթ.** բութ մատ: բար (բար) զամ ունեթ Յ  
**Բէօշ.** առաստ: յամանք յամանք Յ  
**Բէ-օֆայ.** անօգուտ: անօգուտ անօգուտ Յ  
**Բիլա քեզ.** առանց քեզ: անօգուտի յամանոր յամանում Յ  
**Բիրեան.** ամբողջ ոչխարի խորված, խտուկ հարակում տրաստուած: ունք Յ  
**Բիւթիւն,** ամեն, բոլոր: անք յամ Յ  
**Բիւլբիւլ,** բլբիւլ, սոխակ: անք անք յամ Յ  
**Բլիթ.** միջինքին պատրաստուած հաց: անք անք յամ Յ  
**Բօլ,—բէօլութիւն.** առաստ, — առաստութիւն: անդում զայդութ Յ  
**Բօլօլան կամ բէօլոլան.** երևակայական կենդանի: այս պր-աւայ Յ  
**Բօկ.** բուկ: անապահ անապահ անուս ու Յ  
**Բօշ,** բօշ բան. ոչինչ, դատարկ բան: ան ան պահան պահան Յ  
**Բուլանուղ.** Մշոյ մէջ գաւառ, նախկին Խորխոռունիք: այս պահ Յ  
**Բուխտանք.** զրաբարտանք, զրախօսութիւն: այս պահու պահու Յ  
**Բուրջ.** ամրոց, գղեակ: ան պատմաք ան պատմաք ունեթ Յ  
**Բուրսալի բարձ.** Պրուսայում ասեղնագրծած բարձի երես: ունք Յ  
**Բօրանք.** դէսից դէնից առնուած զրոյցներ: Յ  
**Բըդօշ.** խեցեղէն աման, կովկիթ: անդում անդում Յ  
**Բըինդար.** վիրաւոր: անդում անդում Յ  
**Բօզ,** գորշագոյն: անդում անդում Յ  
**Բօղչայ.** ծրար հագուստի: անդում պահան անդում Յ  
**Բօյ-բուսուն.** հասակի ձև: անդում անդում պահան Յ

Դահնայ. քանքաններով բերուած աղբիւրների առաջին աւազան։  
Դաղ. անսանոց վրայ շամփուրով դրուած նշան։  
Դաղց. դաղձ։  
Դամ. 1. պահ, ժամանակ 2. ուրախ վարկեան։  
Դալիմ. միշտ պայի ըմայ ին չեանոն գրակալ մեջ չենայով  
Դալմայ. հաղիւ անգամ։  
Դանայ-դանայ. հատիկ-հատիկ։  
Դանդախորել. երերուել, տատանուել։  
Դաշ. նախ և առաջ։  
Դա՛ր կամ տար, հողաբլուր։  
Դարահի. մետաքսեայ նուրբ գործուած ինչ։  
Դարամաթ. տան պատկանեալ կահ կարասիք։  
Դարբ, դըրբ. հարուած։  
Դարգեախ, դէրգեահ. դուռն, մեծ դրանկալ։  
Դարդ. վիշտ, ցաւ։  
Դաւաթ. խնջուք, խրախճանք։  
Դաւե. դատ, դատարան։  
Դաֆինայ. թաղուած գանձ։  
Դեհ, դէհ. կողմ։  
Դեղին ճտնոց. շարով ոսկի, պարանոցից կախ։  
Դեղտ կամ տեղտ. արմատ բոյսի, որով լուանում են գլուխը,  
մագերը առատացնելու համար։  
Դէլ-հալայ. տակաւին։  
Դէլիլ, դէլիլօ. 1. գեղեցիկ, 2. պարերի նախարան խօսք։  
Դէն. մի կողմ։  
Դէոր, դոր. ուր, որտեղ։  
Դէւ, դիւանք. դւ, դեեր, քաջք։  
Դըմին, դիւշման. թշնամի, հակառակորդ։  
Դըմբըմբոց. ծեծելու ձախն։  
Դընթել. բօթել, խրել կողքին, դարթեցնել։  
Դիդար. տեսք երեսի։  
Դիեարի կուրբաթ. պանդուխտ, օտար երկիր։

**Գիլաք.** խնդրուածք: մեղքը ճաւազգ խոյժեացքաց պամատ  
Դիլբար. գեղեցիկ, (նաև անունակնոջ): այ բայի բանահամ քաֆ  
Դինջ,—զինջանալ. հանդիստ, —հանդստանալ: Հերաք Հայութ  
Դիւանայ. դիւահար: Այսի պայտա Զ խամահան Հայս . Լ համ  
Դիւշիմիշ էլնել. խորհել, մտածել մի բանի վրայուցին Անհամ  
Գիւց. այնտեղից: Ներքու ոյրած հանչափ  
Դլուզ. խեցեղէն աման, որի մէջ ձգում են դրամներ. դուլաք: Դ  
Դնդող. ալիք ծովու: Համամատու անունից անունից անունից  
Դուզախ. որոգայթ: Համառ և սյամ Համ  
Դուզայ, դուա. աղօթք, պաղատանք, որհնութիւն: Կամ պատ  
Դուզդանայ. անուն կնոջ: Անոնց պատ խանցառն անունից  
Դրուտ. ուղիղ, ճշմարիտ: Հայր խանցառնուր մաս Անհամութ  
Դողրի. ուղիղ: Ենուուր պայտ պայտ  
Դոշ. կուրծք: Հայմանց ճնի մոռոր Համբուք այսուրութ  
Դոսթ. բարեկամ: Այս այցի բայտ  
Դոր, դորմ. մի պահ, մի ժամանակ: Համար Համար  
Դիշայ. կտաւագործների գործիք, որով ամրացնում են կտաւը: Դ  
Ե.

Եա. զարմացական բացաղանչութիւն: այնու ուրած նայ ուրած  
Եադ. օտար անծանօթ: Այսու այսու առ զիմրան  
Եազմայ. նուրբ փաթաթ գլխի, աւելի տաճիկ կանանց: Ա պար  
Եախայ. օձիք: Այսու սպանուր Զ պահուք . Լ օձիք պահ  
Եան-եան. կողմ առ կողմ: Նորի մի և լոր  
Եանայ-եանայ. 1. վառուած, բորբոքուած, 2. կողմնակի նախ  
նայուածք: Վայա պահը մի զանուր ամբ  
Եանկուն. հրդեհ: Այսու առաջնուր վեհանք անունից  
Եաշամիշ կէնի. կապրի: Այսու այսու պահապահութ  
Եավաշ-եավաշ. կամաց-կամաց, հանդարտ: Այս որ անուն  
Եար-եաթաղ. անկողին, տեղաշոր: Այսու զամ պարի  
Եարաբ. արդեօք:

Եարամազ. անգութ, արիւնկզակ: Այսու անուն  
Եարան. մտերիմ, խոհակից: Հայ մի բայ  
Եզրանց. եզերք: Այսու անուն  
Եէլքան. նաւի առաջաւագու անուն ան  
Եղէն. նիւթ, որից շինուած է առարկան: Այսու անուն  
Եղումայ. նուրբ երկար տերևներով բոյս, որից պատոց շոր են դնում:

Եօլ,—եօլայ. ճանապարհ, —ճանապարհով:  
Եօրդան. վերմակ:  
Եօրդուն. յոդնած, նեղացած:

Զ.

Զալլմ, —զուլում. զրկող, անգութ, —զրկանք:  
Զայ անել. փշացնել:  
Զանահաթ, սանաաթ. արհեստ:  
Զանգին. հարուստ:  
Զապթիա. քաղաքային զինուոր, հասարակ ոստիկան:  
Զապիթ, զապութ. սպալ, հսկող պաշտօնեալ:  
Զա'տ. մի բան:  
Զատուց. հեռուից:  
Զա'ր. գեղին:  
Զարար, զիեան. գէն, վնաս:  
Զարզանդ. սարսափելի, սոսկալի:  
Զարընջի. անքուն:  
Զա'ւզակ. անհանձար, շատախոս:  
Զա'քաթ. ողորմութիւն (պարտաւորական):  
Զափթ անել. իւրացնել, բռնի յափշտակել:  
Զեռ. ուկի:  
Զըմէն, հըմէն. ամենայն. (ուղղ. և հաց. հոլ.): Այս անուն  
Զընկրո-մընկրո. (մանկ). մեծ, մեծ ինչ:  
Զըպուն. երկար քղանցքաւոր հագուստ, անթէրի:

**ԶԵԼՓԻ, զըլիփ. հիւսած ծամեր, խօպովիք:**

**ԶԻԿ, ձիկ. ինձ:**

**ԶԻՆԵԼ, զոհել:**

**ԶՈՎԱՐԺԱՅ. արաբական հին դրամ,  $\frac{1}{4}$  կոպ. արժողութեան:**

**ԶՈՎԱԼ-ՄՈՎԱԼ. յատակ, կարկաջուն ջոր:**

**ԶՕՂԱՆ. հովասուն տեղ, լեռնակողմ:**

**Է.**

**ԷԼ, էլոց. ուրիշները, ժողովուրդը:**

**ԷԼԲ. ել:**

**ԷԼՄ, էլմ էլ. դարձեալ:**

**ԷԼԿԵԳԻՆ. եկան:**

**ԷԼԿԵԿԵցին. կագնեցուցին:**

**ԷԼԿԵՑԵցի. եկեղեցի:**

**ԷՀԵՐ, էհար. գնար:**

**ԷՒՄԱԼ էնեմ. բնչպէս անեմ:**

**ԷԽՆԱ, էն. նա:**

**ԷԽԱՍԿԵՐՆԱՅ. այսպէս:**

**ԷԽՈՐ. այսօր:**

**ԷՎԱՐ, հէվար. երեկոյ:**

**ԷՐԵԼ. այրել:**

**ԷՐԿԵՆ. երկայն:**

**ԷՐՄԻՍ. երդիք:**

**Ը.**

**ԸՊՈԱՏՈՐ. ուխտաւոր:**

**ԸՆՀԱՆՔ. այնքան:**

**ԸՆՔԻՒԾ-ԸՆՔԻՍ. հեկեկալով, խիստ (լալ):**

**ԸՍՔԸՆԱՅ. տես խառնկը:**

**ԸՄԼՈՒՆ, իսկուն. նոյնպէս:**

**ԸՄՏՐԻՄ, ըստրիմ. այս անգամ:**

**Թ.**

**ԹՈՎԱԴԱՆ. նորից:**

**ԹՈՎՇ, գուլպայ:**

**ԹՈՎԺԱՅ. թուրմ, նոր:**

**ԹՈՎԼԱԼ, դալալ. մոնետիկ:**

**ԹՈՎԼԵԼ. ձգել:**

**ԹՈՎՄՈՒԵԼ. ուշագնաց լինել, նազ գալ մէկի վրայ:**

**ԹՈՎՄԻՆ, թախմին. կարծեօք:**

**ԹՈՎՄԱԴԱՅ. արծաթեալ բոլորակ զարդ, որով պատում էին կանաչք գլուխները:**

**ԹՈՎՄԱՉԱՅ. տեսարան:**

**ԹՈՎՄԱՐԳՈւ. կարօտ մի բանի:**

**ԹՈՎԻՆ. թոշակ օրական կամ ժամանակաւոր:**

**ԹՈՎԼԱՅ. երանի թէ:**

**ԹՈՎԼԻՖ. առաջարկ:**

**ԹՈՎՆԽՈՍ. թանից ու ալիւրից պատրաստուած ճաշ:**

**ԹՈՎՈՒ. թարմ, նոր:**

**ԹՈՎՈՒ մառ. նոր ի նոր, քնքոյշ:**

**ԹՈՎՈՒՄԱՅ. եկեղեցոյ մէջ բարձրայարկ տեղ կանաց համար:**

**ԹՈՎՏՐԻՐ, թէտրիր. նախապատրաստութիւն:**

**ԹՈՎՐ-ԹՈՎՍԼՄ. պարագայք:**

**ԹՈՎՐԻԽ. կըթութիւն:**

**ԹՈՎՐԿ անել. (սովորութիւնը) թողով, վերջացնել:**

**Թէգ. բարկացկոտ, իսկոյն զայրացող:**

**Թէրէմաշ. կիսամաշ:**

**Թըզի. թզենի ծառ:**

**Թնժոց. հարիսան զարնելու ողորկ փայտ:**

**Թնկթնկալ. հեկեկալ:**

**Թնջկացնել. հանգստացնել, սատակեցնել:**

**Թշվշալ. ափսոսալ:**

**Թպղթուն. անհամբեր:**

**Թուլս-մուլս.** սև, մուգ սև:

**Թուղրա.** սուլթանների թաթով դրոշմուած կնիքը:

**Թուրա.** նորաբողբոջ ծիլ, նորահաս ծառ:

**Թստան** գեազ. փշաւոր վառելիք, որ սաստիկ ծուխ է անում:

**Թօլընդի.** աչքից ընկած, անարգուած:

**Թօմրուղ.** բանտարկեալի ոտները կաշկանդելու կոճղ:

**Թօռ.** ուռկան ձկանց:

**Թֆիլ.** մատղաշ, խիստ փափլիկ:

**Ժ.**

**Ժա'մ.** եկեղեցի:

**Ժեռ,** ժեռ քար. ժայռ, ապառաժ քար:

**Ժըրել.** առողջանալ:

**Ժիւմ.** ժամանակ:

**Ժուռ,** ժուռումուռ. խակուր և բայսան առաջաւունք:

**Ի.**

**Ի. Է:**

ինչ բնակուր քնու մայրավագ և ն բնագըրք զատանի

**Իդոր,** իտոնց. դրան, դրանց:

**Իդին.** հրաման.

**Իլին.** լիք, լեցուն:

**Ինատ** անել. յամառել, դէմ առնել:

**Ինել.** ընկնել:

**Ինկնաւոր.** ընկնող, դիւահար:

**Ինոր,** ինոնց. նրան, նրանց:

**Ինքար-հաշայ.** ուրացում:

**Իշմար** անել. իմաց տալ նշանացի:

**Իսկել.** ձգել:

**Իսկի.** բնաւ, երբէք ոչ.

**Իսոր,** իտոնց. սրան, սրանց:

**Իստկել.** յստակել:

**Իտվանց.** յետեից:

**Իրե.** եկաւ:

**Իրիկ.** էրիկ, այր:

**Իրիշկել.** հայել, նայել:

**Իրիցել.** այրել:

**Լազլագ.** արագիլ:

**Լա'լա.** սպիտակ ինչ ծաղիկ:

**Լալալ.** թագաւորի մակաւիկ, զբաղեցնող:

**Լակաշ.** հին, պատառոտած կօշիկ:

**Լաղմ,—լաղմել.** ական,—ական փորել:

**Լաճ,** լաճո. տղայ:

**Լայեղ.** արժանի, վայելուչ:

**Լալաջ.** 1. ինչ և իցէ. 2. վերջաբան:

**Լանգեալ.** աքացի:

**Լաւագ-մաւագ.** խիստ նիկար:

**Լաք,** լաքիւն. թռչնոց էգը, մայր ձագուց:

**Լեօս.** լոյս:

**Լէզկ,** լէսկ. գիւղ Վանայ հիւսիսում:

**Լէնք** վ էրկէնք. լայնք ու երկայնք:

**Լըպրտալ.** տեղից շարժուել:

**Լիանայ.** կաղամբ:

**Լէքֆ.** վերմակ:

**Խազար ժորով.** հայութ լիւան լիւան:

**Խազինայ.** գանձ:

**Խաժ** ու մաժ. խաժ, կապտագոյն (աչքեր):

**Ա.**

Խալ, խալեր. սև բիծ երեսի վրայ: Համարության համար  
Խալայեղ. նաժիշտ: Համարության համար  
Խալաւ-խագիստ. հազուստ, շորեր: Համարության համար  
Խալիֆ, խալիֆայ. յաջորդ, վարպետ, ուսուցիչ: Համարության համար  
Խալիս. ստեղծուած, ժողովուրդ: Համարության համար  
Խալվաթ. պարապ տեղ, ուր ոչ ոք չկայ: Համարության համար  
Խահիշ. կամք: Համարության համար  
Խաղք. ծաղրանք, ծաղրելի: Համարության համար  
Խամաս. համասփիւռ, (նաև անուն կնոջ): Համարության համար  
Խային,—խայինանալ. նենգ,—նենգել: Համարության համար  
Խանգեալ. հանգստանալ: Համարության համար  
Խանդ, խանդանայ. ուրախալիք: Համարության համար  
Խանզադայ. ազնուազարմ, (նաև անուն կնոջ): Համարության համար  
Խաշկ. ցորենի հասկ: Համարության համար  
Խաջաթ, հաջաթ. դրացից փոխ առնուած գործիք: Համարության համար  
Խառա. ծաղկանկար մետաքսեալ գործուած: Համարության համար  
Խատ-խատ. հատ-հատ: Համարության համար  
Խարիզան. մտրակ՝ տաւար քշելու, եղներ մտրակելու: Համարության համար  
Խաւաս, հաւաս. փափաք. կարօտ: Համարության համար  
Խեմ, մըխեմ. տեսնեմ, մէկ տեսնեմ: Համարության համար  
Խեռ, խեռնիկ. տարեկան հորժ: Համարության համար  
Խեռ, խեռնակ. խոտոր, հակառակ, քինախնդիր, խռով: Համարության համար  
Խեռլած. ուշաթափ մնացած, քնի մէջ ընկղմած: Համարության համար  
Խէն քրիստոնէն. հայ քրիստոնեան: Համարության համար  
Խէրել, խէրիս. օգտուել, օգուտը տեսնես: Համարության համար  
Խրդըրքաշ. ծառայողաց գլխաւոր, երբեմն ձրիակեր: Համարության համար  
Խժխժալ եարէն. պղպջացած վէրք: Համարության համար  
Խնջիկ-մնջիկ. կոտրտուող, պչող: Համարության համար  
Խորտել. յարդարել, մաքրել: Համարության համար  
Խուռումիմայ, խուռիկ. չոխիսիմէ: Համարության համար  
Խուր. հիւր: Համարության համար  
Խուրթ-խաշ. խաշուած, խաշոտուել:

Խուրն խրեղէն. հրեղէն, երկնային, գեղեցկատեսիլ: Համար  
Խպառտ. հպարտ: Համարության համար  
Խուխնձ. խանձուած, չոր խոխնձ եղած բոյս: Համարության համար  
Խունդատ. վառելիք բոյս ինչ: Համարության համար  
Խտվուն. խտուն, սիրունիկ: Համարության համար  
Խրձիկ, խոճիկ. խաղատիկին: Համարության համար  
Խօշ. լաւ, բարի: Համարության համար  
Խօշ-բէշ էլնել. քաղցր կերպով տեսակցել: Համարության համար  
Խօջայ. 1. ուսուցիչ 2. վաճառական: Համարության համար  
Խօր-խէրանի. հայրենիք, հօր տուն: Համարության համար  
Խօրօս-մօրօտ. գեղեցիկ: Համարության համար  
Ֆանդրմակ. կախովի օրօրոց, ճօմ: Համարության համար  
Ֆեռդ. ծիրտ: Համարության համար  
Ֆըմակ, ծրմէն. 1. ծմակ, 2. քարայր: Համարության համար  
Ֆըմբկտալ. կոտրտուել, յօրանցել: Համարության համար  
Ֆընձընալ. ծորել, կաթկթել: Համարության համար  
Ֆէծ, ծրծուեր. ստինք կանանց: Համարության համար  
Ֆուարել. կուչ գալ, առանձնանալ մի անկիւն: Համարության համար  
Ֆուռ, ծուռ-մուռ. խենթ, գիֆ: Համարության համար  
Ֆօ, ձօ. այ, ով դու:

Կաբահաթ. յանցանք: Համարության համար  
Կաբուլ. հաճելի, ընդունելի: Համարության համար  
Կաղ-կաղ. մի քանի յարկանիք: Համարության համար  
Կաղամ, կուտմ. ոյժ, կարողութիւն: Համարության համար  
Կաղայ. փորձանք: Համարության համար  
Կաղը. արժանիք, նշանակութիւն:

Կաթըր, կաթար. ջորի, կարաւան ջորիների:  
 Վալատ-պլատ. պակասովթիւն մարմնոյ:  
 Վալէնդէր. բերդագրաւ, առաջնորդ, դրօշակակիր:  
 Վամ-կասաֆաթ. հոգս, մտածմունք:  
 Վամազ. քսու, խառնակիչ:  
 Վամիշ, ղամիշ. եղէդ:  
 Վանադ. թև թուշունի, դռան:  
 Վանաֆիլ. մեխակ ծաղիկ:  
 Վանգեառ. կանգառ բոյս:  
 Վանգեէր. պտտէր, զրօննէր:  
 Վանձիկ-մանձիկ. 1. կռուզ, խոպոպիք, 2. կռուրմուելով շալթուելը:  
 Վաչկի. կսպասի:  
 Վաս-կռութրաթ. պատահմամբ, բարի գիպուածով:  
 Վարակնգուխ, սեակնգուխ, սեազլուխ:  
 Վաւկուլայ. համեմիչ բոյս, նման ու պղպեղի:  
 Վաֆայ. գանգ գլխի:  
 Վաֆլ-կադայ. փորձանք, յանկարծակիր դալլը:  
 Վէծակ. կայծակ:  
 Վէկէն, կէկ անել. (մանկ.) կանգնել:  
 Վէհամ. կերթամ:  
 Վէր. կար:  
 Վըլլդ-կիեաֆէթ. հագուստ, արդուզարդ:  
 Վը լի. կռվայի:  
 Վընդե, կնդնել. դտնել:  
 Վիժայ. չինական ծաղկանկար գինոյ գաւաթներ:  
 Վիյմաթ. տ. Կադր:  
 Վլաւ,—կլաւնալ. գէր,—գիրանալ:  
 Վլաթան. կոկորդ:  
 Վծկել, կծկի գնել. փախուստ տալ գաղտուկ:  
 Վճառ-պօլատ. կիսատ:  
 Վյունակ. գրտնակ, խմոր բաց անելու գործիք:  
 Վոր կճայ. կոյր կին, (սովորաբար քրդերի կանանց են ասում):

Կուգեայ. կուգայ:  
 Կուլ բուլիստան. զրպարտանք:  
 Կուճիկ. փոքրիկ շուն, լակոս:  
 Կումաշ. մետաքսեայ գործուած:  
 Կուռոփի. գոմէշի թանձրացած աղբ:  
 Կուրիս. կրոսուած:  
 Կուրպան. մատազ:  
 Կոխիկ. ազուաւ:  
 Կուտան. ներքինացած գոմէշ:  
 Կսա անել. պատմութիւն անել, պատմել անցեալից:  
 Կտեր, Կտօ, Կտիկ. Կատարինէ:  
 Կտիր. հօտ ոչխարաց:  
 Կրար, կարար. որոշում:  
 Կուտիկ. բրդեալ անթե հաստ բաճկոնակ:  
 Կօտ. գլխի գագաթ:  
  
Ճ.  
 Հա՛դ. համարձակութիւն:  
 Հալ. վիճակ, դրութիւն:  
 Հալալ, խալալ. հարազատ, անկեղծ:  
 Հա՛լայ. տակաւին, դեռ եօ:  
 Հալբաթ. ի հարկէ:  
 Հաղ. իրաւ, իրաւունք:  
 Հանէս. Յովկաննէս:  
 Հանջ, ահանջ. ահա, ահաւասիկ:  
 Հաւար անել. կանչել օգնութեան:  
 Հաւուզ. աւազան ջրոյ:  
 Հէյրան մնալ. հիացած մնալ:  
 Հէվար, տ. իվար:  
 Հէր. ալը, քարանձաւ:  
 Հէր. ինչու:

Հեքմաթ. սքանչելիք:

Հեղ. վայրահաջութիւն:

Հիմդատ. օգնութիւն:

Հիշ. բնաւ, ամենակին:

Հիւքմ անել, իշխել, զօրել:

Հնդատան. Հնդկաստան:

Հունար. արուեստ, ձիրք:

Հունիտ,—հնիտել. թեկի տակ,—թեկի տակ առ նել:

Հօրին. ինչո՞ւ:

Ձեզ:

Ձի, ձիկ. ինձ, ինձի:

Հէթ-պէտ. փոքր ու մեծ:

Հէն. ձայն:

Հմէթ առնել. աչքը ձիւնահար լինել:

## Ձ.

Ճամբախ. ճանապարհ:

Ճան. վէդ, խաղալիք մանկանց:

Ճարիկ. գոտի:

Ճենճոտալ. ճենճերել, ճարպահուտ տալ այրուելուց:

Ճեռչ. ջոջ, մեծ, մեծկակ:

Ճետ. ճուտ, ճագ:

Ճիժ-պիժ. մանր-մունր (որդիք):

Ճիկ-վիկ անել. զաղտագողի նայել:

Ճիւր. ջուր:

Ճկիկ. երկաթէ մուրճ դուռը ծեծելու:

Ճղել. ճեղքել:

Ճոթ. զգեստի եղը:

Ճուճուղիկ. ճնճղուկ:

Ճօկնըկել. ջոկել, ընտրել:

Ճօղել հիւսել, սանտրել մազերը:

Ճօշալ. բամբասել:

Ճուօժան. տանիքների եղերքում հագցրած ջրի խողովակ:

Ճուօժան. ուղարկուած այս եղանակու մասն անուանուած այս անուանուած այս անուանուած:

Ճուօժան. ուղարկուած այս եղանակու մասն անուանուած այս անուանուած այս անուանուած:

Մագբուլ. տ. կաբուլ:

Մագեար, մայեար. միթէ:

Մաթ մնալ. զարմանալ, կիանալ:

Մալ-թամալ. ստացուածք, ապրանք:

Մալուլ-մուլթ. տխուր-տրտում:

Մախչալ, մաղչալ. արծաթեալ զարդ ինչ ճակատի:

Մաղդակ. ճաշակ, ախորժակ:

Մայեալ. մէրան:

Մայիլ մնալ. զմայել:

Մանգեանալ. մեքենալ:

Մանել. նմանել:

Մա՞ջ. մէջ (մոկաց բարբառվավ):

Մատաթ. օգնութիւն:

Մարալ Մարօշ. Եղնիկ Մարիամ:

Մարան. Մարիամ:

Մարէ, մամա. մայր, մայրիկ:

Մարիփաթ. շնորհք, գիտութիւն, քաղաքավարութիւն:

Մարմարական. մարմարիոնի նման:

Մաւի. մուգ կապոյտ:

Մենէն, ուրմենէն. իրանից:

Մէղել. մտածել:

Մէյտեղվել. միանալ:

Մէրջան. բուստ, մարջան:

Մխլատուզ. մագնիս:

**Մկայ.** հիմայ, այժմ:

**Մհանայ.** առիթ, պատրուակ:

**Մըրուել.** կոտրուուել, նազինազ քայլ անել:

**Մշօշ.** սպախաշու:

**Մոն,—մունութեն.** վատ, — վատութիւն:

**Մուղեաթ.** զգուշաւոր, ուշադիր:

**Մունաթ.** երախտիք ունենալը, մէկից պարտաւարուելը:

**Մունդառ.** ապականուած:

**Մուշթարի.** յաճախորդ:

**Մուշուշ.** 1. շամանդաղ արևու 2. շոգից թանձրացած մէզ:

**Մուրփաթ.** մարդասիրութիւն:

**Մօզ անել.** խրտնել գործից:

**Մոլել.** ծեփել:

**Մօր,** մօրիկ ձիւն. կոլուուած մանրիկ ձիւն:

## Ն.

**Նա.** ոչ, բնաւ:

**Նա-նա-նա.** (մանկ.) երգի նախարան:

**Նա-կաֆըլ.** յանկարծակի, անսպասելի:

**Նամ.** անուն:

**Նանէ.** մալրիկ. (Հոգեորականք իրանց դիմող կանանց այս անունով են կանչում):

**Նաշ.** 1. դադաղ 2. դիակ:

**Նաւատ.** ընչաքաղց:

**Նաքըշ.** ծաղկանկար:

**Նեղ ճտել.** նեղսրտել, նեղուիլ:

**Նէճիր.** որս:

**Նէճիրվան.** որսորդ:

**Նհաղ.** անիրաւ:

**Նշանց տալ.** ցոյց տալ:

**Ը.** երկն օրոյն նայալով քառու

ձամաթայ. աղմուկ, կուիւ:

ձամայ գեաղի. Դամասկոսի մետաքսեայ շղարշ:

ձան-շօկաթ. փառաւորութիւն, շուք:

ձա՛ռ-շըլթախ. զրպարտանք, սուտ զրոյցք:

ձափարզայ. շուարած:

ձեղփիկ. դանակ, բանջար հանելու գործիք:

ձիշակ. երկու տարեկան գառ:

ձիրին ջանայ. քաղցր, անձ-անձի:

ձիրիք-շիրուոր. ժառանգ, ժառանգակից:

ձուշաբանդ. ապակեայ շինուածք:

ձուշտակ. կանանց գլխի փաթեթի շոր:

ձուփալամիշ էլնել. կասկածի գնալ:

ձռճել. շրջել:

## Ծ.

**Ողիա.** դժբախտ պատահար:

**Որէթ.** որդի:

**Ումուտ.** յոյս. ապաւէն:

**Ումուր.** հոգս, հոգացողութիւն:

**Ումր,** էօմր. կեանք, կեանքի երկարութիւն:

**Ուռում.** հոռոմ, յոյն:

**Ուստուֆան.** ոսկեթել մետաքսէ գործուածք:

**Ուր,** ուրան. իւր, իրան:

**Ուրենք.** ուրեանց. իրանք, իրանց:

**Ուրմից.** իրանից:

## Զ.

**Զալիր-չիման.** մարգ, մարգաղետին:

**Զանդ,** քանձ. քան:

Չարագ. չորացրած միրգ, մրգեղէն:

Չարդախ. չորս կողմից պատուած, վանդակապատ:

Չըլդրմիշ էլնել. խենթանալ, կատաղել:

Չըմբուլ. ձիանների գլխակապ պարան:

Չընչոտ. չնչին, չքոտի:

Չիւմ. մինչև:

Չլուտ. մերկ, տկլոր:

Չուռ քեազախ. այժի նուրբ մազից գործուած կարճ քամկոնակ:

Պ.

Պալալք. խայտարդէտ, (սև ու սպիտակ):

Պալանայ բոց. բորբոքուած բոց: ենակ բոց բուսակ պատշաճ

Պալթայ. կացին:

Պախ գնել. դարանամուտ լինել:

Պախէզպան. պարտիզպան:

Պատրուտ. պատուաստ:

Պարկ արե. բարկ, այրող արե:

Պաք. պագ, համբոյր:

Պգլօղ. տնակ, հիւղակ:

Պէոն, պոն. բոյն:

Պիպիկ-պիճո. պղտիկ տղայ:

Պիւթիւն. բոլոր, ամեն:

Պլըթը-պլըթը. ցոլուն, պսպղուն:

Պուճախ. անկիւն, քունջ:

Պուճուճակ. ծոճրակ:

Պուպու. հոպոպ:

Պուտ. կաթիլ:

Պուտուկ. կճուճ:

Պուրուճիկ. պատերում եղած ծակեր, ուր թռչունք բոյն գնեն:

Պուռկ. շրթունք, եղերք:

Պտղել. պտղաբերել, (ծնել):

Պտղտել. պտուղներ ոչնչացնել:

Պտտուր. ոչխարաց աղբ:

Պքել. բուք անել:

Պօլօճիկ. երիկամունք:

Զ.

Զալահի. քրթական հագուստի թևերից կախուած ծովերը:

Զահէլ. երիտասարդ. փոխար.՝ տղէտ, անխելահաս:

Զամալ, ջէմալ. գեղեցիկ, երկար հասակով:

Զամբագ. 1. ձեռնածու. 2. տաւարավաճառ:

Զան-փոլատ. երկաթանձն:

Զանաւար. վնասակար կենդանի, գայլ:

Զէրկայ. կարգ, դասաւորութիւն:

Զին, ջինդար. 1. կիրք. 2. գրբաց, կախարդ:

Զինս, ջիբիլեաթ. ցեղ, ցեղակից, տոհմականք:

Զիւբայ. կերպասեայ երկար վերարկու քղանցքով:

Զղայ. թանկագին ալիներով զարդարուած դարդ գլխույ:

Զուխտակ. զորդ:

Զուզար. պատասխան:

Զռայ. ջրի աման, սափոր:

Զօպ. ջիբ, գրպան:

Պում. տ. Պւռում:

Պուպ. գօշապ:

Ա.

Սագօ. վերարկու, պալտօ:

Սալամ դաշի. հանգստաքար տաճկաց գերեզմանատների մօտ,

որի վրայ դնում են ննջեցեալը մնաս բարեւն ասելու:

**Պաշտամ. բարեւ:**

**Սալան, սալեան.** բացառիկ տուրք հանրային շինութեանց:

**Սալիս-սուլուխ.** հարց ու փորձ:

**Սալվի.** նոճի:

**Սախէն.** խեցեղէն փոքր տաշտ, ուր լուանում և լողանում են:  
**Սախում.** երերուող, տատանուող:

**Սաղ-սալամաթ.** ողջ-առողջ:

**Սաղրի.** ձիու գաւակ:

**Սամուռ.** 1. սամոյր. 2. սամոյրի մորթ:

**Սանդ.** մէջը փորած քար, ուր ծեծում են ձաւար:

**Սանջախ.** գնդասեղ, քորոց:

**Սաջ.** բոլորշի երկաթեալ թիթեղ, որի վրայ հաց են եփում:

**Սարաղունջ.** ընտիր կերպասից շինուած, քառանկիւնի և շուրջը ուկէթել երիցներով պատած զարդ, որ ծածկում է կանանց թիկունքը մինչև մէջքը:

**Սարբար.** բեռան վրայ աւելացած բեռ:

**Սարի սուսուն.** ծաղիկ. (նաև անուն կող):

**Սարին.** զով, հով:

**Սարխօշ.** զուխը տաք, արբեցող:

**Տէլէս.** ձիու սպասաւոր, ձիադարման:

**Տէլքան գեահ.** տեսարան:

**Տըփ.** սուրբ:

**Մթար,—սթրուել.** ապաստան,—մի տեղ տեղաւորուել:

**Միլախ.** գէնք, գէնքեր:

**Մինամահաւք.** սիրամարգ:

**Միւրահի.** երկարաւոն շիշ օղիի:

**Միւրու.** հօտ ոչխարաց:

**Մուրուխ.** սուր ծայր:

**Մպլպու.** աշխուժ, աչքաբաց:

**Մուսուռ.** մաքուր, լսուակ:

**Մրա.** կարգ:

**Մրսրփալ.** սարսիլ, դողդողալ:

**Աօն.** վերջ:

**Աօնա.** երկարաձիգ հասակով:

**Վ.**

**Վաշ'դ.** խոստում:

**Վավէլէր.** վայ տալ, վայել:

**Վէլել.** վայելել:

**Վէրանայ.** աւեր, աւերակ:

**Վիզել.** կամ վզել, արմատախիլ անել:

**Վիզն ու վզնոց.** պարանոցից կախած շարովի ոսկիք:

**Վիզկվիզկալ.** բաբախել:

**Վոլիահի,** վալիահի. թագաժառանգ:

**Վողդայ,** վասդայ. պայմանաժամ:

**Վողիայ.** փորձանք:

**Վով.** ով:

**Վոթկալ.** բունկել որպէս վառող:

**Վոլիկ.** պարզ ապուր, ձաւարի ալիւրից:

**Վոօշ.** ձաւարի կորկոտից ջրի ապուր:

**Տ.**

**Տագ.** անմազ, լերկ գլուխ:

**Տայխ.** զառամեալ, հասակն անցուցած (աղջիկ):

**Տամոն.** մի տեսակ տամբուլ:

**Տապլակ.** կոլոր կարմիր (երես):

**Տեղ իսկել.** անկողին ձգել:

**Տզկել.** ջուրը ծեել, թրջուել:

**Տիժար գալ.** կարեկցել, արգահատել:

**Տիւճիկ.** գինու փոքրիկ կարաս:

**Տիւս.** դուրս:

**Տիւր գալ.** դիւր գալ:

Տղպոտ. պէպէնոտ, արկոտ (մարդ, պտուղ ևն):

Տուտուկ. փոքր փող հովուաց:

Տիել. ծեծել:

Փ.

Փալ տալ. երկար ձգուել, բազմել:

Փակեախ. գոմ, ախոռ:

Փահլիվան. ըմբիշ, լարախաղաց:

Փայ. մաս, բաժին:

Փարչալամիշ անել. պատառտել, կտոր կտոր անել:

Փէտոյ անել. ճարել, գտնել մի ինչ, գոյացնել:

Փէնջարայ. լուսամտուտ:

Փէշ. քղանցք հագուստի:

Փէշանք, փէշա. արհեստ:

Փէշին. կանխիկ:

Փէշքէշ. ընծայ, նուէր:

Փըշամգել. անձի սոսկում գալ, ծակծկոտիլ:

Փիր. արհեստի հիմնաղիր:

Փշղել. փշրել, ջախջախել:

Փուղոց. աղբանոց:

Փռթնել. արձակուել:

Փռքիցուցել. տապալել, գետնով տալ:

Փօղան. փօղոց, հրապարակ:

Ք.

Քաքուլ. խոպոպիք:

Քաֆուր-վարդ. մուգ կարմիր վարդ:

Քեա. ով, դու (կանանց դիմելիս);

Քեանձ, քանձ. քան:

Քեանձ մե աղէկներ. մեղանից լաւերը, դեեր:

Քեարբար. սաթ:

Քեաւոր. կնքաւոր:

Քեյ, քե. քեզ:

Քեռ, քեռն. քո, քոնը:

Քեոր, քոր. քոյր:

Քեռստան. քեռիներ:

Քէթրօշ-մէթրօշ. ծուռ ու մուռ:

Քիւրայ. քուրայ, հալոց:

Քոնթալ. շանց կամ գաղանաց լղի լինելը:

Քրգահ, քրգեահ. քարգահ:

Քրգիշուն. քարգահի վրայ ասեղնագործած:

Քօզ. գառանց մակաղատեղ:

Քօլօզ. բրդեայ գլխարկ, սրածայր և տափակ:

Քօշայ, քեօշայ. անկիւն, քունչ:

Քօռփայ, քեօռփայ. մատղաշ:

Քֆրել քիֆրել. հաւհոյել:

Օ.

Օխկայ, յօխկայ. տաճկ. ծանրութեան չափ=երեք ֆունտի:

Օղօրկել. ուղարկել:

Օլին. խաղ:

Օրթանջայ. միջին:

Օրօսբաց. երեսրաց, մի տեսակ պատշգամ, որ երեք կողմից  
միայն պատ ունի:

Օֆայ. օգուտ:

Չ.

Չալ. հմայութիւն:

Չակմել. զգալ, գլխի ընկնել:

Չինջան. սուրճի փոքր գաւաթ:

Չուալ. զրօսնել, շրջել:

Չուիկ, փոփլիկ. մանկական խաղալիք:

Նիստ . զաշյամք  
զաւագնք . զաւամք  
բազ . եզ . զամք  
ովագ . ոզ . մամք . ուսք  
պաց . զաց . զումք  
զմեժամք . մասումք  
ուսումք . լաւամք  
զամույլ զրի բամարաբ նախ ըմաչ . յա նման  
մարդաց . մարդոց . մարդ  
մամարդան ըմանար մամարդ  
մամարդան ըմանար . քան  
մամարդ մամարդ մամարդ . քան  
զամուն . լամումք . լամուն  
զամուն . մամումք . լամուն

մամունք զ մզմ=մաշ մամնիուզմած . մամուն կամիոլ զամուն  
մամուրուն զամուրուն  
բամ . մամ  
մամյան լամուն նզօ  
բամք ոյ ևաբամք բամք յի բամքամք բամքամք  
մամք ուսք մամքն  
ուսքոր լամք

մամիուրուն . լամ  
մամբաց մամբ լամբ . յամբաց  
մամբար զգոնի մամբար մամբար  
ումբուց լամբոց . լամբ  
զամբար մամբարնեւ մամբար մամբար

## ՑԱՆԿ

ԵՐԵՒ.

ՆԱԽԱԲԱՆ . . . . .	Ա,
ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ . . . . .	1
ԵՐԳԵՐ . . . . .	12
ՎԻՃԱԿԻ ԲԱԽՏԻ ԵՐԳԵՐԻՑ . . . . .	66
ՄԸՔՕՅԻ ՔԱՐՈԶ . . . . .	73
<b>ՀԵՔԵՍԹՆԵՐ</b>	
Զան-փոլաս . . . . .	77
Նոան խատէն . . . . .	86
Մարզարիս շար . . . . .	91
Սադամեայ խանում . . . . .	99
Օձու քագաւոր . . . . .	105
Սալշում փաշէն . . . . .	112
Կորին եւ դէվ . . . . .	117
Պսպղուն փետուր . . . . .	124
<b>ԱՐԱՄԹՆԵՐ</b> . . . . .	134
<b>ՀԱՆԵԼՈՒԿԱՆԵՐ</b> . . . . .	153
<b>ԱՆԷՄՔՆԵՐ</b> . . . . .	157
<b>ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ</b> . . . . .	161
<b>ԲԱՌԱՐԱՆ ՖՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ</b> . . . . .	164

# Պ Ե Ա Տ

անան

3	Ճ Յ Ա Ա Յ Մ Ե
1	Գ Յ Ա Ա Յ Մ Ե
21	Հ Յ Ա Ա Յ Մ Ե
38	Յ Ա Ա Յ Մ Ե
57	Ե Ա Ա Յ Մ Ե
77	Տ Ա Յ Մ Ե
98	Ց Ա Յ Մ Ե
10	Ա Ա Յ Մ Ե
90	Ա Ա Յ Մ Ե
501	Ա Ա Յ Մ Ե
811	Ա Ա Յ Մ Ե
711	Ա Ա Յ Մ Ե
881	Ա Ա Յ Մ Ե
151	Ա Ա Յ Մ Ե
861	Ա Ա Յ Մ Ե
761	Ա Ա Յ Մ Ե
481	Ա Ա Յ Մ Ե
101	Ա Ա Յ Մ Ե

16426-16428

2013

